

ՃՆՈՐՀԻ ՎԵՐՈՒԻՍ

ԱՌԱՍԴԵԼ
ԾԵՍ
ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆ




ԾՆՈՐՀ Ի ԿԵՐՈՒՄ
ԱՌԱՍԴՊԵԼ, ԾԵՍ ԵՎ ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ
Հոդվածների ժողովածու նվիրված Սարգիս
Հարությունյանի 80-ամյակին

GIFT FROM HEAVEN: MYTH, RITUAL, AND HISTORY
Studies in honour of Sargis Harutyunyan on his 80th birthday

ДАР СВЫШЕ: МИФ, РИТУАЛ И ИСТОРИЯ
Сборник статей в честь 80-летия Саргиса Арутюняна

ԵՐԵՎԱՆ 2008



Mr. John H. G.

39 (= 919, 21)

v

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԸՆՈՐԻ Ի ՎԵՐՈՒՄ

ԱՌԱՍՊԵԼ, ԾԵՍ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾՈՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՆԿԻՐՎԱԾ ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻՆ

A 94452



«ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2008



ՀՏԴ 391/395=919.81:398:941(479.25)

ԳՄԴ 63.5(2Հ)+82+63.3(2Հ)

Ը 757

Տպագրվում է << ԳԱԱ հնագիտության և ազգագրության
խստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Կազմող և խմբագիր՝ Արմեն Պետրոսյան

Ը 757 ԸՆՈՐՀ Ի ԿԵՐՈՒՄ. ԱՌԱՍՊԵԼ, ԾԵՍ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Հոդվածների ժողովածոլ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-
ամյակին. - Եր.: Գիտություն, 2008, - 316 էջ: // 309

GIFT FROM HEAVEN: MYTH, RITUAL, AND HISTORY
Studies in honour of Sargis Harutyunyan on his 80th birthday.

ДАР СВЫШЕ: МИФ, РИТУАЛ И ИСТОРИЯ
Сборник статей в честь 80-летия Саргиса Арутюняна

Գիրքը հարգանքի տուրք է ականավոր գիտնական, << Ազգային
ակադեմիայի թղթակից անդամ Սարգիս Հարությունյանին, իր 80-ամյա
հորելյանի կապակցությամբ: Գրքում գետեղված են հոդվածներ հայա-
գիտության այն բնագավառներից, որոնցում իր ներդրումն է ունեցել հորելյարդ
(բանահյուտություն, ազգագրություն, պատմություն): Նախատեսվում է մասնա-
գետ հայագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 63.5 (2Հ)+82+63.3(2Հ)

ISBN 978-5-8080-0761-1

© << ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2008

ԲՈՎԱՆԴԻԿՈՒԹՅՈՒՆ

Սարգիս Հարությունյան	80
ԱՌԱՋՈՒՅԹ	
Արմեն Պետրոսյան. Հայկ նահապետը համեմատական առասպելաբանության լուսի տակ	6
Տորք Ղալապյան. «Վիպասանք» էպոփի առաջին «Ճյուղը» և ամպրոպային դյուցանատոնիմի ծագումը	10
Դիտեր Քառիկ. Տրոյական պատերազմի և Հռոմի հիմնադրման պատմության մի յուրօինակ հայերեն տարրերակ	19
ԲԱՆԱՀՅՈՒԹ	51
Եվա Զաքարյան. Ընորի ի Վերուստ. բուժման շնորհը հայկական հերիաթներում	63
Արքունի Սահակյան. Իրապատում հերիաթի ժանրային բնութագիր շուրջ (տիպաբանական ակնարկ)	87
Վերժին Սվավոզյան. Հայոց ցեղասպանության ականատես վերապրոների հաղորդած հոլշապատումների և երգերի ժանրային ու տիպաբանական առանձնահատկությունները	102
Արմեն Սարգսյան. Ժողովրդական խոսքի բանաձևային կառուցները Պ. Ալականի ստեղծագործություններում	120
ԾԵՍ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
Լевон Աբրամյան. Րույանելու պատորությունները	136
Աստղիկ Խորայելյան. Խոսքի մոգական ուժը	162
Юлия Անտոնյան. Սոսունի առաջնահատկությունները ...	176
Գայան Շագօյան. Սամական պատորությունները	189
Արա Դեմիրխանյան. Սոլյանի կյանք և առաջնահատկությունները	209
Արմեն Բորիսյան. Բրոնզեդարյան Հայաստանի երաժշտական գործիքները	240
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	
Արամ Քոյսյան. Հայաստան և Ազգին	263
Երվանդ Գրեկյան. Կինն Ուրարտուում. Ուրարտուի թագուհիները	292

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 80

Ղծվար է ներկայացնել մեր հոբեյարի կյանքը և վաստակը մեկ հրապարակման մեջ՝ ուստի կնշենք մի քանի հիմնական փաստեր միայն:

Ծնվել է 1928 թ. Հայաստանի Ամասիայի շրջանի Ղազանչի գյուղում, ծագումով՝ Արևոտյան Հայաստանցի՝ ալաշկերտցի և մշեցի ծնողների ընտանիքում: 1940 թ. նրա ընտանիքը, խուսափելով ստալինյան հալածանքներից, տեղափոխվում է Կրասոտանի մայրաքաղաք Թբիլիսի: Այստեղ 1947 թ. նա ավարտում է դպրոցը և գալով Հայաստան՝ ընդունվում և ավարտում Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ՝ պարսկերեն լեզու և գրականուրբուն մասնագիտությամբ:

1956-59-ն նա սովորում է Հայաստանի ԳԱ գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում, աշակերտելով Արամ Ղանալյանին, և ավարտելով, պաշտպանում թեկնածուական թեզ «Հայ ժողովրդական հանելուներ» թեմայով (1959): Իր երկրորդ դոկտորական թեզը, նվիրված մեծ հայագետ Մանուկ Աբեյյանի գիտական բազմացյուղ վաստակին, նա պաշտպանել է 1971-ին, իսկ 2000-ին ընտրվել է «ՀԱԱ թղթակից անդամ»:

1960-ից աշխատում է «ՀԱԱ հենագիտության և ազգագրության ինստիտուտում, Վարելով տարբեր պաշտոններ՝ կրտսեր գիտաշխատողից մինչև բանահյուսության բաժնի վարիչ և միաժամանակ՝ ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ (1992-2007): 2006-ից նա նաև հայագիտական ամենահերինակավոր պարբերականի՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խնճագիրն է: Չուզահեռաբար վարել է տարբեր այլ պաշտոններ, դասավանդել Հայաստանի տարբեր համալսարաններում: Մի շարք գիտական ընկերությունների անդամ է:

Ծագումով ավանդապահ արևատահայ ընտանիքի օավակ լինելը մշտապես էական դեր է կատարել նրա կյանքում: Իրոք, նրա ընտանիքը և մանկության շրջապատճ հայկական ավանդական, կարելի է ասել՝ որոշ չափով արխական մշակույթի կրողներ են եղել: Եվ նա բացարիկ է այն առումով, որ, լինելով հայկական ավանդական մշակույթի լավագույն գիտակ և լավագույն ուսումնասիրող, հենց այդ մշակույթի իրական ներկայացուցիչն է, այդ առումով՝ վերջին մոհիկանը հայ իրականության մեջ: Նա միակ մարդն է մեզանում, որը ամբողջապես տեղյակ է հայ բանահյուսությանը, ազգագրությանը և ինն ու նոր գրականությանը: Միննոյն ժամանակ նա մեր պատմությանը և մշակույթին խորապես տեղ-

յակ, լայն պրոֆիլի հայագետ է: Մեկ այլ առանձնացնող հատկանիշ է նրա՝ Հայաստանի Երկու հարկան իին Երկրների՝ Վրաստանի և Իրանի լեզուների և մշակույթների հետ ծանոթությունը, առաջինը՝ Երկար տարիներ Վրաստանում ապրելու, Երկրորդը՝ համալսարանական կրթության բերումով:

Նա մեծագույն հմայքի տեր մարդ է, հաճելի գրուցակից, իմաստուն գիտական դեկավար: Իր էլույան մեջ նա միավորում է գիտնականի իմացությունը արվեստագետի բանաստեղծական աշխարհընկայան հետ: Նրա կյանքի ուղին կարող էր գնալ նաև արվեստի ճանապարհով, և ակնհայտ է, որ այդ ասպարեզում էլ նա իր նշանակալի ներդրումը կունենար: Մեկ այլ հատկանիշ ևս տարբերակում է նրան հայկական գիտական իրականության մեջ: Դա նրա՝ ավանդական քեֆերի հմուտ կազմակերպիչ ու անգերազանցելի բանադա լինելուն է: Արտիստիկ անհատականությամբ և անձնական հմայքով է պայմանավորված նաև նրա՝ մշակույթի մեջ գործիքների՝ կիսամ Սարոյան, Պարոյս Սևակի, Մինաս Ավետիսիանի հետ ունեցած խորը բերեկամությունը:

«Ընորի ի Վերուստ». Ներկա ժողովածուի հոդվածներից մեկի՝ աստվածաշնչյան խորհրդով Վերնագիրը լավագույնս բնորոշում է հենց մեր հորեւարին: Սիրելի պրոֆեսոր, ցանկանում ենք Ձեզ՝ հայ բանահյուսության և ազգագրության նահապետին, Երկար կյանք և առողջություն, Ձեզ և Ձեր աշակերտներին՝ նորանոր գիտական հաջողություններ:

Սարգիս Հարությունյանի գիտական աշխատանքների մի քանի հիմնական ուղղություններ

Հայ ժողովրդական հանելուկների համահավաքի առաջին գիտական հրատարակիչ և մենագրական ուսումնասիրության հեղինակ.

Հայկական «Սասնա ծռեր» էպոսի պատումների գրառման նոր էտապի կազմակերպիչ և հրատարակիչ. «Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ մի շարք հիմնարար աշխատությունների հեղինակ և ուսումնասիրության նոր, հատկապես առասպելաբանական մոտեցումների հիմնադիր.

Հայ հմայական բանահյության օրինանքի, նգովքի, աղոթքի և հավատալիքների ժանրերի առաջին ուսումնասիրող. հայ հմայական աղոթքների ամբողջական կորպուսի առաջին գիտական հրատարակիչ և հիմնարար ուսումնասիրության հեղինակ.

Հայկական վիպական բանահյության և առասպելաբանության լրջագույն հետազոտող, հայ առասպելաբանության վերաբերյալ երրևէ հրատարակված լավագույն և ամբողջական մենագրության հեղինակ.

Հայկական քնարական բանահյուտության ամենատարածված ժանրի՝ խաղիկների համահավաք բնագրի պատրաստման կողեկ-տիվի ղեկավար.

Հայ-հրանական մշակութային շփումների և առնչությունների վերաբերյալ աշխատությունների հեղինակ.

Հայագիտության երախտավորներին նվիրված աշխատությունների հեղինակ, նրանց աշխատությունների խմբագիր և հրա-տարակիչ.

Մի շաբթ կարևոր հայագիտական մենագրությունների և հոդ-վածների ժողովածուների խմբագիր.

Հայ բանահրական մտքի զարգացման պատմության մասին աշխատությունների հեղինակ:

Սարգիս Հարությունյանի հիմնական աշխատությունները

Հայ ժողովրդական հանելուկներ. Երևան, 1960.

Հայ ժողովրդական հանելուկներ (գիտական համահավաք ժողովածու). Ներածություն, ծանոթագրություններ, մատենագիտություն). Երևան, 1965.

Սանուկ Արեդյան. Լյանքն ու գործը. Երևան, 1970.

Անձքի և օրինանքի ժամը հայ բանահյուտության մեջ. Երևան, 1975.

Սասնա ծուեր (10 ընտիր պատումներ, առաջարան, կուլտուր-պատմական ակնարկ, ծանոթագրություններ, բառարան). Երևան, 1977.

Հայ առասպելաբանության վերաբերյալ հոդվածաշար. Մսիք հարծօծ մորա. Մոսկվա, 1980, 1982. Մսիկոլոգիկ սլուք. Մոսկվա, 1990.

Մ. Արեդյանի Երկերի հրատարակություն. Երևան, 1985.

Հողվածներ հայ բանահյուտության վերաբերյալ (Հայկական հանրագիտարան). Երևան, հի. 1-12, Երևան, 1974-1986.

Հայ հին վիպաշխարհ. Երևան, 1987. (2-րդ հրատ. 2004, ռուսերեն հրատ. 2007).

Իրանական հոգևոր մշակույթի արտացոլումները հայ հին ավանդության մեջ. «Իրան նամե», 1993, 1-4, 1997, 5-7.

Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2000.

Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը. Երևան, 2001.

Հայ հնայական և ժողովրդական աղոթքներ. Երևան, 2006:

ԱՌԱՍԴԵԼ ԵՎ ԷՊՈՍ

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԸ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Տիեզերածնություն և ազգածնություն

Կաղնջական առասպելներում արավել էական տեղ են գրավում աշխարհի սկզբի մասին պատմությունները (արարջազորություն, տիեզերածնություն): Նրանցում պատմվում է տիեզերի ծագման և առաջին աստվածների ու հերոսների մասին: Տիեզերածնի գործողությունը հաճախ ներկայացվում է որպես մի շատ դրամատիկ դեպք, առաջին սպանությունը: Տիեզերածնության առասպելները մերձավորապես կապված են մարդածնության և ազգածնության հետ, որոնք կարող են դիտվել որպես տիեզերածնության մասնավոր դեպքեր:

Հին հայոց տիեզերածնության առասպելի պատմական ծևաղորում ստացած մի տարբերակն է հայոց առաջին նախնի Հայկի և նրա յոր սերունդների ավանդությունը (Խորենաց Ա.Թ-ԺԵ, Սերեն Ա): Այն իրար է կապում տիեզերածնությունը և ազգածնությունը՝ կրելով նաև մարդածնության և հասարակության կարուցվածքը որպես նախադեմ ծևաղորոց առասպելների տարրեր: Այսպես, Հայկի և նրա հաջորդների անուններով են կոչվում լեռներ, գետեր, բնակավայրեր, ինչպես նաև աստղեր ու աստղախմբեր (տիեզերածնություն, անվանումն առասպելաբանության մեջ համապատասխանում է արարմանը), Հայկի և նրա հետնորդ Արամի հետ են կապվում հայոց հայ և արմեն ցեղանունները (ազգածնություն), նրանցից են սերում իշխանական որոշ տոհմեր (տոհմական վեա): Հայկ նահապետի՝ Երեք հարյուր այր ընդգրկող հսկայական ընտանիքն արտացոլում է ինն հայոց նահապետական ընտանիքի կառուցվածքը: Գործողությունները տեղի են ունենում «աստվածների դարաշրջանից» հետո՝ հսկա հերոսների ու կիսաստվածների ժամանակ: Ժամանակի տերմինները ևս՝ ամիսները եւ օրվա ժամերը, կոչվել են իբր Հայկի որդիների ու դուստրերի անուններով: Առասպելաբանական շարքն ավարտվում է մեռնող ու հաւանող Արա Գեղեցիկով, որի մահվամբ Վերջանում է սրբազն ժամանակը և վերածննդով սկսվում մեր

¹ Տիեզերածնության առասպելների վերաբերյալ, այս համատեքստում, տես Eliade 1959, 6 ff.

ժամանակը²:

Հայկ Նահապետը հանդես է գալիս որպես հնագույն արարիչ աստծո՞ւ աստվածների ընտանիքի նահապետի վիպական՝ պատմականացած և տեղայնացած տարբերակը: Նրա ժառանգ-ները ևս՝ Արանք և Արան, իին աստվածների վիպական ժառանգ-ներն են³: Տարբերությունն այն է, որ նրանով է արարվում ոչ թե ողջ, այլ հայոց պատմական տիեզերքը՝ Հայաստանը:

Հնդեվրոպական կապեր

1) Հայկը և նրա առաջին ժառանգորդները պատկերվում են որպես հնագույն ու մեծագոր հերոսներ՝ ոյուցազուններ: Այսինքն՝ Հայկայանների պատմությունը ներկայացնում է հայոց առաջին հերոսական վեպը՝ առաջին էպոսը: Հայտնի է, որ հերոսական էպոսը, ի տարբերություն բանահյուսության այլ ժանրերի, ասենք՝ հեքիաթի, ստեղծվում է ժողովրդի ծևակվորման ու համախմբման ընթացքում և ավելի փոքր չափով է ենթակա միջազգային ազդեցությունների⁴: Ըստ այդն, հայոց ազգային առասպելը, որը հենց հայոց ծևակվորման մասին պատմող մի էպոս է, պետք է կարուցված լինի բնիկ հայկական՝ հնդեվրոպական հիմքի վրա: Ինչպես ցոյց է տրվել Ստեփան Ահյանի և Ժորժ Շումեզիկի կողմից, այդ գրուցների առանցքային կերպարները՝ Հայկ, Արանը և Արա Գեղեցիկը, անդամներ են մի «եռափունկցիոնալ» համակարգի, կապված, համապատասխանաբար, հնդեվրոպական առասպելաբանության առաջին (տիհակալության), երկրորդ (ռազմական) և երրորդ (պյողաբերության) գործառությունների հետ: Ավելին, Հայկը և նրա որդի Արամանյակը ներկայացնում են առաջին գործառության երկու ասպեկտները: Հատկանշական է, որ Հայկի, Արամի և Արա Գեղեցիկի հակառակորդները՝ Բելը, Բարշամը և Ծամիրամը, գործառություններով համապատասխանում են հայկական հերոսներին և կազմում են մի համապատասխան եռյակ: Այսինքն՝ սա մի տիպիկ հնդեվրոպական կարույց է⁵:

² Պետրոսյան 1997, 133-136, 143, Petrosyan 2002, 159-161.

³ Արամի՝ որպես հնագույն ամպրոպի աստծու վիպական ժառանգի վերաբերյալ տես Պետրոսյան 1997. Արայի՝ որպես «մեռնող ու հառնող աստծու» վերաբերյալ՝ Սատիլյան 1930:

⁴ Մելետիսկու 1986, 62.

⁵ Հայկայանների առասպելի հնդեվրոպական կապերի վերաբերյալ տես Ahyan 1981, 270-271, Dumortil 1994, 133-141, Պետրոսյան 1997, Petrosyan 2002, Petrosyan 2007a:

2) Հայկը զախսէ Հայաստանի հրակական նահապետական ընտանիքով՝ որդիներով, դուստրերով, որդիների որդիներով, գորավոր այրերով, թվով մոտ երեք հարյուր հոգի, նրանց ընդունելով ու հարած մարդկանցով (Խորենացի Ա.Ժ): Հայկական նահապետական ընտանիքը, որը պահպանվել էր մինչև Վերջին ժամանակաները, սովորաբար կոչվել է ազգ Այն ընտանեկան մի խումբ էր, որը ներառում էր մի քանի սովորաբար վեց-յոթ, հազվադեպ՝ ուր սերունդների ընտանիքներ, վայրընթաց և կողմնային ճյուղերով, ծագած մեկ նախահորից, որի անունով է կոչվել ազգը⁶: Միևնույն ժամանակ ազգ տերմինը նշանակում է նաև «ժողովուրդ»: Նոյն նշանակությունն ունեն նաև նահապետական ընտանիքի համար օգտագործվող մյուս անվանումները (ցեղ, տուն և այլն):

Լեզվաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայերենում ոչ մի հին հնդեվրոպական ընտանեկան տերմին չի կորել, բացի մեկից (*n̥erət-), մինչեւ մյուս հնդեվրոպական լեզուները կորցրել են շատ ավելի շատ, կամ նույնիսկ բոլոր տերմինները: Այս պահպանումը վերին աստիճանի հատկանշական է, քանի որ հայերենը ոչ արխակի, և ոչ էլ պահպանողական լեզու է, որը կորցրել է իր հնդեվրոպական բառապաշարի մի սովոր մասը: Սա, անկասկած, ցույց է տալիս, որ հայերը երկար ժամանակ պահպանել են հնագոյն նահապետական ընտանիքի կառույցը⁷:

Ըստ այդմ, հայկական պահպանական ընտանիքը՝ պահպանված ընդհուպ մինչև XIX դարը, ներկայացնելով է հնդեվրոպական նահապետական ընտանիքի առավել վաղնջական ժառանգորդներից մեկը: Հայկի մեծ ընտանիքը հայոց պահպանական ընտանիքի հնագոյն՝ առասպելական նախատիպն է: Հայկի անվան հայ արմատը պատկերացվել է Հայկի ազգ-ընտանիքի և ազգ-ժողովուրդ անվանման հիմքը: Հայ ազգը, այսինքն՝ Հայկի ժողովուրդը ընկալվել է որպես Հայկի նախնական՝ առասպելական ընտանիքի ժառանգորդ՝ ընթացիկ վիճակը:

3) Մի շաբաթ հայկական բարեառներում տարիքով կանայք իրենց անուսիններին, նրանց բացակայությամբ, անվանում են մեր հայք, որը պետք է նշանակի «իմ ամուսինը, մեր ընտանիքի գլխավորը»⁸: Հայ բառն այստեղ, մեծ հավանականությամբ, կարող

⁶ Կարառեմյան 1966, 25.

⁷ Bonfante 1984, 29.

⁸ Այս արտահայտության վերաբերյալ տես հատկապես Խաչատրյան 2003, 19:

է կապվել հնդեվրոպական **poti-* «տեր, տանտեր, ամուսին» արնատին (հնմտ. լատ. *hospes*, ռուս. *гостю* < **ghos[t]j-* *pot-* «տանտեր», հուն. *posis*, ավեստ. *raiti-*, հնդ. *ratī-*, թու. A *pats* «ամուսին» և այլն): Հայկը նկարագրվում է որպես գլուխը մի մեծ նահապետական ընտանիքի, որը բաղկացած է երեք հարյուր այրերից և նրանց ընտանիքներից: Այսպիսով, Հայկի անունը նույնպես կարող է կապվել **poti-* արնատին (հնմտ. և **dems- pot-* «տանտեր» և **wīk'- pot-* «կլանի, հանայնքի պետ»):

Օրինակ համաստեղությունը կոչվել է Հայկն Հայկի անունով⁹: Այս անվան վերջավորությունն ակնարկում է հնդեվրոպական **-kon* (**-ko-n*) ածանցը, որը բաղարկվել է իրանական ծագման փոքրուցուցիչ-փաղաքշական դիկ ածանցի հետ (Հայկն, Հայիկ > Հայկ): Այն հաճախ հանդես է գալիս տարիքով ազգականների կոչումներում (պապիկ, հայրիկ) և դիցանուններում, հնմտ. Աստղիկ դիցանունը և Հայկի որդու Արամանեակ անունը, համանման -ակ ածանցով: Հատկանշական է, որ Հայկի մշտական նահապետ կոչման երկրորդ նասը ներկայացնում է հնդեվրոպական **roiti-* իրանական արտացոլումը¹¹:

4) Հնդեվրոպական հասարակության մեջ տղա երեխան սկզբից մտնում էր «(զինված) պատանու» կատեգորիան, որպես չամուսնացած և ունեցվածք չունեցող պատանեկան ռազմի խնդիր անդամ: Հետո, մոտավորապես քանի տարեկանում, նա դաշնում էր ցեղի լիիրավ անդամ՝ հասուն այր-ռազմիկ (**wiHro-* կամ **Hnegr-* «այր»).¹² Հասուն այրերը կազմում էին զիտության մեջ *Māppenerbusnd* կամ *comitatus* կոչվող իսկական ռազմիկների խումբը, որը դեկավարվում էր հասուկ ռազմական առաջնորդի կամ ցեղապետի կողմից: Հայկի զորքը Բելի դեմ ճակատամարտում՝ նրա հասուն հետնորդների արական կեսը, պետք է դիտվի որպես

⁹ Ալիշան 1895, 119-120:

¹⁰ Այս ածանցի վերաբերյալ տես Զահուկյան 1987, 238:

¹¹ Հայկի անվան այս մեկնաբանության վերաբերյալ տես Petrosyan 2002, 58, 61, 161, եղած գրականության հիմնամք: Հայ ցեղանկան տարբեր ստուգարանությունների վերաբերյալ տես Djahukian 1961, 386 ff.; Զահուկյան 1987, 284. Իր վերջին աշխատություններում Զահուկյանն ընդունում էր հայ ցեղանկան և Հայկի անվան ծագումը հնդեվրոպական **roiti-*ից (Ճշակյան 1988, 68; Djahukian 1990, 26; Զահուկյան 1992, 18), ինչը վերացնում է լեզվաբանական հասուկ հիմնավորման անհրաժեշտությունը:

¹² McCone 1986. տես նաև Mallory and Adams 1997: 6 f.; 531, 632 f.: Հնդեվրոպական տղամարդկանց կազմակերպությունների վերաբերյալ տես O. Հյոֆիերի, U. Վիկանդերի, A. Վիդենգրենի, L. Ժանմերի, A. Շյումեզիլի, P. Յակոբսոնի, R. Բերշոյի և այլոց աշխատությունները:

հայոց հնագոյն *Männerbund*-ը: Հատկանշական է, որ Խորենացու մոտ նրանք հիշվում են որպես զորավոր արք «այրեր» (< *Hner-): Այս համատեքստում Հայկի լավագոյն հնդեվրոպական զուգահեռոց հնդկական Ուուրուա աստվածն է (տես ստորև):

5) Հայկը սպանում է Բելին «Երեքթեան» նետով (Խորենացի Ա.ԺԱ): Այս առասպեկի լավագոյն զուգահեռոց հայտնի է հնդկական ավանդույթից, որտեղ Օրիոն համաստեղությունը անձնավորվում է որպես նախահայր/ արարիչ աստված՝ *Prajāpati*, որին նետահարում է Ուուրուա աստվածը Եռամաս նետով (*īśas trikānda*, Օրիոնի գոտու երեք աստղերն են)¹³: Ակնհայտ է, որ Հայկը՝ որպես Եռամաս նետ արձակող և իր հյու անունով կոչվող իր որդիների *Männerbund*-ի հայր և առաջնորդ, համապատասխանում է Ուուրային՝ իր անունով կոչվող ուուրաների կամ մարուտների՝ իր որդիների *Männerbund*-ի առաջնորդին¹⁴: Բայց և այնպես, այստեղ Հայկը, որպես հայոց նախահայր և Օրիոն համաստեղության անձնավորում, համապատասխանում է նաև *Պրաջապատիին*: Հատկանշական է, որ Ուուրայի բնութափրական մակդիմների (*gana pati*, *vratapati*, *bhūtapatī*, *raśupati*, *gr̥hapati*, *sthāpati*, *sabhapati*), ինչպես և հենց *Պրաջապատիի* անվան Երկրորդ մասերը ծագում են հնդեվրոպական **poti-hg*¹⁵:

6) Սերենի և Թովմա Արծրունու մոտ Բելը ճակատամարտից առաջ առաջարկում է Հայկին իր մոտ ծառայության անցնել որպես որսորդ-մանուկների առաջնորդ: Ի պատասխան, Հայկը «շուն» է անվանում և սպանում նրան: Թշնամոն համեմատությունը շան հետ շատ ավանդություններում կապվել է հնդեվրոպական «շուն սպանող» ռազմիկ աստծու առասպեկույթի հետ, որը վերականգնվում է հատկապես հին բալկանյան կուրի հիման վրա (հմնտ. բալկանյան *Kandaūles*, *Kandaūlas*, *Kandaōn* դիցանունները, որոնք մեկնաբանվում են որպես «շուն խեղղող», իռլ. Կուլսուլին հերոսին, որը սպանում է Կուլանի շանը և այլն)¹⁶: Հունական ավանդույթում Օրիոնը եղել է բենվտացի որսորդ-հոկա, որին բենվտացիներն անվանել են *Kandaōn*. Իշշում է և Կանդատոնի երեք հայրերից սերված սուրբ, որով մարդկային զոհաբերություն է կատարվել և այն, որ Կանդատոնը թրակացիների կողմից պաշտվող մի աստված

¹³ Այս առասպեկի վերաբերյալ տես Allen 1963, 309-310, Forssman 1968, 58 (աղբյուրների հղմամբ), Fontenrose 1981: 239-240, Տեմկին, Էրման 1985, 16-18, 276-277.

¹⁴ Ուուրայի՝ որպես *Männerbund*-ի առաջնորդի վերաբերյալ տես Kershaw 2001.

¹⁵ Petrosyan 2002: 55, Petrosyan 2007b, 30-31.

¹⁶ Иванов 1977, 210-211.

էր (Lycophron, *Alexandra* I.328; II.937-8; Tzetz. ad Lyc. 328): Կանդառնի կապերը Օրիոն համաստեղության, որսորդության, մարդկային զոհաբերության և Երակի հատկանիշներ ունեցող գենքի հետ համադրելի են դարձնում նրան Հայկի կերպարի հետ: Հայկը կարող է դիտվել որպես բալկանյան Օրիոն-Կանդառնի մի գուգահեռը, հնդեվրոպական «շուն սպանող» ռազմի աստծու հայկական ժառանգք:

7) Հայկի կրիվն իր հակառակորդի դեմ կարող է համադրվել ամպրոպի աստծու առասպեկի և նրա հակառակորդ օձ-Վիշապի առասպեկի հետ.¹⁷ Մի ավանդության համաձայն, «հայոց թագավորը» (= Հայկ) սպանում է իր վրա հարծակված Բել-Նեբրովթին և այրում նրան Նեմրութ (= Նեբրովթ) լեռան վրա: Աստծու կամքով կրակը վերածվում է ջրի, որի հետևանքով ստեղծվում է Նեմրութ լեռան զագաթի լիճը: Այլ տարբերակներում Նեմրութ-Նեբրովթ մի հսկայական կառույց է շինուած Նեմրութ լեռան վրա և ապստամբում աստծու դեմ: Նա և իր կառույցը կործանվում են կայծակներով և փոթորկի միջոցով: Առաջանում է Նեմրութի լիճը և ծածկում նրան ու իր պալատը¹⁸:

Լատինական մի առասպեկում Ալբա թագների արքան ապստամբում է Յուպիտերի դեմ և փորձում ննանակել որոտն ու կայծակը (հնչան հուն. Σωμάτινασθ): Նա ոչնչացվում է իրական կայծակի հարվածով, և Ալբա լին ջրերը բարձրանութ են և ծածկում նրա պալատը¹⁹:

Այս առասպեկներում Հայկը և նրա փոխարինողները (հայոց թագավոր, աստված) համապատասխանում են ամպրոպի և փոթորկի աստծուն:

Մերձավորարենյան կապեր

1) Հայկի հակառակորդ, ինքն իրեն աստվածացրած բարելոյնյան բռնակալ Բելի (նույնացված բիբլիական Նեբրովթի հետ) անունը ծագում է սեմական *b'* «տեր» արմատից: Այն օգտագործվել է որպես մեծ աստվածների մակդիր կամ անուն (հատկապես Բաբելոնի մեծ աստված, ծագումով արևմտասեմական Բել-Մարդուկի համար): Հատկանշական է, որ Հայկը սպանում է Բելին նետով, այնպես, ինչպես բաբելոնյան տիեզերածնության առասպեկում Մարդուկն է սպանում իր հակա-

¹⁷ Այս առասպեկի վերաբերյալ տես Իվանով ս Տոպորով 1974:

¹⁸ Ղանապանյան 1969, 72-73.

¹⁹ Այս առասպեկի վերաբերյալ տես Դմորզիլ 1973, 67-68.

ռակորդ Տիամատին: Այսինքն՝ Հայկը հայկական առասպելում ունի այն դերը, ինչ բարելականում (ԲԵ) Մարդուկը: Հայոց երկրորդ անվանադիր նախնի Արանջ և նրա հակառակորդ Բարշանջ ներկայացնում են, կարելի է ասել, Հայկի և ԲԵի «երկրորդ կերպարները»²⁰: Ընդ որում, Բարշանջի անունը ևս կապված է սեմական եղանական (արևմտասեմական *Ba’al Šamim* «երկնքի տեր»):

Հնդեվրոպական աստվածների և հերոսների մի շարք հակառակորդների անուններ նոյնպես կապված են արևմտասեմական *Ba’al* դիցանվան հետ (հնդ. Բալի, Կելտ., սկանդինավ. ԲԵի և այլն): Այս վիճակը պետք է բացատրվի որպես արդյունք հնդեվրոպական և արևմտասեմական ցեղերի հնագոյն շփումների²¹: Այս առասպելներում սեմական աստվածքների «բացասական», հայելային անդրադարձը²²: Այսպիսով, Հայկի անունը, ամենայն հավանականությամբ, իմաստաբանորեն համապատասխանում է նրա հակառակորդ և ֆունկցիոնալ համապատասխանության՝ ԲԵի անվանը:

2) Բաբելոնից Հայաստան անցնելու ճանապարհին Հայկը սկզբից հանգրվանում է մի լեռան մոտ, որը հետագայում թողոնում է իր թոռ Կաղմոսին: Հայկի այս առաջին հանգրվանի շրջանը գտնվել է Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում (հայկական աղբյուրների Կաղմեաց տուն, ասուր. Kadmuhi/Katmuhi երկիրը): Այդ լեռը պետք է նոյնացվի շրջանի ամենանշանակալի լեռան՝ Կորդվաց լեռան հետ (ասուր. Նիբուլ, հայ. Կորդվա Արարատ, թուրք. Չուղի դաղ): Մ.թ.ա. II-ի հազարամյակներում այստեղի Կոմմե/ Կոմենս երկիրը խուռա-ուրարտական անպրոպի/ փորորկի աստված Թեշուր-Թեյշեբայի պաշտամունքի կենտրոնն էր: Այս համատեքստում Հայկը կարող է դիտվել որպես Թեշուր-Թեյշեբայի ուշ Վիպական տարբերակը²³: Հատկանշական է, որ

²⁰ Petrosyan 2002: 56, 62, 83; Petrosyan 2007a. Արանջ՝ որպես Հայկի «երկրորդ տիպարի» վերաբերյալ տես Արեւյան 1966, 55:

²¹ Հնդեվրոպական առասպելներում սեմական եղի արտացոլումների վերաբերյալ տես Petrosyan 2007a. Հնդեվրոպական և արևմտասեմական վաղ կապերի վերաբերյալ՝ Խանօս 2004, 45-46.

²² Նախօրինակ երևոյթի կարելի է հանդիպել այլուրեք. այսպես, ֆիննա-ուգրական ժողովորդների մոտ երկնային աստծու անունը, որպես օրենք, բնիկ է, մննչե՞ծ նրա հակառակորդ համայն ներկայացված է փոխառյալ կերպարի անունով, որը դրական աստվածություն է այն ավանդություն, որտեղից փոխառվել է Անշենալձ ս. Ճ. 1982, 188.

²³ Հայակայան 1992, Պետրօսյան 2006:

Հայկի երկրորդ որդի Խորի անունը նույնական է Թեշուրի երկրորդ որդի Խորի (կարդալ՝ Խորը) անվանը (համարվել է խուրիների էպոնիմը):

3) Մի շաբթ հնագոյն աղբյուրներ և ժողովրդական լեզենդներ Կորդվաց լեռան վրա են տեղայնացնում Նոյի՝ ջրհեղեղից փրկության հանգրվանը²⁴: Այս համատեքստում Հայկը՝ հայոց նախահայրը, կարող է համարվել Նոյի՝ մարդկության նախահարո հետ: Համապատասխանաբար, Հայկի երեք որդիները՝ հայկական նախանձերի էպոնիմները, կարող են նույնացվել Նոյի երեք որդիների՝ մարդկության էպոնիմների հետ:

* * *

Այսախով, Հայկը բարդ վիճական կերպար է, որը միավորում է արարիչ աստծու, աստվածների հոր ու նախապետի, ամպրոպի աստծու, ռազմի աստծու կերպարները: Նրա հիմքում ընկած են հնդեվրոպական նախատիպեր, որոնք համարվել են մերձավորարևեսան կերպարների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան, Ս. 1966. Երկեր. հ. Ա, Երևան:

Ալիշան, Ղ. 1895. Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց. Վենետիկ:

Բրուտյան, Գ. 1997. Օրացուց հայոց. Էջմիածին:

Խաչատրյան, Հ. 2003. Ամուսին հավացության բառանվանումները հայերնի բարբառներում. Գյուղույն և տեխնիկա, 1:

Հնայալյան, Ս. 1992. Հայկ նախապետի մասին առասպեսն ու Կիբշա քաղաքը Նիբրուի լեռներում. Պատմա-բանասիրական հանդես, 1:

Ղանդարանյան, Ա.Ս. 1969. Ավանդապատում. Երևան:

Մատիկյան, Ա. 1930. Արա Գեղեցիկ. Վիեննա:

Պետրոսյան, Ա. 1997. Արանի առասպեկը հմերվրոպական համատեքստում և հայոց ազգածագնան խնդիրը. Երևան:

Զահորելյան, Գ. 1987. Հայոց լեզվի պատմություն. Երևան:

Զահորելյան, Գ. 1992. Նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի մասին. Պատմա-բանասիրական հանդես, 1:

Ahyan, S. 1982. Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. *Revue de l'histoire des religion*, CIC-3.

Allen, R.H. 1963. *Star Names: Their Lore and Meaning*. New York.

²⁴ Այս լեռան առասպեկների քննարկումը տես Պետրօսյան 2006:



- Bonfante, G. 1984. The Armenian Family Terminology. *International Symposium on Armenian Linguistics*. Yerevan.
- Djahukian, G.B. 1961. The Hayasa Language and its Relation to the Indo-European Languages. *Archiv Orientalni* 29/3.
- Djahukian, G.B. 1990. Did Armenians Live in Asia Anterior Before the Twelfth Century BC? *When Worlds Collide. Indo-Europeans and Pre-Indo-Europeans*. Ann Arbor.
- Dumézil, G. 1994. *Le roman des jumeaux*. Paris.
- Eliade, M. 1959. *Cosmos and History. The Myth of the Eternal Return*. New York.
- Fontenrose, J. 1981. *Orion: the Myth of the Hunter and the Huntress*. Berkeley, Los Angeles, London.
- Förssman, B. 1968. Apaoša, der Gagner des Tištria. *Zeitschrift für vergleichende Sprachforschung* 82.
- Mallory, J.P. and Adams, D.Q. 1997. *Encyclopedia of Indo-European culture*. London, Chicago.
- McCone, K. R. 1986. Hund, Wolf und Krieger bei den Indogermanen. *Studien zum indogermanischen Wortschatz*. Innsbruck.
- Petrosyan, A.Y. 2002. *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*. Journal of Indo-European Studies Monograph 42. Washington D.C.
- Petrosyan, A.Y. 2007a. The Indo-European *H₂ner(t)-s and the Danu Tribe. *Journal of Indo-European Studies*. Vol. 35, No 3 & 4.
- Petrosyan, A.Y. 2007b. The Problem of Identification of the Proto-Armenians: A Critical Review. *Journal of the Society for Armenian Studies*. Vol. 16.
- Аухенвальд, А.И., Петрухин, В.И., Хелимский, И.А. 1982. К реконструкции мифологических представлений финно-угорских народов. *Балто-славянские исследования*, М.
- Джаукиян, Г.Б. 1988. О соотношении хайсасского и армянского языков. *Историко-филологический журнал*, 1.
- Иванов, В.В. 1977. Древнебалканский и общеиндоевропейский текст мифа о герое-убийце пса и евразийские параллели. *Славянское и балканское языкознание. Карпато-восточнославянские параллели*. М.
- Иванов, В.В. 2004. Двадцать лет спустя. У истоков цивилизации. *Сборник статей к 75-летию В.И. Саркисиани*. Москва.
- Иванов, В.В. и Топоров, В.Н. Исследования в области славянских древностей. М.
- Карапетян, Э.Т. 1966. *Родственная группа "азг" у армян*. Ереван.
- Мелетинский, Е.М. 1986. *Введение в историческую поэтику эпоса и романа*. Москва.
- Петросян, А.Е. 2006. Два Аракама: гора Кордуены и Macus. *Mythical Landscapes Then and Now: the Mystification of Landscapes in Search for National Identity*. Yerevan.
- Темкин, Е.Н., Эрман, В.Г. 1985. *Мифы древней Индии*. Москва.

«ՎիՊԱՍՍՆՔ» ԵՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՌԱՋԻՆ «ՃՅՈՒՇ» ԵՎ
ԱՄՊՐՈՊԱՅԻՆ ՂՅՈՒՑԱՁՆԱՏՈՎՄԻ ԾԱԳՈՒՄԸ

1. Ներածություն

«Վիպասանքը» հայոց հնագույն գրի առնված էպոսն է, որը մեզ է հասել Պատմահայր Մովսես Խորենացու (V դ.) պատմական աշխատության էջերում¹: Այս դիցավեաբ ժամանակակից համեմատական առասպելաբանության առաջ քաշած մեթոդներով առաջինը սկսել է ուսումնասիրել Մանուկ Աբեղյանը, որի կարծիքով՝ այն ծևակվորվել է հիմնականում մ.թ.ա. II-I դարերում, իսկ որոշ կերպարներ ստեղծվել են նաև մ.թ. I դ. իրադարձությունների ազդեցությամբ [Աբեղյան 1966: 96, 122]: Որպես «Վիպասանքի» ստեղծման տարածաշրջան նշվում են Երվանդաշատ և Արտաշատ քաղաքներից մինչև Նախիջևան և Գողթն ընկած գավառները, այն է Արաքսի միջին հոսանքի ձախափնյա հովկիտը [Աբեղյան 1966: 157-159]:

Այնուհետև Ս. Աբեղյանի համեմատական մեթոդի կիրառումը շարունակել է Սարգիս Հարությունյանը, որը մի շարք դիպուկ նկատառումներ է ավելացրել այս դիցավեաբի և նրա հիմնական կերպարների հետազոտման գործին [Հարությունյան 2000: 103-112]: Սասնավորապես, հիմնականում հանաձայն լինելով «Վիպասանքի» ծևակվորման արեյյանական տեսությանը, Ս. Հարությունյանը գտնում է, որ պետք չէ գերազնահատել պատմական տարրերը էպոսի ստեղծման գործում: Նա հատուկ ուշադրություն է դարձրել դիցաբանական կաղապարների օգտագործմանը, որոնց գալիս են դարերի խորքից սերելով մեր նախնիների աշխարհայացքային պատկերացումներից, և մի շարք էական գուգահեռներ է ի հայտ բերել «Վիպասանքի» ու «Սասնա ծուերի» միջև [Հարությունյան 1981: 71-72]:

«Վիպասանքի» կերպարների և նրանց անունների ծագման հարցերին բազմից անդրադարձել է Արմեն Պետրոսյանը, մասնավորապես՝ հնդեվրոպական «Ան» և «Ապիտակ» հերոսների հեկանարտության առասպելույթի վերակազմությանը նվիրված իր

¹ «Վիպասանքի» մեզ հասած սյուժեների ամբողջական շարադրանքը, առանց ընդհարակությունների և հեղինակային մեկնաբանությունների, տես Հարությունյան 1987: 59-79:

աշխատության մեջ, որտեղ այդ հիտանկյունից են մեկնաբանվում «Վիպասանքի» առանցքային կերպարներից մի քանիսը: Նոյն հեղինակի այլ գործում որպես իրար հաջորդող սերունդներ ներկայացող «Վիպասանքի» կերպարները համեմատական այդուսակներով զուգադրվել են «Սաման ծրերի» և հայկական ու հնդեվրոպական այլ ծննդաբանական շարքերի դրական հերոսների հաջորդական շղաներին [Պետրոսյան 1997: 5, ևն. Պետրոսյան 1997բ: 33]:

Ասատուր Մանացականը հետաքրքիր դիտողություններ ունի «Վիպասանքի» հատկապես «Տիգրան և Աժդահակ» առասպելի հետ կապված հարցերի շուրջ [Մնացականյան 1973, 1975]: Դիցավեպի վերջին դյուցազնի Արտավազդի կերպարն է առանձին հետազոտման առարկա դարձել Առն Արքահանյանը [Արքահանյան 2004, Աբրամյան 2003, Abrahamian 2006]: «Վիպասանքի» գլխավոր հերոսների և նրանց կերպարների ծագումնաբանության ուղղությամբ զգակի աշխատանքներ է կատարել Զեյմ Ռասսելը, որն արժեքավոր դիտարկումներ է արել, մասնավորապես, «Տիգրան և Աժդահակ» առասպելի և դրա շուրջ գոյություն ունեցած դիցաբանական պատկերացումների վերաբերյալ [Russell 1989, 1994, 1999]: Եվ վերջապես, չպետք է մոռանալ ժորժ Շյոմեզիի ավանդը, որը հիմնականում անդրադարձել է «Վիպասանքի» երկրորդ «ցիկլի» կերպարներին և նրանց կովկասյան գուգահեռներին:

Ըստ Մ. Աբեղյանի՝ հայոց մեջ «Վիպասանքը» սկզբնապես չափանի տեսրով պարունակել է «փոքր քերպածներ ու գրուցներ հերոսների ու նրանց քաջազործությունների մասին»: Ժանանակի ընթացքում այդ անջատ պատմական երգերն ու ավանդությունները, հարելով իրար, առաջ են բերել «Վիպասանք», որը կոչվել է նաև «Վիպասանություն», «Երգը առասպելաց», «Երգը վիպասանաց» կամ «Երգը թուելեաց»² [Աբեղյան 1966: 97]: Այդ վիպաշարն արդեն, նրա կարծիքով, հիմնականում պատմվել է, գրաբարյան տերմինով՝ «թիվ է ասվել», թեև եղել են նաև երգվող հատվածներ [Աբեղյան 1966: 161]: Ընդ որում, այստեղ ավելորդ չէ հիշել այն հետաքրքիր փաստը, որ գրաբարում երգել նշանակում էր նաև «նվազել» [Հովհաննիսյան 2007: 101]:

² Այս վերջին տերմինի շուրջ տես Աբեղյան 1966: 161-164:

2. «Վիպասանքի» սյուժեությին ատաղծը.

«Վիպասանք» դիցավեպի մեջ կարմիր թելի նման անցնում է հայոց ամպրոպային ոյուցազուների և նրանց ոխերի: Ախոյաների վիշապազուն մարերի հակամարտությունը հենց այս բնորոշ գիծն էլ Տիգրանի և Արտաշեսի շուրջ հյուսված երկու կենտրոնական ցիկլերի կապող օղակն է եղել [հմնտ. Արեոյան 1966: 156-157, 166]: Հայերը մար ցեղանունը նոյնացրել են իրան. մար «օծ» բարի հետ, այդ պատճառով էլ մարերին «վիշապազուն» համարելը հաստատել են նաև «լեզվական փաստով»³: Բացի այդ, Մարաց արքայի Աժդահակի անունը նոյնապես հայերեն նշանակել է «վիշապ» («զի Աժդահակը՝ ի մեր լեզուս է վիշապ» [Խորենացի I, լ: 98]):

«Վիպասանքում» հայեր-մարեր հակամարտությունը կարելի է մեկնարանել նաև որպես հայրիշխանական սոցիալական կառուցվածք ունեցող ցեղերի պայքար ընդդեմ մայրիշխանության: Այս առունով «Վիպասանքի» որոշ սյուժեների նախատիպերի ակունքները կարող են լինել շատ ավելի վաղ ժամանակներում, քան մ.թ.ա. II-I դարերում: Դեռ հնուց հայ ցեղանունը ժողովրդական մակարդակում պետք է նոյնացվեր հայր բարի հետ, Հայկ Նահապետի կենտրոնական Հայր զավակի անունն էլ բխեցվում էր հայր բարի հոգնակի ծևկից (հար-ք) [Խորենացի I, ժ: 40]⁴, իսկ մար ցեղանունը նոյն հաջողորդամբ կարող էր առնչվել մայր բարի հոգնակիին՝ մար-ք. Ըստ այդմ, մար-ք «մայրեց» և մար-ք «մարեր, մերացիներ» բառաձևերը գրաբարում լիովին համընկնում էին⁵.

Այս լեզվական գուգադիպումներից զատ, հայրիշխանություն-մայրիշխանություն պայքարը նկատվում է նաև առասպելաբանական մակարդակում: Այսպես, ի տարբերություն հայոց անվանադիր նախնիների ու հերոսների (Հայկ, Արամ, Տիգրան), որպես մարերի նախնի հաճախ հիշվում էին կանայք⁶. Իոնական

³ Այս հարցի շուրջ առավել մանրանասն տես Ալիշան 2002: 82. Արեոյան 1966: 134-135:

⁴ Ա. Գարագաշանը սա համարում էր ժողովրդական ստուգաբանություն, սակայն Ս. Արեոյանը հակված չէր այդպես միանշանակորեն վերաբերվելու խնդիրն [տես Արեոյան 1985: 148]:

⁵ Հնմտ. Մարանդ զավառանունը, որն, ամենայն հավանականությամբ, ծագել է մար ցեղանունից, քայլ ժողովրդական ստուգաբանությամբ բացատրվում էր «մայր է անդ» [Օրբելեան, ժթ: 108. Սլովանծույաց 1978: 74. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1957: 475. Լեռ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966: 159. ՀՀԾԲ, հ. 3, Երևան, 1991: 720]:

⁶ Բացառություն է կազմում Նիւքար Մահէսը [Խորենացի I, ժԳ: 52-54]:

առասպելաբանության մեջ՝ Մեղեան, իսկ հայոց ավանդույթում Անոյշ, Զայլամար, Անուշ⁷: Մինչդեռ հայոց դիցաբանության նշանավոր կանայք «Կիպասանքում» կամ այլազգի են (Սարենիկ), կամ այլակին են (Տիգրանուիի), կամ էլ հանդես են զալիս լոկ անվանապես (Զարուիի): Բացառություն են կազմել, թերևս, աստվածուին հատկանիշներով օժտված կերպարները, որպիսին Ծովինարն է: Ընդ որում, չի բացարկում, որ այս կերպարը հենց մայրիշխանության դարաշրջանի մնացուկ լինի:

3. Ծովինար / Ծովյան / Ծովյալ

3.1. Ծովինարի հետ կապված կենդանիները: «Կիպասանքի» հնագոյն կերպարը, բայտ երևոյթին, Ծովինարն է, որը մարմնավորում է հայոց առասպելաբանական Ծիրանի ծովը (Արյուն-ծով / Արնակարմիր ծով): Այն գտնվում է Երկնքի և Երկրի միջև. նրա առաջին շերտը ամպից է, իսկ ամպերից վեր՝ ջրերի ծովն է, որի սկիզբն ու վերջը հանգչում է օվկիանոսի վրա (Արենյան 1966: 76-77. 1975: 65-66): Օվկիանոսը կամ համաշխարհային ծովը գտնվում է Երկրի տակ և կոչվում է «առաջին ծով» ի տարբերություն «Երկրորդ» Ծիրանի ծովի (Նարեկացի, ԺԶ, տող 11-14: 114): Ամպրոայի ժամանակ այդ Երկնային ծովը այելոծվում ու հրակարմիր գույն է ստանում ի տարբերություն ստորերկրյա Սև ծովի⁸:

Նախքան անթրոպոնորֆ տեսք ստանալը՝ վաղնջական ժամանակներում, Ծովինարը պատկերվել է կովի տեսքով, որն ամպրոայի ժամանակ բառաչում է Արյուն-ծովից և ջուր խնում Երկնային Կաթնաղբյուրից⁹: Այս հնագոյն դիցաբանական ընկալումը պահպանվել է ժողովրդական հանելուկներում (զորորինակ «Կով մը ունիմ հանա-հանա [= մայր], // Կոտոշները մսրիսանա [= խոշոր], // Կաթնաղբյուրեն ջուր կը խնա, // Արյունածովեն ծեն կը հանա»), որոնց պատասխանն է «ամպ և

⁷ Կերպին Երկու կերպարների մասին տես Արծրունի, I, Ը: 75-76:

⁸ Հայոց հակառակիցներում Ծիրանի ծովի և ստորերկրյա «Սև ջրի» օվկիանոսի մասին տես Հարությունյան 2000: 9-17, 80. 2006: 81, N 3, 83, N 15, 84, N19, 231 ևն:

⁹ Թերևս, փոքր-ինչ առավել ուշ ժամանակներին է վերաբերում Ծովինարի ծիակերպ կամ ծիու վրա նստած պատկերացումը, որի հետքերը պահպանվել են «Սանա ծոերի» որոշ պատումներում և ժողովրդական ուշ հավատալիքներում [տես Պետրօսյան 2006: 38-39. Արենյան 1975: 70]:

որոտ»¹⁰: Առհասարակ, Երկունքից գոռացող կինը դիցաբանական մակարդակում համադրվել է ամպրոպի որոտի, այն է՝ բառաչող կովի հետ:

Այդ պատճառով ամպրոպն ու կայծակը առասպելաբանորեն դիտվել են որպես Երկնային Երկունք: Որոշ պատկերացումներով՝ Կարնադբյուրից ջուր խմող Երկնային կովը հղիանում և ծնում է հորթ, որը խորհրդանշում է կայծակը: Այս առասպելույթն արտացոլված է հետևյալ համելուկում «Կովը բռանչի, // ֆորթը վիախչի», որի պատասխանն է որոտ և կայծակ [Հարությունյան 2000: 81]¹¹: Բազմաթիվ համելուկներում էլ ծով է անվանվում կովից կրած կաթը, իսկ նրա չորս պտուկներն, ըստ Երևոյթին, կարնադբյուրի հետ են համեմատվում [տես Հարությունյան 1965: 56, 247]:

Հավանաբար ամպրոպային կովակերպ դիցուիու հետ է կապվել հնում նաև զատիկի միջատը, որը Կապանի բարբառում ցայսօր «աստծու կով» է կոչվում, իսկ այլ բարբառներում՝ «աստծու եզ(նակ)» [տես <ՀՀԲ: 195]: Արծվանիկի խոսվածքում այս միջատը կոչվում է կավծարտ, և նրա թռչել-չթռչելոց գուշակում արդյոք կովը (կամը) սարդում կծնի, թե՞ գոնում¹²: Զատիկի միջատը նոյն «աստծու կով» անվանումն ունի նաև սլավոնա-բալթյան մի շարք լեզուներում և ռումիներենում, ընդ որում փորձ է արվել այն համադրելու ամպրոպի աստծո պատժված կնոջ կերպարին [Տոռօրս 1991: 182]¹³:

¹⁰ Աբեղյան 1975: 66: Այս համելույթ տարածման արեան է Ախալցխա, Ջավախք, Շիրակ, Բասեն, Աղվանիք, Կարին [Հարությունյան 1965: 11-12, համելուկի փոփոխված տարբերակների մասին 223-224, 234]:

¹¹ Հանձնուկը վկայված է Լոռիում [Հարությունյան 1965: 12]: Ամպրոպային կովի և նրանից ծնված հորիդ առասպելույթի «Երկրային» տարբերակն են ներկայացնում կրակի և ծնիջ մասին համելույթը. այսպես, խոսն այդող կրակը համելուկներում նոյնազնում է կարմիր գրնժի / եզան հետ, ինչպես թնդիր կրակը կարմիր կովի, մինչեւ նրա ծովուր սև կովի / հորիդ հետ: Որբառունկը, խաղողը և գինին նոյնպես համեմատվում են այդ ամպրոպային կովի և նրա տված կարի հետ [Հարությունյան 1965: 21, 22, 26]: Ինչ վերաբերում է Կարնադբյուրին, ապա նրա մասին տես Հարությունյան 2000: 80-81:

¹² Ին գոտած նյութերից [Դաշտային լեգվաբանական նյութեր, տետր 1, Արծվանիկ, 2003: 7]:

¹³ Հնոարդիր է, որ զատիկի հին հնդկական անվանումը *indragora*, Աշանակել է «սս, ում հովհակ հնդրան է», այսինքն ամպրոպի աստվածը [Տոռօրս 1991: 182]: Հայոց մեջ զատիկի (ոսկի եզնակ, աստծու եզնակ) ունեցած պաշտումունքային նշանակությանն է անդադրձել նաև Ղ. Ալիշանը առանց, սակայն, խորանալու խնդրի մեջ [Ալիշան 2002: 89, 161]:

Քանի որ աճպրոպն ու կայծակը առնչվում են գարնանը, հայ ժողովրդական մի հանելուկում (Շանախի) ասվում էր. «Անա-ամա [= մայր], / Կարմիր դանա [= հորդ], / Սոխակը զա, / Դուք բանա», որի պատասխանն է՝ զարուն [Հարությունյան 1965: 18]: Այս առունվով հետաքրքիր է, որ «Աստծու կով» միջատը նոյնպես հայտնվում է զարնանը՝ հենց Զատիկի տոնի շրջանում, որտեղից էլ ծագում է նրա քրիստոնեական անվանումը (զատիկ) [Խմնտ. ՀԼԲԲ, հ. Ա: 402]: Այդիստվ, զատիկ միջատը, փաստորեն, հանեն է զալիս որպես աճպրոպային հին դիցուիու Ծովինարի և զարնան ավետաբեր: Հայկական ժողովրդական տոնացույցում իրական գարնան զալը կապվել է հենց Զատիկի հետ, որը կոչվել է նաև Կարմիր Զատիկ [Խառասոյան-Առաքելյան: 132, 135. Ստեփանյան 2003: 189]¹⁴:

Աճպրոպային կովակերպ դիցուիու կերպարը հաշվի առնելով՝ պատահական չի թվում, որ կարմիր կով դարձվածքը որոշ բարբառներում նշանակում է «բարկացող, ցասկոտ անձ» [ՀԼԲԲ, հ. Գ: 154]: Ծովինարը նոյնպես ժողովրդական հավատալիքներում նկարագրվում է որպես «ցամանակից, պատուհասող կայծակեղեն էակ» հրացայտ աչքերով, այդ պատճառով կոչվում է նաև Հրաչը [Արենյան 1975: 70-71. Հարությունյան 2006: 232]:

3.2. Ծովինարի դիցաբանական կերպարը: Արասպելաբանական Ծիրանի ծովը և Կարնաթբյուրը (= Սիպտակ աղբուր) էպոսում երեսն կրոնկրտ տեղայնացումներ են ստանում. օրինակ՝ «Սասնա ծռերի» որոշ պատումներում երանք տեղադրում են Վանա լճում: Կերշին ժողովրդական առասպելներում հաճախ է հանդեռ զալիս որպես վերացական Ծիրանի ծովի իրեղեն մանրակերտ և վիշապամարտության թատերաբեմ [Մրվանձույան 1978: 69-70, 77. Ղանալանյան 1969: 82-83]: «Սասնա ծռերի» համաձայն՝ Ծովինարը ջուր է խմում այդ Սպիտակ արյուրի անմահական ջրից, հիդանում և ծնում աճպրոպային երկվորյակներ: Ընդ որում, արխահիկ տարբերակներում այդ հիդանումը կարող էր կատարվել այն ժամանակ, երբ Ծովինարը մերկացած

¹⁴ Քրիստոնեական շրջանում զատիկ միջատը (ինչպես և նրան առնչվող հին հերանոսական տոնը) սկսել է աղերավել Մարիամ Աստվածածին, այդ պատճառով միջատը կոչվել է զատիկի միջու, մարիամ բոլոր, զատիկի բոլոր [տես ՀԼԲԲ: 195. ՀԼԲԲ, հ. Ա: 402]: Մարիամ Աստվածածին անոնվ է կոչվել զատիկ միջատը բայթան և գերմանական լեզուներուն նոյնպես [Տոնորօս 1991: 182]: Բայթան առասպելաբանության մեջ զատիկը կապվել է նաև արևի հետ, իսկ հայերենում Մերաստիայի բարբառում «կարմիր կովը թռավ» արտասայստությունը փոխարերաբար նշանակել է «արև մայր մտավ» [տես ՀԼԲԲ, հ. Գ: 154]:

լողում է ծովի միջով դեպի ժայռից բխող [Կաթնաղբյուրը, և ջրի կարիներն, ըստ Լ. Աբրահամյանի Վերակազմության, թափանցում են նրա մեջ [ՍԴ: 9-10. Աճրամյան 1983: 143-144]:

Ի տարբերություն «Սասնա ծթեր» էպոսի, «Վիպասանքում» Ծովինարն ունենում է ոչ թե երկվորյակներ, այլ եռվորյակներ: «Արտաշատյան ծագում» ունեցող այս շարքում Ծովինարը տեղայնացվում է Հայկազանց երկիր՝ սառցազազար երկար և բարձր լեռան վրա, որի տակ ակնհայողորեն ալինարկվում է Ազատ Մասիսը: Դեռևս Ա. Մնացականյանը համոզնում էր հայտնել, որ այդ առասպելուն նկարագրվող սրբազան լեռը Մասիսն է, իսկ նրա զագարին ծննդաբերող գեղատես կինը՝ հայոց Մայր աստվածուիկն (Մնացականյան 1973: 79. 1975: 226):

Զ. Ոասեեն, իր հերթին, կարծում է, որ «Երևան կատարեալս» (տես ստորև) դարձվածքի մեջ կողավորված կերպով ակնարկվում է երկու կատար ունեցող Արարատի Միսի և Մասիսի միջև ընկած «Երկար» տարածությունը, այսինքն՝ ծննդաբերող մայր աստվածուիկն նստած է երկու զագարների միջև ընկած միջանկյալ «Երկար» գոգավորության վրա (Russell 1999: 15): Հայոց վանօշական հավատալիքներում Մեծ Արարատը՝ Մասիսը, ներկայացել է որպես արարագործությունից հետո տիեզերակարգը պահպանող սրբազան լեռ (Մովսիսյան 2000: 12): Արարատի վրա ծննդաբերող կնոջ առասպելը խորենացու պատմական շարադրանքում վերածվել է թշնամի հերոսի երազի¹⁵:

¹⁵ Այս նոյն մոտիվը տեսնում ենք նաև Ֆիրոդուտու «Հահնամեում» (X դ.), որի 1333-րդ տողի սկզբան առանցում թ ինչպես Զոհիակը երազում տեսնում է երեք մարտիկ-երբայների ծնունդը. նրանցից կրտսերը Ֆարիդունն (Faridün / Feridün), ըստ Խորենացու Հրուտեն, որը Զոհիակին (հայ. Աժդահակ) հայրողն է, ըստ որում նա Զոհիակին սպանում է կովագուխ գորգով հարվածելով [1333-1350: 52], հմտ. կովի արքայությունը անարդարացն աստվածության (§ 4.1): Սակայն «Հահնամեում» չեն նկարագրվում այդ երեք հերոսների ծննդյան հանգանանքները (տեղը, վայրը, մայրը ևն): «Ետաքրքիր է, որ Ֆարիդունը, ըստ Հահնանի, կերակրվել է վիրամարդից բոլոր գոյները ունեցող Բարմայեթ (Barmāyēt) հրաշալի կովի կողմից, որի կերպարը չունի գուգահեններ Ավեստայում և միշտն իրանական առյուղներում [1481-1554: 56-58, 613, որում. 1481], իսկ Ծովինարը սկզբնաւես հայկական հաւասարակիրներում, հեղափառ տեսնանը, կարող էր պատկերացվել որպես կարմիր կով: Կովկասյան դիցաբանության մեջ նույնական հանդիպում ենք «մայր-կովին», այսպէս, կովկասյան «Ժարին զամկած» հերոս Ամիրանիի ծննդյան վրացական և օսական առասպելներում հանդես են զայիս «Ժարի-կովին» ու «Ժար-՛ուղուր», և Ամիրանին դուրս է զայիս ծովից նրանց հետ միասին, ընդ որում այդ առասպելը հանեմատվում է ցակերպ Պոսեղդոնի և «կովկակերպ» Պատիսայիթ կերտակության մասին կրետե-միկենյան գրուցի հետ [Աճրամյան 2003: 330-331. Abrahamian 2006: 213-214]:

«... մերծ ի լեառն մի երկայն յերկրտ բարձրութեամբ, որոյ գագաթն սաստկութեամբ սարնամանեաց թուէր պատեալ. Եւ ասէին զողցես յերկրին Հայկազանց զայս լինել: Եւ ի նայել իմ յերկարագոյնս ի լեառն՝ կիմ ուն ժիրանազգեստ, երկնագոյն ունեղով գիրեաւ տեռ [= քոյ], նստեալ երեւեցաւ ի ծայրի այնպիսոյ բարձրութեան, աչեղ, բարձրահասակ եւ կարմրայտ, երկնանց ըմբռնեալ ցաւովք: Եւ ի յերկարագոյնս նայել իմ յանպիսի երեւում եւ ի հիացման լինել ծնա յանկարծ կինն երիս կատարեաս ի դիցազանց հասալաւ եւ բնութեամբ: Առաջինն գերանսն ածեալ ի վերայ առիտու՝ պանայր յարեւուսու, եւ երկրորդն ի վերայ ընծու ի հիւսիսի հայելով. իսկ երրորդն զվիշապ անարի սանծեալ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս» [I, ԻԶ: 88-90]:

Ա. Պետրոսյանն իրավամբ գտնում է, որ «ակնիայտ է այս ծննդաբերող կնոջ և Ծովինարի համապատասխանությունը»: Ծովինարը երկվորյակների և վիշապամարտիկ հերոսի նայր է համարվել, ինչպես և նշված առասպելի «բարձրահասակ ու կարմրայտ» կինը: Կնոջ ծիրանազգեստ լինելը և լեռնային, այսինքն՝ երկնքին նոտ տեղադրությունը հուշում են նրա կապը Երևանի Տիրանի ծովի հետ, որի անձնավորումը հենց Ծովինարն էր: Հատկանշական է, որ բանահյուսության մեջ ևս Ծովինարը նկարագրվում էր քողը դեմքին, իսկ ծովական բառը Վանի և Խարբերդի բարբաներում նշանակում էր «ծովի նման մեծ ու գեղեցիկ» (աչքերի մասին), ինչը լիովին սազում է առասպելի «աչեղ» կնոջը [Պետրոսյան 1997բ: 14. Պետրօսյան 2002: 19. Աբեղյան 1975: 70. ՀՐԲ, հ. Բ: 420]¹⁶:

3.3. Ծովինարի կերպարը միջնադարյան բանաստեղծության մեջ: Ծովինարն, այսպիսով, հայոց հնագույն մայր աստվածուին է, իսկ նրա խորհրդանշած արնագույն ծիրանի ծովը կենցաղային մակարդակում փոխաբերաբար ներկայացնում էր ծննդաբերող կնոջ արգանդից զատկած ջուրն ու արյունը, որտեղից դուրս է զալիս նորածինը¹⁷: Հայոց Վերածննդի պեղիայում Աստվածամայրը նկարագրվում է հենց Ծովինարին բնորոշ գծերով: Այսպես, Գրիգոր Նարեկացու (X դ.) տառերից մեկում Աստվածածինը պատկերվում է որպես դիցուիկ. «Աչքն ծո՛վ ի ծո՛վ ծիծաղախիտ ծաւալանայր յառաւաւտուն» // Երկու փայլակնածեն

¹⁶ «Ծով-աչքերն», առհասարակ, հանարվել են գեղեցկության չափամիջներից մեկը լինման. Սնացականան 2001: 106. Հարությունան 2006: 142, N 166]:

¹⁷ Ըստ Կ. Մելիք-Օհանջանյանի Ծովինարը «... ջրածինները բնոմնավորող, սնող ու ծնող արգանդն է, մայր անորն է...» [Մելիք-Օհանջանյան 1946: 283]:

արեգական նման...»: Նրա լեզուն նման է քաղցրանվագ տավիղի, վարսերն ունեն զինու զույն, իսկ եռահյուս խոպոպներն իջել են կլոր այստերի շուրջ [ԺԹ: 120-121]:

Նարեկացու մեկ այլ տաղ, որ սկսվում է «Երկինքն ի յերկիրս եւ Երկիրս ի յերկինքն» անագրամային առասպելաբանական բառերով (հմն.՝ «Վահագնի հիմնօ»)¹⁸, փոխաբերաբար ներկայացնում է Ծիրանի ծովի պատկերը, որով սրընթաց անցնում են արձվաթիչք առասպելական կանայք, իոդմեր են բարձրանում վեր աշխարհի շրու կողմերից, և հորդաբուխ գետերի վլուակները (հավանաբար անձրկի տեսքով) հոսում-թափիվում են «առաջին ծովը»¹⁹. Վերջինս, երևան, գտնվում է Երկրին մոտ, իսկ «Երկրորդ ծովը» նոյն ինքը Երկնային Ծիրանի ծովն է, քանի որ Նարեկացին շարունակում է. «Ծովուն Երկրորդի՝ ծագք արեամբ թաքահին. // Ծաւալ ծով ծիծաղ քաղցր աւդով շարժենայր» [ԺԹ: 113-114]. Այս օրով շարժվող ծովն ակնհայտորեն հանապատասխան է Երկնային Ծիրանի ծովին:

Նշված երկու տաղերում վկայված բաղաձայնութային կուտակումներով (alliteration) հարուստ տողերը «Աչքն ծո՛վ ի ծո՛վ ծիծաղախիտ...», «Ծաւալ ծով ծիծաղ քաղցր աւդով...», համեմատվել են Գրիգորի Սղմանարցու վեց դար անց գրած տողերի հետ, որոնցում հարատևում է նոյն ավանդույթը. «Աչք քո ծաւալ տան գերդ գօնվ», «Աչեր ծով ի ծով ունիս, սոսկալի վարսաւոր սերովք»²⁰: Ընդ որում, հատուկ շեշտվել է, որ /՛/ պայթաշշականի կրկնությունը, ինչպես և «Վահագնի հիմնում», ստեղծում է ասոցիացիաներ ժիշ-, ժմ-ունդ արմատի, իսկ /՛-է/ ձայնավորների

¹⁸ Այս տողերը U.P. Հարությունյանի կողմից արդեն իսկ համեմատվել են «Վահագնի հիմնի» սկզբնանակի հետ [Հարությունյան 1987ա: 55], իսկ Զ. Ուսանելը բերում է ուրիշ զուգահեռներ և հայոց միջնադարյան բանաստեղծության «Ծննդյան» և այլ երգերում [Russell 1989: 325-328. 1994: 44]: «Երկ-» վանկի անագրամն կրկնությունը «Վահագնի հիմնում» դարձել է առանձին ուսումնասիրությունների առարկա, որոնց մասին տես Խանօվ 1969, 1983. Russell 1989: 324, com. 15:

¹⁹ Այստեղ բնագրում նշվում են Երկնային (Ծիրանի) ծովից Երկրին ի վայր դեպի «առաջին ծովը» հոսող «քարաղեան» գետի վլուակները, որոնց տակ, ինչպես իրավան քարգանել է Վ. Գևորգյանը, ակնարկում են դրախտից բխող չորս գետերը [տես Նարեկացի] (թղթ.): 429]:

²⁰ Այս մասին առավել մանրամասն տես Russell 1985: 437-438: Ինչ վերաբերում է Վերոհիշյալ «Աչքն ծո՛վ ի ծո՛վ ծիծաղախիտ ծաւալանայր յառաօտուն / Երկու վկայակնածել արեգական նման...» հատվածին, ապա այն համեմատվում է «Վահագնի հիմնի» վերջին տողի հետ «Եւ աչկունքն էին արեգակունք» [Russell 1985: 438], որում, ի դեպ, որպես արխահզ պահպանվել է հնդեվրոպական Երկակի թիվի արտահայտությունը:

կրկնությունը է-ուժյուն հասկացության հետ [Russell 1996]: Գարնանամուտի տոնին Բարեկենդանին ասվող «Ծաճքելն ի ծով» ժողովրդական պարերգում նույնպես անդադար տեսնում ենք /օ/ բարձագանի կրկնությունը [տես Խառասույան-Առաքելյան 2005: 101]: Առհասարակ, բաղաձայնույթի գեղարվեստական հնարքը բնորոշ էր դեռևս «Վիպասանքի» չափածո պատառիկներին [տես Հարությունյան 1987ա: 50, 56]:

Ինչպես տեսանք վերը, «Աժդահակի երազի» նկարագրությունն ակնհայտորեն ամպրոյի և կյածակի մի բանաստեղծական պատկեր է, որի մի զուգահեռ «Վահագնի հիմնում» բնորոշվում է եղեգան փողից դուրս եկող ծխով և հրով [Խորենացի I, ԼՍ: 102]: Քրիստոնեական շրջանում այդ պատկերը փոխարինվել է խունկի և կնդրուկի ծխով ու հրով: Նարեկացու վերոհիշյալ տաղն ավարտվում է հենց ննանատիպ փոխաբերական նկարագրությամբ. «Ծաւալ ծով ծիծաղ քաղցր ասդով շարժենայր, // Ծարժէր սաբայեամ ի կղզիս կընդրզի: // ... // Ի խաղըս գետոց հրով պարեալ բուրաստան» [ԺԶ, տող 15-16, 18: 114j].

Իսկ Նարեկացու մյուս տաղի սկզբում Դիցամայրը համեմատվում է եղեցնյա սափորի հետ. «Նու ի նոն յեռ ի սափոր եղեցնատնկոյն», ապա տաղի վերջնամասում՝ «Ծոցն լուսակայի, կարմիր վարդով լցեալ, // Ծղիքն ծիրանի մանուշակի հոյլք. // Խնկեալ ի կնդրկէ բուրուար հրով աստուածանով լցեալ, // ծայն քաղցրանուար, որ ի նմանէ հնչէր» [ԺԹ, 24-27: 121]: Ընդ որում ամենավերջում հիշատակվում է «նորածին փոկիչը», որն այդպիսով կապվում է «կնդրուկի պես բուրող», «աստվածային հրով լցված բուրվարի» ննանվող, «եղեցնատնկի սափորի հետ» համեմատվող Աստվածածնի հետ:

Ըստ Երևոյթին, ամպրոպային Երկունքի ժամանակ ծննդաբերող Ծովինարի մասին պատկերացումն է արտացոլված նաև հայոց միջնադարյան հայրեններից մեկում. «Ծագէ լոյս ի քո ծոցէդ, // Զինչ զարնան կյածակն ի ամբէն...// Աչերտ է ծովէն առած // Ու ուներտ ի թուխի ամպէն»: Այս հայրենի ծովայա կինը արդեն իսկ հանադրվել է Ծովինարի հետ [Այդինյան 2001: 47]: Սակայն միանգամից աչքի է զարնում նաև նրա ննանությունը «Աժդահակի երազի» աչեղ կնոջը:

Ի դեպ, այդ գեղեցիկ առասպելում նշվող գույները՝ ծիրանի («ծիրանազգեստ»), կապույտ («Երկնագույն քող») և կարմիր («կարմրայտ»), խորաթափանց պատահականությամբ թե զարմանալի զուգաղիպությամբ, դարձել են հայոց ժամանակակից

եռագոյն դրոշի գույները [Dalalyan 2001: 169]: Գրեթե նույն գույներն անընդհատ «խաղում» են նաև Նարեկացու տաղում: Այստեղ Աստվածանայրը նկարագրվում է կարմրավարդ լուսափայլ ծոցով, ծիրանի դաստակներով և մանուշակի հովերով [ԺԹ, 24-25: 121]: Նրա պատմումանը զարդարված է կապույտ, ծիրանի և «ոսկեղող» որդան-կարմիր գույներով. «Գեղեցիկ պատմումանաւն զարդարեալ էր, // Ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեղեզոյ, ի յորդանն ոսկեղողեր գոյն» [ԺԹ, 28-29: 122]²¹:

3.4. *Ծովինար* անվան ստուգաքանությունը: Հայերենի որոշ բարբառներում *ծովինար* կամ *ծովյան* բառն ուղղակի նշանակել է «փայլակ, կայժակ» [ՀԼԲԲ, հ. Բ: 420]²²: Սակայն այդ զարգացումը պետք է համարել երկրորդային, այն է՝ աստվածության անվան փոխակերպում և վերածում հասարակ գոյականի թերևս քրիստոնեական դարաշրջանում:

Հետաքրքիր է, որ Տավուշի մարզի Սևքար գյուղի խոսվածքում մինչ օրս ծովյան բառը գործածվում է «ծիածան» իմաստով: Արհասարակ, ամպրոպ-որոտ-փայլակ-ծիածան պատճառահետ-տևանքային կապը հստակ երևում է նաև բարբառային օրոտիկ բառի մեջ (<որոտ-իկ), որը նույնպես նշանակում էր «ծիածան» և պահպանվել էր Սասունի գյուղերում [ՄԵԸ Համեյան 2001: 109-110]: Ծիածանի կապը [Ծիրանի] ծովի հետ երևում է հետևյալ ժողովրդական հանելուկում (Գարնի). «Անանա՛ բեզան, չանանա՛ բեզան, որտե՞ղից ես զալիս: // - Ծովից եմ զալիս: // - Բա խի՞ չես թռչած: // - Տալիցն եմ զալիս» (պատասխանն է՝ ծիածան) [Հարությունյան 1965: 15-16]²³:

Ծովինար անվան՝ միանգամայն ընդունելի և անվիճարկելի ստուգաքանությունը ժամանակին տվել է Մ. Աբեղյանը: Քանի որ հեթիաթներում և ժողովրդական հավատալիքներում Ծովինարը հաձախ կոչվում է նաև Ծովեան կամ Ծովեալ, ընդ որում այդ բառերն ակնհայտորեն կազմված են ծով արմատից -եան և -եալ վերջածանցներով, այսինքն Ծովյան/Ծովյալ անունը բառացիորեն նշանակում է «ծովային», ուստիև հետազոյում Ծովեան ծից -ար վերջածանցով օրինաչափորեն կազմվել է Ծովինար անունը,

²¹ Աշխարհաբար այս հատվածը Կազբեն Գևորգյանի թարգմանությամբ հնչում է այսպես. «Զարդարված էր պատմումանով գեղեցկաստեն, // Որ բեհեզի կապույտ, դրյան [կարմիր] ու ծիրանի // Գույներով էր ոսկեղողում» [Նարեկացի (թրզ.): 405]:

²² Բառը հայտնի էր Լոռու, Ղազախի, Ծովավերի, Արարատյան դաշտի, Խարբերդի բարբառներում:

²³ Ծիածանի հիշաբանական հատկանիշների մասին տես Հարությունյան 2000: 217-218:

ինչպես Ոսկեան ձևից ունենք Ոսկինար, Հեղինե ձևից՝ Հեղինար իզական անունները [Աբեղյան 1966: 78-79. 1975: 70-72]:

3.5. Ստորագրանության պատմություն: Գ. Ղափանցյանը Ծովինար անունը համարում էր Ենթաշերտային ծագման և բացատրում որպես «ջրահարս», «ծովահարս» համեմատելով լազմեզրել. *c'vinari / c'vinori* «կուղք», «ջրասամույր» բարի հետ: Նա գտնում էր, որ նար բարը հայերենում նշանակել է «ջրահարս», «գետային աստվածություն» և ծագում է աքբադերեն *ուռնույնինաստ* բարից²⁴: Հետևաքար Ծովինար կազմությունը նա համեմատում էր Ոսկինար, Հեղինար կազմությունների, ինչպես նաև հայ ժողովրդական կրկներգում հիշատակվող «հոյ նար» կապակցության հետ՝ դրանք մեկնելով հաճապատասխանաբար որպես «ոսկե ջրահարս», «գետի (ջրի) հարս» և «հոյակապ, հզոր ջրահարս» [Կառավար 1975: 373]:

Որպես այս ստորագրանության ապացույց՝ բերվում էր Նոր Նախիջևանի հայերի հավատալիքներում ծովի մար կերպարների առկայությունը, որոնք համարվել են «ջրերի մեջ ապրող չար ոգիներ»: Սակայն սա բոլորովին էլ հատուկ անուն չէ և պարզապես նշանակում է «ծովի մար», ինչպես հայտնի են եղել նաև *զիշերկամայր* «զիշերկա չար ոգիներ» էակները Վանի ժողովրդական հավատալիքներում²⁵: Այսպես որ, ծովի մար կերպարը չի կարող համարվել Ծովինար բարի զուգահեռ ձև: Բացի այս, Գ. Ղափանցյանը Ծովեան և Ծովեալ անուններում -եան և -եալ վերջածանցները բացատրում էր որպես արմատներ՝ «ողի, ալք» նշանակությամբ, ինչը նույնպես հեռու է իրական ստորագրանություն լինելուց [տես Կառավար 1956: 295-297]: Անձրև առաջացնելու համար պատրաստվող, Նորիկին կոչվող խրտվիլակը նոյնպես չի կարող ապացույց լինել այլ կերպ հնչող՝ Նար աստվածության վերականգնման համար (նոյն հաջողությամբ ծովի, ծիրծինաման, պուալատիկին) և այլ խրտվիլակների անունները կարելի է վերականգնել որպես դիցանուններ, մինչդեռ դրա համար անհրաժեշտ են լրացուցիչ այլ ապացույցներ):

²⁴ Աքբադերենում կար ուրս «գետ» բարը և *Nāru* աստվածություն, որը երբեմն համարվել է «գետի աստվածուիկ» [Կառավար 1956: 300]:

²⁵ Զիշերամայրերի մասին տես Սրվանձնույանց 1978: 149-150. Աբեղյան 1975: 31. Asatryan, Dalalyan 1999-2000: 171-172: Ինչ «ծովի մարերի» մասին հիշատակում է Ուաֆայել Պատկանյանը. «Մարդուս միտուն ինչ ասիս թէշ պաներ կանցնի խօնճօլոցներ, ծովի մարեր, մէզմէն աղեկներ» [տես ՀՐԲ, հ. Բ: 420]: Ծովի մար առասպելական էակներն հիշատակող գրականության ցանկը տես Մելիք-Օհանջանյան 1946: 283-284:

Հ. Ամառյանն իր «Անձնանուների բառարանում» նույնպես ցուցաբերել է Գ. Ղափանցյանի ստուգաբանությանը նման նոտեցում՝ Ծովինար անունը բացատրելով հայ. ծով և արար. յև **nār** «հողու» բառերից կազմված, թերևս հաշվի առնելով անվան ուշ գործածության հանգամանքը՝ 15-17-րդ դարերում [Ամառյան 1942-1962, հ. Բ: 573]: Ինչ վերաբերում է *-նար արմատին, ապա Կ. Մելիք-Օհանջանյանն էլ այն կապում էր հենդիրանական **nār-**, **nər-** ձևի հետ, որը նշանակում է «այր», «կին» [Մելիք-Օհանջանյան 1946: 285]:

Պետք է նշել, սակայն, որ լեզվաբանական տրամաբանության տեսանկյունից նշված բացատրությունները կաղում են և առավել ննանվում ժողովրդական ստուգաբանության: Նախ, Գ. Ղափանցյանի ստուգաբանության իրական լինելու դեպքում Ուկինար անունը կինչեր *Ուսկենար (ինչպէս Ուսկեհատ, Ուսկեվազ և այլ), Հեղինար անունը կինչեր Հեղնար²⁶, բացի այդ հայերենում հեղ չի նշանակում «ջուր» կամ «գետ», այլ միայն «քափել, լցնել», ընդ որում այդ արմատը չի գործածվել զոյականաբար [Ամառյան 1971-1979, հ. III: 76], իսկ «հյու նար» կրկներոք ծխական նշանակություն ունի և ոչ բարակամական արժեք, ընդ որում ննան կրկներգերը կարող են և կազմվել իին դիցանունների կրծատոնամբ: Այնպէս որ, բոլորովին չի բացառվում, որ «հյու նար» ծևը ծագեր Ծովինար աստվածության անունից, սակայն դա դեռ չէր նշանակի, թե հայերենում գոյություն են ունեցել նար «ջրահարս» կամ նար «հուր, կրակ» արմատները²⁷:

Համանման մոտեցմամբ՝ 20-րդ դ. առաջին կեսին արդեն իսկ փորձ էր արվել Վրացական Երգերի հնչաշարային կրկնակներում

²⁶ Հեղնար ծևը գոյություն ունի, սակայն ծագում է Եղնար «եղնիկ» բառից, ընդ որում որպես իգական անձնանուն այն գործածվել է Եղնար / Եղինար / Հեղնար տարբերակներով [Ամառյան 1942-1962, հ. Բ: 118. հ. Գ: 81]: Կ. Մելիք-Օհանջանյամբ, սակայն, Հեղնար անունը կապում է Եղի (Եղիկ, Եղիկցորեն, հեղի) «նորահաս ցորեն», «հասնելուն մոտ կարահամ ցորեն» բառի հետ, ըստ այն Հեղնարին հանարելով հացահատիկի հովանավոր դիցուի [Մելիք-Օհանջանյան 1946: 286, ՀՀԲ: 180. Ամառյան 1971-1979, հ. II: 19]:

²⁷ Այլ բան է, որ առասպելաբանական մակարդակում Ծովինար դիցանունը կարող էր բաղադրվել այլ ժողովուրդների մեջ առկա այն կերպարների անուններին, որոնք պարունակում էին նար արմատը [ինմտ. Կառահյան 1956: 300. Պետրոսյան 1997բ: 8-10. Պետրօսյան 2002: 9-13]: Բացի այդ, Վան-Շատայն-Արքակ-Խոչաք տարածաշրջանում, օրինակ, Ժանձար կը վկանակ էր անծրի հարս, ինչպէս պարզապես կարող էր լինել Ծովինար դիցանվան ուշ ժողովրդական ստուգաբանության արդյունք համուխաղող «ծովին-նար» կապակցության ստուգաբանության հետևանք [ինմտ. Հանեյան 2001: 109-110]:

տեսնելու իինարևեյան աստվածությունների անուններ [Ըստ 1937]: Այսպիսի մեկնությունը, սակայն, միանշանակ չէ, քանի որ ինչպես որոշ դիցանուններ կարող էին ծագել «մանկական բառերից» և բնածայնություններից, այնպես էլ նույն այդ արմատները կարող էին առանց որևէ ծիսա-դիցանական իմաստի կիրառվել երգերում, ինչպես երեխաների լեզվում:

Ինչ վերաբերում է հայկական ժողովրդական երգերին, ապա նրանց կրկներգերում հաճախ են հանդիպում նման «քարեր»՝ «հայնըր, նայ, նայ», «նայ, նայ, նայ», «նայ, նայ, նայ», «նանայ», «վայ նանա, նանար», «Նարոյ, Նարոյ, Նարոյ ջան», «Հոյ Նաներ, Նաներ» ևն: Թեև որոշ դեպքերում հնարավոր է ենթադրել վաղնջական դիցանվան արտացոլում կրկնակներում (Նան > նաներ, Նանա > նանայ/ր), սակայն մեծ նասամբ դրանք միանգամայն կարող էին ծագել պարզապես բնածայնական ծագում ունեցող սովորական հնչաշարային կրկնակներից, այն է՝ «տարրական» ցեղակցության բառերից, որոնք բնորոշ են տարրեր ծագում ունեցող լեզուներին՝ աշխարհի տարրեր կողմերում [Խմբ. Խաչատրյան 1998: 209-210, 214, 216]:²⁸

Ամեն դեպքում, նար բար գոյություն չունի գրական հայերեն լեզվում և բարբառներում, ուստիև անհավանական է երկու տարրատեր արմատներով (մեկ հայկական՝ ծով, և մեկ աքքադական / արաբական / հնդ-իրանական՝ նար) բարդ բարի կազմումը հայերենում՝ մանավանդ ժամանակակից աշխարհաբար հայերենի -ի սեռական հոլովի ցուցիչով՝²⁹:

3.6. Դիցանվան հնագույն հիշատակությունը: Ծովինար աստվածության արական տարրերակն է, ըստ երևոյթին, հիշատակված դեռևս Կանի թագավորության դիցարանում՝ «Մերի դռան նշանավոր արձանագրության մեջ՝^{AB22} Տս-ի-ու-նա-ն-է DINGIR «ծովերի աստված» ծևով [ԿՅԿԻ: N 38: 45, 48, 462]: «Ծով» կամ «աստված» գաղափարագրով (^{AB} կամ ^B) նախանշվող այս

²⁸ Բարեկենդանին ասվող մեկ այլ կրկները՝ «Հանաներ, նաներ, նաներ, // Զանանաներ, նաներ, նաներ» [տես Խառասոյան-Առաքելյան 2005: 100], կարծես իր մեջ համատեղում է Նան & Հանի / Անի (= մայր) դիցանուններով:

²⁹ Հ. Աճայանը բերում է նաև Ծով, Ծովակ, Ծովիկ անձնանունները՝ դրանք համարելով բնիկ հայկական: Ինչ վերաբերում է Ծովմարթուն անձնանվանը, ապա դրա երկրորդ բաղադրիչը (խաթուն) թեև օտար բար է, սակայն անկախաբար գործածվել է հայերենում, ըստ որում բավական հաճախական:

Ծվինինառու(Ե)³⁰ աստվածությունն, ակնհայտորեն, համապատասխանում է Ծովինարին, որն, ըստ երևույթին, ունեցել է և իր արական գուգահեռը, քանի որ հայտնի է, որ 19-րդ դարում գրառված մըր ժողովրդական հակատալիքներում Ծովինարը հաճախ «երևում է նաև ծպտված տղանարդու կերպարանքով»

[Մտես Արեւյան 1975: 70]:

Նախկինում Ծվինինառու(Ե) դիցանունը կարդացվում էր աստվածության ցուցիչով (^թ) և թարգմանվում որպես «Լճերի աստված» [ԿԿՀ, N 27: 144, 147], հետագայում Ն. Հարությունյանի կողմից ճշգրտվեց այդ դիցանվան զաղափարագրի ընթերցումը (^{ԱՅ22}) և անոնը սկսեց թարգմանվել «ծովերի աստված» [ԿԿՀ: 49, որս. 22]: Ս. Հմայակյանը վարկած առաջ քաշեց առ այն, որ իրար ետևից հիշատակվող «լեռների աստվածը», «հարթավայրերի աստվածը» և «ծովերի աստվածը» ներկայացնում են ուրարտական դիցաբանական պատկերացումները տիեզերքի ուղղահայաց եռամաս կարուցվածքի մասին երկինք, երկիր, ծով [Հմայակյան 1990: 31-32, տես նաև 95, ծան. 31]: Այս առօլում կ հիշատակելի է «Վահանի հիմնի» երկինք – երկիր – ծիրանի ծով պատկերացումը, ընդ որում վերջինիս անձնավորումը հենց Ծովինար / Ծովյան էր: Սակայն Ն. Հարությունյանը «Միերի դրան» վիճագրի նույն հատվածը թարգմանում է այլ կերպ: «Երկրների աստծուն..., սահմանների (?) աստծուն..., ծովերի աստծուն...» [ԿԿՀ: 52]:

Ինչ վերաբերում է այս դիցանունից առաջ դրված զաղափարագրին, ապա Ս. Սալվինին չի ընդունում դրա «ծով» ընթերցումը՝ վերադարձնալով նախկին «աստված» (^թ) ընթերցմանը [Salvini 2001: 248]: Ինչևէ, մեզ արավել հետաքրքրողը տվյալ դեպքում զաղափարագրից հետո եկող մասն է, որը բարացիրեն նշանակում է «ծովերի» (-անը վերջավորությունը հոգնակի սեռական հոլովի ցուցիչն է) [Մելուկասու 1960: 56]³¹. այսինքն՝

³⁰ Ուրարտ. Բայ «ծով, լիճ» / Խայ. Ծով բառը նույն հնյունավիշտությամբ համդիպում է վակի շրջանուու գտնվող Ծվառը պուդի անվան մեջ: <Ետաքրքրի է նաև, որ 2002 թ. գտնված էրմանցի ուրարտական արձանագրության մեջ երկու անգամ (մեկ հստակ գրությամբ և մեկ մերականնաված տողով) հիշատակվում են «ծովային աստվածները» (DINGIR^{MES} շա-i-ni-ni / շա-ni-ni) հոգնակի թվով, որոնց պետք է գոհաբերվեր համապատասխանաբար՝ երեք և մեկ ոչխար [Գրելյան 2004: 225, ՀԿ I, տող 11-12, 226, ՀԿ II, տող 21, 245, 21], 251, (11)-(12), (21):

³¹ Ս. Սալվինին տվյալ դեպքում -անը վերջավորությունը համարում է հոգնակի տրական հոլովի վերջավորություն [Salvini 2001: 247]: Այս տեղեկության համար են պարտական են Ե. Գրելյանին:

որոշչի իմաստ ստանալով նշված դիցանունը պետք է պարզապես նշանակեր «ծովային» (ճիշտ ինչպես գրաբարյան ծովուց ծով), ըստ այդ նույնանալով *Ծովինար* դիցանվան ստուգաբանական սկզբնմաստին «ծովային»:

Եթե Ծվինինառ(ե) աստվածությունն իսկապես ուրարտական դիցարանուն առնչվել է կայծակին ու անպրոպին և Ծիրանի ծովին, ապա ուշագրավ է, որ Վերոհիշյալ հանելուկը «ամպի և որոտի» մասին (§ 3.1) հայտնի է նաև իր «արական» տարբերակով. «Սարեն կուգա սըլվըլալեն, // Օսլի պէխեր պըլարլալեն. // Կարնաղբեն ջոր կը խմե, // Ծովանակեն ծեն կը հանե», որի պատասխանն է «որոտ և կայծակ» [Խեն Հարությունյան 1965: 12]: Զ. Ուասելի ենթադրությամբ՝ Ծվինինառ(ե) աստվածն է առասպելի նախնական տարբերակում եղել ամուսինը հայոց Ծովինար մայր աստվածուհու, որը ծննդաբերում է դիցավեպի առաջին սերնդի հերոսներին [Russell 1994: 43]:

4. Տիգրան

4.1. «Աժդահակի երազի» առասպելաբանական հատկանիշները: Ըստ «Աժդահակի երազի» (§ 3.2)՝ Ծովինարի հետ համադրվող կնոջ ծնած եռվորյակները, երեք կենդանի առյօւծ, ինձ և վիշապ սանձած, արշավում են արևմուտք, հյուսիս և արևելք (կամ հարավ-արևելքը) [Խորենացի I, ԻԶ: 88-90]: Փաստորեն, այս նորածին եռվորյակները, որ իսկույն սուրում են ոստիների դեմ, օժտված են «մանկություն չունեցող» հերոսի հատկանիշներով: Մյուս կողմից, նրանք ըստ էության ներկայացնում են արդեն հասուն և ծևակորված գերազույն աստծո կերպարի էվլոյուցին զարգացման հնագույն փոլերից մեկը [Խնմտ. Աբրամյան 2006: 57]: Հայ առասպելաբանական մողելում աշխարհի չորս կողմերը, ամենայն հավանականությամբ, նույնացվել են չորս կենդանիների հետ (առյօւծ, ինձ, վիշապ՝ և այժ/ցոլ) [Datalyan 2001: 168]:

Հայոց դիցաբանության մեջ ամպրոպային գերազույն աստվածը՝ Արամը (հետագայում Արամազդ), որի հետ էր հանաղդվում Մեծ Հայքի արքան, մեկնակետից (մայրաքաղաք կամ լեռնազագագաթ) արշավանքներ է ծեռնարկում երեք ուղղություններով, իսկ չորրորդ ուղղությունը մնում է նրա թիկունքում: Այդ եռակողմանը արշավանքը խորհրդանշվում էր աշխարհի ծագերի կենդանակերպ «պահապանների» (հին հնդկական տերմինով ասած՝ յոկապալա) միջոցով, որոնք «Աժդահակի երազում» հանդես

Են զայիս առյուծի, ինձի և վիշապի տեսքով³²: Ինչպես նշվել է, եռվորյակների ծննդյան այդ առասպելում ասես մեկտեղ միավորված են աշխարհի կողմերի, արեգակնային պտույտի և կյանքի վերափոխման վերաբերյալ պատկերացումները [Հակոբյան 2001: 152]:

«Աժդահակի երազում» հիշատակվող եռվորյակ դյուցազուները, փաստորեն, ներկայացնում են ամպրոպային գերազույն աստծո կերպարի տրոհումը երեք մասի (ինչպես որ «Սասնա ծրերում» այդ տրոհումը կատարված է երկուսի), ընդ որում նշված «տրոհումը» կարելի է նաև մեկնաբանել որպես գերազույն աստծո երեք փոխակերպումներ (incarnation) [Dalalyan 2001: 169]: Գերազույն աստծո գործառույթները պողոյեկտովելով բաշխվել են այդ եռվորյակների միջև, սակայն ոչ հավասարաչափ կերպով, քանի որ երրորդը ամենակրտսերը, ամենազորեղն է, իր կերպարով ծածկում է առաջին երկուսին և կարծես նույնանում գերազույն աստծո հետ: Կարելի է վերականգնել նաև այս եռվորյակների ին անունները՝ Արամանյակ, Արամայիս, Արամ, որոնք հայոց ծննդաբանական շարքում վերածվել են իրար հաջորդող կերպարների³³: Հատկանշական է, որ բոլոր նշված

³² Այս առասպելաբանական մողելի մասին մանրանասն տես Ղալայսան 2001ա: 27-30: Քրիստոնեական Ղարծից հետո նոյնպես աշխարհի չորս կողմերի և եռակողմնարշականը պատկերացնում պահպանվում էր: Այսպես, Ազարանգեղոսի Պատմության մեջ հայոց արքայի (Տրդատ Մեծի) մեկնակետը քաղաքամայր Վաստակապտան է, որտեղից կարծես եռակի հարված է հասցվում եռեանությանը՝ հեռանոսական մեջանները կործանվում են եռափուլ արշականըներով [Հակոբյան 2001: 145-146]: «Ետազարում Սեսրու Մաշտոցի լուսավորչական գործունեությամբ կրկնվում է այլ «Եռակողմնարշականը» մեկնակետ Վաստակապտանի և, այս անգամ, հետի Գոյրեն, Վիրը ու Արևմտուր [Ղալայսան 2001: 2015] ժանապարհ ավարին հակառակ ուղղությամբ, որով նաև կրկնվում էր արկի ճնբացքը [Հակոբյան 2001: 152-153, 2006: 77-78]: Մաշտոցի գործունեությունն ինքնին, ինչպես և անվան գուգահեր ծևերը, առնչվում են արկին ու երա տարեկան շրջապտույտին, իսկ Մաշտոցի կերպարը մեծապես ազդված է գերազույն աստված Արամագդի կերպարից [Ղալայսան 2006: 61, 63, Պետրոսյան 2006: 50-52]: Եռակիության գաղափարին արնչվոր գրականությունը տես Russell 1989: 324, com. 16.

³³ Ուշագրավ է, որ զարդանամուտի տոնին՝ Բարեկենդանին ասվող մի պարեզգուն հիշատակվում է «Տղա, անուն Արմենակ, // Սար-նար-նար-նար», // «Ծոյի ի՞նչ կենիս մենակ, // Նար-նար-նար-նար» [տես Խառասույան-Առաքելյան 2005: 102], որտեղ, թվում է, ակնարկվում է Ծովնարից ծնված Արմենակի (= Արմանակ) մասին, հմնտ. § 3.5: Եռվորյակների անունների վերաբերյալ մեկ այլ կարծիք ունի Ա. Մանագականյանը՝ նրանց համարելով Հայկի, Արամի և Տիգրանի հետ [Մանագականյան 2001: 79-81], ինչն, իհարկե, ժամանակագրական և մշակութաբանական անախրոնիզմ է և չի կարող լինել իրական վերակազմություն:

անունները գուցահեռներ ունեն փոքրասիական լեզուներում, մինչեւ նրանց իրանական ստուգաբանությունները բնավ համոզիչ չեն [Խուս Զահորուխյան 1981: 52-53. Պերսանակ 1993: 11]:

Արամը համարվում է «հայոց ամենաառաջին երրորդ հերոս»։ Որը կրվում է երեք ախոյանների դեմ աշխարհի երեք կողմերում, պատահական չէ նաև, որ հայոց հին տոմարի համաձայն անսլա երրորդ օրը կրչվում էր Արամ [Պետրոսյան 2001: 164-165]: Արամն, ըստ Երևային, եղել է հայոց գերազուն աստվածը՝ նախան Արամազդի պաշտամունքի տարածումը³⁴: Արամազդ դիցանվան Արամաստ տարբերակը, որը վկայված է Այգեկցու առակներից մեկում³⁵, ինքնին ցուց է տալիս, որ ժողովրդական ստուգա բանությամբ՝ այդ անունը բացատրվում էր «Արամ աստիւած»։ Բացի այդ, Արամն ունեցել է ակնհայտ ամպրոպային հատկանիշներ, որոնք արտացոլված են նրա եռակողմ արշավանքի առասպելում, ինչպես և այն հանգամանքում, որ Բարշամի հետ հականարտության առասպելում հետագայում նրան փոխարինում է Վահագնը (ըստ Շիրակացու հաղորդած Հարդագողի առաջացման ավանդագրույցի)³⁶ [III, Ա, 7: 95-96]:

³⁴ Արամի կերպարը Ա. Պետրոսյանի կողմից մանրանասն քննվել է որպես ամպրոպային աստծո վիպականացված տարբերակ [Պետրոսյան 2002: 47-57], իսկ գերազում աստված Արամազդի կերպարը համեմատվել է Արամի հետ, որի հականարտությունը Բարշամի դեմ պետք է հետագայում վերագրվեր Արամազդին և Բարշամնային [Petrosyan 2007: 186, 193]: Արամազդի վերաբերյալ տես նաև Պետրոսյան 2006ը։

³⁵ Այս մասին մանրանասն տես Հովհաննիսյան 1981: 254: Արամաստ գրության ձևը հայտնի է նաև Ազգաբանգեղոսի ծեռագրերում [Աճաջյան 1942-1962, հ. Ա: 268]:

³⁶ Արամազդի և Վահագնի ամպրոպային գծերի ընդհանրաւայր շորոց տես Դալայան 2006: 60, 62: Թեև Վահագնը պարզապես կարող էր ընկալի որպես Երկնքի և Երկիրի արարիչ աստծո դրոյ (հնաւ. «Երկնքն Երկիր, Երկներ Երկիր...») և ըստ այնք շարունակեր իր հոր հականարտությունը Բարշամի դեմ։ Այս առօնուվ հատկանշական է, որ «Վահագնի հիմնք», ի թիվս այլայլ մեկնաբանությունների, կարող է համարվել պատահող նվիրագործության ծեփ հետ, քանի նվիրա գործությունն ինքն է ընկալիվել է որպես Երկրորդ ծնններ [Պետրոսյան 2001ա: 39. հմտ. նաև Ստեփանյան 2003: 185-186]: Ըստ այդմ, Վահագնը կարող էր համարվել «աստվածների հայոց» Արամազդի որդի, բայց միևնույն ժամանակ, որպես նվիրագործության ծննվ անցնող կերպար, վերածնել ամպրոպի ժամանակ բռնկված Շիրանի ծովից և կարմիր Եղեգնիկից։ Այս պատկերացումը, սակայն, կարող էր լինել փոխակերպումն ու արդիականացումը առավել վանշա կան առասպեկտի, որում Վահագնը ի սկզբանն ծնվում է Շիրանի ծովից (Ծովինարից), միանգամից որպես մորուքավոր պատահ, և ըստ այնք բնորոշվում է «մակարության չունեցող» հերոսի հատկանիշներով [Խնաւ. Աճաման 2006: 47]: Առտնին մակարդակում յուրաքանչյուր նորածին կարող էր համարվել կմոջ արգանդը խորհրդանշող «ծիրանի ծովից» ու «կարմիր Եղեգնիկից» դորս եկող

«Ամդահակի Երազում» երրորդ նորածին ոյուցագնը, անարի (= վիթխարի) վիշապ սանձած, արշավակի սլանում է դեպի արևելք (հարավ-արևելք)՝ հենց Ամդահակի վրա: «Վիպասանքի» իրավասում շարադրանքում դա Տիգրան է, որը, փաստորեն, ներկայացվում է որպես Ծովինարի հետ համադրվող կնոջ որդի: Իսկ դիցաբանական մակարդակում, Մ. Արենյանի կարծիքով, Ամդահակի հակառակորդը պետք է լիներ Վիպաշաքար Կահագն, որը «Վիպասանքում» ներկայացվում է որպես Տիգրանի որդի: Դիցաբանական և լեզվաբանական նյութի քննությունը ցույց է տալիս, որ Տիգրան է կոչվել, ամենայն հավանականությամբ, հայոց գերազույն կամ ամառոպային աստծո մակողիրը, որը պարզապես նշանակել է «նիզակակիր» [Դալալյան 2001: 105]:

4.2. *Տիգրան* անվան ստուգաբանությունը: *Տիգրան* անունը գրավոր աղբյուրներում առաջին անգամ գտնում ենք Հերոդոտոսի Երկում **Τιγράνης Αὔτε Μέγας**, որը Մարաց առաջնորդն էր մ.թ.ա. V դարում [VII, 62: 407. VIII, 26: 468. IX, 96: 541. 102: 543]: Հ. Ամառյանն այս անձնանունը ստուգաբանում էր ինչ պարսկերեն ***tięgra-rāna** «նետերով մարտնչող» արմատներով և համեմատում 170 թ. հիշատակվող լազ իշխան **Τιγραπάտης**-ի անվան հետ, որը կարելի է բացատրել որպես «նետերի պետ»³⁷: Սակայն Գ. Զահորելյանը թիւ հավանական է համարել *Տիգրան* անվան ծագումը արագաբանությամբ (*haplogenie*), ինչպես ենթադրում էր Հ. Ամառյանը [Զահորելյան 1981: 57-58]:

Հին հրանական անունները ստուգաբանող նշանակոր լեզվաբաններից (Լազարո, Յուստի, Բարտոլոման, Հյութշման) ոչ չի փորձել բացատրել *Տիգրան* անվան ծագումը: Ակնհայտ է այսուեղ հայ. **տէգ** բարի մի տարատեսակի արկայությունը, իսկ -ը մասնիկը կարող է մեկնել թե՝ որպես աճական, թե՝ որպես արմատական հնչյուն: Ինչ մնում է -ան վերջածանցին, ապա նրանից հայերենում կազմվում էն դիցակիր անձնանուններ՝ Միհրան, Տիրան ևն [Datalalyan 2002: 5-6]: Ինչպես որ Միհրան նշանակում էր «միհրական», Տիրան՝ «տիրական», այնպես էլ *Տիգրան* պետք է նշանակեր «ստեգավոր», «նիզակավոր, նիզակակիր»: Դա, ըստ Երևոյթին, սկզբնապես մակողիրն էր

Վահագնի հետ (հմնտ. § 3.3): «Վահագնի հիմնի» առասպեկտաբանական գուգահեռների մասին տես [Dumézil 1970: 5. Russell 1989: 321-322. Areshian 1992. Petrosyan 2007: 182]:

³⁷ Սահմանասն տես Հ. Ամառյան՝ անձնանունների և արմատական բարարաններում [Ամառյան 1942-1962, հ. Ե: 146. 1971-1979, հ. IV: 638]: *Տիգրան* և *Տիգրապատ* անունների մասին տես նաև Justi 1895: 324-325.

ամպրոպային գերազույն աստծո, որը կարող էր պատկերվել նիզակով վիշապին սպանելիս:

«Ետարքքիր է, որ օստ Ստրաբոնի (I դ.) Տիգրիս գետի անունը մարերեն նշանակել է «Նետ», քանի որ այդ գետն, իբր, Նպատի մոտ նետի նման կտրում-անցնում է մի լիճ առանց լճի ջրերին իր ջրերը խառնելու [XII, 14, 8: 498]: Այս ավանդագրույցը շատ նման է «Սասնա ծոերում» վկայված այն դրվագին, որում ամպրոպային ծովածին երկվորյակները հրենց բերդը կառուցում են այն առվի ակունքի մոտ, որը կտրում-անցնում է մի հորդաբուլս գետ՝ առանց գետի ջրերին իր ջրերը խառնելու [ՄԴ: 24-25]: Այդ առուն կամ Ստրաբոնի գրույցում Տիգրիս գետը, փաստորեն, նույնացվում են ամպրոպի ասլոն խորհրդանշիչները:

Ստրաբոնի հաղորդած ավանդագրույցում Նպատ լեռնանունն, իր հերթին, կարելի է ստուգաբանել *ni-pat- կազմությամբ՝ ու-«ներքև, ստորին» նախածանցով և pat- «նետ» արմատով³⁸: Նպատի ստորոտով անցնող Տիգրիս գետի անունը համարվում է վերահնաստավորումը աքքաղական Dīqlat ձևի. արդեն Բագդաստանի նշանավոր արձանագրության մեջ այս գետը կոչվում է Tigrā- [Պերսկանք 1993: 13]: Ժամանակակից արաբերենում և պարսկերենում Տիգրիսը կոչվում է Dīla, որը նույնպես նշանակում է «Նետ»: Ուշագրավ է, որ Տիգրանի գրույցինը «Հանամեռում» Ֆարիդունը, Զոհիհակի (= Աժդահակի) դեմ կոչվի գնալիս անցնում է Տիգրիս գետը: Որը Ֆիրդուսին կոչվում է Արվանդ և միանգամից նշում, որ արաբերեն նրա անունն էր Ղիջա [1885-1920: 68-69]:

Հատկանշական է, որ խուրիական մի առասպելում Արանցան գետը (որը Տիգրիսի խուրիական անվանումն է) վերածվում է արծվի և օդով սուրում Աքքաղի դեմ [Խեանօս, Տոնօրոս 1992: 258-260]: «Վհպասանքում» նույնպես Տիգրանը Աժդահակի դեմ սուրում է արծվի թերով սլանալով («ի վերայ վիշապին հեծեալ էր այր, արծույ իմն արդարն սլացեալ թելով տեսի յարծալեալ») [Խորենացի I, հ. 90]: Այս առումով՝ Տիգրանը կարծեն նույնանում է Տիգրիս գետին: Տիգրանի մայրը Ծովինարի հետ համարվող դիցուիին է, իսկ Տիգրիսի «մայրը» պետք է համարվեր Ծովը լիճը

³⁸ Այս արմատը գրույցինը ունի յաղնութերենում (թա՝ «նետ»), օսերենում (fat «նետ») և պամիյան լեզուներում [Անաս 1958-1989, մ. I: 424-425], պանից է կազմված նաև հայ. նպատակ (< *նի-պատ-ակ) բառը [Benveniste E. Études sur la langue Ossète, Paris, 1959: 47], որի սկզբնական իմաստն էր՝ «նետի նշավակն, թիրավն» [Աճառյան 1971-1979, հ. III: 475]: Ինչ վերաբերում է ու-«ցած» մասնիկին, այս դրա մասին տես Մելք 1978: 163:

(այժմ՝ Խազար լիճ), որից սկիզբ է առնում Արևմտյան Տիգրիսի վտակներից մեկը, և որը հաճախ համարվել է Տիգրիսի ակունք:

Մարական «*tigr-* «նետ» բառի արմատն է՝ իրան. **taiga-*- ձևը, որը ծագում է հ.-ե. *(s)toigo- / *(s)teig- / *(s)tiq- «սուր», «ծակել» նախածնից [Pokorny 1959: 1016]: Այն ժառանգ-ձևեր ունի հնդեվրոպական մի շարք լեզուներում (հին հնդկերեն, հունարեն, լատիներեն, գերմանական լեզուներ), այդ թվում՝ բազմաթիվ հրանական բարբառներում, որոնցում նշանակում է թե՝ «լեռան զագար», թե՝ «սուր» (ածականի իմաստով) և թե՝ «թուր» [Աճայի 1958-1989, թ. III: 292]: **tigr-* «նետ» ձևը, սակայն, իր լ-ր/ աճականվ առավել մոտ է ավեստ. *tīgra-* «սուր», *tīgri-* «նետ», հին պարսկ. *tīgra-* «սուր» *saka tigraxauda-* «սրախույր» (սրածայր զիսարկներով) սակեր» կապակցության մեջ, այնատներին, որոնք նույնպես ծագում են հ.-ե. վերոնշյալ նախածնից [Աճայի 1958-1989, թ. I: 325]³⁹.

Հայ. տէգ «նիզակի ծայրի սուր երկար» բառը ավանդաբար համարվել է իրանական փոխառություն [Հյութշման 2003: 253], քանի որ ենթադրվել է, թե բնիկ լինելու դեպքում բառը հայերենում պետք է հնչեր *թէկ: Սակայն ուշագրավ է, որ իրանական և ոչ մի լեզվում այս բառի գուգահերթները չեն նշանակել «նիզակի ծայր»⁴⁰, թեև, իհարկե, դրանց գրոժանանության հմաստային դաշտը շատ ավելի ընդարձակ է, քան հայերենում: Մեզ մոտ տէգ բառը փոխաբերաբար օգտագործվել է նաև «տէգ աչաց» (սուր նայվածք) և «տէգ մօրուաց» (մորությ նորաբույս մազերը) կապակցություններում [Աճայիան 1971-1979, հ. IV: 400]: Եռվորյակների ծննդյան առասպեկտը ակնհայտ է, որ Տիգրան անոնճը կարող էր կապվել նաև լեռան զագարի հետ՝ որպես անպրոպի ժամանակ «զագարին ծնված» հերոս: Այս առումով նա

³⁹ Ի եեավ, նույն արնատից է ծագում *tigr-* «վագր» բառը, որը հունարենի (τίγρις) միջոցով տարածվել է բազմաթիվ եվրոպական լեզուներում և ուստեղնում: Այն կարող էր առաջանալ թե՝ «սուր, հաստո» նշանակությունից (ժանիքների համար ասված), թե՝ «արագընաց, արազավազ» նշանակությունից:

⁴⁰ Բացառություն է կազմում, թերևս, միայն օտերնը, որում *ærttiç* / *ærtteç* բառը նշանակում է «երկարաց նետավալք» և գործածում է միայն «Նարդյան» դիցավեպում, որը ոյոցազուն հերոսներ Բարթազի, Ացամազի նժոյզները սնվում են այդ աղթի նետավարներով: Վ. Արակը օս. *ærttiç* / *ærtteç* բառը համարում է բարդված օս. *ært-* «երեք» և *tiç* / *teç* «սուր ծայր» բառերից՝ զոներով, որ այն նշանակում է «եռարև նետավալք», որը ժամանակին բնորոշ է Եղել սկոտական ռազմարվեստին [Աճայի 1958-1989, թ. II: 426]: Հնյունական առումով միանցամայն հնարավոր է *ærttiç* բառի առաջին մասում տեսնել նաև օս. *art* «կրակ» բառը. ըստ այդմ՝ *ærttiç* կազմությունը կնշանակեր «հրե նետավալք»:

Կարող էր առնչվել նաև ամպրոպի ժամանակ բռնկվող «կարմիր եղեցնիկին», քանի որ հայ. նետ բառն, օրինակ, բխեցվում է *հ.-Ե. *nedo-* «եղեգն» նախածնկից [Pruhvel 2007: 85]:

5. Զարուիի

«Վիճականքում» Տիգրանի կնոջ անունն է Զարուիի, իսկ քրոջ անունը՝ Տիգրանուիի: Աժդահակը, ցանկանալով Տիգրանի դեմ զրգել նրա «սիրելի» քրոջը [Խորենացի I, հթ: 96], որին ինքը կնության էր վերցրել, ասում էր Տիգրանուիին. «Եղրայր քո Տիգրան խանդացաւ զտիկնութիւնոց ի վերայ Արեաց, ի կնոջէ իրուն ի Զարուիինայ զրգուեալ: Եւ զի՞նչ լինիցի այն, եթէ ոչ նախ ինձ մեռանել, և ապա լինել զԶարուիի ի վերայ Արեաց և զաստուածուիինաց ունել զտեղի» [Խորենացի I, հթ: 94]: Այսպիսով, ըստ Աժդահակի, Զարուիին ցանկանում էր զրավել աստվածուիների տեղը: Ժողովրդական ստուգաբանությանը՝ «Արյաց տիկին հաշռակ երազող» Զարուիու անունը միանգանայն կարող էր կապվել *ար(ի)-արմատի* հետ՝ զ-նախտիրով (զ-ար-ուիի): Հետաքրքիր է, որ Ավրոնանից գտնված հունական մի աղբյուրի համաձայն՝ Տիգրանն ուներ Արիազատե անունով դուստր, որի անունը բառացիրեն նշանակում է «արիացուց ծնված» [Russell 1999: 17], իսկ եթե փորձենք ստուգաբանել հայերենի տվյալներով՝ կարող էր նշանակել «արի-ազատ», այսինքն՝ ազնվական(ուիի): Նոյնանու՞մ է արյուք Արիազատեի կերպարը Զարուիու կերպարին, ոժվար է ասել, բայց երկուսի անուններն էլ ժողովրդի կողմից կապվել են *արի / արիացի* արմատի հետ:

Իրական ստուգաբանության համաձայն, սակայն, Զարուիի անունը ծագում է *իրան. zar-* «ոսկի» արմատից հայ. -ուիի իզականակերտ վերջածանցով⁴¹: Այդ նույն արմատից են կազմված հետևյալ անձնանունները՝ *Zarbānū* «ոսկե տիկին» (Ուսրամի դուստրը), *Zārduxt* «ոսկե դուստր» (իհշված մի կմքադրոշմի վրա), և այլ բազմաթիվ իրանական անուններ [նետ Justi 1895: 381-383], ինչպես նաև սակերի *Զարինա* թագուհու անունը, որի մասին հաղողորում է Դիոդորոսը (մ.թ.ա. I դ.) [II, 34, 3-5: 43-44]: Այդ անունն, ի դեպ, հայտնի էր նաև *Զարιնաւա* տարբերակով [Justi

⁴¹ Ստուգաբանությունը տվել է Հ. Աճառյանը [Աճառյան 1942-1962, հ. Բ: 175]: Զարուիի անվան մեկ այլ ստուգաբանության փորձ՝ տես Russell 1999: 15.

1895: 382]: Վերջին՝ Զարինա / Զարինայա անունն ուղղակիորեն կապվում է *օւ. զերին / զերինա «ոսկի», «ոսկե», «ոսկեգույն»* բառի հետ, ընդ որում օսերի մեջ մինչ օրս հանդիպում է նաև *Զերինա* հգական անձնանունը [Աճաء 1958-1989, մ. IV: 303]:

Հետաքրքիր է, որ արևի սովորակամ անվանումից զատ օսերը պահել են նրա պաշտօնամունքային անվանումը՝ *ԽՄՐՁԵՐԻՆ*, բարացիորեն՝ «Արև ոսկե», ինչպես նաև *ԽՄՐՁԵ ԽՄՐՁԵՐԻՆ* «Արևաց արև (ոսկե)» [Աճաء 1990: 108-109]: Առհասարակ, աշխարհի հին ու նոր ժողովուրդների դիցաբանական համակարգերին բնորոշ առասպեկտի համաձայն՝ անարողիք ժամանակ երկնային ծովով վիշապն առևանգում կամ կուլ է տալիս արեգակին, որը խորհրդանշվում է արևային կույսի, թանկարժեք քարի կամ ոսկու միջոցով⁴²:

Հայկական ժողովրդական հեքիաթներում նույնպես ոսկին արևի խորհրդանիշն է, ըստ որում այդ փոխաբերական կապը երբեմն առավել առարկայական բնույթ է ստանում. ոսկերիչը, որը դիվային տարերըն է ներկայացնում, իր ստորգետնյա բնակարանում բանտարկել է «արև-աղջկան» իր կնոջը: Եթե Վերջինս լուսամուտից գլուխը դուրս է հանում, ողջ քաղաքը լուսավորվում է, իսկ ոսկերիչն էլ պարբերաբար մտնում է նրա սենյակ՝ ստորգելու տեղում է արոյոք կինը, թե ոչ [Զաքարյան 2004: 49]: Ոսկերիչը նաև հանդես է զալիս որպես հերոսին փորձությունների ենթարկող, անդրաշխարհը խորհրդանշող կերպար [Զաքարյան 2006: 64]:

Հայոց «Սասնա ծոեր» դիցավեպում նման փորձությունների ենթարկվող հերոսներն ազատում են բարձր ու մուր աշտարակի մեջ պահկող՝ արևային կնոջ կերպար ունեցող Դեղձունը Ծամին, որն, ըստ Երևոյթին, պատկերվել է ոսկե ծամերով [Աբեղյան 1966: 383-384. 1966: 415-418. Պետրոսյան 1997ը: 13]: Միաժամանակ, հերոսները վիշապի բերանից համում են ոսկե ակը կամ մատանին, որը նույնպես արևի խորհրդանիշն է: Հայոց բանաստեղծական լեզվում էլ արեգակին տրվող մակդիրներից մեկը եղել է ոսկեգիսակ/Հարությունյան 2007: 292. 311-312]:

Այսպիսով, թեպետև Զարուհու կերպարը բացարձակապես չի բացվում «Կիպասանքի»՝ մեզ հասած գրավոր տարբերակում,

⁴² Այս հավատալիքը հայ իրականության մեջ հատկապես վար արտահայտված է ժողովրդական հանելուկներում, տես Արյունյան 1976: 238-239. Հարությունյան 2002: 88: Տես նաև Աբեղյան 1975: 68, 73: Արև-ոսկի իմաստաբանական կապի շուրջ տես Խաչատրյան 1997: 20-21:

սակայն անունից դատելով՝ նրան կարելի է համարել արևի իզական անձնավորում, որին սովորաբար առևանգում է վիշապը, իսկ ամպորապային հերոսը ազատազրում է այդ արևային կույսին: Դժբախտաբար չի պահպանվել Տիգրանի և Զարուհու ամուսնության որևէ պատում, այլապես մեծ հավանականությանք կունենայինք նման մի պատկեր:

Մեզ հասած տարբերակում Զարուհուն, ըստ էության, փոխարինում է «նրա փոխարեն Արյաց տիկին դարձած» Տիգրանուիին «գեղեցկագույնն ու խոհեմք կանաց մեջ» [տես Խորենացի I, հետ: 92]: Տիգրանուիին, փաստորեն, պատանդ է պահպում Աժդահակի մոտ, և միայն նրա անվտանգությունն ապահովվելոց հետո է Տիգրանը սկսում կռվել Աժդահակի դեմ, ինչի պատճառով իննու ամիս ուշացումով է սկսվում այդ պատերազմը [Խորենացի I, հետ: 96. հնտ. նաև Հարությունյան 1981: 70-71]⁴³: Խստ ուշագրավ է, որ Արաքել Այունեցու մի տեղեկության համաձայն, որի առբյուրն անհայտ է Տիգրանուիին եղել է Տիգրանի կինը, ինչը նույնությամբ կրկնում է նաև Ղ. Ալիշանը [տես Մնացականյան 1973: 66-67]: Այս դիցաբանական պատկերացումն արդեն հար և նման է Ծ[ո]վինինավ[Ե]-Ծովինար վերակազմված աստվածային գույգին:

«Տիգրան և Աժդահակ» առասպելում վերջինիս ապարանքի «արեգակնաստես երեսը», թերևս, խորհրդանշում է ներսում զնդանված արևային կույսին: Տիգրանուիի՞ն է դա, թե Զարուհին՝ առասպելի տրամաբանության տեսանկյունից արդեն էական չէ, ընդ որում այստեղ միախանված են անզամ կնոջ և քրոջ տիպարները, իսկ «ոսկե» նշանակող անձնանունը կարող է պարզապես լինել Տիգրան-Տիգրանուիի գույգի իզական անդամի տիտղոս: Վերջինիս, դիցաբանական տրամաբանության համաձայն, պետք է ազատեր Տիգրանը առասպելի նախնական տարբերակներից մեկում:

Զարուհի անվան ստուգաբանությունը լիովին համապատասխան է հայոց գերագույն մայր աստվածություն՝ Անահիտի Ուլկեմայր, Ուսկեծին, Ուսկեհատ տիտղոսներին, որոնց մասին վկայում է Ազարանգեղոսը [§ 809: 452]: Ուսկեմայր դիցություն

⁴³ Տիգրան-Աժդահակ-Տիգրանուիի եռանկյունու հետ կապված դեպքեր համեմատվել են նաև «Սասնա ծուերի» համապատասխան մի մոտիվի հետ [Աբեղյան 1966: 393]:

Կերպարը գուգահեռներ ունի նաև Կովկասում և այլուր⁴⁴: Անահիտը թեև, ըստ Ազարանգեղոսի, գերազոյն աստօն՝ Արամազդի դուստրն էր, սակայն նա հաճախ համարվել է նաև Արամազդի կինը⁴⁵, և ուստի Վիհարանական նակարդակում Տիգրան-Զարուիի (կամ Տիգրան-Արիազան) գոյզը ներկայացնում էր Արամազդ-Անահիտ աստվածային գոյզի հանարժեքը: Այս գոյզն է ծնունդ տալիս «միտրայական» հերոսին, որին հատուկ որոշ գօտեր երևան են զալիս «Վիհասանքի» հաջորդ կենտրոնական դեմքի՝ Սանատրուկի կերպարում: Սանատրուկը Խորենացու պատմական շարադրանքում թեպետև անմիջականորեն չի հաջորդում Տիգրանին, սակայն շարունակում է վեպի ընդիանուր տրամաբանական շղթան:

* * *

Որպես ամփոփում՝ նշենք, որ հայոց Վիհարանական մտածողությանը բնորոշ էր հերոսների հետևյալ տոհմածառը. ա) ամպրոպային նախակերպար, բ) երկվորյականեր, գ) «միտրայական» հերոս⁴⁶, դ) զիխավոր վիշապամարտիկ հերոս, ե) երկրորդ «միտրայական» մերօնող և վերածնվող կամ այլ կերպ ասած՝ հավերժ ապրող հերոս [Պետրոսյան 1997բ: 33]: Ա. Պետրոսյանի ծևակերպած այս վիհարանական սխեման ընդունում է նաև Ս. Հարությունյանը [Հարությունյան 2004ա: 292-293]: Հատկանշական է, որ «մերօնող-հառնող» կերպարով են եղած փակվում թե՝ հայոց ծննդաբանական շարքի և թե՝ «Վիհասանք», «Պարսից պատերազմ» ու «Սասնա ծռեր» դիցավեպերի հիմնական հերոսապատումները [Petrosyan 2006: 222]:

⁴⁴ Ղ. Ալիշանը «Ուսկենայր» մակերիր գտնում է բրոլիարացիների մեջ [Ալիշան 2002: 142], Ա. Պետրոսյանը գուգահեռ է անցկացնում կապատրվկան Կոնանա դիցուու «ուսկեն տիտղոսի հետ [Petrosyan 2007: 180]: Նման «ոսկե» կերպարներ կամ նաև Կովկասում արխազների և օսերի մեջ [Դալայան 2002: 193. Dalalyan 2006: 241]: Քրիստոնեության տարածումից հետո մայր աստվածութեան գերեւ այսուե անցն Մարիամ Աստվածածնին. պատահական չէ, որ Վերջինս օսերի մեջ կոչվել է նաև *zərən Mayraem* «ոսկե Մայրան» [Աճառ 1958-1989, ո. IV: 303]:

⁴⁵ Այս պատկերացումը պահպանվել է հայկական միջնադարյան արբյուններում [Խեն Ալիշան 2002: 135. Մելիք-Փաշայան 1963: 37-38. Petrosyan 2007: 180]: Հատկանշական է, որ Ամանու դիցանվան տարբերակները սերտորեն կապված են եղել Արամազդի պաշտումների հետ [Պետրոսյան 2006բ: 58, 70-71 ևն]:

⁴⁶ Սա որոշ դեպքերում կարող է և չինել, հմնու. հայոց ծննդաբանական շարքում և «Վիհասանքում» Ամանու / Հարությունյան պատմություններում Մեծ Միջերի բացակայությունը. յա նշանակում է, թերևս, որ նշված կերպարի հավելումը վիհարանական գարգաման առավել ուշ փուլի արդյունք է:

Ինչպես փորձեցինք ցույց տալ, «Կիպասանքի» հնագույն տարբերակում «ամպրոպային նախակերպարը» պետք է լիներ Ծովինարը, որին հաջորդել են, փաստորեն, ոչ թե երկվորյակներ, այլ Եռվորյակներ [իմնտ. Հարությունյան 2004: 291]: Այս առումով «Կիպասանքում» կարելի է առանձնացնել հնագույն շերտ, որը դիցավեպի մեջ հասած տարբերակում հանդես է զայիս կիսաթարնված Ենթաշերտի տեսքով: Այդ Ենթաշերտին պետք է դասել Ծովինարի կերպարը, ինչպես և նրա ծնած Եռվորյակներին, որոնցով, փաստորեն, սկսվել է «Կիպասանքի» հնագույն տարբերակը:

Խմբագրական հավելում

Հոդվածն արդեն հանձնված էր տպագրության Երբ հրատարակվեց Ա. Պետրոսյանի՝ *Տիգրան Մեծի առասպեկտաբանական կերպարը* (ՊԲՀ 2008, N 2: 156-177) աշխատությունը, որտեղ քննարկվում են այստեղ արձարծված մի շարք հարցեր:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՆԵՐ

Ազարանգեղոս Ազարանգեղայ Պատմութիւն հայոց (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, աշխատասիրությամբ Ա. Տեր-Ղևոնյանի), Երևան, 1983:

Արքորունի Թովմա Արքորունի և Անանուն, Պատմություն Արքորունյաց տան (աշխատասիրությամբ Վ. Վարդանյանի), Երևան, 1978 :

Դիոդորոս Դիոդորոս Սիկիիացի, Պատմական գրադարան (հատվածներ), աշխատասիրությամբ Ս.Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1985:

Խորենացի Խորենացոյ Պատմութիւն հայոց (քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի), Երևան, 1981:

ՀՀՀՀ Հայոց լեզվի բարբառային բառարան (խմբ. Ա. Սարգսյան, Լ. Հովհաննիսյան, Ն. Սարգսյան, Ռ. Թոխմախյան, Ռ. Ուռուտյան), ՀՀ ԳԱԱ Ի, հ. Ա, Երևան, 2001, հ. Բ, Երևան, 2002, հ. Գ, Երևան, 2004:

ՀՀՀՀ Սուրբիայան Ա.Ս. 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, ՀՀ ԳԱ Ի, Երևան:

Նարեկացի Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանձեր (խմբ. Ա.Շ. Մնացականյան, աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի), Երևան, 1981:

Նարեկացի (թրգմ.) Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության: Տաղեր (թարգմանությունը Վ. Գևորգյանի), Երևան, 2007:

Շիրակացի Անանիա Շիրակացի, Մատենագիտություն (աշխատասիրությամբ Ա.Գ. Աբրահամյանի և Գ.Բ. Պետրոսյանի), Երևան, 1979:

ՄԴ Սասունցի Դավիթ (հայ ժողովրդական հերոսավեպ), աշխատասիրությամբ Ա.Բ. Հարությունյանի, Երևան, 1981:

Օրբելեան Ստեփանոս Օրբելեան, Սյունիքի պատմություն (աշխատասիրությամբ Ա.Ա. Աբրահամյանի), Երևան, 1986:

ԿՅԿԻ Արյունյան հ. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван.

Страбон География (перевод, статья и комментарии Г.А. Страгановского), Ленинград, 1964.

ԱԿԻՄելիկաշվիլի Գ.Ա. 1960, Урартские клинообразные надписи, Москва.

Փորլուսի Շահնամէ, տ. 1: от начала поэмы до сказания о Сохрабе (издание подготовили Ц.Б. Бану, А. Лахумти, А.А. Стариков), Москва, 1957.

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Ա.Խ. 1966-1985, Երկեր, հ. Ա, Երևան, 1966. հ. Է, Երևան, 1975. հ. Ը, Երևան, 1985:

Աբրահամյան Լ.Հ. 2004, Բավիղ-լաբիրինթոս. արտավագրյան առասպելը կովկաս-առաջավորապիտական համատեքստում // ՀԺՄ-XII: 13-18: Ալիշան Ղ. 2002, Հայոց հին հավատը կամ հեթանոսական կորնը, Երևան:

Աճայշյան Հ. 1971-1979, Հայերեն արբանական բառարան, Երևան, 1971, 1973, 1977, 1979, հ. I-IV:

Աճայշյան Հ. 1942-1962, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, հ. Բ, Երևան, 1944, հ. Ե, Երևան:

Այդինյան Ա. 2001, «Թուլս մանուկի» պաշտամունքի որոշ արտացոլուներ հայերեններում // Թուլս մանուկ (նստաշրջանի նյութեր), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան: 44-51:

Գրեկյան Ե. 2004, Գյովելերի ուրարտական արձանագրությունը // ՊԲՀ, N 1 (165): 224-252:

Դալայլյան Տ. 2001, Մեսրոպ Մաշտոցի գործունեության դիցաբանական հայեցակետերը, պաշտամունքը և սրբավայրեր // ՀՀՍՍ: 103-108:

Դալայլյան Տ. 2001ա, Հայ առասպելաբանական մողելը աշխարհի ըրու կողմերի մասին // ՀԺՄ-XI: 27-30:

Դալայլյան Տ. 2002, Հայոց Վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ // ՊԲՀ, N 2 (160): 191-213:

Դալայլյան Տ. 2006, Մեսրոպ Մաշտոցի կերպարի և անվան ծագումնաբանությունը // ՀԳ-1600: 54-65:

Զաքարյան Ե. 2004, Ուկերիչը հայկական հեթանություն // ՀԺՄ-XII: 45-50:

- Զաքարյան Ե. 2006, Արիեստավոր-արարիչ աղերսները հայկական հեքիարներում // ՀՃՄ-XIII: 62-69:
- Խաչատրյան Ռ.Հ. 1997, Ոսկին արևային մակդիր և խորհրդանիշ // ՀՃՄ-IX: 20-21:
- Խաչատրյան Ռ.Հ. 1998, Հայկական ժողովրդական երգերի գաղացման ձևերը // ՊԲՀ, N 1-2 (147-148): 209-220:
- Խառատյան-Առաքելյան Հ. 2005, Հայ ժողովրդական տոնները, Երևան:
- Հակոբյան Հ. 2001, Սեհանների կործանման և Հայոց Դարձի պատմության որոշ մանրամասներ // ՀՍՍ: 145-156:
- Հակոբյան Հ. 2006, Մաշտոցի գործունեության մշակութարաբանական հենքը // ՀԳ-1600: 66-78:
- Հանեյան Ա. 2001, Հայ բարբառներում «ծիածան» հասկացության բառանվանումների հոգևոր-մշակութային արժեքը // ՀՍՍ: 109-113:
- Հարությունյան Ս.Բ. 1965, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան:
- Հարությունյան Ս.Բ. 1981, Վիշապամարտը Սասնա ծուերում // ԼԳ, N 11 (467): 65-85:
- Հարությունյան Ս.Բ. 1987, Հայ հին վիշապշարիդ, Երևան:
- Հարությունյան Ս.Բ. 1987ա, Հնդեվոլոպական տարաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ // ՊԲՀ, N 4 (119): 48-60:
- Հարությունյան Ս.Բ. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ:
- Հարությունյան Ս.Բ. 2004ա, գրախոսություն Պետրօսյան Ա.Ե. 2002 մենագրության վերաբերյալ // ՊԲՀ, N 1 (165): 291-294:
- Հարությունյան Ս.Բ. 2006, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան:
- Հարությունյան Ս.Բ. 2007, Հայոց ոսկիապատումը (ոսկին հայ հին գրավոր ու բանակիր ավանդության մեջ) // Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազ. – մ.թ. XIV դ.), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ (խմբ. Ա.Ա. Քալանթարյան), Երևան: 291-315:
- Հնայակյան Ս.Գ. 1990, Կանի բազավորության պետական կողոնը, Երևան:
- Հյութշման Հ. 2003, Հայերենի քերականություն (արտաստպված H. Hübschmann 1897, Armenische Grammatik, Leipzig, Խմբ. Ո.Ս. Ղազարյան), Երևան:
- Հովհաննիսյան Լ.Ը. 1981, Իրանական փոխառություններ համարվող մի քանի բառերի շուրջ // ՊԲՀ, N 3 (94): 253-260:
- Հովհաննիսյան Լ.Ը. 2007, Երածշտություն իմաստային խմբի բառերը գրաբարում // Զահորելյանական ընթերցումներ-2007 (հանրապետական գիտական նստաշրջանի գենուցումներ), ՀՀ ԳԱԱ ԼԻ, Երևան: 101-111:
- Մելիք-Փաշայան Կ.Վ. 1963, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան:
- Ունապանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան:
- Մելիք-Օհանջանյան Կ.Ա. 1946, Միթրա-Միթրը «Սասնա ծուերի» մեջ (Միթրա-Միթրի արքանյակներն ու գործականները) // Գրական-բանասիրական հետախուզումներ, գիրք I, Երևան: 269-327:

Մեյն Ա. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1978: Մնացականյան Ա.Շ. 1973, «Դաւթեան քերթութիւն որ յաղագս Տիգրանայ» Երկը և Տիգրան Երվանդյան վեպը // ՊԲՀ, N 1 (19): 64-81:

Մնացականյան Ա.Շ. 1975, Դիտողություններ «Կարդես մանկան» վիպական հատվածի վերաբերյալ // ՊԲՀ, N 2 (69): 215-232:

Մնացականյան Ա.Շ. 2001, «Թուխ մանուկ» հուշարձանների մասին // Թուխ մանուկ (նստաշրջանի նյութեր), <<ԳԱԱՀ ՀԱՅԻ, Երևան: 91-109 (Վերատպակած ՊԲՀ, 1976, N 2 (73): 189-204):

Մովսիսյան Ա.Ե. 2000, Սրբազն լեռնաշխարհը. Հայաստանը Սրբազն Աստվածայի հնագոյն հոգևոր ընկալումներուն, Երևան:

Պետրոսյան Ա.Ե. 1997ա, Արածի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագնան խնդիրը, Երևան:

Պետրոսյան Ա.Ե. 1997բ, Հայկական էպոսի հնագոյն ակունքները, Երևան:

Պետրոսյան Ա.Ե. 2001, Արա Գեղեցիկ և Սուրբ Սարգիս. հնդեվրոպական աստվածն ու նրա ըրիստոնեական գուահեօք // ՀՍՍ: 157-169:

Պետրոսյան Ա.Ե. 2001ա, «Թուխ մանուկ». հնագոյն ակունքները // Թուխ մանուկ (նստաշրջանի նյութեր), <<ԳԱԱՀ ՀԱՅԻ, Երևան: 21-43:

Պետրոսյան Ա.Ե. 2006, Տիր և Մաշտոց. դպրության աստվածը և գործի ստեղծողը // ՀԳ-1600: 41-53:

Պետրոսյան Ա.Ե. 2006բ, Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր, Երևան:

Զահինկյան Գ.Բ. 1981, Սովուս Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները // ՊԲՀ, N 3 (94): 48-63:

Ստեփանյան Գ. 2003, Նվիրագործումը Ծաղկազարդի տոնում // ՊԲՀ, N 3 (164): 181-191:

Սրվանձույանց Գ. 1978, Երկեր, հ. I (խմբ. Ս.Բ. Հարությունյան), <<ԳԱՀ ՀԱՅԻ, Երևան:

Абаев В.И. 1958-1989. Историко-этимологический словарь осетинского языка, I-IV, 1958, 1973, 1979, 1989, Ленинград.

Абаев В.И. 1990. Избранные труды (религия, фольклор, литература), Владикавказ.

Абрамян Л.А. 1983. Первобытный праздник и мифология, Ереван.

Абрамян Л.А. 2003. Мифологема прикованного героя: к вопросу о протокавказских истоках // АЭФК, Эчмиадзин: 329-334.

Абрамян Л.А. 2006. Герой без детства и герой, не рассстающийся с детством // ՀԺԵՀԺ-II: 47-61.

Арутюнян С.Б. 1976. Мифологический образ солнца в загадке о лампаде // ՊԲՀ, N 1 (72): 237-242.

Иванов В.В., Топоров В.Н. 1992, Орел // МНМ, т. II: 258-260.

- Иванов В.В. 1969. Использование для этимологических сочетаний однокоренных слов в поэзии на древних индоевропейских языках. Этимология 1967. М., 1969 : 40-56.
- Иванов В.В. 1983. Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну. *ՊՐՀ*, N 4: 22-43.
- Капанцян Г.А. 1956, Историко-лингвистические работы (К начальной истории армян. Древняя Малая Азия), т. I, Ереван.
- Капанцян Г.А. 1975, Историко-лингвистические работы, т. II, Ереван.
- Периханян А.Г. 1993, Материалы к этимологическому словарю древнеармянского языка, часть I, Ереван.
- Петросян А.Е. 2002, Армянский эпос и мифология, Ереван.
- Петросян А.Е. 2006, Армяно-инди́йские эпические параллели // *ՀԸՆԹ-ՀԸՆԹ-II*: 38-43.
- Сванидзе А.С. 1937, Названия древневосточных богов в грузинских песнях // *ԲՃԻ*, N 1: 87-93.
- Топоров В.Н. 1991, Божья коровка // *МНМ*, т. I: 181-182.
- Abrahamian L.H. 2006, Hero Chained in a Mountain: on the Semantic and Landscape Transformations of a Proto-Caucasian Myth // AJNES, 1: 208-221.
- Areshian G.E. 1992, Armenian and Indo-European Cosmogonic Myths and Their Development // Proceedings of the 4th International Conference on Armenian Linguistics, Cleveland State University (ed. John A.C. Greppin), Delmar, New York.
- Asatryan G., Dalalyan T. 1999-2000, "The Mothers of Night" – An Armenian-East Iranian Parallel // *Iran & the Caucasus*, 3-4: 171-172.
- Dalalyan T. 2001, The Avestan Myth of Azhi Dahaka in the Armenian Tradition // "Авеста и мировая цивилизация" (Тезисы докладов международного симпозиумам, 4-5 сентября), Академия наук Республики Таджикистан, Душанбе: 168-170.
- Dalalyan T. 2002, The Birth of Tigra-rāna 'spear' // The First National Congress on Iranian Studies, Tehran (report delivered at the conference).
- Dalalyan T. 2006, On the Character and Name of the Caucasian Satana (Sat'enik) // AJNES, 1: 239-253.
- Dumézil G. 1970, *The Destiny of the Warrior*, Chicago.
- Justi F. 1895, *Iranisches Namenbuch*, Marburg.
- Petrosyan A.E. 2006, Haldi and Mithra / Mher // AJNES, 1: 222-238.
- Petrosyan A.E. 2007, State Pantheon of Greater Armenia // AJNES, 2: 174-201.
- Pokorny J. 1959, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, Bern und München.
- Puhvel J. 2007, Reed and Arrow in Anatolia and Beyond // AJNES, 2: 85-87.
- Russell J.R. 1985, A Poem of Grigor Narekac'i // REArm, 19: 435-439.

Russell J.R. 1989, Carmina Vahagni // Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae, 32: 317-330.

Russell J.R. 1994, Grace from Van: A Micro-Historiola // JSAS, 7: 35-45.

Russell J.R. 1996, Sound as a Symbol: The Case in Pagan and Christian Armenian Poetics // Le Muséon, 109.1-2: 113-126.

Russell J.R. 1999, The Lost Epic of Tigran: A Reconstruction Based upon the Fragments // Delivered at UCLA Conference on Armenian Tigranakert / Diarbekir, forthcoming in Proceedings, R. Hovannisian (ed.).

Salvini M. 2001, About a New Corpus of Urartian Inscriptions // Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma), 43/2: 241-267.

Հապավումներ

ԲԵՀ Բանբեր Երևանի համալսարանի, Երևան:

ԳԻ Ս. Արենյանի անվան գրականության ինստիտուտ:

ԼԻ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ:

ԼՀԳ Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան.

ՀԱԻ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

ՀԳ-1600 Հայոց գրեր - 1600 (Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին: գեկուցումների ժողովածու), խմբ. Վ. Բարխուդարյան, Ս. Արևշատյան, Լ. Հովհաննիսյան, Հ. Թոշարյան, <<ԳԱԱ, Երևան:

ՀԺԷՀԺ Հայկական «Սասան ծուեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը (<<ԳԱԱ ԳԻ և ՀԱԻ). միջազգային երկրորդ գիտաժողովի նյութերը (խմբ. Ա. Եղիազարյան, Ս. Հարությունյան, Ա. Պետրոսյան, Վ. Ներսիսյան), Երևան, 2006:

ՀԺՄ Հայ ժողովորական մշակույթ, <<ԳԱԱ ՀԱԻ, հանրապետական գիտաժողովի գեկուցումների հիմնադրույթներ (խմբ. Ս.Բ. Հարությունյան, Դ.Ս. Վարդումյան), պրակ IХ, Երևան, 1997. պրակ XI, Երևան, 2001. պրակ XII, Մեսրոպ արք. Աշճյանի հիշատակին, Երևան, 2003. պրակ XIII. նյութեր հանրապետական գիտական նստաշղոջանի (խմբ. Դ.Վարդումյան, Ս.Հարությունյան, Ս.Հորոսյան), Երևան, 2006:

<<ԳԱ Հայաստանի Հանրապետության Գիտությունների (ազգային) ակադեմիա:

ՀՍՍ Հայոց սրբերը և սրբավայրերը (ակունքները, տիպերը, պաշտամունքը), <<ԳԱԱ ՀԱԻ, խմբ. Ս.Բ. Հարությունյան, Ա.Ա. Քալանթարյան, Երևան:

ՊԲՀ Պատմա-բանասիրական հանդես, Երևան:

АЭФК Археология, этнография и фольклористика Кавказа (материалы международной конференции).

ВДИ Вестник древней истории, Москва.

МНМ Мифы народов мира (энциклопедия), гл. ред. С.А. Токарев, т. 1-2, Москва, 1991-1992.

AJNES	Armenian Journal of Near Eastern Studies (Aramazd),
Yerevan.	
JSAS	Journal of Society for Armenian Studies, Frezno / Ann
Arbor.	
REArm	Revue des études arméniennes, Paris.

ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀՈՌՄԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՅՈՒՐՈՒԽԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Հելլենական մշակույթի և դասական ավանդության տարածումն ու ընդունելությունը Մերձավոր Արևելքում զգալի է եղել Ալեքսանդր Սակեդոնացու նվաճումներից հետո: Այն բարձրացագ յուրացման և տեղայնացման մի նոր մակարդակի, եթե ոչ անտիկ դարերում տարածաշրջանի մի քանի ազգեր գիր ու գրականություն ստեղծեցին սեփական լեզուների համար: Կապադովկացի եկեղեցական հայրերի այն սկզբունքը որդեգրելուց հետո, ըստ որի՝ քրիստոնյա երիտասարդներին պիտանի է հերանոսական գրականությանը ծանրամալը, թարգմանիչների գերխնդիրն է դառնում իրենց ազգակիցներին մատուցել այն ժամանակի զանազան ժողովրդական բնագրերը:¹ Եվ, կրոնական անմիջական կարիքները բավարարելուց հետո, երկրորդ փուլում՝ ոչ 5-րդ դարից սկսած, Հայաստանում սկսեցին գրավել դպրոցական հասրացի (հատկապես տրիվիումի հետ առնչվող) տեխնիկական գրականությամբ, ինչպես նաև գեղարվեստական գրականության ժանրին պատկանող մի գործով՝ Ալեքսանդրի պատմությամբ:²

Տրոյական պատերազմը հունական ավանդության առանցքային թեմաներից մեկն էր, որն ուներ բազմազան տարրերակներ, շարունակություններ և անդրադարձներ, արտահայտված մշակութային բոլոր ձևերում և արվեստի բոլոր մակարդակներով: Եվ երբեմն գիտնականները հարց են բարձրացրել, թե հոմերոսյան էպոսների հայերեն թարգմանություններ էլ են գուցե կատարվել այդ ընդհանուր ֆոնի վրա: Փարիզի ազգային գրադարանի (Bibliothèque Nationale) հավաքածուում մի ծեռագիր կա, որը հնարավորություն է տալիս այդ ուղղությամբ մտածելու: Աբրե դե Վիլեֆրոնի 1735-ին կատարած ցուցակում գրված է, թե No. 260 միավորում տեղ է գտել մի ընդարձակ բառարան «Հոմերոսի

¹ S. Peter Cowe, "The Interpenetration of the Divine and Human Spheres in Narekaci's Theology of Culture," *S. Grégoire de Narek théologien et mystique*, J.-P. Mahé, B. L. Zekian (eds.), Rome: Pontificio Instituto Orientale, 2006, էջ 233:

² Այնպիսի գրութիւն մի ընդհանուր ցանկի համար տես C. Zuckermann, *A Repertory of Published Armenian Translations of Classical Texts*, with an appendix by A. Terian, revised by M.E. Stone, Jerusalem: Institute of African and Asian Studies, Hebrew University of Jerusalem, 1995:

գործերի հայերեն չափածո բառապաշարը հասկանալու համար».³ Այդ Ակարագրությունից ելնելով՝ Լանգլուան կարծիք է հայտնում, թե հիհական հայերեն հին բարզմանության վարկածը բավական հավանական է:⁴ Սակերը նման ծևով է ներկայացնում ծերագրի բովանդակությունն իր 1908-ին գրած նոր ցուցակով՝ այն բնութագերով որպես «Հոմերոսի բամաստեղծական Եգերի բառարան», որից ազդվելով՝ Ֆրիջը մնար է հայտնում, թե այս գործն անպայման այդպիսի մի բարզմանության ստվար մնացորդներ պիտի պարունակեր և կոչ անում, թե դրանք շուտափույթ կերպով պետք է հրապարակ հցեցվեն բնագրային առնչությունները պարզելու համար:⁵ Մենք երախտապարտ ենք հավաքածուի նոր ցուցակ կազմողներին, որ ցուց են տվել խնդրո առարկա գործի իսկական բնույթը և նախորդ գիտնականների ենթադրության անհիմն լինելը:⁶ Շնորհալու և նրա հետևողների կիրառումով հոմերական չափը, որի հետ է կապված Վերոհիշյալ բառարանը, Հոմերոսի հետ միայն մի ընդհանուր կետ ունի՝ այսուհետ գործ ունենք մի բարձր թեմայի հետ, որը մշակված է ծավալուն բանաստեղծության մեջ և ընթանում է չափածո կանոնավոր կաղապարով:⁷

Ավելի մոտիկ ծանոթություն Հոմերոսի հետ տեսնում ենք հայերի մեջ միայն նոր ժամանակներում։ Ոահվիրան եղել է 18-րդ դարի զարգանալի ինքնուս գիտնական Գեորգ դպիր Պալատեցին։ Նա բարզմաներ է ռամիկ հունարենով շարված հիհականի մի ամփոփում, որին կցել է մի երկասիրություն բամաստեղի և նրա գործի նասին, ինչպես և Նիկոլայոս Լուլանոսի բանաստեղծությունը Տրոյայի առան մասին (Երկուսն էլ առայժմ անտիպ)։⁸ Բուն էպոսի թարգմանությունները կատարվում են նոր հայկական կամացիզմի շրջանում, գլխավորաբես միհրարյանների ջանքերով։ Իհիականի թարգմանության գրաբարյան արաջին տարբերակները կատարել են Եղիա Թովմաճյանը (1843)⁹ և Արտեն Բագրատունին (1864),

³ Stu Montfaucon, *Bibliotheca bibliothecarum mss. nova*, vol. II, Paris:1739, էջ 1021:

⁴ Stu V. Langlois, *Collection des historiens anciens et modernes de l'Arménie*, vol. 1, Paris: 1867, էջ xxv:

⁵ Stu F. Macler, *Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque nationale*, Paris: Ernest Leroux, 1908-ին, սյունակ 832, էջ 137:

⁶ C. Frick, "Die syrische, die armenische und die georgische Übersetzung der Homeriche Gedichte," *Berliner philologische Wochenschrift* 30 (1910), սյունակ 447:

⁷ R. Kévorkian and A. Ter-Stépanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France*, սյունակ 447Paris: Bibliothèque nationale de France, 1998, սյունակ 832:

⁸ S. P. Cowe, "The Politics of Poetics: Islamic Influence on Armenian Verse," *Redefining Christian Identity: Cultural Interaction in the Middle East since the rise of Islam*, J. J. Van Ginkel et al. (eds.), Leuven: Peeters, 2005, էջ 379-403:

⁹ Stu Բ. Չոլագասյան, «Գեղոր զիյոն Պալատեցու կեանքի և գործունեութեան տարեգորութիւն 1737-1811», Երևան, Գինը, 1994, էջ 6, 15, 65-66:

¹⁰ Ե. Թօնաճեան, (թարգ.), «Եղիական», Կենետիկ: Ս. Ղազար, 1843:

որի սեփական էպոս Հայկ Շյուցազնը (1850) շատ է պարտում Հօներոսին: Իշխականն արևմտահայերեն թարգմանեց Հ. Արսեն Ղազիկյանը 1911-ին և արևելահայերեն՝ Հ. Հանքարձումյանը 1955-ին: Նոյնը Վերաբերում է նաև Վիրզիլիոսին, որի Հռոմի հիմնադրմանը նվիրված էնեական էպոս գրաբար թարգմանել է Ե. Հյուրմիլգեանը 1845-ին, իսկ արևմտահայերեն նոյն Արսեն Ղազիկյանը 1908-1910-ին Թագմավեպում և հետազայտմ գրի ձմբվ։¹¹

Թեև հնում Հօներոսի էպոսի հայերեն լիակատար թարգմանություն չի եղել, այնուամենայնիվ հայկական գիտական գրականությունը լի է տվյալներով Հօներոսի և նրա գործի մասին, պահպանված մի կողմից քերականական և ճարտասանական, իսկ մյուսից՝ պատմագրական նյութերում: Դրանց միջոցով հայ ընթերցողը ծանրանում էր էպոսի մի կերպարներին և տեսարաններին, ինչպես նաև կոյր բանաստեղծի կենսագրական տվյալներին: Քերականները վկայակոչում են նրա լեզվական և ոճական առանձնահատկությունները և գործողության ընթացքի կառույցը որպես գրական զանազան կանոնների օրինակներ: Դինոսիսոս Թրակացին օգտագործում է հիշակամի հակադրված մարտիկներին (հոյներից՝ Ազամեննոն, Այարս և Արիլես, տրոցցիներից՝ Պրիանոս և Ալեքսանդր-Պարփ) հատուկ անունների տփապահնությունը բացատրելիս: Պիտոյից Գիրքը, արտասանության բաժնում, Հօներոսի պատկերած Ողիսահն է օրինակ բերում, իսկ բառառնության բաժնում՝ կանգ է առնում Արիլեսի և Պրիանոսի վարդի Վրա, համապատասխանաբար, Պատրոկլոսի և Հեկսորի մահից հետո։¹² Ուշագրավ է, որ Թեոնն ու Կեղծ Կայիս թենեսը վկայակոչում են էպոսից ամբողջական տողեր և երկտողեր, մինչդեռ թարգմանություններում դրանք ըստ ավանդության արձակ են։¹³ Այդ կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ եթե գուսանական չափը շեշտական է եղել, և միջնադարյան տաղերի վանկերի համաչափությունն էր հատուկ, թվում է, թե հայերի մեջ կարծ և երկար վանկերի ծևավիրման համակարգ չի առաջացել, ինչպես լատիններենով գտնում ենք հունական նախակաղապարից և պարսկերենով, երբայերենով ու թուրքերենով՝ արաբական հիմքից: Սակայն հայկական բանաստեղ-

¹¹ Ե. Հյուրմիլգեան, (թարգմ.), Պորդիոսի Վիրզիլեայ Մարովնի Ենականին թարգմանութիւն, Կենետիկ: Ս. Ղազար, 1845:

¹² N. Adontz-ի աշխ., *Denys de Thrace et les commentateurs arméniens*, Louvain: Imprimerie Orientaliste, 1970, էջ 13-18:

¹³ Գ. Սուրապյանի աշխ., «Գիրք պիտոյից», Երևան, Գիտությունների Ակադեմիա, 1993, էջ 184-85, 201:

¹⁴ Հ. Սամանդյանի աշխ., «Թեոնինյայ խղազ ճարտասանական կյոթեանց», Երևան, Պատմության և գրականության ինստիտուտ, 1938, էջ 10, 32, 48-50, թ. 116, 168:

ծույթան կառուցիչ խորունկ հետազոտությունից հետո Դովսետն այն եզրահանգնան է հասել, թե հայերը լեզվամթերք ունեցել են այդպիսի համակարգ ստեղծելու:¹⁵

Եթե բանասիրական ավանդությունը հիմնականում Հոմերոսի մանրանամություններով է հետաքրքրում, ապա պատմագրականը ցանկանում է էպոսը տեղադրել մարդկության զարգացման ընդհանուր համատեքստում: Այս ձեռնարկում մենք գործ ունենք ամենից առաջ Մովսես Խորենացու հետ, որ տրոյական պատերազմին անդրադարձնում է իր առաջին գործի վերջում, որտեղ գրում է, թե հայ մարտիկ Զարմայրը երթվայական մի փոքր գունդ է առաջնորդել Տրոյային աջակցելու և պատիվ է ունեցել իր մահկանացուն կնքելու Աքիլեսի ձեռքով:¹⁶ Պատմահոր հիմնադրությն էր ժամանակագրական հետևողականությունը և հենվում էր Եվսեբիոսի Քրոնիկոնի վրա երբ գրում է, թե պատերազմը ժամանակագրորեն համընկնում էր Ասորեստանի Տևամոսի թագավորության հետ:¹⁷ Իսկ Եվսեբիոսն իր հերթին այն վերցրել էր նախորդ հունական աղբյուրներից: Այնպես որ Մովսեսի գործը ապացուցային հիմք չի թողնում, թե նա ծանոթ էր բուն էպոսին:

Այնուհաններծ հայերեն ձեռագրերի հարուստ հավաքածուների ավելի ճշգրիտ ու մանրամասն նկարագրությունների շնորհիվ վերջերս պատմագրական մի այլ բնագիր է հայու եկել Մաշտոցի Մատենադարանի թիվ 437 ձեռագրում «Սակս աւերման Իլիոնի և շինելոյն Հռոնա» վերնագրով:¹⁸ Միավորի արտաքին հանգանանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դասագիրը է եղել՝ պարզ թթովով, գրված միայն կարմիր և սև թանաքով, համարյա առանց խորանների և լուսանցագարդերի և հատկապես մանր խիտ գրով, ինչն այն տպագրությունն է ստեղծում, թե գրիները մտադրված էին հնարավորին շափ շատ նյութեր մտցնել դրա կազմում:¹⁹

Տիպարանականորեն ձեռագիրը «նուրբ գրեանքի պատճառը և լուծմունքի» մի ժողովածու է, որ բովանդակում է ներածականներ և մեկնություններ եկեղեցու այն հայրերի որոշ գրվածքների վերաբերյալ, որոնք եղել են վանական բարձր դպրոցների դասընթացներում: Իբրև այդպիսին այն հիմնվում է Գրիգոր Աքասի

¹⁵ C. J. F. Dowsett, "A Metrical Experiment," *Raft* 3 (1989), էջ. 37-56:

¹⁶ Մովսես Խորենացի, «Պատմութիւն հայոց», Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի աշխ. և Ա.Բ. Սարգսյանի լրացմով, Երևան, Հայկական Գիտությունների Ակադեմիա, 1991, էջ 87-88:

¹⁷ A. Schoene (խմբ.), *Eusebi Chronicorum libri duo*, 2nd ed., Dublin, Zurich: Weidmann, 1967, սյունակ 65:

¹⁸ O. Եզանյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», Բ. Երևան, Նաիրի հրատարակչություն, 2004, սյունակ 677:

¹⁹ Նոյն տեղում, սյունակ 675:

որդու նման գիտնականների վրա, որի «Պատճառաց Գիրքը» հավանաբար 13-րդ դարի առաջին տարիններից է:²⁰ Աստվածաշնչի գրքերի (լայն գրեանց) դեպքում հեղինակը մասուցում է մեկից ավելի մեկնություններ, բայց յոր հայրերի պարագային բավարարվում է մեկական բացատրականներով՝ մեծ մասամբ իր գործակից Դավիթ Բորայրացու գրչից:²¹ Ի տարբերություն դրա, մեր ձեռագրի կենտրոնացումն ավելի նեղ է, բայց ավելի հարուստ նյութ է ընձեռում: Այն, սակայն, բովանդակության մասերի ուժեղ դասավորում չունի, Փիլոնի գործերի մեկնոտականներն, օրինակ, ցրված են ամբողջ գրչագրով մեկ:

Մատյանը Վերակազմվել է 1612-ին, որոշ հավելվածներով:²³ Սկզբնական ծևն արդեն բարդ կառույց է ունեցել, մասամբ այն պատճառով, որ Ենթօրինակության գործը բաժանված է եղել երեք անձի մեջ: Նրանցից զիսավորը եղել է Եսային (Սչեցի), որը նաև ստացողն է հանդիսացել, իսկ մյուսները՝ Սիմոնը և Սարգիսը: Նրանց ընթօրինակության երկու մասերը Եսային ողել է իր երեք մասերի անանուն՝ սկզբում՝ մեջտեղում և Վերջում:²⁵ Այն փաստը, որ Եսային հաճախակի մեծ ակնածությամբ հիշատակում է իր ուսուցիչ Ներսես Մոկացուն և նրա համար աղոթք անում, ցոյց է տալիս, որ ձեռագիրը գրվել է Վերջինիս մահից առաջ, այսինքն՝ նախքան 1284 թ.:²⁶ Ժամանակը հնարավոր է ավելի ճշգրտել երրորդ գրիչ Սարգսի խոսքից, որ դիմում է Եսայուն որպես «սուրբ ուաբունից» և «վարդապետ»:²⁷ Այս տվյալի համաձայն՝ գործը կատարված պետք է լինի 13-րդ դարի ուշ 70-ական կամ վաղ 80-ական թվականներին, կամ Արաքելոց վանքում, կամ ավելի մեծ հավանականությամբ, Գլածորում, որտեղ Եսային դրանից օգտված պիտի լիներ իր հայրաբանական դասախոսությունները պատրաստելիս:

Գործի բաժանումը նույնպես բանակի է մատյանի կառույցը պարզաբնելու համար: Մյուս գործակից Սիմոնը մեզ տեղեկացնում է, որ ուրախ էր իր «եղբորն» օգնել 40 սյունակ

²⁰ Գործի լիակատար նկարագրության համար տես Հ. Տաշյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Սիմիթարեանց ի Վիեննա», Վիեննա: Սիմիթարեան Տպարան, 1896, էջ 213-33:

²¹ Սոյս տեղում, էջ 225-232:

²² Օ. Եգանյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Բ, Երևան: Նախիր հրատարակչություն, 2004, սյունակ 677, 680, 683, 686:

²³ Սոյս տեղում, սյունակ 675, 690:

²⁴ Սոյս տեղում, սյունակ 688-690:

²⁵ Սոյս տեղում, սյունակ 675:

²⁶ Սոյս տեղում, սյունակ 688-689:

²⁷ Սոյս տեղում:

ընդորինակելով, որը այս համատեքստում հավասար է 20 էջի կամ 10 թերթի՝ այսինքն մի պրակի:²⁸ Մինոնին հիմնականում նշանակել են Կարդան Հաղբատեցոն վերագրված պատճառներն ընդորինակելու, սակայն, քանի որ դա ընդամենը 8 թերթ է գրադացնում, իսկ գրիչը բացարձակապես չէր ուզում դատարկ թղթեր թռնել, ընտրել է մի այլ փոքրածավալ գործ՝ պակասը լրացնելու համար:²⁹ Սարգիսը և Եսային նույն սկզբունքն են կիրառում՝ կարծ այլաբնույթ նյութեր ավելացնելով, որոնք ըստ երևոյթին ուրիշ աղբյուրից են վերցվել: Մինոնին ժամանակ, բոլոր ավելացված կտորներն առնչվում են հունական քաղաքակրթությանը: Սարգիսը դրել է Պղատոնի Տիմայոս տրամախոսության մի դրվագ, մինչդեռ Եսային մտցրել է Ուիմպիանոսի առակները և Իխոնին ու Հռոմին վերաբերող մեր կտորը:³⁰

Վերոհիշյալ բոլոր հանգամանքներից և հատկապես գործի ծավալից ու կառուցից ենթադրելի է, որ այն մաս է կազմում մի ավելի մեծ գրի, և դրա վերնագիրը սկզբանական համատեքստում մի գլխի միայն պիտի վերաբերեր: Զևաբանական ուսումնասիրությունը ցոյց է տախի, որ գործը բարկացած է երեք մասից: Մրանցից առաջինը և երրորդը ժամանակագրական հակիրձ տվյալներ են պարունակում, որոնք կայունացնում են կենտրոնական նյութը պատճության մեջ: Առաջինը հիշատակում է Խորաբեկի դատավորների ժամանակագրական կարգը, իսկ վերջինը՝ օլիմպիական խաղերի սկզբից հետո է հաշվում, երկուսն էլ, ինչպես նշվեց, հենված Եվսեբիոսի Քրոնիկոնի Վրա: Հիշարժան է, որ, վերնագրին հակառակ, կենտրոնական մասը ներկայացնում է ոչ միայն Տրոյայի անկումը, այլև ամբողջ պատերազմի մի յուրօրինակ տարրերակ:

Մինչ այժմ ամենամոտ գուգահեռը, որ ինձ հաջողվել է գտնել, Ռահմանու հրատարակած մի անանուն ասորերեն ժամանակագրություն է, որում «Իխոնի դեմ մղված պատերազմներ» վերնագիր կրող հատվածն սկսում է Հեսեբոն դատավորի հիշատակով և վերջանում է նրա հաջորդ Արիցանի զահակալությամբ:³¹ Կենտրոնական բնագիրը, սակայն, հիմնականում հետևում է Իլիականին, Պարիսի գեղեցկուիհների ընտրությունից մինչև փայտյա ձիու դրվագը և քաղաքի ավերումը հովում գործի կողմից: Միակ նշանակալից տարրերությունն այն է, որ Մենելաոսի

²⁸ Նոյն տեղում, սյունակ 689:

²⁹ Նոյն տեղ, սյունակ 680:

³⁰ Նոյն տեղում, սյունակ 677, 684:

³¹ F. Nau, "Traduction de la chronique syriaque anonyme éditée par S.B. M^{gr} Rahmani, patriarche des Syriens catholiques," *Revue de l'Orient Chrétien* 13 (1908), էջ 90-96:

պետությունը ոչ թե Սայարտան է, այլ Ոոդոս կղզին:³² Նոյնպես կարևոր է, որ շատ ուշադրություն է դարձվում հատուկ անուն-ներին, թեև նոյնին աղավաղված (օրինակ՝ Մամիստրա՝ Կասանդրայի փոխարեն):

Մեր բնագրում, ընդհակառակը, թեև հաճախ ճշգրիտ տեղանուններ են հանդիպում, անծնանուններ բացարձակապես չկան, բացի առանցքային կերպար Հռոմելոսից, որը միացնում է Երկու քետեները՝ Իլիոնը և Հռոմը: Գործի մի ուրիշ հատկությունը նրա կորողայնությունն է՝ գրույցի էակիկական գունավորումն ուժգնացվում է մշտական չափազանցություններով: Ուստի, Իլիոնը «մեծ քաղաք է, որի նմանը չկար Երկրի վրա»: Չորքերը, որոնք ժողովում են փախցված աղջկան տուն բերելու, «անհամար» են և դուրս են զայիս շրջակա «բոլոր» պետություններից: Իլիոն հասած նրանք ավերում են «ամբողջ Երկիրը», և Վերջին հարվածը քաղաքին հասցնում է մի «վիշխարի բանակ»:³³

Բացի դրանից, պատմության հիմքերականորեն կայուն անձերից ու դեպքերից շատերը հիմնովին փոխված են այս բնագրում: Սա վերաբերում է հատկապես գլխավոր կերպարներին և նրանց տեղորոշմանը: Իլիականում Պարիսը իշխանն է հյուսիսարևմտյան Անատոլիայում Հելեսպոնտոսի մուտքի մոտ գտնված Տրոյայի՝ ներկայումս Հսարըթի, և փախցնում է Հեղինեթին՝ կնոջը Պելապոնեսոսում գտնվող Սպարտայի թագավոր Մենելասի, ըստ որում առաջին շարժումը գնում է հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտքը: Մեզ մոտ, սակայն, Իլիոնը գտնվում է մակեդոնացիներից արևմուտքը՝ «Եվրոպայի Երկրում» և դրա համար պետք է նոյնացնել այն Պաուլի-Կիսովայի յոթերորդ Իլիոնի հետ, որը գտնվում է Թիանիսի գետե ափին, Խառնիայի մոտ՝ Էպիրոս զավառում:³⁴ Ի դեպ, իլիականի հերոսների տունդարձի նկարագրություններից մի քանիսում այս կողմերում հիշատակվում են տեղեր, որոնք Տրոյայի հետ առնչվող անուններ են կրում: Մեր բնագիրը քաղաքը տեղափորում է Աքայացիների Երկրում, որով, ըստ Երևույթին, նկատի ունի ոչ թե Պելապոնեսոսի հյուսիսային մասը, այլ ամբողջ Հունաստանը:³⁵ Ավելի ակնառու է Իլիոնի հշխանի այցելած քաղաքը թեսալոնիկե անվանելը, մի

³² Նոյն տեղում, էջ 91:

³³ Սատենաղարանի թիվ 437, թ. 116ա:

³⁴ G. Wissowa, W. Kroll, and K. Mittelhaus, K., (eds.), *Paulys Realencyclopädie der classischen Altertumswissenschaft*, B. IX.1, Stuttgart, Weimar: J.B. Metzler Verlag, 1997, սյունակ 1065.

³⁵ Ըստ աշխարհացոյց ընդհակառակը, Աքայան նշված է իր սովորական տեղը: Stu R. H. Hewsen (trans.), *Aśxarhač'oyc'*, *The Geography of Ananias of Sirak (Aśxarhač'oyc')* The Long and Short Recensions, Wiesbaden: Dr. Ludwig Reichert, 1992, էջ 48:

անախրոնիզմ, քանի որ քաղաքը մ.թ. 316 թվականին է հիմնադրվել:³⁶ Ուստի շարժման ուղղությունն արևմուտքից արևելք է, որից հետևում է, որ հետագա պատերազմը միջինական է:

Գործողության միջուկը մարդկային հարաբերություններն են, որոնց մեջ էլ զգայի տարբերություններ կան իշխականից: Փախցված աղջկա հետ կապված ուժեղ տղամարդոն այստեղ ոչ թե ամուսինն է, ինչպես իշխականում, այլ հայրը, և դրանով այն դառնում է աղջկի փախցնելու ավելի սովորական և ոչ թե շնության մի պատմություն:³⁷ Հետևաբար քացարվում է, որ զրադաշտովի պատճառը Մենելաոսի մրցակից քացավորների ուխտը լինի: Այստեղ գործոնը իշխնի պատասխանի խստությունն է, որը քաղաքի ժողովրդին մղում է զինված հակամարտության, որին մասնակցում են հարևան պետություններն էլ:³⁸

Ինչպես նշվեց, նկարագրությանը հատուկ է դեպքերի ընդգծված չափազանցությունը: Արաջին հերթին ոwa վերաբերում է պատերազմի տևողությանը: Պատերազմի ընդունված ժամանակն է կլոր տասը տարի, մինչդեռ այստեղ այն երկարաձգվում է տասնինքի:³⁹ Հետո, ավերածության վերջին էտապը սովորաբար կապված է նի հսկա փայտյա ծիրու հետ, որի մեջ հովաները մուտք են գործում քաղաք, իսկ այստեղ խոսվում է 2,000 այդպիսի կարույցների և նրանց մեջ քաքնված 40,000 զորքերի մասին:⁴⁰ Ուշագրավ է նաև այն նրբությունը, որ հարծակվողների կեղծ փախուստը ռազմագիտական ծրագրի մաս չի կազմում: Այստեղ քաղաքացիները համոզվում են խաղաղություն հաստատելու հույների ուխտով և ծիրին անմիջապես ներս են բերում: Գիշերը բնականաբար արյունահեղությունը տեղի է ունենալ, որին հաջորդում է հոյն հերոսների տունդարձի պատմությունը:

Այստեղ էական է այն հանգամանքը, որ փոթորկի հետևանքով արևմուտք նետված նավերի տերերը հաղթողներն են, որոնք գերի կանանց բերում են իրենց երկիր: Իսկ երբ նավերը ցանաք են հասնում հտալիայում, կանայք դավադրություն են սարքում օտար երկրում գերի դաշնապու բախտից խուսափելու համար և հրդեհում են նավերը: Իշխանները, ստիպված, նրանց հետ անուսնանում են և այնտեղ նոր հասարակություն կազմում: Այս տարբերակը հիշում է Դիոնիսիոս Հալիկառնասցին, որն իր հերթին այն վերագրում է

³⁶ Մատենադարանի թիվ 437, թ. 116ա:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում:

Արիստոտել անունով մեկին:⁴¹ Մեր բնագիրը շարունակում է, թե «քազմաթիվ տարիներ հետո» հաճախը առաջնորդ է ընտրում Հռոմելու անունով մեկին, որը քաղաք է շինում ծովից 27 մոլոնի հեռավորության վրա և կոչում իր անունով: Վերջին տվյալին հաճահունչ են մի քանի տարրերակ: Ստրաբոնը գրում է, որ Ենեասը քաղաք է շինել ծովից 24 ստադիա հեռու և Դիոնիսիոս Հալիկարնաս Լավինիումը նման մի տեղ է դնում:⁴²

Չափազանցությունը բնորոշ է նաև այս հատվածի վերջավորությանը, որն անդրադարձնում է Հռոմի փառքին և Երկարատևությանը, մինչև հազարամյակի տոնախմբությունը Մարկոս Յուլիոս Փիլիպոս կայսեր օրոք մ.թ. 248 թվականի ապրիլին: Ավարտական խոսքը վերաբերում է Կոստանդինի կայսրության կենտրոնի Բյուզանդիոն, որպես նոր Հռոմ, տեղափոխնանը և համապատասխան անվանափոխմանը:

Տրյական պատերազմի 15 տարվա տևողությունը կրկնելուց հետո բնագիր երրորդ մասում նշվում է, որ հիմնական հաղթողը Հերակլեսն է եղել:⁴³ Ընդհանրապես այս ավանդությունը կապված է Տրյայի դեմ կատարված հարձակման մի հին դրվագի հետ, որ տեղի է ունեցել Պրիամոսի հոր՝ Լաոմետոնի ժամանակ: Դրա համաձայն Հերակլեսը և իր զինակիցները հարձակվել են քաղաքի վրա թագավորի խոստացած հաստոցումից հետո կանգնելու պատճառով, իր դրամու Հեփիոնեին ազատագրելու համար: Այս հատվածի, ընդ որում նաև անբողջ գործի, վերջավորությունը նվիրված է տրյական պատերազմի ժամանակագրությանը խրայելցիների, ասորեստանցիների, սիկոնացիների, աթենացիների և եգիպտացիների համեմատական տվյալների հիմնա վրա: Դրանք նույնպես վերցված են Եվլեքիոսի հաղորդած նյութերից, որոնք ցրված են նոր թագավորական ցանկերում:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ հայերենով պահպանված այս բնագիրը Տրյական պատերազմի հիմնական ալբյուլներից շենքում է մի քանի կարևոր կետերով: Միաժամանակ, Հերակլեսի և Հռոմելուի անվանածները Ենթադրել են տալիս, որ գրությունը, ամենայն հավանականությամբ, թարգմանվել է հունարենից: Ավելին՝ Մակեդոնի հետ ունեցած հատուկ հարաբերությունը, որ բնագիրը վկայում է որպես աշխարհագրական գլխավոր առանցք, Թեսալյանիկեի մոտիկությունը և առհասարակ ծավալուն կայսրությունների վերաբերյալ

⁴¹ «Բաղրամածոյց ի թարգմանութեանց նախնեաց հանդերձ յոյն բնագրաւ», ի Վիեննա, ի վան Ս. Աստուածածնի, 1849, էջ 481:

⁴² Sir George C. Lewis, *An Inquiry into the Credibility of Early Roman History*, vol. 1, London: J.W. Parker & Son, 1855, էջ 332:

⁴³ «Բաղրամածոյց ի թարգմանութեանց նախնեաց հանդերձ յոյն բնագրաւ», էջ 473:

հիշատակումները և նրանց գերազնահատումը քաղաքային պետությունների համենատ գուցե օգտակար գործոններ կլինեն սկզբնադրյուրի ակունքները որոշելու համար: Նույնպես հավանական է, որ գործը բխում է բյուզանդական ժամանակագրական ավանդույթից: Այդ դեպքում դրա հայերեն թարգմանությունը հունական գիտության հետ բյուզանդական միջին ժամանակաշրջանից սկսված նոր առնչությունների արդյունք է, հունական առասպելաբանության և դասական մշակույթի ամենախրթին նախամասնությունների նկատմամբ հայ գիտնականների ցուցաբերած բուռն հետաքրքրության արգասիք:

11

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻԼԻՈՆԻ ԱՎԵՐՍԱՆ ԵՎ ՀՈՂՍԱՅԻ ՇԽՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իլիոնը գրավել է այն տարիներին, որ Ապդանը դատավոր էր, հետևյալ ձևով: Այս քաղաքը գտնվում էր աքայացիների երկրում՝ Պովապանիս կոչված երկրի մոտ, որ նակեղոնացիներից արևմուտք է՝ Եվրոպայում: Այն տարիներին հոյները թագավոր չունեին, այլ միայն իշխաններ, որ տիրում էին ամբողջ երկրին: Իլիոնը մի մեծ քաղաք էր, որի նամանը չկար աշխարհի վրա: Այն որերին քաղաքի իշխաններից մի երիտասարդը գալիս է թեսապոնիկե քաղաք, որ Սակեղոնից արևելք է, զվարճանալու նպատակով և ընդունվում է քաղաքի մեծերի մոտ: Հետո սիրահարվում է մեծերից մեկի դատերը, հավիշտակում է նրան և տանում իլիոն: Նրա ծնողները փնտրում են նրան և նամակ են գրում իլիոնացիներին, բայց դրան շատ խիստ պատասխան են ստամում: Եթե նրա հայրը ընթերցում է այն իր ժողովորի ականջներին, նրանց տեղում շարժում է նախանձախնդրությունը: Գնում են շրջակա բոլոր հարևաններին օգնության կանչելու և ժողովում են անթիվ զորք, 15 տարի պատերազմ են վարում իլիոնի դեմ: Ամբողջ երկիրն ավերելով, բայց այն չկարողանալով գրավել՝ մտածում են մի այլ ծրագրի մասին: Քաղաքացիներին ուղարկում են համոզիչ առաջարկներ, որոնցում ասում են. «Մեծ են իլիոնի աստվածները և դրա համար մեր ուժը տկար մնաց: Խաղաղություն անենք այսուհետև և իրար երդում անենք և պատիվ տանք իլիոնի աստվածներին նվերներով»: Նրանք հարմար են գտնում այս խոսքը, իսկ մյուսները շինում են փայտյա ձիեր՝ 2,000 թվով, ներսը դատարկ և մեջը մնցնում են մարտիկներ իրենց գենքերով՝ 40,000 թվով և ծիերը ուկով և արժարով երեսա-

պատելով, տանում են իրենց քայլայիշ նվերը քաղաքի դարպասի մոտ: Քարոզը կանչել է՝ «Մրանք են իշխնի աստվածների նվերները»: Եվ ծիերի բարձրությունը 20 կանգունի չափ էր, այնպես որ չկարողացան քաղաքի դարպասով ներս մտցնել ին դրա համարյ քակեցին քաղաքի պարսպի մի մասը: Եվ երբ դուրս ելնելու ժամադրության ժամը եկել է, զորքի բազմությունը մտնում է այն ճեղքով, որ արել են, և քաղաքը սրի է մատնվում, ծերերն ու երիտասարդները՝ անխստիր: Իսկ կանանց գերում են և մտցնում նավերի մեջ ասիսկան երկիր վերադառնալու: Արևելքից փչող մի ուժգին քանի նավերը տանում է 2,500 մողոն [նյուու ուղղությամբ], և ընկունում են Խոսկիա: Յանկանում էին նորից նավարկել և հասնել իրենց երկիր, իսկ գերի կանայք կեսպիշերին հրդեհում են նավերը, սորկությունից խոսափելու համար: Աղենոր տեսմենով՝ տղամարդիկ, հակառակ իրենց կամքի, այդ աշխարհում մնացին և անունացան գերի կանանց հետ: Հասու տարիներ անց՝ ժողովուրդը նշանակում է իրենցից մեկին առաջնորդ Հռոմելու անունով, որ ծովից 27 մողոն հեռու հռոմեացիների մի քաղաք է շինում իր անունով, Իլիոնի գրավելուց 45 տարի հետո: Եվ երբ 44 Խորեկանին՝ Փիլիպպոսը թագավոր նստեց Հռոմում, Հռոմի շինելուց մի հազարամյակ լրացավ, և Կոստանդինը թագավորությունը տեղափոխեց Բյուզանդիոն, որ այժմ կոչվում է Կոստանդնուպոլիս:

Իլիոնական պատերազմը 15 տարի տևեց և գրավվել է Հերակլեսի և բազմաթիվ գորքերի կողմից: Այն օրերին Ներոնը լիեկավարում էր Երայեցիներին, Տովուանեսը՝ խատրեստուանցիներին, Պոլիկիլեսը՝ սկլունացիներին, Տանասուեսն՝ աթենացիներին և Թովրիսը՝ եգիպտացիներին: Եվ Իլիոնի գրավումից մինչև առաջին օլիմպիականը 405 տարի է անցել, երբ Եսքիլավը աթենացիների հշխանն էր: Առաջին օլիմպիականը եղել է նրա Երկրորդ տարում, որում հելենացի Կոռինտոսը հաղթեց ստադիոնում:⁴⁴

⁴⁴ Եվսեբիոսը հաղողին նկարագրում է ոչ որպես «հելենացի» այսինքն հոյսն ընդհանուր ազգի ներկայացուցիչ, այլ «հելիացի», այսինքն Հելիա զավառի բնակիչ: Տես «Քաղուածոյը ի թարգմանութեանց նախնեաց հանդերձ յոյն բնագրաւ», էջ 441:

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀ Ի ԿԵՐՈՒՄԸ. ԲՈՒԺՄԱՆ ՇՆՈՐՀԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԵԹԻԱԹՆԵՐՈՒՄ

Յովհաննէսը պատասխանեց Եւ ասաց.
«Սարդն իրենից որևէ բան ամել չի կարող,
եթէ նրան ի վերուստ՝ երկնքից այդ տրուած չէ»
(Յովհ. 3,27):

Հնամենի մտածողությամբ երկրի Վրա կատարվող ամեն ինչ
բացատրվում էր աստվածային կամքով: Գիտելիքի,
ստեղծագործական ունակությունների, հերոսության, անսովորի
հայտ գալը աստվածային միջամտության արդյունք էր:

Նոյնինիկ մարդկության առաջնացը համարվում էր
մշակութային հերոսների կողմից աստվածներից գողացված կամ
թույլատրված գիտելիքների, ունակությունների, հմտությունների
արդյունք: Արարումը աստծո մենաշնորհն է: Նա է բոլոր
գիտելիքների, ստեղծագործ հակումների աղբյուրը: Եվ եթէ
գերբնական ծագում ունեցողներին անսովոր կարողությունները
տրված են ի ծնե, ապա նարող այն կարող է ստանալ
աստվածներից, գերբնական էակներից իբրև շնորհ, պարզն, նվեր:
Շնորհներ են համարվում մարդկային զանազան ունակությունները,
հմտությունները, ծիլըն ու տաղանդը, նաև ներքին ու արտաքին
վայելչությունն ու հրապույրը:

Շնորհի ստացումը նոյնական է նվիրագործմանը և
բրվանդակային, և կարուցվածքային առումներով, ծիսական նոյն
մանրակերտն է (նոդել): Երկու դեպքերում է արդյունքը նոր
կարգավիճակի ստացումն է, ոչ երկրային ուժերի հետ շփնան
շնորհիվ միստիկական հատկությունների ձեռքբերումը: Եվ շնորհ
ստացողը, և նվիրագործվողը անցնում են նոյն ծիսական
փուլերով՝ մեկուսացում, օտարում շրջապատից, փորձություններ,
ապա ծիսական մահ և հարություն՝ նոր որակներով,
ինքնահաստատում՝ շնորհիվ ձեռք բերված գորության: Շնորհով
մարդը նվիրագործում է անցնում, ի տարբերություն շնվիրագործ-
վածների, որոնք զանազան հմտությունների, գիտելիքների
փորձում են տիրանալ բացառապես սովորելով, փորձի
ձեռքբերմամբ: Առավել հաճախ մոգական զորության ստացման
ընթացքն ընդգրկում է այս երկու պահերը միաժամանակ:

Հնորիդ տրվում է ոչ երկրային ուժերի՝ աստվածների կամ ողիների կողմից, հենց նրանց իսկ ցանկությամբ և ընտրությամբ: Ընտրյալ են դառնում բարեգործ, բարեպաշտ, հայաջալ, տառապյալ, որբ, անզավակ, միայնակ, հասարակությունից դուրս մղված անհատները, և ֆիզիկական, և հոգեկան ու բարոյական առանձնակի տվյալներ ունեցողները, որոնք կարողանում են անցնել իրենց բաժին հասած դժվարին ճանապարհը և դիմանալ բոլոր փորձություններին՝ անհաղթահարելի սովորական մարդկանց համար:

Հնորիդի ստացման մասին ազգագրական վկայությունները բազմաթիվ են, որոնց մի մասը գույտ իրական պատմություններ են՝ տվյալ ժամանակներին ներհատուկ հավատալիքային հանակարգով պայմանավորված, մի մասը՝ բանահյուսական ծագմանը գրույցներ, ավանդություններ: Նմանատիպ պատմություններ կան նաև հեթիաթներում, հիմնականում առասպելախառն, հավատալիքների հնագույն շերտեր պարունակող: Եվ եթե իրական մարդկանց պատումներում շնորիդ տրվում է հիմնականում երազի կամ տեսիլքի միջոցով, իբրև անիրական զգայախարություն, պատրանք, ապա հեթիաթներում տրանսի (այնկողմնային վիճակի, հիպնոտի, հակիշտակվածության մեջ լինելը) պահը բացակայում է: Եթե շամանը էքստազի՝ հմայվածության, գերվածության մեջ է շփվում ողիների հետ, գնում երկինք, իջնում անդրաշխարհ, ապա հեթիաթում այդ ողիները հանդես են գալիս իբրև սովորական գործող անձինք, թեև պարուրված որոշ խորհրդավորությամբ, ազատորեն շփվում հեթիաթի հերոսների հետ, հեթիաթի հերոսը «անծամբ» է մուտք գործում անդրաշխարհ, սավառնում երկինք, քանի որ հեթիաթը ինքնին արդեն տրանս՝ է, հնարանք, որի ժամանակ և պատմողը, և ունկնդիրը մտովի փոխադրվում են այլ աշխարհ, վերանում իրականությունից, ոգևորվում՝ հմայվում:

Հեթիաթներում, ինչպես նաև իրականության մեջ, շնորիդ ստացման ձևերն ու եղանակները աչքի են ընկնում անչափ մեծ բազմազանությամբ, տարատեսակներով: Ամենատարաբնույթ պատմություններն են պատմվում մարդկանց՝ ողիների հետ հանդիպումների, նրանց հետ ունեցած հարաբերությունների մասին:

¹ Տե՛ս A. Jivanyan. Feary tales and goose flights. Story telling as trans. Գիտելիք և խորհրդանշ, հավատառայիր և սովորույթ: Միջազգային 2-րդ գիտաժողովի հոդվածագիր, Երևան, 2007, էջ 217-231:

Ընորհները Վերաբերում են իհմնականում ֆիզիկական ուժին, հզրությանը, իշխանություն ու հարստություն, Վայելչություն, հնայք ծերք բերելուն: Ըստ ժողովրդական մտածողության՝ սրբի տված շնորհ է համարվում նոյնինկ տևական վարժանքներ ու փորձառություն պահանջող այնպիսի արիեստ, ինչպիսին լարախաղացությունն է² (Բիւրակն, 1900, թի 42, էջ 658-660):

Աշող դարնում են «աստծու հրամանքով» (ՀՃՀ, 11, 469)³, Երազում եկած տեսիլքով: Սայաթ-Նովայի մասին հերիաթավանորդունը պատմում է, որ նա աստծուց եկած Երազով ինանում և գտնում է վանքի բակի մի գերեզմանաքարի տակ գտնվող ջամանչան, որին տիրանալով էլ շնորհ է ծերք բերում⁴:

Բազմազան են ոչ միայն շնորհների ստացման եղանակները, այլև դրանք պարզուները: Կենդանիների, թշունների լեզուն հասկանալու շնորհ պարզեցնելով ամենից հաճախ օճն է: Հայկական հավատալիքներում օծերի թագավորը հաճարվել է նողական զորության տեր: Օծը նաև խորհրդանշում է ինաստնությունը: Զերք բերել լեզվի տակի մատանին կամ դիաչել նրա լեզվին, նշանակում է ստանալ նրա զորությունը, ինաստնությունը, այն փոխանցել իրեն: Զեների ու օծերի թագավորի կողմից շնորհը կարող է փոխանցվել հերոսին նաև ցորենի հատիկի կամ մի պուտ խնորի միջոցով (ԱՏ-672), որը տրվել էր կամ իբրև երախտագիտության նշան օծերի թագավորից (ՀՃՀ, 4, 379), կամ իբրև հարկ, ձկների կողմից (ԱՀ, 10, 307)⁵: Ընորհ պարզում են ոգիները՝ մարդուն տալով ինչ-որ առարկա, իր, որը նա մշտապես կրում է իր մոտ կամ ուտելիք, որից համտեսում է, դրանով կարծես հաղորդվում ոգուն, նրանից ստանում նրա մողական հատկանիշները:

Բայց շնորհը, որ աստվածային ծագում ունի, տրվում է արժանավորին: Նոյնինիկ մի տարբերակում դա հասուկ շեշտվում է, օսի թագավորի տված հատիկն ուտողը պետք է արժանի լինի դրա զորությանը, մաքրվի նեղերից, «...սրա ուտողը պընտկ ա

² Այդ մասին տես՝ Յու. Անտոնյան «Ընորի ընտրությամբ, չոփչու և լարախաղացի փոխկապակցությունը» (Հայ ժողովրդական նշակոյթ 13, Երևան, 2006, էջ 27-28):

³ Հայ ժողովրդական հերիաթներ. հհ. 1-15, Երևան, 1959-1999:

⁴ Աշողական շնորի ստացման մասին տես՝ Հր. Պիկիյան, Լ. Աբրահամյան, Աշոտը Երաժիշտ, բանաստեղծ և ծխառասպեական հերոս, Ծիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական Երկրորդ գիտաժողով, Զեկուցումների թեգիսմեր, Գյուղի, 1996, էջ 54, Խր. Pikichian, The Call of Zurna, in: Armenian Folk Arts, Culture, and Identity. Bloomington and Indianapolis, 2001, p. 243-244:

⁵ Ազգագրական հանդես, 1-26 գրքեր, Ծուշի-Թիֆլիս, 1896-1916: Ե. Լալայան, Զավարական հանդես, 1892, էջ 48:

պարի մարթ ըլի, վզեր արժանքի լի սըրա զորութինին... թե արժանքի ա, թող իրա չարութինը բջրախի» (ՀՃՀ, 6, 380): Եկ ինչպես սովորաբար լինում է՝ շնորհը հասնում է բարի, անմեղ, գրկված, տառապանքներ կրած մարդուն: Հացթուխի թխած հացն այրվում է, նա, վախեցած թագավորի բարկությունից՝ մեկ ուրիշն է թխում սովորական այսուից, իսկ այրված հացը, իբրև ողորմություն, տալիս մի թշված մուրացկանի կամ նրա որդուն: Քիչ անց այն ուտող աղքատ ծերունին երիտասարդանում է և սկսում հասկանալ թշունների, ծառերի, ծաղիկների լեզուն և դառնում հայտնի բժիշկ՝ հոչակավոր Լոխմանի (ԱՀ, 10, 307, Զավախսի բուրնունք, 48):

Բժշկության շնորհը, որը հեքիաթներում հաճախ է հանդիպում, տրվում է նաև տիեզերական կարույցի վերին շերտը խորհրդանշող թշունների կողմից: Բազմաթիվ են օրինակները, որոնցում հիվանդը բուժվում է թշնի տված փետուրներով, թշնի՝ երազում տված խորհրդանշուրով: Թշունները հեքիաթներում հանդես են զալիս հեթշտակ-ոգինների, աստծո պատզամախոսների դերում: Մի հեքիաթում (ՀՃՀ, 9, 547) աղքատ հողագործի բարի, խելացի որդին՝ Գառոն, բուժման շնորհ է ստանում արտուր գտած վիրավոր թշունից, որին էլ բուժում է: Տղայի համար թշունը հովանակոր ողի է, որ մշտապես օգնում է Գառոյին իր հմաստուն խորհուրդներով: Թշուն-աղջիկը ինքը աստվածային կամքն արտահայտող միջնորդ է, քանի որ ոչ թե տղային, այլ հենց թշունին է երազում զալիս տղայի բուժման շնորհի մասին ավետիսը ու նաև ցուցումը բուժման եղանակի մասին. Գառոն պետք է բուժեր բոլոր հիվանդությունները թի միջոցով: Հիշենք, որ Հիսուսն էլ երբեմն թքով էր բուժում: Խոլ ու համրի ականջների մեջ թքելով՝ հիվանդի լսողությունը վերականգնվում է (Մարկ. 7, 31-37), նոյն կերպ՝ թքով թքելով՝ Հիսուսը բուժում է կոյրի աչքերը (Մարկ. 8, 23-25):

Մեկ այլ հեքիաթում բարեպաշտ, բայց անբարտ մարդկանց կողմից հանիրավի զրապարտված, հալածված աղջիկ-թագավորին երազում երկու աղավնիներ շշով դեղ են բերում, իրենցից երկու փետուրներ ցած նետում և փոխանցում նրան աստվածային պատզամք՝ կոյր ու կոնդ մարդկանց բուժելու մասին (ՀՃՀ, 1, 214):

Երազում ինչ-որ բան ստանալը, որն արթնանալուց հետո գտնում են իրենց կողքին, միայն հեքիաթների մենաշնորհը չէ, այլ տարածված հնարանք է գուշակության, բուժման շնորհի արժանացած իրական մարդկանց վկայություններում: Ոգու

պարզեած հենց այդ առարկան է շնորհը փոխանցում մարդուն: Նոյն կերպ ափինով արքած կիսամեր տղային սթափեցնուաբութում է ծերունի բարանը՝ ս. Սարգիսը իր աղոթքով: Ապա հանում է շշով յուո, օրինում, հանձնում տղային և հրահանգներ տալիս՝ գնալ թագավորի մոտ, բուժել նրան⁶:

Հայկական մի քանի հեքիաթներում բուժման շնորհի ստացումը առավել ամբողջական ու հարուստ նկարագրություններ է պարունակում: Դրանցում նվիրագործման ծեսը առկա է իր բոլոր փուլերով ու դրանում բազմազանությամբ: Ներքոհիշյալ բոլոր տարբերակներում նվիրագործողը՝ նոյն ինքը՝ շնորհը պարզեցը, օճն է՝ բժշկության աներկրայի ու հավերժական խորհրդանիշը:

Նախապես նկարագրվում են հերոսի կյանքի դժվարությունները, աղքատությունը, ապրուստի ծեռք բերման հանար կրած դժվարությունները, թափառումներն ու դեգերումները, զանազան փորձություններ՝ հարազատների, եղբայրների նախանձն ու դաշաճանությունը, լքումը, որոնք առավել խորացնում են հերոսի՝ տարապանքներով լեցուն կյանքը: Արյունքում հերոսը միայնակ հայտնվում է անորոշության ու անելանելիության վիճակում, երբեմն՝ նոյնիսկ մահվան սպասնան մեջ: Հարազատին, ընկերոջ կորսույան մատնողները, ըստ էության, հերոսին նղում են իր ճակատագրին ընդառաջ՝ ապազա փորձություններին դիմակայելու գնով ծեռք բերելու այն, ինչ վիճակված է միայն ընտրյալներին: Մի տարբերակում անտառում փայտ հավաքող աշքատ մարդը հայտնվում է ճարպիկ ու խաբերա Քոսայի մոտ, որը նրան հրավիրում է իրեւ աշխատելու իր մոտ, մինչեւ զցում է օծերով լի սենյակը, որտեղ օծերը խայթում են մարդկանց, հետո Քոսան մեռած մարդկանցից դեղ է սարգում: Եվ միայն շնորհիվ այն բանի, որ փայտահատի ծեռքին մի ճուղ կար՝ կտրված այն զորավոր ծարից, որի տակ ապրում էր Կարմիր օծը, Քոսայի օծերը չեն կծում նարդուն, այլ գլուխ են տալիս իր ծեռքի ճիպուտին ու գնում՝ ճանաչելով դրա մեջ Կարմիր օծի զորությունը (*ՀՃՀ*, 3, 338-339): Օծ-զավագան-ճյուղ փոխակերպելիության հիմքում դրանց խորհրդանշական նույնությունն է: Ճիպուտը տիեզերական ծառի նշանակն է, այն վերադարձ է կատարում առասպելական ծանանակներին, երբ տիեզերական ծառի արնատների տակ ապրում էր օծը՝ անդրաշխարիի առեղծվածային զորության կրողը, որի զորությանը տիրանալու հանար էլ Քոսան փայտահատին ստիպում է տանել այդ ծառի մոտ, արմատախիլ է

⁶ Գ. Սրբանձտյան, Երկեր, հ 1, Երևան, 1978, էջ 489-490:

անում այն և հանում նրա արմատների տակ թաքնված օձը, կտրուում ու եփում այն պղնձի մեջ, որ փրփուրը խնի և տեր դառնա օծի կախարդական հատկություններին: Սակայն շնորհը տրվում է ոչ թե նրանց, ովքեր ցանկանում են այն, այլ ով արժանի է դրան. փայտահատը Քոսայից ազատվելու համար գերադասում է մեռնել և թաքուն խնում է օծի եփուկի վրայի յուղը՝ դարնալով այդ զորության տերը: Օծի շնորհիկ ծիսական մահ ապրելով՝ նա վերածնվում է իբրև լողմա հեքիս՝ հաղորդակից լինելով վերերկրյա գաղտնիքներին: Նրա զգայարանները բացվում են, սկսում է հասկանալ բոլոր առարկաների, բոլութի լեզուն, տեսնել ամեն ինչի խորքն ու իմանալ՝ ինչն ինչ ունի: Քոսան, հայտնվելով կատարված փաստի առաջ, ստիպված ընդունում է նրա գերակայությունը. «Լավ, բայ ես քո աշկերտը, դու իմ ուստե՞ն»:

Այլ դեպքում փայտ հավաքող երեք ընկերները մի հոր են գտնում՝ մեղրով լիթը, ընկերներից մեկին իշեցնում են մեջը՝ մեղրը ներքից համեռ, ապա նրան հորում թողնում, գնում են, որ մեղրից նրան բաժին չհանեն: Մի քանի օր մարդ մնում է հորում, սնվում միայն մեղրով: Մեղրը հեքիարում պատահականություն չէ, այն ընդգրկուն իմաստային շերտեր կրող խորհրդանիշ է: Մեղրը համարվում է անմահության աստվածային ուստիչը: Զևսը, փշակում ծնվելով, մեղրով է սնվել: Մեղրը աղերսվում է իմաստության, մոգական ուժի, հոգևոր հարստության հետ: Այն նաև հոգու մաքրության խորհրդանիշ է: Պատրաստվելով ծաղկների նեկտարից, որից աստվածների համար եփում էին աստվածային ընպեիթը՝ ամբողութան՝ մեղրը անճահության, նորոգման ու վերածննդի գաղափարակիր է, ինչպես մեղրուն, որը, ըստ որոշ հավատալիքների, մեռածին վերակենդանացնող հատկություն ունի⁷: Մեղրը, իբրև հարության խորհրդանիշ, նախապատրաստում է նվիրագործման ընթացքը: Միթրայական նվիրագործական ծեսերում նվիրագործվողը ծեռքերը մաքրում է մեղրով: Չանան՝ ծիսական ծամփորդությունից առաջ սրբազն

⁷Տես E. M. Մելետинսկու, Մեծ ուսանուածք, Մատուցության համար, Երևան, 1990, 349. Մեղր որոնող հերոսի մասին տես՝ K. Լևս-Շմոր, Օմ մեծ և ուռու, Միֆոլոգիկ, մ. 2, Մ.-Շմ. 2000:

⁸Ֆիննական էպոսում («Կայեվլա») մեղրուն մեղր է քերու ստորգետնա հրեշի կողմից սպանված հերոսին, և նա կենդանանում է: Մեղրուն փնտրում, գտնում է խորված, հեռացած, բռն մսած (= մեռած) Տելեպինուս աստծուն, կծուն և արքնացնում (= վերակենդանացնում) նրան: Այդ մասին տես A. E. Խաչոսիս, Մագայ հետով, մ., 2004, с. 32-34:

մեղր ուտելով, էքստազի մեջ է ընկնում⁹: Հայկական հեքիաթում էլ մեղրի դրվագը նախորդում է հերոսի նվիրագործնանք: Այն մեկնարկում է մեղրի կարասում, հերոսի ծիսական մահով: Հորը, կարասը այն աշխարհի, ծիսական մահկան խորհրդանիշեր են, իսկ մեղրը նախանշում է հերոսի ապագա վերածնունդը, հարությունը: Տարբեր ազգագրական շրջաններից գրի առաջ երեք նման տարբերակների գոյությունն արդեն տպավորիչ փաստ է (ՀՃՀ, 9, 70, ՀՃՀ, 13, 212, Զավախսի բուրմունք, 48):

Ծնորհի ստացման ամենակարևոր պահը այն պարզեցող աստծո, ոգու կամ սրբի հետ հանդիպումն է, որն իրագործվում է երացում կամ արդմնի վիճակում՝ տեսիլքի ծևով: Դա այն պահն է, երբ մարդու հոգին կարծես անջատված է մարմնից և սրբազն մի տարածքում հաղորդակցության մեջ է մտնում ոգեղեն էակների հետ: Հեքիաթներում սրբազն տարածքին փոխարինում է այլ աշխարհը՝ հաճախ խորհրդավորության ու սրբազնության որոշակի հատկանիշներով համեմված, իսկ աստվածային հայտնությանը փոխարինում է հերոսի և ոգու ուղղակի հանդիպումը, քանի որ այնտեղ այս ու այլ աշխարհների միջև անհաղթահարելի սահմաններ չկան, և մեկից մյուսին անցումը կատարվում է սահուն ու հաջորդականորեն: Ոգին ինքն էլ հեքիաթում հանդես է զալիս իբրև գործող անձ, որը թեև զիխավոր հերոսի համեմատ երկրորդական դերակատարում ունի, սակայն ինաստակիր կենտրոնն է, զաղակարական այն հանգույցը, որին բոլոր թելերով կապված է զիխավոր հերոսը, և որը, և բառացիորեն, և փոխաբերական առումով, այդ ոգու կրողն է: Նա մշտապես զգում է ոգու թելադրանքը, իբրև շարժիչ ուժովունեության է մղում նրան, և ուղղորդում, և ինաստավորում նրա արարքները:

Մեղրն ուտել-վերջացնելուց հետո մարդը բացած անցքով կամ դրանակով հայտնվում է «մի ուրիշ աշխարհում»: Դա մի դրախտային այգի է՝ «չայիր- չինան» տեղ (Զավախսի բուրմունք, 50) կամ ստորգետնյա դյակ (ՀՃՀ, 13, 213), որտեղ ապրում են օձերի թագավորը կամ թագուհին: Մեկ այլ տարբերակում որսորդ տղան մտնում է մի «մաղարա» և այնտեղ հանդիպում օձերի թագավորին (ԷԱԺ, Բ, 267): Քարանձավը, քարայրը այն աշխարհի մուտքը է խորհրդանշում: ԵՎ դրախտային այգին, և անձավը, և ընդգետնյա պալատը առօրյա, սովորական աշխարհից տարանցատված են ջրային տարածքով, սալածածկ մուտքով, դրնով կամ ծածկված ջրաղացքարով: Դրանք վերստեղծում են առասպելա-

⁹ Ե. Մ. Մելետիսհսկան, նոյն տեղում:

կան ժամանակների կրկնապատկերը՝ ժամանակի ու տարածության միջով միստիկական անցում կատարելով նախասկզբին: Հենց այդ սրբազն տարածքում խորհրդավորության պայմաններում էլ տեղի է ունենում հերոսի հանդիպումը օձակերպ ոգու հետ:

Նրան հանդիպել ամեն մեկին չի հաջողվում, դա տրված է բացառիկ նարդկանց¹⁰: Օքը հայտնվում է հերոսին նարդկային կերպարանքով (<ԺՀ, 9, 70) կամ կիսաօձ-կիսամարդ, գոտկատեղից վերև՝ մարդ, ներքև՝ օձ (Զավախքի բուրմունք, 50, ԷԱԺ, Բ, 267), խոսում նարդկային լեզվով: Տարբերակներից մեկում նա հանում է օձեղեն շապիկը և դառնում «հուրնիկ-հրեթեն» աղջիկ (<ԺՀ, 13, 213): Ամեն տեղ դա օձերի թագավորն է՝ Շահմար օձը (Զավախքի բուրմունք, 50, <ԺՀ, 9, 76), Շահ Մարարը (ԷԱԺ, Բ, 268): Կանացիակերպ տարբերակում նա օձերի թագուիին է՝ Շահ-Մարանը: Նրանք իրենց ստորգետնյա թագավորությունում շրջապատված են օձերի շքախմբով, որոնք նրանց ուղեկցում են, կատարում համձնարարությունները, հոգում իրենց թագավորի անվտանգությունը: Հերոսը որևէ ծառայություն է մատուցում ոգուն, նրան կերակրում՝ որսի մսով, սարքած քաբաբով, ջուր բերում նրա համար (ԷԱԺ, Բ, 267-268): Կամ բացահայտում է օձերի թագավորի կնոջ դավաճանությունը (<ԺՀ, 4, 279): Կամ օձերի թագավորը ինքն է խնդրում իրեն ծառայություն մատուցել, այն է՝ հիվանդ թագավորի բուժման համար իրեն փնտրողներից թաքնվելով՝ իր կյանքը վստահում է միայն տղային, նրա օգնությամբ իրականացնում բուժումը՝ դրանով իսկ բուժման շնորհ պարզելով հերոսին, մնացած բոլոր անարժաններին գրկելով այդ հնարավորությունից: Իսկ մինչ այդ հերոսը օձերի թագավորի մոտ մնում է յոթ տարի (Զավախքի բուրմունք, 50), 20 տարի (<ԺՀ, 13, 213): Մյուս տարբերակներում տարիների թիվը չի նշվում, բայց ժամկետի տևականությունը ակնհայտորեն զգացվում է: Ծնորի պարզելող ոգու մոտ միարժանանակ գտնվելը հասուկ է շամանական նվիրագործման ծեսին: Ոգու հետ շփվելով՝ շամանը նրանցից գաղտնի գիտելիքներ է ստանում, անցնում ուսումնառության շրջան¹², ստանում նրանից նաև մոգական առարկաներ: Դա կարող է լինել կախարդական մատանի կամ

¹⁰ Համանման իրավիճակների մասին տես K. Λευ-Строс, Структурная антропология, М., 1985, с. 242:

¹¹ Ոգիները հաճախ օգնում են շամանին որոշակի պայմանով, որ նա իրենց կերակրի: Այդ մասին տես B. H. Басулов, Издраханиску духов, М., 1984, с. 40:

¹² M. Էլսածե, Շամանիզմ, Կյու, 1998, с. 24-25:

անգին քար¹³. Համանման իրադրության մենք հանդիպում ենք հյուկական հեքիաթում, որտեղ օձերի արքան մոզական քար է նվիրում (ԷԱԺ, Բ. 268) և դրա զրորության մասին անտեղյակ հերոսին հատուկ զգուշացնում. «...տղա՛, չտանիս մարդու տաս, զածն ինիս ճնճղուն հաւկիթ է. անգին քար է զգիկայ, ըդոր մարաֆերը՝ գիշերը կը վարի ձրագի տեղ, ցորեկը կապուտ կտալի մեջ կը դնես»: Հեքիաթներում հաճախ են հերոսները գտնում իրենց նմանը չունեցող մոզական քարեր, բյուրեղներ, որոնք գայթակղում են անգամ թագավորներին, նրանց մղում ցանկացած քայլի գնալ՝ դրանց տիրանալու համար: Բայց մեծ մասամբ այդ քարերի, բյուրեղների մոզական նշանակությունը մթագնված է, և այն դիտվում է ոչ թե իրեն նպատակներին հասնելու հնարավորություն պարզեցն, այլ ավելի շուտ իրեն նյուրական մեծ արժեք, զուտ բարեկեցություն ապահովելու միջոց: Այդ պատճառով էլ հերոսները հաճախ վաճառում են դրանք մեծ գումարի դիմաց: Այնպես էլ այստեղ՝ հակառակ Շահ Մարարի նախազգուշացմանը՝ Փուրքոն (հերոսի անունն է) քարը վաճառում է, դրանով մարում պարտքերը, տուն շինում, քառասուն հաս ոչխար էլ նվեր բերում օձերի թագավորին և նրա ուղեկից օձերին (նոյն տեղում):

Օձերի թագավորի և տղայի միջև հաստատվում են ջերմ, մտերմական հարաբերություններ: Հերոսը, որպես կանոն, երիտասարդ է, նոյնիսկ պատանի, իսկ օձերի թագավորը պատկերվում է իրուն «հալիկոր», «ծերունի»: Ծեր - ջահել հակադրության մի կողմուն նվիրագործողն է, մյուս կողմուն՝ նվիրագործվողը: Այդ հակադրությունը կվերացվի միայն սերնդափոխությամբ, ծերունու՝ կյանքից հեռանալով ու ասպարեզգը թողնելով երիտասարդին, նրան փոխանցելով իր գիտելիքներն ու մոզական հատկությունները: Իր հետնորդին նա ինքն է ընտրում¹⁴, նրան հաճախ մղում փորձությունների, ստուգում նրա բարոյական, կամային ու մարդկային հատկությունները, բայց դժվարին պահին չի լրում նրան, այլ զոհում է իր կյանքը հանուն երիտասարդ սերնդի, որին նա համարում է իր ժառանգորդը, փոխանորդը, որդեգիլը, որդին: Հայր-որդի հարաբերությունները զգացվում են գրեթե բոլոր տարբերակներում, իսկ Ս. Հայկունու կողմից գրի առնված և եմինյան ազգագրական ժողովածուում

¹³ Պահապան ոգիները բյուրեղի, թանկարժեք քարի ծեռվ են հանդես զալիս, բնակվում դրա մեջ, կամ դրանով շամանք կանչում է ոգիներին: Այդ մասին տես M. Թլւածե, նշվ. աշխ., էջ 76:

¹⁴ Համանման իրադրությունների մասին տես M. Թլւածե, նշվ. աշխ., էջ 53:

հրատարակված «Բժիշկ Լոխման» հեքիաթում ծերունի օձ-ոգին, տեսնելով Փուրքոյի որդիական հոգատարությունը, ասում է. «Որդիս, դու էլար ին զաւակը, դուն ինձիս կերակրեցիր, ինձի ջուր հանեցիր...» (ԷԱԺ, Բ, 268): Հեքիաթի այս տարբերակը բացառիկ է մեր դիստարկվող թեմայի տեսանկյունից, այն ներկայացնում է շնորհի ստացնան, այն է՝ նվիրագործման մի քանի փուլեր ու աստիճաններ, և շնորհի պարզեցնը ոգուց մարդուն, և նրա փոխանցումը ուսուցչի աշակերտին՝ բազմաթիվ արժեքավոր մանրամասներով ու նրբերանգներով: Ուստի այս տարբերակի վրա կանգ կարնենք առավել հանգամանորեն:

Նվիրագործում անցնողների վրա որևէ հետք՝ նշան, կնիք թողնելը հայտնի փաստ է¹⁵: Շնորհով նվիրագործվածը ևս նշան է կրում իր վրա¹⁶: Նշան ունենալը շնորհի ապացույց է: Նշանավոր մարդիկ հիմնականում աստծոն շնորհին արժանացածներն են, որոնք իրենց վրա աստծոց նշան են կրում: Ա. Սուլիփիասյանի «Հոմանիշների բարարանում» «շնորհ» բառահոդվածում հղում է արվում «նշան» բարին¹⁷, ակնարկելով դրանց իմաստային աղերսները: Դիտարկվող հեքիաթների տարբերակների մեջ մասում օձամարդ ոգու հետ շփվելու արյոյունքում տղայի մեջքին նշան է դրոշմվում, որից էլ կարող է իմացվել նրա և ոգու կապի մասին: Այդ կապի մասին իմացվելը վտանգներով է հղի տղայի, առավել ևս՝ ոգու համար: Հավանաբար դա է պատճառը, որ տղայի հայտնվելը վատ կանխազգացմամբ է պատում օձերի թագավորի հոգին. «Ընծեն քեզի վնաս չըհասավ՝ վայ թե քեզնեն ընծի վնաս հասնի» (Զավախիքի բուրմունք, 50): Ուստի օձերի թագավորը խստիվ պատվիրում է մարդուն՝ ցուց չտալ մերկ մարմինը, նույնիսկ կնոջ մոտ չներկանալ, չվստահել զաղտնիքը ոչ մեկին. «Դու, էլ քու ջանդ մարդու շանց չես տա, քու սրբդ քու կնկան բիլա չես ասեր» (ՀՃՀ, 4, 273), «իմ հուսյարս աս ըլլի՝ նա դայֆախանա մտնիս, նա բաղնիք էրթաս» (Զավախիքի բուրմունք, 50), «միտքդ պէյէ, օ մարդու առաջ չպիտի լոգնաս, մարդ կրնակդ չպիտ տեսնայ» (ԷԱԺ, Բ, 268):

Կրելով օձերի թագավորի նշանը՝ արդեն իսկ մարդը իր արտաքինի վրա կրում է ոգու որոշ հատկությունները, ստանում

¹⁵ Մ. Էլուած, Տանիե օնքեցտա. Обряды инициации и посвящения, Киев, 2002, passim.

¹⁶ Այդ մասին տեսն Մ. Էլուած, Շամանизм, с. 47, 110, 305:

¹⁷ Ա. Սուլիփիասյան, Հոմանիշների բարարան, Երևան, 1967, էջ 506:

նոր մարմին՝ նման նրանց¹⁸. «Շամար տեսնողի մեկ կող սև էղին: Բաց տես քու կող սև ա» (ՀԺՀ, 9, 76), «Աս տղան օր հանվի կը, հանամշին ատոր կրնկի վրա մե նշանն տեսնի կը, կուզա ատոր յախեցին բռնէ կը թզ՝ դուն օծերուն թագավորին տեղը գիտես, յա ինձի տանիս պտի քովը, յա զլիստ զարնել կուտամ» (Զավախքի բուրմունք, 51), «Չըլպղոց օ Շահ Մարարին մեօհիւրը (Կնիք) կրնակն է. ընի մազօտ էր, տղան էալ էնանկ է» (ԵԱԾ, Բ, 269), «Թագավոր կըսէ. - Հանեք էս մարդու շորերը: Թագավորի ամրն է, էլ ձար չի էղնում, զորով հանում, աղում են, որ դորդ էդ մարդու ջան ալաջա է (չալպտուրիկ)» (ՀԺՀ, 4, 276):

Ազգագրական տվյալներից հայտնի է, որ բոլոր նրանք, ովքեր տեսիլքով կամ երազով հանդիպել են այն սրբազն էակին, որն իրենց ընտրել է շնորհի արժանացնելու համար, նախապես զաղտնի են պահում այդ մասին, անցնում հոգեկան տվյալտանքների մի տևական շրջան: Տառապանքների, անմարդկային փորձությունների միջով է անցնում նաև նվիրագործվող շամանը: Էքստազի մեջ նրան թվում է, թե իրեն կտրտում են, մասնաւում, եփում, այրում, մարմնական տանջանքների ենարկում, և եթե նա կոփի մարմինը և հասնի հոգեկան մի վիճակի, եթե անէացել, ոգեշնացել է այնքան, որ այլևս չի զգում ոչ մի ցավ, վերացել է նյութեղն մարմնից¹⁹, ուրեմն պատրաստ է նվիրագործման հաջորդ՝ Վերջին փուլին:

Հայկական իրականության մեջ գրավոր ու բանավոր աղբյուրները չեն վկայում շամանիզմի գոյության մասին: Որոշ հետազոտողներ, այնուամենայնիվ, բազմաթիվ ընթիանրություններ են տեսնում շամանական նվիրագործման և գուշակ-բուժողների շնորհ ստանալու, գուշակելու ծիսական արարողություններում²⁰: Հեքիաթը որոշ ուսումնասիրողների կողմից դիտվում է իբրև նվիրագործման ծեսից վերապրված դիպաշարային ամբողջություն²¹: Հեքիաթներում բազմաթիվ դրվագներ կան չափազանց նման նաև շամանական նվիրագործման ծեսերին,

¹⁸ Նման օրինակներ կան շամանական ծեսերում: Այդ մասին տես՝ Մ. Էլուածե, Շամանում, նշվ. աշխ., էջ 38:

¹⁹ Յ. Ա. Բասով, նշվ. աշխ., էջ 153-155, Մ. Էլուածե, Շամանում, էջ 245-246:

²⁰ Տես Յ. Անտոնյան, Магические целительство и гадание в Армении (по материалам XX века), Диссертація на соискание уч. ст. к.и.н., Ер., 2007:

²¹ Այդ մոտեցման հիմնադիրն է Վ. Յանը ՝ Իсторические корни волшебного сказки” (Ղ., 1946) հայտնի աշխատությամբ: Թեև շատերը թնդադատում են Պրոպյին որոշ միակողմանիության մեջ, սակայն այս ուղղությունն, այնուամենայնիվ, ունի նաև շատ հետևողներ:

ուստի հնարավոր չէ խուսափել դրանց համեմատությունների և զուգահեռներ տանելու զայրակղությունից: Թեև հեքիաթները հազվադեպ են տեղային բնույթ կրում և կենցաղավարում են բազմաթիվ ժողովուրդների բանավոր ավանդույթում, այնուամենայնիվ, ամեն մի ժողովուրդ ընկալում և ներառում է իր բանահյուսական շտեմարանում հեքիաթային խայտաբղետ բազմազանությունից հատկապես այն, ինչ խորը չէ իր առասպելական մտածողության ու աշխարհի ընկալմանը: Այդ տեսանկյունից դիտարկելով և հաշվի առնելով հեքիաթների խոր հնությունը, կարելի է չբացառել վաղեմի ժամանակներում շամանական ծեսերի գոյությունը մեր ժողովորդի կյանքում:

Մեր հեքիաթների ոչ բոլոր տարրերակներն են մանրամասներ հաղորդում նվիրագործական «փորձությունների» մասին, բայց դրանց առկայությունն ակնհայտ է: Թագավորը հիվանդ է կամ ծեր և ուզում է ջահելանալ (<ձՀ, 4, 277>): Այլ հեքիմներ անցոր են այդ հարցում: «Եքիմներն իրենք կամ «ռամդարները» ռամ են գցում և իմանում, որ միակ ճարը օծերի թագավորի արյունն է կամ եփած մսի փրկութը, իսկ դա կարող է բերել միայն մարմնին նշան ունեցող, օծերի թագավորի հետ առնչված, նրա իսկ ընտրյալ, նրա կողմից նվիրագործված, նրա օրինությունը ստացած նորաքրությունը: Պահանջներ, «ղասաբներ» են ուղարկում՝ գտնելու մարմնի վրա նշան ունեցող տղամարդուն, բռնում են մեր հերոսին և մահկան սպառնալիքով ստիպում նրան բերել Շահմար օծին: Տարապանքների մանրամասն նկարագրություն միայն Ս. Հայկունու գրառած «Բժիշկ Լոխման» տարրերակում ենք գտնում. «Հերսոտաւ Հերին պաշին, բերեց ավճի Փուրթոյին, կապեց սկօնը (սիւնը), դազագ թել մէլ ըրըց, որ չը կըրի, բերեց, կապեց ճակատը, պաշլայց աշուու պուրդուտու տալը: Ավճի Փուրթոյին մի ծէանը էրկինքը էլաւ. մի ծէանը գետնի եօթը դաթը էօաւ: Հէնէլ եալլարմիշ ըրըց, օլըրեց: Սարսափելի կը պյուրար, հոգին կը նուազեր: Կրյորեցին ակընճվընին, աղ ու բած (պիպէր) լեցոցին տեղո: Օրը տրեմ մի միս կը փրձընէին Փուրթոյէն. շատ չաշչարանք տուին...»:

Օճակերպ ոգին՝ հմաստուն ծերունին, նախապես գիտի՝ ինչ է սպասվում իրեն, հոգեպես պատրաստ և համակերպված ընդառաջ է զնում իր ճակատագրին՝ նախապես մանրամասն ցուցումներ տալով տղային ապազա գործողությունների համար: Որոշ տարրերակներում թերևս նա կարող էր խուսափել, սակայն դրանով կվտանգեր տղայի կյանքը, որի հետ հայրական զգացմունքներով էր կապվել: Նա հնի, անցածի կրողն է, և իբրև այդպիսին, մեծահոգի է, պատրաստ ինքնազոհաբերման: «Դու

ինձի գեշութեն էրիր, ըստ ես քեզի այլ լավութեն կէնեմ»,,- ասում է օծերի քազավոր (Զավախսիք բուրմունք, 51): Նա իրեն հետնորդ է ընտրել երիտասարդոյն, որը կիհնի իր ցեղական ուժի, մողական գորության շարունակողը: «Քեզ չչարչարդին՝ ես Աստուծոյ աստաջ քեզ զաւակ իմ ըսեր, ընոր համար տի գամ. Վայսուս տարածամ է» (ԷԱԺ, Բ, 270): «Բժիշկ Լոխմանի» տարբերակում Շահ-Սարարդ տղային տանում է Նավրուզ լեռը (լեռը աշխարհի կենտրոնի, տիեզերական ծառի փոփոխակն է), այնտեղ աճող խոտերի, ծաղիկների մասին տեղեկություններ հաղորդում, դրանց բուժական օգտակարությունը ստվորեցնում²²: Նա մողական ծաղիկներ է տալիս Փուրբոյին, որից հետո տղան քուն է մննում և գարդնում վերստին շնորի ստացած՝ իմաստնացած ու պայծառատես²³, տեսնում ու լսում է այն, ինչ անհասանելի է ուրիշներին. «Եթե մի ծաղկի, խոտը քով էրթոնք, քեզի հետ կը գրուցին թէ ես էն ցալին, եարային նեղն իմ» (ԷԱԺ, Բ, 270): Մողական ծաղիկներով զգայարանները անտեսանելիի, անլսելիի առաջ բացելը հատուկ է շամանական նվիրագործնան ծեսերին²⁴: Դրանով շամանը ծեռք է բերում զորություն, որ հատուկ է ոգիներին: Նա կարող է տեսնել մարմնի ներսը, կարծես այն թափանցիկ լինի, աչքերով զննել ներքին օրգանները և տեսնել, հայտնաբերել հիվանդ օրգանը²⁵: Ճիշտ նույն կերպ Փուրբոն հայացքով թափանցում է մարմնի խորքը, տեսնում օծերի թագավորի ուղեղի չորս ծուծերը, հասկանում, որ երկու եզրերինը թույն է, իսկ երկու մեջտեղինը՝ ամեն ինչի համար բուժման միջոց: Այստեղ հստակ ցուցադրված է

²² Հեթաքանակում հանդիպած բոյսերի բուժիչ հատկությունների մասին արավել մանրանամ տես՝ Թ. Հայրապետյան, Բուժման ծխահմայական և կենսաֆիզիկական ցուցիչները հայ ժողովրդական հեթաքաներում, ՊԲՀ, Երևան, 2006/2:

²³ Թնի միջոցով ողիները ապագա շամանին հայտնում են բոյսերի և այլ արարկաների հատկությունների մասին գաղտնի գիտելիքներ: Այդ մասին տես՝ Մ. Էլասած, Շամահազ, էջ 258:

²⁴ Նվիրագործվողը իր ուսուցիչ հետ զնում է մողական բոյսեր հավաքելու: Ուսուցիչը կանչում է բոյսերի ողիներին, որ նրանք մաքրեն նվիրագործվողի աչքերը, որ նա տեսնի բոյսերի ողիներին: Բոյսերով մաքրում է աչքերը, և ողիները նրան տալիս են տեսողություն՝ ամեն ինչ տեսնելու համար: Տես՝ Մ. Էլասած, Շամահազ, էջ 74:

²⁵ Շամանին արտաքին ազդակները տրվում են ավանդական կերպարների ձևով, ըստ նրա և կոլեկտիվի աշխարհներակաման՝ ողիների, բոյսերի, կենդանիների ձայների տեսքով: Շամանին թվում է, թե այդ բաներն ընկալելու, որսալու համար նա ունի լրացրցից աչքեր ու ականջներ, որով նա հասկանում է բոյսերի ու կենդանիների լեզուն: Նրանք տեսնում են հիվանդի անառողջ օրգանը, որից ազդակներ են ստանում: Յ. Ի. Եսաւուս, նշվ. աշխ., էջ 159-160:

օճային խորհրդանշից երկակի արժեքը բժշկության մեջ. օծի թույնը և սպանող է, և բուժող, այն և կյանքն է խորհրդանշում, և մահը:

Ողու հին մարմնավորման մահն ու երիտասարդի՝ որակապես նորի ծնունդը ննան են տարեկան շրջապտույտի անցումային ծեսին, երբ հին տարին (տարեկան ցիկլը) հայտնվում է կործաննան շեմին, տիրում են անորոշություն, անհայտություն, հիվանդություններ (ի դեմս թագավորի հիվանդության), անպտղություն, քառսային ուժերը ուզում են կործանել աշխարհը (օծերը ապստամբում են, ավերում, սպանում՝ ԷԱԺ, Բ, 272), մեծ վտանգ է սպանում երկրի ասկազային: Խառնաշփորք կարող է լուծվել, հավասարակշռությունը՝ վերականգնվել հին նորոգումով, հին թառսից նոր կոսմոսի ստեղծումով, որը կատարվում է հին գոհաբերնամբ և նրա մարմնի մասերից նորի ծագմամբ (ծեր հեքինի մահ և նրա մարմնով հաղորդնամբ՝ նոր հեքինի ծնունդ՝ նոր որակներով), սա է աշխարհի փրկությունը, փրկագործումը: Ճգնաժամային իրավիճակը կրկնում է արարման նախադեպը և ավարտում այն: Զոհաբերվում է բժշկության ոգին՝ օձերի թագավորը: Նա ոչ միայն ոգի է, նա նաև քուրմ է ու ծիսարար²⁶, որ գոհաբերում է հինքն իրեն՝ հանուն հեքիաթի հերոսի, որն ընտրված էր իր կողմից՝ շարունակելու բուժողի գործունեությունը, դառնալու նշանավոր հեքին: Զոհաբերությունը պետք է կատարվի հատուկ ծիսակարգով՝ հաստատված ոգու իսկ կողմից, նրանից տրված ցուցումների համաձայն²⁷: Միայն թայլը կարող է կործանել հերոսին, իսկ շնորհին կտիրանա մեկ ուրիշը (ԷԱԺ, Բ, 271, ԱՀ-24, 161, ՀԺ, 4, 277):

Օծ-ոգուն կտրտել-եփելու գործողությունները տարբեր պատումներում իրարից էապես չեն տարբերվում: Տղան եփում է առանձին-առանձին ուղեղի թունավոր և բուժիչ ծուծերը և լցոնում տարբեր բաժակների մեջ: Յահութի (իրեա) հեքինը, որը նույնապես կերել էր նոգական ծաղիկներից և իմաստություն ծեռք բերել, ուզում է ինքը անցնել նվիրագործման վերջին փուլը՝ խմել օծի ուղեղի կենսատու բաժակից և դառնալ Լոխմանի հեքին, սակայն օծի խմած զինու հոտը շփոթեցնում է, խմում է թունավոր բաժակից ու մեռնում: Կենսատու բաժակից խմում է Փուրթոն. «Ավճի

²⁶ Ուստեղեն շրেք և շերտա բարերը նույն ծագումն ունեն: Տես M. Փասմեր, Յումոլոգիչескую словаря русского языка, т. 2, М., 1986, с. 50, 63.

²⁷ Միայն մեկ պատումում օծի թագավորի գոհաբերությունը դիտվում է իրեն սպանություն, իսկ ոգու վրա ծեռք բարձրացնողը պատժի կարծանանա, ուստի օծ-ոգոնի զգուշացնում է տղային չզարկել իրեն, այլ թողնել, որ անգետ մեկ ուրիշը զարկի (ՀԺ, 9, 77):

Փուրքոն էղավ հիմա հեքին պաշի, ուր օ զընքր, «Լոխման հեքին» կըսէին» (ԷԱԺ, Բ, 272): Խմելով օժի ուղեղի եփուկը՝ հերոսը հաղորդակցվում է ոգուն ոչ միայն հոգեպես, այլև նրա ֆիզիկական մարմնով²⁸, նրա մի մասը ընդունում իր մեջ, դրանով նրա ինաստությանը, մոգական հատկություններին տիրանում: Չոհի ծերացած մարմինը վերամարմնավորվում է երիտասարդ, կենսական ուժերով լեցուն նորընծա հեքինի մեջ: Չոհն իր մահով ծնունդ է տալիս նոր հեքին՝ դարնալով միաժամանակ առաջին հրաշագործ բուժման միջոցը, որով ավարտվում է նոր հեքինի նվիրագործումը, նա հրչակվում է որպես հրաշագործ բժիշկ, հասարակական ճանաչում ծերք բերում: Երիտասարդ հերոսը, որ սկզբում դիմացել էր ոգու ընտրությանը, համապատասխանել նրա ցանկություններին, այժմ էլ դիմանում է հասարակական փորձությանը, ապացուցում իր ընտրված լինելը և ոչ թե հակառակորդի, որն իր փոխարեն էր ուզում տիրանալ շնորհին և դառնալ ոգու փոխանորդը, թեև ընտրված չէր նրա կողմից: Ինչ-ողի տեղ հերոսը ինքն է վերածվում ոգու, քանի որ օձերը, որոնց ականցին հասել էր իրենց թագավորի մահվան լուրը, ուզում են վրեժ լուծել և մեծ ավերածություններ են գործում, բազմաթիվ մարդկանց սպանում, բայց տեսնելով Փուրքոյին՝ Շահ-Մարարի անգին քարե թեզբեհով, նրան իրենց թագավորի տեղին են դնում և խաղաղված հեռանում. «Օձերը տեսան թեզբեյ կայ, ըսին. Շահմարարն է, թափուան, ընկան տղի հետ, զըցին, էլան մաղարան: Տղան օ տեսան, ըսին, - ըսի մեր թագաւորն է» (ԷԱԺ, Բ, 272):

Այլ տարրերակում օժի գլուխը եփում են, փրփուրը լցնում երեք բաժակների մեջ. «Հ'առջի սաքան օր խմեց, կը ցրվեմ: Հըմա էն եսին օր խմեց, ինչ օր աշխար լեզու կա, կը սորվի» (ՀՃՀ, 9, 77): Գրեթե բոլոր տարրերակներում փորձում են հերոսին տալ թունի բաժակը և տիրանալ շնորհին: Անեն անզամ տղան ճարպկորեն փոխում է բաժակները, ինչպես պաստվիրել էր օձերի թագավորը: Ստուգապես կատարելով ծերի ասածը, ճիշտ կրահելով առաջադրված հանելուկը (թույնի ու կյանքի բաժակները՝ իբրև կյանքի ու մահվան ընտրություն), նորը հաստատում է իր լինելու, ապրելու, գոյության իր իրավունքը՝ իբրև հնի շարունակող, հետնորդ, ավանդների կրող, փաստում նորի իրական ինքնությունը, կարգավորվածության աստիճանը,

²⁸ Շամանը խմում է զոհի արյունից և ուսում մսից, որ վերածվի ոգու, մտնի եքստագի մեջ: Տես M. Էլսածե, Շամանիզմ, էջ 184:

համապատասխանությունը տիեզերական բնական կարգուկանոնին ու ներդաշնակությանը: Այս կերպ է կատարվում բուժման գործառույթի փոխանցումը հնից նորին, ոգուց՝ հերոսին: «Թաքավոր կըսե կը թօ՝ արի խմե: Տղան դաքութենովս ստաքանները փոխե կը, դրադինը մեջտեղը դնե կը: Ետև մեջտեղինը վերցնե, խմե կը: Թաքավորն ա դրադինը խմե կը, տեղն ու տեղը հոգին կուտա չորնա կը: Տղան գելե, գուկա կը տուն: Ճանհան կաշէ օր բիստուն ծառները, խոտերը խոսին կը ու կըսեն թը իրենք ինչ ցավի դեռ են: Արթ ատիկ գլի Լոխմանի հեքիմ» (Զավախքի բուլընունք, 51):

Սույն դրվագի հետաքրքիր մեկնաբանությամբ արանձնանում է «Շահ-Մարան» տարբերակը. «Ես կէնիմ կիզամ իմ գլուխ կտորիք, ես իզալուս օձի կերպարանքով կիզամ, իմ արուն կըլընաք պղնձի մեջ, է՛տ պղնձ կէփիք, իրեք սաքան կկանի: Մեկ զջիար ա, ոն օր խմա, տեխն ու տե՛ս կփիցու, մեկ լե՛ խելք ու գիտութեն ա, մեկ լե՛ դեղ ա, ոն օր խմավ, կի՞շրի, կսախնա» (<ձ<, 13, 221): Հեքիմական նվիրագործման ու բուժման ծեսերում գոհաբերումը կատարվում է այնպես, որ ոչ մի կարի արյուն չընկնի գետնին, արյունը լցվում է հասուկ անորների մեջ²⁹: Արյունը հոգու կրողն է, օձողին ներկայանում է իբրև տիեզերական երեք տարածքների համակարգը՝ երկինքը՝ իբրև ոգեղեն արժեք՝ խելք ու գիտություն, ստորերկրայքը՝ մահվան թագավորությունը՝ իբրև թույն և բուժումը, որ նախատեսված է միջին ոլորտի՝ երկրային էակների համար: Ոգու մասնատմամբ օձը վերաճում է տիեզերական ծարի՝ իր երեք ոլորտներով, նույնանալով նաև շամանական ծարին: Որոշ ժողովուրդների մոտ հավատալիք կա, որ մարդը մի քանի (3-7) հոգի ունի³⁰: Մահից հետո մեկը մնում է գերեզմանում, մարմնի՝ ոսկրերի մեջ, երկրորդ հոգին թռչնի տեսք է ստանում ու բարձրանում երկինք, երրորդ հոգին մարդու ֆանտոմն է, ուրվականը, որ գնում է ստվերների աշխարհ, բայց հաճախ տեսիլքի պես հայտնվում³¹: «Շահ-Մարան» հեքիաբում արյուն-հոգին մեկն է և այս երեքի միասնությունը: Այս հեքիաբն առանձնանում է նաև շնորհի ստացման յուրահատկությամբ: Դա մեր ծերքի տակ ունեցած տարբերակներից միակն է, որտեղ ոգին կանացիակերպ է: Շամանական նվիրագործական վկայություններում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ոգու և

²⁹ Հմնտ. Մ. Էլսագե, Շամանիզմ, էջ 186:

³⁰ Նույն տեղում, էջ 171:

³¹ Նույն տեղում, էջ 195:

շամանի՝ տարբեր սեռերի պատկանելու դեպքում ոգին սեռական հետապնդումների է ենթարկում ընտրյալին, և շամանական շնորհի ընդունման արդյունքում ոգի-մարդ հարաբերությունն ավարտվում է ամուսնությամբ: Եթե մյուս հեքիաթներում նույնասեռ, բայց տարիքային մեծ տարբերությամբ ոգու և մարդու միջև հայր-որդի հարաբերություններն են հաստատվում, ապա այս տարբերակում կին-ոգին «հուրնիկ-հրեղեն» աղջիկ է, որ երազել է հողեղեն ամուսին ունենալ: Նրա երազանքը կատարվում է՝ նրանց միջև ամուսնական հարաբերություններ են հաստատվում³²:

Սարդկության պատմության հնագոյն շրջաններում բժշկություն մեր այսօրվա ընկալմամբ գոյություն չի ունեցել: Այն համարվել է ավելի շատ կախարդության ախս մի բան, զուտ ծիսական-հմայական բնույթ ունեցող, և դրանով զբաղվել են մոգության հետ առնվազն մարդիկ, որոնք այդ հատկությունները ստացել են իրեն շնորհ: Սակայն հետազոտում բնությունն ավելի լավ ճանաչնուու, սերունդների փորձի ավելացմանը զուգընթաց աստիճանաբար կարևորվել է բժշկական գիտելիքների դերը: Եվ բժշկությունը դանդաղորեն ռացիոնալ ուղղվածություն է սկսել ստանալ՝ դեռևս տևական ընթացքում միաժամանակ հաշտ ու խաղաղ կենցաղավարելով մոգության հետ: Եվ այսպես, հեքին ու շաման դաշնությ են ոչ միայն ի վերուստ տրված շնորհով, այլև տարիներ տևող ուսումնառությամբ, գիտելիքների ձեռքբերմանք ու փորձառությամբ: Ըստ այդմ, բուժողի նասնագիտությունը համարվում է «տվածուրիկ», որ միստիկական բնույթ ունի և կամ փորձի վրա հիմնված՝ ավանդության: Շնորհը զուտ անհատական բնույթ ունի, տրվում է սրբազն էակից մարդուն, հսկ ավանդույթը, որ հասարակական բնույթ ունի, փոխանցվում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների միջոցով:

Հայտնի է, որ հեքինները, շամանները ունեցել են աշակերտներ, որոնց տարիներ շարունակ սովորեցրել են իրենց արիեստի գիտելիքներն ու հմտությունները: Ծատ հաճախ հեքին դաշնությ են միաժամանակ և շնորհով, և գիտելիքների տևական ձեռքբերմանք: Երեմն երազում կամ այլ կերպ սրբազն էակը հայտնում է իր կամքը՝ անհատի՝ իր կողմից ընտրյալ լինելու

³² Հնագոյն արքետիպերից է ամուսնական հարաբերությունների արդյունքում շնորհ ստանալը: Այն մասին տես Բ. Ի. Բասով, նշվ. աշխ., էջ 43, 45, Մ. Էլասե, նշվ. աշխ., էջ 65, 305: Գուցե այլ մոդելն է ծևակորել այն հավատալիքը, որ զաղտնի գիտելիքների փոխանցումը, ըստ որոյ ասացողների, կատարվում է համայնքի տարասեռ անդամների միջև, թեև դրանք կարող են լինել այլ, բոլորովին ոչ ամուսնական հարաբերություններ, այլ հայր ու աղջիկ, սկեսրայր-հարս և այլն:

մասին, որից հետո անհատը գնում է որևէ փորձառու հեքիմի մոտ՝ ուսումնառություն անցնելու: Բավական փարձառություն ծեռք բերելով՝ աշակերտը նվիրագրուում է անցնում՝ դարնայով հեքիմ: Եվ եթե իրականության մեջ նվիրագրուում անցնում են նրանք, ովքեր դիմանում են իրենց ուսուցիչ-նվիրագրուողների կողմից տրված դաժան փորձություններին՝ ապացուցելով, որ ամեն ինչ լավ յուրացրել են և արժանի փոխարինողներ են լինելու³³, ապա հեքիարներուն ճիշտ հակառակն է. դաժան փորձություններն աստիճանաբար սկսել են ընկալվել իրեն թշնամանք, ուսուցիչ կողմից նախանձի արտահայտություն. ընդունակ և ընկալող աշակերտը ոհտվել է իրեն ուսուցիչ ապազա հակառակորդ, որը կկոտրի նրա անունը, կիսի ոչ միայն նրա փառքը, այլև հացը (*ՃՀ*, 4, 127, *ՃՀ*, 7, 48): Ըստ էության, սա տարբեր սերունդների, առհասարակ հնի ու նորի, ծերի ու երիտասարդի միջև ընթացող հավերժական պայքարն է կերպավորված ուսուցիչ-աշակերտ հակամարտության մեջ: Նորը, երիտասարդո՞ւ պաելի թարմ մտքով, պայծառ երևակայությանք, ֆիզիկապես ուժեղ, հավակնոտ, համարձակ, և հինգ՝ փորձառու և հմաստուն, սակայն արդեն ուժասպառ, նորի հանդեպ անընկալունակ, պահպանողական՝ դատապարտված է մերնելու, հաղթվելու, ասպարեզը զիջելու երիտասարդ սերնդին:

Երկու սերունդների պայքարն է արտացոլված նաև Լոխման հեքիմի և աշակերտների մասին պատմող հեքիարներում (*ՃՀ*, 9, թիվ 2 (84), *ՃՀ*, 7, թիվ 11, Զավակսի բուրմունք, էջ 51-52, Ատ. Մալխասյանց, «Առակներ...»)³⁴, թիվ 74 (11), էջ 109 և այլն), սակայն Ս. Հայկունու գրառած «Բժիշկ Լոխման» հեքիարում (ԷԱԺ, Բ, 272-276) այն առավել անբողջական է ու հարուստ. որսորդ Փուրքոն, որը պատահ տարիքում հայտնվում է օծերի թագավոր Շահ-Մարարի մոտ և նրանից շնորհ ստանում՝ փոխարինելով նրան, հետագայում ծերանալով՝ ինքն է դառնում հնի, մահացման դատապարտվածի կրող, թեև չի ուզում հաշտվել այդ դերի հետ: Նա հանդես է զալիս կրկնակի դերով, որպես երկու տարբեր անձ, հակասում է ինքն իրեն, իր նախկին դերին, ինքն իրեն ժխտում՝ դառնալով նորի հակառակորդ, անպտուղ ու համար ծերություն, որ

³³ Այդ մասին տես Յ. Ի. Եասոլօս, նշվ. աշխ., էջ 165:

³⁴ Ատ. Մալխասյանց, Առակներ, ավանդություններ, անեկդոտներ, Երևան, 1958, էջ 109:

ոչ ուզում է ծնել, ոչ մերնել³⁵: Նա ունենում է աշակերտներ, սակայն չի նվիրագրում նրանց: Լոխմանին 999 աշակերտ է ունեցել, սակայն ոչ մեկին ոչինչ չի սովորեցրել, ոչ մեկին չի ընտրել իրեն փոխանորդ: Չընտրելը հերիաթում համարժեք է սպանելուն: Նա բոլոր 999-ին էլ սպանել է (ՀՃՀ, 7, 48-49): Բայց ի Վերջո օր ծերության, բոլոր շամաններն ու հերիմներն էլ ստիպված են իրենց արժանի փոխարինող գտնել³⁶, որից հետո միայն իրենց կյանքը համարում են ավարտված, հերիմական ծանր բերք փոխանցում աշակերտին՝ նրան ավանդելով ոչ միայն գիտելիքները, այև շնորհը, գործունեության ասպարեզը: Այդ հետնորդը ամենից արժանավորը պիտի լինի, որը կարող է և իր հարազատ որդին չլինել: Այդ պատճառով էլ հերիաթներում հերիմը սովորաբար անզավակ է լինում, հակ հետնորդը համարվում է նրա որդեգիրը:

Հերիաթներում սերնդափոխությունը կատարվում է ծանր ու ցավագին: Հերիմը չի ուզում հաշտվել իր ծերության հետ, չի շտապում գտնել իր հետնորդին, թաքցնում է իր արհեստի գաղտնիքները իր աշակերտներից, հալածում նրանց, տանջում: Այդ պատճառով էլ աշակերտը «լալ» ու «սաղր» (համը ու հիճար) է ծևանում (ԵԱԺ, Բ, 273), «սուտըսուտ լըլքյորուն» (կեղծ-հաճը) է անում, իրեն «լափ դոնզու տրեղ ա տինում: Լողմանին մտկումն ասում ա. - էս ա. վրեր կա, համ քառ ա, համ լալեց, համ էլ դըմբը, վրեց մի պես կարըել չի սովորել» (ՀՃՀ, 7, 48-49): Այս վիճակները համարժեք են շամանական հիվանդությանը. նորմալ, բնական վիճակից շեղումներ ունենալը ընտրված լինելու նշան է համարվել միշտ: Եթե մեկը հասկանում է, որ ընտրված է վերին ուժերի կողմից, կոչված է շաման կամ հերիմ դաշնալու, անցնում է տառապանքների, փորձությունների, երկվության, հաճախ նաև հոգեխանգարումների միջով, որը հերիաթում համը ու հիճար ծևանալու երևույթն ունի: Այդ ծևացումն ապահովում է աշակերտի անվտանգությունը ուսուցչի վրիժառությունից, այդ ծևացումը նաև խելքի ու խորամանկության նշան է, այդպես նա թաքում հետևում է ուսուցչի գործողություններին, ամեն ինչ փորձում, սովորում ծաղիկներից դեղեր սարքել, դեռ նորանոր փորձեր կատարում,

³⁵ Համեմատելու համար տես K. Լեսւ-Ծմրոս, Ծմրկուրնա անտրոպոլոգիա, էջ 163, 209, 210:

³⁶ Եթե շամանը ծերանում է, ոգիներն աստիճանաբար թողնում են նրան, նա ուժը կորցնում է: Նա պետք է հետնորդ գտնի: Եթե նա չի շտապում գտնել հետնորդ, ոգիները լքում են նրան, տանջում են՝ ստիպելով փոխարինող գտնել, և եթե գտնում է, նրան է փոխանցում իր օգնական ոգիներին և ինքն ազատվում նրանցից: B. H. Բասւլօս, նշվ. աշխ., էջ 164-165:

սովորում հիվանդներին բուժել և սովորում է ավելին, քան գիտե իր ուսուցիչը (*ՀԸՀ*, 7, 49): Որոշ տարբերակներում ուսուցիչը հավատում է, որ նա «ախմախ զատ է» ու բան չի սովորի (նոյն տեղում), բայց որոշ դեպքերում կասկածում է, որ ոչ հիմար է, ոչ համր, այլ «շանսողություն» է անում, և տաճանքների ենթարկելով նրան՝ ստիպում է խոսել. «Բերեց, քեպապին շիշը նետեց կրակը, զարկեց ըստի ականջէն ընդի ականջը», «բերեց կապեց սէօնը, քէլփէթիով օրը հինգ տրեմ միս կօլորէր, կը փորցնէր», «շատ չարչարանք տուեց տղին» (ԵԱԺ, Բ, 273): Յոթ տարի մնտը համր ծևանալով՝ տղան ամեն ինչ սովորում է՝ առանց որևէ բան ցոյց տալու: Եվ մի դեպք առիթ է դառնում մատնելու իրեն, որ իրականում ոչ համր է, ոչ հիմար, այլ նոյնիսկ գերազանցում է ուսուցիչն: Արդիր մի երեսի մարդու զլիի հիվանդությունն է, որի բուժման համար Լոխմանին վիրահատություն է կատարում, բացում գլուխը և տեսնում ուղեղին մազիլներով կառչած կենդանի (ջանավար, ձիձու, կարիճ), որն անհնար է պոկել՝ առանց ուղեղին վնաս հասցնելու: Առաջին անգամ Լոխման հեքիմը անձարակ վիճակի մեջ է հայտնվում: Այստեղ մի անցքից վիրահատությանը գաղտնի հետևող աշակերտը չի համբերում և գոռում է, որ ուսուցիչը ծեռքի գործիքը կրակի մեջ տաքացնի, դիպցնի կենդանուն, որ նա ճանկերը բանա, նոր քաշի ուղեղի վրայից: Վարպետն այդպես էլ անում է ու նոր հասկանում, որ աշակերտը իրենից իմաստուն է, պարզապես թաքցրել է այդ³⁷: Դրան հետևում են աշակերտի³⁸ փախուստը և ուսուցիչ հետապնդումը: Հետապնդող ուսուցիչը ակամա փոխարինում է իր ընտրյալին հալածող, նրան փորձությունների ենթարկող ոգուն կամ նեռֆիտի նվիրագործությունն իրականացնող ծիսարարին, որը ստիպում է նվիրագործվողին տառապանքների միջոցով հաղորդակցվել:

³⁷ Շաման դարձողը սկզբում գաղտնի է պահում իր ընտրյալ լինելը, մինչև ամեն ինչ սովորի, ինքն իրեն ստուգի, համոզվի, որ կարող է բուժել: Այդ մասին տես *В. Н. Басулов, Աշկ. աշխ., էջ 166:*

³⁸ Ե. Լալայանի տարբերակնս (Ձավախիք բուրմունք, էջ 51) աշակերտները երկուսն են՝ Ֆայլատի, Աֆատին անուններով: Ակնհայտորեն արաբական ծագմանք այդ անունները, հնարավոր է, նոյն անվան ծևափխությունը լինեն: Բացառված չէ, որ նաև անուններով քիչշ եղած լինի արաբական աշխարհում: Միջնադարում ոչ միայն հայկական, այև ողը տարածաշրջանի երկրների քշշկությունը գտնվում էր արաբական քշշկագիտության ազդեցության ոլորտում: Դա չէր կարող բանահյուսական անդրադարձները չունենալ: Ի դեպ, «Սասմա ծռեր» էպոսի մի տարբերակում կա «Խոր Մանուկը կատարյալ Աֆլարին էր քշշկության մեջ» արտահայտությունը (հ. Բ, մաս 2, ժ պատու, էջ 88): Անունների նմանությունն ակներև է:

մահվան ու անդրաշխարիի առեղջվածներին, ծերք բերել մոզական ուժ ու զաղտնի գիտելիքներ: Վստահաբար այդ դերը վաղեմի ժամանակներում նա ունեցել է, սակայն մթագնվել է, նորացվել, փոխարինվելով իր աշակերտին նախանձողի կերպարով: ուսուցիչը լցուն է թշնամանքով, քանի որ նա չի ներում աշակերտին այն բանի համար, որ նա գիտի ավելին, քան ինքն է սովորեցողի, բացի այդ՝ ուսուցիչը նրան չէր ընտրել իրոք իրեն ժառանգորդ:³⁹: Աշակերտի փախուստը, թաքնվելը խորհրդանշում են նրա ծիսական մահը: Նա փախչում է հեռու և օտար երկիր՝ ֆրանցստան, Ինգլիզ (Զավախիքի բուրմունք, 51) կամ Շահ-Արասի երկիր (*ՃՀ*, 7, 50) կամ թաքնվում մորգված կովի փորի մեջ (*ՃՀ*, 9, 509), որը համարժեք է ժամանակավոր մահվան: Այլ տարբերակում (ԵԱԺ, Բ, 274) տղան թաքնվում է իրենց տանը՝ երեք իրար վրա դարսված խոչըն պղինձներից մեջտեղի դատարկի մեջ, տակինի մեջ լցնելով կաթ, վերևսինի մեջ՝ գինի և այնտեղ մնում քառասուն տարի (նոյն տեղում): Պղինձը, ինչպես և կարասը, անդրաշխարիի խորհրդանիշ է: Պղինձի մեջ են «Եփում» նվիրագործվող պատանուն կամ շաման դարձող թեկնածուին⁴⁰, որտեղից նա դուրս է զայիս նորացված: Միաժամանակ երեք պղինձները խորհրդանշում են տիեզերական երեք ոլորտները, նոյնանալով նաև շամանական ծառին⁴¹: Ստորինը՝ կաթը, տիեզերական առաստության, բեղմնավորության խորհրդանիշ է, ինչպես և այն արտադրող կովը, որը գուգորդվում է մայր երկրի, կերակրողի, սնուցողի զաղափարին: Իսկ վերինը՝ գինին, ավելի հոգևոր լյանքի, վերածննի, անմահության, թրիստոսի արյան, հոգևոր փրկության, մահից հետո լյանքի խորհրդանիշ է, որով և առնչվում է երկնքի զաղափարին: Որ այս պղինձներն իրենց պարունակությամբ տիեզերաբանական մասշտաբների են ծգուում, ակնարկվում է նաև հեքիաթում: Լուսնան հեքինը մարոիկ է վարձում, որոնք պատում են ողջ աշխարհը, սակայն չեն գտնում տղային: Լուսնան հեքինը տիեզերական զաղտնիքներին տիրապետող ոգու՝ Շահմարարի գրած թղթով փորձում է տիրապետող ոգու՝ Շահմարարի գրած թղթով փորձում է հայտնաբերել տղայի տեղը, «ռամ» է նետում և իմանում, որ «Կարմիր ծովուն՝ ճերմակ ծովուն՝ մի եաթաղի նստելու տեղ կայ

³⁹ Համեմատության համար տես K. Λεον-Ծմրօս, նշվ. աշխ., էջ 211:

⁴⁰ Տես M. Էլուածե, Շամանում, էջ 44, 45, 57:

⁴¹ Հիշել տիեզերական ծառից ինը օր շարունակ զլխիվայր կախված Օղինին: Տես E. M. Մելետոսկուն, Մեծ ուսումնական էջ 349: Բացի այդ տիեզերական ծառի տակից կարմաղբյութ է բխում: Նոյն վկայությունները կան նաև շամանական ծառի մասին:

չոր, տղան հոն նստեր է» (Նոյն տեղում): Նրա մարդիկ այժմ էլ ծովեծով են փնտրում, կրկին չեն գտնում տղային: Վերջապես հարյուր քառասուն տարեկանն անց ծեր հեքիմը, հաշտվելով իր պարտության հետ, երդվում է տղայի մորը, որ տղային չի վնասի, և խնդրում է բերել նրան: Դրանով նա կարծես նաև տալիս է հեքիմությունը տղային փոխանցելու իր համաձայնությունը. «Որդի, դու ինձիս ծերացուցիր, աշխարհը օլքոտայ, հարիր քառունի զընօց տարիս, մեռնիմ նէ, հեքիմութինս աշխրքի էրեսէն կը ստի, անունս կը կորի: Տղան էլաւ, վարպետին ծեառքը համբուրեց. մէկմէկ մնկայ (չինի գաւառ) գինի խմեցին» (Նոյն տեղում): Լոխման հեքիմը, լինելով Շահնարարի փոխանորդը, նրա բուժման բոլոր գաղտնիքներին տիրապետողը, շշի մեջ պահում էր նաև Շահնարարի անմահական ուեր, որով երիտասարդացնում էր բոլոր ծերերին, նոյնիսկ ողջացնում մեռյալներին: Հարյուր քառասուն տարի, ինչ նա հեքիմություն էր անում, ոչ մեկը չէր մեռել, բոլորին ողջացրել էր: Այժմ ինքն էր ծերացել և ուզում էր, որ նոյն կերպ, իր ցուցմունքներով իր աշակերտը իրեն վերադարձնի երիտասարդությունը, սակայն Գաբրիել հրեշտակը (ԷԱԾ, Բ, 275) կամ Սաստանան (Զավախքի բուրմունք, 52) զարկում են, թափում հեղուկը, որի սարքելու գաղտնիքը աշակերտը չգիտեր: Աշակերտը կսկիում է, նրան տանջում է ականջին շարունակ հնչող ուսուցչի ձայնը, որից գիշեր-ցերեկ չէր կարող ազատվել: Տարիներ շարունակ նա քուն չուներ, մինչևս մի օր ծանր ծնունդ է ընդունում և ազատում մի երիտասարդ կնոջ՝ ընտանիքին պարզելով արու զավակ: Սուս հարյուր մարդու ներկայությամբ՝ մեծ ընտանիքի անդամների, երկու վարդապետի, մեկ տերուտերի, մի եպիսկոպոսի և ուրիշների, տղան հասարակական ճանաչում է ստանում իրեն հեքիմ⁴², ավարտում նվիրագործումը, նրա ականջներից վերջապես կտրվում է ուսուցչի ձայնը, դա նշանակում է, որ ուսուցչի հոգին էլ էր խաղաղվել ու դադարել հետապնդել իր հետնորդին: Եվ եթե նոր կյանքի ծնունդը վերածնում է աշակերտին՝ մկրտելով նրան իրու հեքիմ, ապա այդ նոր հեքիմի ծնունդով էլ վերածնվում, փրկագործվում է Լոխման հեքիմը, որին վիճակված չէր վերստին երկրորդ կյանք ապրել անմահական հեղուկի շնորհիվ: Լոխմանին՝ ծերը, ուժը կորցրածը, վերածնվում է

⁴² Համեմատության համար տես M. Էլսալե, Շամանիզմ, էջ 96, Բ. Ի. Բասլով, նշվ. աշխ., էջ 165:

Հասարակությունը չի ընդունում միաժամանակ երկու նշանավոր հեքիմների գոյություն, դրանով ստեղծվում է անառողջ նրաց կցություն, որն ի վերջո անխուսափելի իրեն հանգում է նրանց բախնաճնը: Հայտնի է, որ սիրիոյան շամանները, օգնության կանչելով իրենց հովանավոր ոգիների շքախնճերին, հաճախ «պատերազմական» բախնան մեջ են մտնում մինյանց դեմ, որի արդյունքում մեկը հաղթում է և նվաճում ողջ համայնքի անառարկելի հեղինակությունը, իսկ մյուսը, որ պարտվում է, դատապարտվում մահվան⁴⁴: Նման նրաց կցությունը էին հիշեցնում օծերի թագավորի մարմնից եփած կենսատու ու մահաբեր հեղուկներով լի բաժակների ընտրությամբ մի հեքիմի մահը (նախկինի, հնի, պարտվածի) ու նոր հեքիմի (Երիտասարդի, հաղթողի) նվիրագործումը լցանքի հեղուկ համարվող օծերի թագավորի արյամբ: Այդպիսի մի նրաց կցությունը է մինյանց մահաբեր թույն առաջարկելով՝ ուսուցի ու աշակերտի նրաց կցությունը, որի դեպքում հաղթում է նա, ով համարժեք հակառակունով ողջ է մնում. հաղթանակը կրկին Երիտասարդինն է (*ՀՃՀ*, 7, 51): Այդպես է այլ նաև նազարությունների դեպքում ևս. նոր վարպետի հայտնվելը հների դիմադրությանն է հանդիպում, և նրանց բախումն՝ մրցության տեսքով, անխուսափելի է⁴⁵: Այդպես է նաև կախարդի և իր աշակերտի դիպաշարում, եթե իհան կախարդը չի հանդուրժում նորի ի հայտ զալը և ջանում է ոչնչացնել նրան: Եվ ինչպես սիրիոյան շամաններն են վերածվում տարբեր կենդանիների՝ նոյնանալով, միաձուլվելով իրենց հովանավոր կենդանակերպ ոգիներին, այդպես պատերազմելով մինյանց դեմ՝ նոյն կերպ կախարդն ու իր աշակերտն են վերածվում տարբեր կենդանիների ու անհաշտ կրկի տալիս, մինչև մեկը վրիպում թույ

⁴³ Τηρ χωρισμό δέρματος τ., αφαριστώντας την περιοχή φυσική ήτης: Λακωνική ηδηποτική οργάνωση του παραδοσιακού ζωής: Στεύ Β. Η. Βασιλείος, Έγχρ. απόλ., το 164: Λακωνική περιοχή παραδοσιακού ζωής: Ο πρώτος παραδοσιακός έργος στην Ελλάδα: Στεύ Φ. Α. Βροκράζ, Ι. Α. Εφρόν, Επικαιροπολιτικός λόγος, π. 24, ΣΠ.Ε., 1894, σ. 621:

⁴⁴ Ст. и В. Н. Басилов, նշ. աշխ., էջ 190-191, М. Элиаде, էջ 42, 78:

⁴⁵ Աշուուների մրցակլության մասին տես ՀՀ. Պիկիյան, Լ. Աբրահամյան, Աշվ. աշխ., էջ 55. Խը. Բիշովյան, Հայ. աշխ.: էջ 247-248:

էջ 55, Hr. Pikichian, Աշկ. աշխ., էջ 247-248:
Տես R. H. Fosmer հայտ էջի էջ 48. M.

¹⁰ Stein B. N. Basilev, նշվ. աշխ., էջ 48, Մ. Էլիազար, Վայումուն, էջ 12, 13. —

տա: Այն միշտ ավարտվում է ունակ աշակերտի հաղթանակով և ուսուցչի կործանմամբ:

Բուժման շնորհը բուժողին աստծուց բաժին հասած ճակատագիրն է: Եվ հեշտ չէ կրել այդ բաժինը. մշտապես կրիկ տալ մարդկային առողջությունը վտանգող այնկողմնային է ակների, չարքերի, միստիկական ուժերի դեմ, հաղորդակից լինել կյանքի ու նահվան սահմանազնում գտնվող հիվանդի տառապանքներին: Մարդկային օրգանիզմում տիեզերական չորս տարրերի՝ հող, ջուր, օդ, հուր, հավասարակշռություն պահպանող ինքն էլ այդ նույն տարրերից մեկն է, տիեզերքի մի մասնիկը: Այդ մասին է գինետանը՝ աշուղների համար երգող Լոխմանու աշակերտի հանելուկ-երգը՝ ջրի մեջ չթօշվողի, երկրի մեջ չժանգութվողի, երկնքում որոտացողի և երկրի վրա մղկտացողի մասին, որին հենց ինքն էլ պատասխանում է՝ ընդհանրացնելով բժշկի ոչ հեշտ ճակատագրի ողբերգականությունը.

«Այդ բարն է՝ ջրի մեջ չթօշիր,

Այն ոսկին է՝ գետնի մեջ չժանգութիր.

Այն ամպն է՝ յերկինս կորոտայ,

Այն Լոխմանն է՝ երկրի մեջ կը մղկտայ» (ԷԱԺ, Բ, 276):

ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՇՈՒՐՋ
(տիպարանական ակնարկ)

Հեքիաթների մի շարք տեսակներից (կենդանական, հրաշապատում, կունույատիկ և այլն) ամենից դժվարը ժանրի սահմաննան ու դասավարգման տեսակետից իրապատում կոչված հեքիաթի հարցն է: Իրապատումը չունի բանահյուսական այլ ժանրերին հատուկ այնպիսի բնույթ, որի ժանրային առանձնահատկությունները փնտրենք նաև նրա կենցաղային կիրառության պայմանների (Ե՞րբ է կատարվում, որտե՞ղ և այլն) և կատարման եղանակի տեսանկյունից: Այս հեքիաթի առանձնահատկությունները պետք է բնորոշել միայն պոետիկայից ելնելով:

Ակսենք անվանումից:

Հեքիաթագիտության մեջ իրապատումի անվանումն ունի բազմաթիվ տարրերակներ՝ կենցաղային, նովելային, ռեալիստական և այլն: Այս անվանումները կարդես միաձայն շեշտում են իրապատում հեքիաթի հարաբերության բնույթը իրականությունն ակտանամբ, այսինքն՝ նրանք իրականությունն արտացոլում են ծշմարտացի, ուղղակի, այդ իրականությանը հայտնի դեպքերով ու հերոսներով: Մինչդեռ առակներն իրականությունը արտացոլում են այլաբանորեն, իրաշապատում հեքիաթները՝ երևակայական ծշմարտությամբ, զրոյցները՝ պատճականության պահպանամբ և այլն: Բայց ահա նովելն ու պատճականացնելու մեջ են իրականությունն արտացոլում ուղղակի: Այստեղ չպետք է հավասարության նշան ներել նրանց միջև, որովհետև վերջիններս բանահյուսական ժանրեր չեն, չունեն բանակիր տարրերակներ, այստեղների միջազգային տարածում, և վերջապես նրանք չունեն բանահյուսական սյուժեի հասկացությունը: Որևէ հեղինակային նովելի կամ պատճականի սյուժեն ծառայում է հենց միայն այդ ստեղծագործությանը և պատկանում է միմիայն նրան, բայց հեքիաթի սյուժեն, կարծես ինքնուրույն կյանքով օժտված, պատկանում է ոչ միայն այդ կոնկրետ հեքիաթի գրառմանը, այլև ընդհանրապես այդ գաղափարի հաստատմանը, օր. ասենք՝ կնոջ լաշառությանը («Կինը հորում»)¹, նոր կառավարիչի քաղաքականությանը

¹ Սյուժեները նշելու համար այսուհետ օգտագործում ենք պայմանական անվանումներ՝ ըստ մեր կազմած միջնադարյան պյուժեների ցանկի: Իսկ հղումներն

(«Մորիկի գրույցը») և այլն: Իսկ սա բխում է զուտ պոետիկայից Եկող մի տարբերությունից: Ցանկացած ավարտուն սյուժետիկ ծևավորման հասած իրապատում հեքիաթ իր ծեփ ու բովանդակության ներդաշնակությամբ գերազանցում է հարեւան ժանրերին՝ շնորհիկ իր սյուժեի տիպական գաղափարի ու վերին աստիճանի խտացած ծեփ: Իսկ դրա պատճառը կենցաղավարման բանավոր եղանակն է, դարեր տևած հղկման ճանապարհը: Մինչդեռ ընդամենը վերցված է ուղղակի կամ պայմանական իրականության մի փոքրիկ հատված (գործողություն կամ խոսակցություն և այլն) և այն ծարայեցված է բարոյախոսությանը, այսինքն՝ որևէ գաղափարի հաստատմանը: Միայն այդ գաղափարը պետք է հատուկ լինի բոլոր ժամանակներին, ուրեմն և արտացոլման առարկա պետք է դառնան հավերժ մարդկային հարաբերություններ, այդ հարաբերությունների արտահայտման ծևն ու միջոցները գեղարվեստական հյուսվածքում կարող են լինել թե՝ իրական և թե՝ իրականին մոտ, միայն թե ամբողջ հեքիաթը պետք է թողնի նպատակադրված հնարանքի տպավորություն, և բացառվի հավատը նրա նկատմամբ: Հարաբերությունների մեջ դրված հերոսները պետք է հնարավորին չափ առավելագույնս վերացարկվեն ֆունկցիայի հասկացության մեջ: Հերոսը որքան էլ օժտված լինի կոնկրետ գործով, առաջնային պլան պետք է մոլոր ոչ թե ինքը, այլ նրա ֆունկցիան, և հերոսների փոփոխությունը տարբերակներում պետք է լինի տվյալ ֆունկցիայի շրջանակներում (այս մասին ավելի մանրամասն կխոսվի ներքում): Նկատելի է, որ այս երևույթը օրինաչափության շիամնող աստիճանի հատուկ է նաև առակներին: Քանի որ առակի այլաբանությունը ժանրի տարբերակման հիմքում ոչ միշտ է իրեն արդարացնում (այլաբանությունը երևան է գալիս նաև հեքիաթում, երբ մարդկանց հետ գործում են նաև կենդանիներ), ապա հետաքրքիր կլինի հեքիաթի ու առակի գործող անձերի հաճակարգի ուսումնասիրությամբ պարզել, որ այդ երկու ժանրերի սահմանը կախված է ֆունկցիոնալ արժեք ունեցող գործող անձերի թվից: Այսինքն եթե տվյալ սյուժեում գործում է զլիսավոր ֆունկցիոնալ արժեք ունեցող մեկ և ավելի մարդ, ապա այն հեքիաթ է, որովհետև գործ կլունենանք մարդու միջոցով մարդկային հարաբերությունների արտացոլման հետ: Ֆունկցիայի կրողի դասային տեսակը տվյալ դեպքում սխալ չէ դնել հեքիաթի ու

«Աղվեսագրքի» (ԱԳ) վրա կատարվելու են ըստ ստեղծագործության համարների, որոնք երեք հրատարակություններում էլ նույն են:

առակի տարբերակնան հիմքում, որովհետև նրանք ծավալով փոքր են: Կառուցվածքի մեջ առկա են մեկ-երկու կարևոր ֆունկցիաներ, որոնք իրենցով են որոշում ծեզ և գաղափարը, այսինքն՝ ֆունկցիա-ծեզ-գաղափար կապը միասնականության հասնող աստիճանի հզոր է: Առաջմն միայն կարելի է ասել, որ այս ուղղությամբ կատարվելիք ուսումնասիրությունն անպայման կլինի արդյունավետ:

Վերը բերված նկատումը բխում է առակի ու հեքիաթի հետևյալ սկզբունքային տարբերությունից: Հեքիաթում բարոյախոսությունը, խրատը կամ գաղափարը տեղ է հասցվում ուղղակի ծեզով, իենց մարդկային որոշակի հարաբերությունների մեջ դրված մարդու կամ մարդկանց գործողության միջոց, այդ սյուժեի արտաքին կառուցվածքից բխող իմաստով: Իսկ առակներում բարոյախոսությունը հաստատվում է մարդկային հարաբերության մեջ դրված կենդանիների գործողության ենթասողային (ենթատեքստ) նշանակության ընկալումով, նրանով, ինչ անվանում ենք այլարանական ճշնարսություն:

Այսինքն, հեքիաթի ամբողջ գործողությունն ունի տեսողական արժեք, իսկ առակները, տեսողականից բացի, նաև դատողական: Այսպիսով, առակի ու հեքիաթի տարբերակնան հիմք կարելի է ընդունել այն փաստը, թե ում միջոցով է արտացոլվում մարդկային հարաբերությունը՝ կենդանիների⁵, թե՝ մարդու: Իսկ այն ստեղծագործություններում, որտեղ գործում են և մարդ, և կենդանի, ապա պետք է, ինչպես արդեն ակնարկվեց, առաջնային դերը հատկացնել նրան, ով ունի որոշիչ ֆունկցիոնալ արժեք:

Օրինակ, առա՞կ, թե՝ հեքիաթ համարենք «Հում կաթնակերի» և «Ծեծված արյուծի» սյուժեներով պատմվող ստեղծագործությունները, երբ նրանց մեջ գործում է մեկ մարդ-հերոս: Նախ հարկավոր է որոշել, թե այդ մարդ-հերոսները ունե՞ն ֆունկցիոնալ կարևոր արժեք, թե ոչ:

Առաջինի սյուժեն հետևյալն է. օօր փաթաթվում է մարդուն և ուզում է խայթել՝ ասելով, որ մարդը երախտամոր է (կամ աղեկին աղեկ չտվող, անեյթիքար և այլն): Վերջինիս խնդրանքով դիմում են տարբեր կենդանիների, որպեսզի դատաստան անեն: Կենդանիներից եզր կամ ծին որոշում են, որ օօր պետք է խայթի մարդուն, որովհետև նա փոխադարձ լավություն չի հասկանում: Դիմում են նաև աղվեսին: Սա խորամանկությամբ օծին իջեցնում է գետնին, և մարդը սպանում է նրան: Աղվեսը լավության դիմաց հավ է խնդրում, մարդը գնում, հավի փոխարեն շուն է բերում:

Այս ստեղծագործության ինչպես հայ (միջնադարյան, նոր ու ժամանակակից), այնպէս էլ տարբեր ժողովուրդներից մեզ հայտնի մոտ 20 տարբերակների² համեմատությունը ցուց է տալիս, որ նշված սյուժեն ունի միայն մեկ կայուն հերոս՝ մարդը, շնորհիվ գաղափարի հաստատման մեջ իր ունեցած որոշիչ ֆունկցիոնալ արժեքի: Մնացած կենդանիներն անկայուն տարր են համարվում, որովհետև պատումից պատում փոխվում կամ դուրս են ընկնում: Բացառություն է կազմում աղվեսը, որը մարդուն հավասար ուղեկցում է բոլոր տարբերակներին: Մինչդեռ նախորդների նման նրա ֆունկցիայի կրողն էլ պետք է փոխվեր: Աղվեսի կայունությունը չի բխում նրա որոշիչ ֆունկցիոնալ արժեքից, ուղղակի փրկելու ֆունկցիան պահանջում է խորածանկության հատկանիշ, իսկ ավանդաբար խորածանկությունը վերագրվում է աղվեսին, հետևաբար ավանդականության ուժով աղվեսը դառնում է կայուն հերոս: Այսպիսով, և աղվեսի, և մնացած կենդանիների ֆունկցիաները (վտանգ սպառնալը, դատ անելը) թեև էական են (փոփոխվողը ֆունկցիաների կրող հերոսներն են իրենց համապատասխան դատողություններով), այնուամենայնիվ, նրանք զլխավոր չեն, որովհետև ոչ թե գաղափարի կրող, այլ այդ գաղափարի հաստատման միջոցներ են: Այս սյուժեի զլխավոր ֆունկցիան, որ գաղափարի (երախտամռության) կրողն է, դատվողի ֆունկցիան է, իսկ զլխավոր հերոսը, որը այդ ֆունկցիայի միակ անփոխարինելի կրողն է, մարդն է:

Այսպիսով, որևէ կենդանու հանդես գալը մարդու դերում բացառվում է, որովհետև սյուժեի կետ-նպատակը մարդն է, բարոյախտառությունը ուղղակի մարդու մասին է, գաղափարը նրա հատկանիշի հաստատումն է: Որևէ կենդանու փոխարեն մի այլ մարդու հանդես գալը նույնպես բացառվում է, որովհետև առաջ եկած տրամաբանական հակասության պատճառով գեղարվեստական պատումը հիմնովին կտուժեր. չէ՞որ սյուժեի գաղափարական հիմքում ընկած է ընդհանրապես մարդու հատկանիշը, էլ ինչպես նույն այդ մարդուն այլ հատկանիշ վերագրել: Ուրեմն, հատկանիշի ընդհանրությամբ միացած ողջ մարդկային դասը ներկայանում է միայն մեկ գործող անձով, իսկ ասացողն էլ գործող անձերի պակասը լրացնելու համար դիմում է:

² Զեր. թիվ 8727-279բ (ժԶ դ.), 8076-205ա (ժԷ դ.), տես էջեր, թիվ 36, ԱԳՀԱ, Մարտակերպություն, համար 154, մասն Ա, 555, միջպես նաև Հայկունի, Ա, էջ 54, ՀԺՀ, հու. V, էջ 113, հու. VI 249, ԱԱ-154, 155:

կենդանիներին: Վերջիններիս դերը գուտ գեղարվեստական է և պայմանավորված է այուժեի հնաստուն կառուցվածքով:

Այս հեքիափի նման երևոյթի հետ գործ ունենք նաև «Ծեծված արյուծը»³ այուժեի դեպքում: Անտարի բոլոր կենդանիները փախչում են լսելով, որ մարդը զայիս է: Այուժը կանգնում է, որպեսզի կրվի նրա հետ, մարդը հնարամտությամբ կապում է արյուժին և ծեծում՝ թարթ թողնելով ծարի ճեղքում:

Այս այուժեի զաղափարակիր զիխավոր ֆունկցիայի կրողը մարդն է, մնացածները չունեն ֆունկցիոնալ դրոշակի արժեք, ոչ մարդը կարող է փոխարինվել այլատեսակ հերոսով, ոչ էլ կենդանիներից որևէ մեկը՝ մարդով, որովհետև զաղափարն ընդհանրապես մարդու խելքի ուժի անհարելիությունն է, խելք, որից պարտվում է նույնիսկ այուժը (արջ, լուսան): Ուրեմն, ենելով զիխավոր ֆունկցիայի կրողից, այդ այուժեների վրա հիմնված գեղարվեստական պատումները պետք է համարել իրապատում հեքիափ:

Նկատելի է, որ ոչ միայն հիշված, այև մարդկային որևէ ընդհանուր հատկանիշ հաստատող բարոյախոսական մյուս հեքիաթներում զիխավոր մարդ-հերոսից բացի անպայման գործում են ոչ մարդ-հերոսներ (կենդանի, սատանա և այլն):⁴

Այդ մասին են վկայում նաև միջնադարյան այուժեների ցանկի «Մարդու շրջապատը» և «Կինը հորուն» հեքիաթները: Ըստ «Մարդու շրջապատը» այուժեի զաղափարախոսության բոլոր մարդիկ իրենց շրջապատի ծնունդ են և մինյանց միջև իրենց հարաբերություններում ժամանակից կախված և զայլ են, և աղվես, և զար (վերջիններիս ավանդական-առակային ընկալմանը):⁵

³ Տես ԱԳ-ՀԳ, ՀՃՀ, հու. X, էջ 340:

⁴ Չի կարենի կարծե, սակայն, թե այն իրապատում հեքիաթները, որոնց մեջ գործում են կենդանիներ, անպայման հաստատում են մարդկային ընդհանուր հատկանիշի զաղափար:

⁵ Տես «Մարդու շրջապատը» – Գոշ, էջ 93, ԱԳ-Լ, Մար. մասն թ, էջ 224, ծեր. թիվ 8825-19թ (XIX դ.), ՀՃՀ, հու. V, 340, հատ IX, 337, հու. X, 268, Էմին, Ղ, էջ 86: «Կինը հորուն» – Ազ-ՃԻԲ, ՀՃՀ, հու. VI, 492, հ. VI, 591, հու. X, 326, ԱԱ-1164:

⁶ Բացի այս, որ հեքիաթանությունը տարբերակերում փոխվում է կախված ասացողի կամ գրիշի գեղարվեստական զգացողությունից, փոխվում է նաև ասացողի կամ գրիշի գեղարվեստական զգացողությունից, փոխվում է տեսնում, զառան փոխարեն աղվեսի փոխարեն Սողոմոն իմաստունը աղվեսի պոչ է տեսնում, զառան փոխարեն նաղասատակի զրությունը: Նոր և ժամանակակից գրառումներում ամենից շատ հանդիպում են զայլը, աղվեսը և զարը, հիմնականում նույն հերթականությամբ:

Հեքիաթում թագավորի երազը հանելու հրաման ստացած մարդուն օգնում է օձը, որովհետև օգնողի ֆունկցիան պահանջում է այնպիսի կրող, որը չդաշտվեր ժամանակի ու շրջապատի ծնունդը լինելու հատկանիշով ընդհանրացած մարդկանց բազմությամբ։ Այսպես, երազահան մարդու և օգնողի հարաբերություններում կրացահայտվեր միայն մարդու հությունը, և առանց տրամաբանական հակասության կհաստատվեր գաղափարը։ Իսկ թե ինչու օգնողի դերը մշտապես կատարում է օձը, դա էլ զայիս է մեր ժողովրդի մեջ ավանդաբար օծին իմաստության հատկանիշ վերագրելուց (հնատ աղվեսի նման ֆունկցիան)։ Այդ տեսակետից իմաստային առնչակցություն պետք է տեսնել հեքիաթի և այնպիսի ժողովրդական արտահայտությունների միջև, ինչպիսիք են իմաստուն օծ, օծի հնարանտություն, օծի խելք և այլն։ Օծից բացի հեքիաթի գաղափարը չի տարածվում նաև թագավորի վրա։ Բանն այն է, որ թագավորը նույնպես ընկալվում է մարդկանց բազմությունից դրւու կանգնած հերոս, իր սոցիալական սերի տարբերության պատճառով չի ենթարկվում ամբոխը շարժող օրենքներին, ընթիակառակն, ինքն է նրանց տնօրենը, ժամանակի փոփոխիչն ու շրջապատի կարգավորիչը, այդ պատճառով էլ ինքն է տեսնում երազն ու նրա մեկնության համապատասխան էլ գործում։

Մյուս պուտեն («Կինը հորում») այս օրինակների մեջ երկան է բերում մի նոր կողմ։ Նրանից հետևում է, որ հեքիաթում արտահայտվող գաղափարի կրող շրջանակը որքան նեղանա, այնքան գործող անձերի շրջանակը կմեծանա։ Այսպես, այդ հեքիաթում հաստատվում է կանանց լաշառության, չարության գաղափարը, հետևաբար այստեղ կարող է գործել մի ներկայացուցիչ տղանարդկանց, մի ուրիշը ոչ մարդկանց բազմությունից, որպես կողմնակի ֆունկցիոնալ արժեքի կրողներ, որոնք նպաստում են զիշավոր ֆունկցիայի կրողի բացահայտմանը։ Մնացած հերոսներն այս հեքիաթում չունեն ֆունկցիոնալ արժեք։

Այսպիսով, հերոսների կազմով իրար նման հեքիաթների ու առակների տարբերակման համար կարելի է ելակետ ընդունել զիշավոր ֆունկցիայի կրողի տեսակը։

⁷ Հեքիաթի մի տարբերակում (ձեռ. թիվ 8825-19բ), որը տպագրված է Զրուցներում, օծի փոխարեն հանդես է զայիս ծերունին, որը, կտրված մարդկանց հասարակությունից, միայնակ ապրում է անտառի մի «միջին ու խորաքոր» այրում, այնպես որ ծերունին տվյալ դեպքում «ոչ մարդ»-հերոս է։

Հրաշապատում հեքիաթի ֆունկցիաներից տարբերելու համար ասենք, որ իրապատումի գլխավոր ֆունկցիան սերտ կապի մեջ է հեքիաթի կոնկրետ զաղափարի հետ, և եթե հրաշապատումի ֆունկցիաներն անվանվում են գործողություն արտահայտող բառերով (բայանունով – մեկնում, վերադարձ և այլն), ապա իրապատում հեքիաթի գլխավոր ֆունկցիայի անունը մեծ մասամբ բնորոշվում է մարդու որևէ հատկանիշ արտահայտող բառով (ածական – լաշարի, երախտամորի, ազաի ֆունկցիաները և այլն): Հետևաբար, եթե հրաշապատում հեքիաթի գործող անձանց ֆունկցիաները թվով 31 են⁸, և բոլորն էլ կարող են կայուն հերթականությամբ հանդես գալ միևնույն տարբերակներում, ապա իրապատում հեքիաթներում կա այնքան գլխավոր ֆունկցիա, ինչքան բարոյախոսություն, ուրեմն և յուրաքանչյուր հեքիաթ ունի իր առանձին գլխավոր ֆունկցիան, որը ոչ մի կապ չունի մյուս հեքիաթների հետ⁹: Ասիա, հեքիաթի արտահայտած զաղափարի և գլխավոր ֆունկցիայի սերտ կապն է պատճառը, որ Վերջինիս կրող հերոսներն ուղղակիորեն ընկալվում են իրեն զաղափարի կրողներ, և իզուր չէ, որ իրապատում հեքիաթների հերոսների մեծ մասը կոնկրետ անուններ չունեն: Նրանցից յուրաքանչյուրն իր խմբի, խավի, դասակարգի ներկայացուցիչն է, կամ ընդհանրապես մարդ է:

Հեքիաթի և հարևան ժանրերի համեմատման հերթական պրոբլեմ է նաև գեղարվեստական երևակայության (ֆանտաստիկայի) և իրականության հարաբերության հարցը: Ընդհանրապես հայ միջնադարյան արձակը ողողված է ֆանտաստիկ մտածողության տարրերով, որոնք բաժանվում են երկու խմբի՝ գեղարվեստական և «քրիստոնեական»: Առաջինի զարգացման նախնական փուլը կարելի է տեսնել կենդանական վեպում և առակներում կենդանիների հոսքի և նպատականդված գործողության մեջ: Սակայն առակների այդ ֆանտաստիկ հնարանքը այլարանության շնորհիկ ընկալվում է իրեն ծշմարտություն, և նույնիսկ չի էլ գիտակցվում այդ երևույթի իրական ու երևակայական հնարավորությունների սահմանը: Մինչդեռ իրապատում հեքիաթներում արտացոլման իրական հողի վրա

⁸ Յ. Պրոռ, Մօրֆոլոգիա սկազու, Մ., 1969, ս. 60.

⁹ Հրաշապատում հեքիաթի ֆունկցիաները համարվում են կառուցվածքային տարբեր, իսկ իրապատում հեքիաթների ֆունկցիաները՝ միջնադարյան սյուժեների դասակարգնան միավորներ: Իրապատում հեքիաթների համար ընդհանուր կառուցվածքային օրինաչափություն դժվար է գտնել, ըստ երևույթին, անհնար:

սովորական հերոսների կողքին անսպասելի հայտնված ֆանտաստիկ տարրը ընկալվում է իրեւ նտացածին հրաշք, որը արդարացվում է զաղափարի հաստատմանը:

Այս տեսակետից ավելի հետաքրքիր է իրապատում և հրաշապատում հեքիաթների համեմատությունը: Հեքիաթների դասակարգման մեջ ուսումնասիրողների մեջ մասը կողմնորոշվել են հեքիաթում հրաշալիի, կախարդականի գոյության փաստով, որի հիման վրա էլ տվել են ժանրի անվանումը: Հենց այն իրողությունը, որ հրաշապատում տարրեր կան նաև իրապատում հեքիաթում, ցույց է տալիս, որ հրաշապատում, կախարդական միջոցների լինել կամ չլինելու հանգանանքը չի կարող որոշչէ լինել հեքիաթների դասակարգման մեջ:

Ֆանտաստիկ տարրի երկու տարբեր հեքիաթյին արտահայտությունները սկզբունքային արժեք կստանան նրանց տարբերակման մեջ, եթե հրաշքը, անսովորը դիտարկենք ոչ թե լինելու կամ չլինելու, այլ երկու ժանրերում նրանց ընկալման առանձնահատկությունների տեսակետից, սյուժետային հյուսվածքում նրանց ունեցած դերի ու նշանակության դիրքերից:

Այսպես, հրաշքը, արտասովորը իրապատում հեքիաթում կատարվում, լինում է անկախ հերոսների կամքից, վերին ուժերի միջամտությամբ կամ առանց դրա: Իրապատում հեքիաթում ֆանտաստիկ տարրն ուղղակիորեն ծառայում է զաղափարի հաստատմանը, այդ զաղափարի հաստատման եղանակներից մեկն է և սյուժեի անբաժանելի մասն է կազմում:

Հրաշապատում հեքիաթներում հրաշքն ու կախարդանքը տրված են հերոսների տնօրինությանը: Ճիշտ է, ողից կախված, ականա հրաշքներ հանդիպում են, բայց մեծ մասամբ նրանց իրագործողը հերոսներն են:

Հրաշապատում հեքիաթներում ֆանտաստիկ տարրը ծառայում է ֆունկցիայի հրագործմանը (օր՝ հետապնդումից ազատվելու, դժվար խնդիրներ լուծելու և այլ նպատակների հասնելու միջոց է), այն ուղղակի կապ չունի հեքիաթի վերջնական, վերացական զաղափարախոսության հետ: Հետևաբար, համապատասխան ֆունկցիայի բացակայության պատճառով տվյալ ֆանտաստիկ տարրը կարող է ազատ դուրս ընկնել հեքիաթի սյուժեի հետևողական շղթայից, և ընդհակառակը, կարող է շարուակվել ցանկացած այլ հրաշապատում սյուժեի հետ: Մինչդեռ հրապատում հեքիաթի ֆանտաստիկ տարրը, զաղափարի հաստատման այդ անսովոր, հրաշալի եղանակը

ամենայն հավանականությամբ հատուկ է միայն այդ հեքիաթի սյուժեին:

Իրապատում և իրաշապատում հեքիաթներում իրաշքային միջոցների դերի ու նշանակության տարրերությունները ի վերջո բխում են այդ երկու ժանրերի խորապես տարրեր առանձնահատկություններից. առաջինն արտացոլում է կոնկրետ պատճական իրականության կոնկրետ բարոյախոսություն՝ նպատակի, խրատի դիրքերից, երկրորդն արտացոլում է երևակայական իրականության ոչ թե կոնկրետ, այլ ընդհանուր, վերացական գաղափարախոսության դիրքերից: Այս երևույթը մի ավելորդ անգամ ևս ապացուցում է, որ իրաշապատում հեքիաթը իր ծագմամբ ու պատճական արմատներով թաղված է նարդկության առասպելաբանական մտածողության ժամանակաշրջանում, իսկ իրապատում հեքիաթը՝ հետազա, արդեն մարդու պրոֆեսիոնալ-վերլուծական մտածողության ժամանակներում:

Ընդհանրապես հեքիաթներին հատուկ ֆանտաստիկայի և իրականության նշված հարաբերությունն առանձնապես շեշտվում և ամրապնդվում է միջնադարում: Ասվածի համար օրինակ կարող են ծառայել հեքիաթի միջնադարյան տասից ավելի սյուժեներ:

Սիա դրանցից մեկը՝ «Խեր և շառ»: Չար (հարուստ)¹⁰ մարդը բարի (աղջատ) ընկերոջը (եղբորը) զցում է հորը (կուրացնում է, մնում է ծարի վրա), քաջքերը (կենդանի, սատանա) հորի վրա (ծարի տակ, ջրաղացում) բացում են իրենց գաղտնիքները (արքայախստեր իիվանդության դեղը, կույր աչքի բուժման միջոցը, զանձերի պահեստի տեղը և այլն): Նա լսելով տեր է դառնում մեծ հարստության: Չար ընկերոջը հայտնում է իր հարստության գաղտնիքը: Նման բախտի արժանանալու համար ինքն էլ է մտնում հորը, քաջքերը ինանալով, որ իրենց գրուցք լսող է եղել, պատժում են վերջինին (հորը լցնում են քարով, ծարից զցում են, ջրաղացի մի անկյունից դուրս են քաշում և սպանում): Այստեղ մենք գործ ունենք այն հանրահայտ գաղափարն արտահայտող սյուժեներից մեկի հետ, ըստ որի՝ ուրիշի համար փոս փորողը ինքն

¹⁰ «Խեր և շառ» սյուժեի տարրերակները տես ծեռ. - 8727-291թ (Եջեր - 39), Մառ. մասն. Բ, էջ 313, ՀՀՀ հն. II, 425, հն. IV, 423, հն. VI 511, հն. IX, 158, 458, հն. X, 114, ԱԱ -613: Սյուժեի սեղմ շարադրանքի մեջ փակազգերում տրվում են նոր և ժամանակակից գրառումների տարրերակային հիմնական փոփոխությունները:

է ընկնում մեջը: «Եթիարի 15 հայկական և նույնքան էլ ռուսական¹¹ տարբերակների համադրությոց երևում է, որ այս սյուժեի գաղափարը միշտ հաստատվում է միևնույն ֆանտաստիկ տարրի միջոցով: Չարի մարմնավորող պատճվում է արտասովոր, անիրական ձանապարհով, որը սակայն արդարացվում է ծշմարիտ, կյանքի փորձով՝ հաստատված բարոյախոսության շնորհիվ: Չարը և բարին մարմնավորող երկու հակառակորդ հերոսների շորջ հյուսված գեղարվեստական պատումի պայմանականությունը շատ գեղեցիկ ծևով արտահայտվել է միջնադարյան տարբերակի վերնագրում «Խեր և շառ» (երկու հերոսների սիմվոլիկ անուններով): «Ետաքրքիր է, որ այս սյուժեն Անդրեևի «Ուղեցույցում» ունի նմանատիպ վերնագիր «Պրավլա և Կրավլա»¹², իսկ ժամանակակից տարբերակը գրառված Խոյի բարբառով, կոչվում է «Աշխարհքը դուզքօնը կտանի»: Վերը բերված ֆանտաստիկ տարրի սյուժետիկ կայունությունից հետևում է նման մի հարց. ի՞նչ դեպքում կարելի է ֆանտաստիկ միջոցը փոխարինել գաղափարի հաստատման ավելի իրական ու համոզիչ եղանակով:

Գաղափարի հաստատման ֆանտաստիկ միջոցը իրական եղանակով փոխարինելու հնարավորությունը անպայման բխում է այդ իսկ գաղափարի առանձնահատուկ բնույթից, թե Վերջինս ինչպիսի պայմաններ է պահանջում վերջնականացնելու դրսորվելու համար: Մեր օրինակում կա երկու այդպիսի կարևոր պայման. ա) բարի, աղքատ մարդու բախտավորվելն ու հարստանալը, որ ստացվում է պատահաբար, իրեն հասցված վստահությունից, և բ) հարստացման այդ ձանապարհի անկրկնելիությունը, կրկնելու դեպքում՝ կործանումը:

Արտացոլման կայուն, ֆանտաստիկ միջոցն իրականով փոխարինելու համար հարկավոր է իրական միջոցներով արտահայտել նախ և առաջ գաղափարի հաստատման այս երկաստիճան պայմանը, մի բան, որը հնարավոր չէ, որովհետև այդ ֆանտաստիկան անմիջապես ուղղված է չարի կործանման գաղափարի հաստատմանը, նրա ծշմարտացիության գեղարվեստական ապացույցն է: Ճիշտն ասած, դա հնարավոր է,

¹¹ Տես «Народные русские сказки» А. Н. Афанасьева оглавлен В.Я. Проной, Указатель сюжетов, М., 1957, с. 47-65: Պրոռազ լրացնում է թիվ 613 սյուժեի տարբերակների (ռուսական) ցանկը:

¹² Ալանեց-Անդրեևի «Ուղեցույցում» դասակարգման անձշտության հետևանքով այս սյուժեն (թիվ 613), ներկայացվել է Հրաշապատումի «Կայսերական պատմություն» ենթաքառականությունում (560-649):

բայց հեքիաթի ողջ համակարգի խախտման պայմաններում միայն, նրա ժանրային սահմաններից դուրս:

Սակայն ֆանտաստիկ տարրեր ունեցող այն իրապատում հեքիաթներում, որոնց մեջ գաղափարի հաստատման պայմանները չեն ենթադրում ֆանտաստիկ միջոցների անխուսափելիություն, կարող են սյուժեի մեջ տեղ գտած արտասովոր, անբնական երևույթները փոխարինվել արտահայտման սովորական, բնական միջոցներով։ Ասվածի հաստատումը կարող է լինել այնքան էլ մեծ տարածում չգտած «Աղամի մեղքը» սյուժեն իր տարբերակներով¹³։ Այդ հեքիաթի մեջ հայտնի ութ տարբերակները բաժանվում են երկու խմբի։

I – Մարդը աղի բեռան տակ հանդիմանում է Աղամին, իբր եթե նրա պատվիրազանցությունը չլիներ, հնքը այսօր աղ չէր շալակի։ Հերշտակը պայման է կապում և փորձության համար տեղափոխում դրախտ, եթե պատվիրանը (ուրիշի գործին չխառնվելը) խախտի, ապա Աղամը մեղավոր չէ։ Եթեր անգամ խախտում է և կրկին աղը շալակած գնում (տես ծեր. 84-261բ, ԱԳ-Ը)։

II – Անուսինները (ծառան) մեղադրում են Աղամին ու Եվային, որ պատվիրազանց եղան և դրախտը կորցրին, թագավորը (Աստված տեր) պայման է դնում, որ չքացեն փակ սափորը (արկո, մստա), սրանը հետաքրքրությունից մնված բացում են՝ խախտելով պատվերը, միջից դուրս է փախչում մուկը (թռչունը), ու պատճկում են (AA-790, Հայելի, գուլս 6-րդ, բ (Յաղագս անհնազանդութեան), Stith Thompson, 1416, FFC 25, էջ 141)։

Որ աստվածաշնչան թեմայով ստեղծված նոյն հետաքրքրամոլության գաղափար արտահայտող հեքիաթի երկու խմբերը մինչանց տարբերակներն են, դրանում կասկած լինել չի կարող։ Այդ տարբերակներում կրկնվող էական տարրերն են՝ կարող։ Այդ տարբերակներում մեղադրելը և իրենց կողմից նախահորը պատվիրազանցության մեջ մեղադրելը և կրենց կողմից նախահորը պատվիրազանցության պատվերի խախտումը։ Այսեղ կարևորը և գաղափարի նման պատվերի խախտումը։ Այսին կարևոր և գաղափարի հաստատման միջոցը անհնազանդության հոգեբանական պատճառաբանվածությունն է, որը ընդիանուր է և Աղամի, և փորձարկվող մյուս հերոսների համար։ Իսկ թե ում կողմից, որտեղ և ինչ պայմանով է կատարվում այդ փորձությունը, կարևոր չէ։ Հեքիաթի հայկական միջնադարյան տարբերակներում առկա ֆանտաստիկ տարրը, այն է՝ հրեշտակի կողմից մարդու ակնթասաստիկ տեղափոխումը դրախտ, չի ծառայում ուղղակի

¹³ Ստորև բերված տարբերակների և խումբը կազմում են միայն հայկական պատումները։

գաղափարի հաստատմանը, այլ միայն ստեղծում է փորձության վայրի և պատվիրանների տարբերություններ, որոնք կարող էին և լինել, և չինել, որովհետև ունեն միանգամայն երկրորդական նշանակություն: Այդ է պատճառը, որ հերիաթի տարբերակների մեջ մասում փորձությունը կատարվում է ոչ թե դրախտում, այլ տանը, պարտեզում և այլուր: Մարդկային հոգեբանության այդ նույրը ու թերև առանձնահատկությունը բացահայտվում է ոչ թե պատվիրանը խախտելուն նպաստող պայմաններով, այլ նույնքան թերև ու կենցաղային պատվերով: Իսկ որպեսզի փորձողը ինձնանական տվյալները կ պահպան առաջարկությունը կ վերը նշված խորանանք միջոցը: Նման պատումը նույնքան զվարժալի ու զավեշտական է, որքան խոհական և անկասկած, զեղարվեստական արժանիքներով ավելի բարձր, քան երկույթին, ծագմանք է ավելի հին, քան և խնդիր տարբերակներով:

Իրապատում հերիաթում արտահայտման ֆանտաստիկ միջոցներո կայուն են այն դեպքում, երբ գաղափարը հաստատվում է նրանց շնորհիվ: Մնացած դեպքերում հերիաթում արտահայտվող ֆանտաստիկ տարրերը կարող են հեշտությամբ փոխարինվել իրական միջոցներով:

* * *

Ոչ միայն միջնադարյան, այլև ընդհանրապես ժողովրդական իրապատում հերիաթի ժանրային սահմանների բնութագրման մեջ կարևոր է նաև հերոսի բնավորության հարցը:

Հերիաթն ընդհանրապես առաջադրում է հերոսի բնութագրման իր տարրերակը: Հերիաթում գաղափարը առաջնային է, նրան են ծառայեցվում սյուժեն և գործող անձերը: Բարոր, չարի, խարդավանքի, խորանանկության, ազահության և այլնի գերիշխող գաղափարն այսպիսով չի բացահայտվում և չի պարզաբանվում հերիաթային հերոսի բնավորության միջոցով, այլ տրվում, ներկայացվում է հերոսի միջոցով, նրա միջոցով՝ որպես գաղափարի կրողի, որպես գաղափարի: Այդ է պատճառը, որ հերոսները երբեք չեն վերածվում կերպարի (բարի գրականագիտական հասկացությամբ): Նրանց, որպես գաղափարի ուղղագիծ կրողի, բնույթը հասկապես վառ է արտահայտվել միջնադարյան գրառումներում: Բայց գաղափարակիր հերոսի հատկանիշը հասունէ է նաև հրաշապատում հերիաթին: Չխառնելու համար այսուել արդեն պետք է ենել երկու ժանրերուն գաղափարի իշխանության արտահայտման տարրեր ձևերից:

Հրաշապատում հեքիաթն ունի իր կատարողների նեղ շրջանակը: «Համաձայն Պրոպի՝ դրանք յոթն են՝ վնասատու, նվիրատու, օգնական, արքայադուատոր, ուղարկող, հերոս, կեղծ հերոս¹⁴, որոնցից յուրաքանչյուրը անձնավորում է որևէ համամարդկային վերացական գաղափար՝ հոգեբանական վերլուծության և անհատականացման շատ չնչին մասնիկով:

Իրապատում հեքիաթում գաղափարի առաջնայնությունը անբաժան է նրա սոցիալական, հետևաբար և ռեալիստական բնույթից: Իրապատում հեքիաթի սոցիալական և ռեալիստական էլուրյունն ամենից առաջ թելադրում է իր հերոսներին, որոնք ներկայացվում են այսպիսի կազմով՝ ընդհանրապես մարդիկ, ապա ամուսիններ, օրինական և ապօրինի ժառանգներ, խորանանկներ, ազահներ, անմեղներ, խաբեբաններ և այլն, և այլն: Այս բազմատեսակ ու բազմաբնույթ հերոսների միջոցով իրապատում հեքիաթը հրաշապատումին վերացական գաղափարը կոնկրետացնում է և առարկայացնում երևոյթի որոշակի բնութագրով, որպես մարդկային բնավորության ինչ-որ յուրահատուկ գիծ, և այդ յուրահատկությունն արտահայտվում է կենցաղի, սովորույթների, հասարակության և այլնի հետ հերոսի հարաբերության մեջ: Այս ինչու իրապատում հեքիաթի հերոսը ավելի ճկուն է և բազմապլանային՝ իրեւ բնավորություն:

Իրապատում հեքիաթի միջնադարյան գրառումներին հատուկ է նաև ժողովրդական հեքիաթից անցած տեղի և ժամանակի պայմանականության հատկանիշը, որն իր բնույթով տարբերվում է հրաշապատում հեքիաթի նոյն առանձնահատկությունից: Հրաշապատում հեքիաթում պայմանական տեղն ու ժամանակը կտրված են և հեռացված հրական ժամանակից ու իրական տեղից, որի համար էլ երևակայական են և ֆանտաստիկ: Ժամանակը հրաշապատում հեքիաթում հաշվվում է ոչ թե տարիներով, որովհետև հերոսը մինչև հեքիաթի նպատակին հասնելը զգիտի ինչ է ծերություն, այլ դեպքերով՝ ծնունդ, մեկնում, արգելքների հաղթահարում, վերադարձ, ամուսնություն և այլն: Ժամանակը հրաշապատում հեքիաթում անորոշ է իր տևականության մեջ, իսկ տարածությունը՝ իր հեռավորության ու անհայտության մեջ:

Մինչդեռ իրապատում հեքիաթում տեղի պայմանականությունը սահմանափակված է, օրինակ, ասացողին ծանոթ շրջապատով, հնչյալ և ծանոթ հարաբերություններով, ընտանեկան հակասություններով, առօրեական, առավել ևս, սոցիալական

¹⁴ В.Я. Пропп, Морфология сказки, М., 1969.

դրամայով: Այսպիսով, իրապատում հեքիաթում տեղի և ժամանակի պայմանականությունն առավելագույնս մոտեցված է իրականությանը¹⁵:

Միջնադարյան ու նոր ժամանակների իրապատում հեքիաթների ասացողական արվեստի ընդհանուր, թեկուզ ոչ էական, բայց կարևոր առանձնահատկություններից պետք է հանարել տարրերակների ժողովրդական, կենդանի լեզուն: Զարմանալի է, որ այդ հեքիաթները, անցնելով բազմաթիվ գրիչների ծեռքի տակով և ենթարկվելով «գիտական» խմբագրության, այնուհանդերձ ծեռագրերում պահպանել են հետքերն այն «ճոխս ու ախորժ» լեզվի, որով պատմվել են ժողովրդի բանավոր ասացողական տարերքում: Էզուր չէ, որ «հայագիտութեան սպասաւորը» Ն. Սարք, Վարդանի ժողովածուներում հանդիպող շատ առակների ժողովրդական ծագումը ցույց տալու համար առաջին հերթին փաստարկում է նրանց «Վուլգար» լեզուն: Այս տեսակետից միջնադարյան գրավոր աղբյուրներում պահպանված ժողովրդական հեքիաթները արժեքավոր նյութ կարող են մատուցել հայոց լեզվի, մասնավորապես ժողովրդախոսակցական լեզվի պատմության ուսումնասիրության համար:

Այսպիսով, անփոփենք իրապատում հեքիաթի ժանրային առանձնահատկությունները, որոնց հանգեցինք հարևան ժանրերի հետ համաժամանակյա համեմատությամբ և հեքիաթի միջնադարյան, նոր ու ժամանակակից տարրերակների համադրությամբ:

Իրապատում հեքիաթը զիխավոր մարդ-հերոսի միջոցով իրականության մարդկային հարաբերություններն արտացոլող գեղարվեստական հնարանք է մեկ կոնկրետ գաղափարի և բարոյախոսության դիրքերից, ըստ որի, գործող անձի ֆունկցիան ծեռք է բերում առաջնային, իսկ այն կրող կոնկրետ հերոսը՝ երկրորդական նշանակություն:

¹⁵ Ն. Հակոբյան, Ա. Սահակյան, Հայ ժողովրդական հեքիաթների ժանրային տարրերակման հարցի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, 1978, 1:

**Հոդվածում ընդունված համառոտագրություններ և
պայմանական անվանումներ**

- ԱԳ – Աղվեսագիրը
Գոշ – Մշիքարի Գոշի առակմերի ժողովածու
Զրույցներ – Հայ միջնադարյան զրույցների ժողովածու
Էմին – Էմինյան ազգագրական ժողովածու
Էջեր – Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից
Հայելի – «Հայելի վարուց» ժողովածու
Հայկունի – Հայկունու «ժողովրդական առակներ» ժողովածու
ՀՃՀ – Հայ ժողովրդական հեքիաթներ
Զեռ. – Մաշտոցի անվան Մատենադարանի ծեռագիր
Մար – ժողովածոյք առակաց Վարդանայ
ԱԱ – Այումեների ուղեցուց ըստ Արմե-Անդրեսի

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՊԱՆԵՐԻ
ՀԱՂՈՐԴԱԾ ՀՈՒԾԱՎԱԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՐԳԵՐԻ ԺԱՄՐՍՅԻՆ ՈՒ
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ // ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական տարբեր ժանրերի ստեղծագործություններ, սակայն իրատարակված այդ հսկայական գրականության մեջ բացակայել է ժողովրդի ծայնը պատմական հիշալ իրադարձություններից անմիջական տպագրություններ ստացած ականատես-վկա վերապրոդների պատճառ հուշերն ու հալորդած ժողովրդական երգերը: Քանագիտական ժանրեր, որոնք ևս պատմաձանաչողական, փաստավավերագրական և սկզբնաղբյուրային կարևոր արժեք են ներկայացնում: Քանի որ հայ ժողովուրդն ինքն է կրել այդ բոլոր անասելի տառապանքները, հետևաբար ժողովուրդն ինքն է այդ զանգվածային քաղաքական ոճրագործության օրինակը: Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նոյնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրոդների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրն իրավաբանական տեսակետից ապացուցողական նշանակություն ունի Հայ Դատի արդարացի լուծնան և Հայոց ցեղասպանության ձանաշման գործում:

Այս ամենի խոր գիտակցությամբ տակավին 1955 թվականից, երբ Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության մասին բացահայտ խոսել չեր կարելի, երբ մազապուրծ վերապրած ականատես-վկա տարագիր հայրենադարձները հանիրավի գրպարտվելու և աքսորվելու վախ ու դողի մեջ էին ապրում՝ արհամարհելով ամեն կարգի դժվարություն և խորապես գիտակցելով բանահյուսական այդ ժանրերի պատմագիտական և փաստավավերագրական արժեքը, սկզբում արևմտահայի արյան կանչով և անձնական նախաձեռնությամբ, այսուհետև Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության հնատիտուտի, իսկ 1996 թվականից նաև նոր հիմնադրված << ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հովանու ներքո, գիտական այլ աշխատանքներին գուգահեռ, ամռան կիզիչ արևին, ծմռան ցուրտ սառնամանիքին,

թաղից թաղ, գյուղից գյուղ ոտքով շրջելով, Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված ականատես-վկաներին որոնել-գտնելով, նրանց հոգեբանորեն մոտենալով և թողնելով ազատ արտահայտել իրենց անմիջական տպավորությունները, գրի են առել, ձայնագրել, տեսագրել, վերծանել և ուսումնասիրել նրանց պատմած սահմուկեցուցիչ հուշերը, տպավորիչ գրուցներն ու պատմական տարարնույթ երգերը (700 միավոր):

Ժողովրդական այդ վկայություններն ամփոփված են մեր մի շարք սկզբնաղբյուրային ստվար ժողովածուներում, ինչպիսիք են՝ «Մուսա Լեռ» (1984 թ.), «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունն» (1994 թ.), «Մեծ Եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995 թ.), «Հայոց Ցեղասպանություն. Ականատես Վերապրողների վկայություններ» (2000 թ.) և այլն, որոնք լույս են տեսել բազմավասարությամբ բանագետ, <<ԳԱԱ Հնագիտության և ազգագործային ինստիտուտի Բանահյուսական սկզբնաղբյուրների Վավերագրման և տեսության բաժնի երկարամյա Վարիչ, <<ԳԱԱ Թղթակից անդամ Սարգսի Հարությունյանի դասական խմբագրությամբ:

Ժողովրդական այդ նյութերը հաղորդած ականատես-վկաները գերազանցապես ավել սերնդի ներկայացուցիչներն են (ավագագոյն Վերապրողը ծնվել է 19-րդ դարում՝ Մարիցա Փափազյան (ծնվ. 1874 թ., Սամսուն)՝ իրենց պատմական բնօրրանից բռնի արտաքսված հայերը, որոնք 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության ընթացքում տարագրվել են Արևմտահայաստանից, Կիլիկիայից (1921 թ.) և Անատոլիայի հայաբնակ գավառներից (1922 թ. հզմիրի աղետ):

Պատմական այդ իրադարձությունների ընթացքում արևմտահայության զգակի մասը (ավելի քան 1,5 միլիոն) անխնա բնաջնջվել է, իսկ աքտորի ճամփաներին կողոպտված, ունեցրկված և ուժասպառ, հրաշքով փրկվածները, գաղթի գրկանքները ճաշկելով և ճամփին բազմաթիվ զոհեր տպավոր, հասել են Արևմտյան Հայաստան կամ սփռվել աշխարհի տարբեր երկներ: Հետագայում այդ մանացորդացի որոշ մասը թուրքիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Բալկանյան երկրներից և ԱՄՆ-ից պարբերաբար ներգաղթել են Արևմտյան Հայաստան և բնակություն հաստատել իրենց երեմնի բնօրրանների հիշատակները խորհրդանշող Երևանի մերձակա նորակառուց թաղամասերում (Այգեստան, Սարի թաղ, Շենգավիթ, Նոր Բուրանիա, Նոր Արեշ, Նոր Կիլիկիա, Նոր Արաքիր, Նոր Զեյթուն, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր

Մարաշ), ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններում (Նոր Խարբերդ, Նոր Կեսարիա, Նոր Հաճըն, Նոր Այնքայ, Նոր Մուսա լեռ, Նոր Եղեսիա (Ուրֆա), Էջմիածնում (այժմ՝ Վաղարշապատ), Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր), Արարատում, Թալինում, Հրազդանում, Լենինականում (այժմ՝ Գյումրի), Կիրովականում (այժմ՝ Կանաձոր) և այլուր):

Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված վերապրող ականատես-վկաններին են մշտապես հանդիպել եմ ինքնամփոփ ու լուր իրենց մատորումների մեջ խորասոյզ: Այդ խորիրդավոր լոռությունը ևս ունեցել է իր պատճառը, քանի որ տասնամյակներ շարունակ խորիրդային Հայրենիքում տիրող քաղաքական արգելքները թույլ չեն տվել իրենց անցյալի մասին ազատ ու անկաշկանդ պատմել կամ վիպել: Հետևաբար, այդ կարգի նյութերը մեծ դժվարությամբ են հայտնաբերել ու գրի առել:

Ավելի քան 50 տարիների ընթացքում իմ հետևողական պրայտումներով, ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նոյնպես և Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Հունաստան, Ֆրանսիա, Կանադա, ԱՄՆ և Թուրքիա կատարած իմ անձնական կամ գիտաժողովային կարծատն ուղևորությունների ընթացքում մշտապես որոնել, հայտնաբերել եմ Հայոց ցեղասպանությունից վերապրող ականատեսների պազ, միջին և կրտսեր սերունդների ներկայացուցիչներին, ծանոթացել նրանց հետ, թափանցել նրանց հոգու խորխորատները:

Տեղի տալով իմ թախանձագին հորդորներին նրանք, պոռեկացող հուզումով կրկին վերապրելով իրենց տիսուր անցյալը, արցունքախառն հեկեկոցներով սկսել են պատմել իրենց հիշողության մեջ անթեղած սրտամորմոք հուշերը, թե ինչպես երիտրությական ոստիկանները բռնի տեղահանել են իրենց պատեհական շեն բնօրրանից և իրենց աչքերի առաջ անմարդկայնորեն հոշոտել իրենց ծնողներին ու հարազատներին, պատվագրել իրենց մայրերին ու քոյրերին, քարերով ճիմել նորածին մանուկներին...

Ականատես-վկա վերապրողների պատմած հուշերը, գրուցներն ու երգերը հնարավորություն են տալիս գիտական վերլուծության ենթարկել նաև այդ կարգի նյութերի ժանրային տիպաբանական առանձնահատկությունները:

Պատմական հուշը որևէ անձի կրոնից իր հիշողությունների հիման վրա շարադրված կամ պատմած է՝ անցյալի այն իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի մասին, որոնց հետ ինքն առնչվել է: Հուշի մեջ փաստերի, դեպքերի շարադրանքը

գուգորդվում է պատմողի անձնական տպավորությունների հետ: Հայոց ցեղասպանության ականատես-վկանների պատմած հուշերը ներկայացնում են նրանց ապրած ժամանակաշրջանի, ընդ որում Հայոց ցեղասպանության տպավորիչ դրվագների նկարագրությունը, ինչպես նաև հասարակական ուժ ժողովրդական կյանքի բազմակողմանի պատկերը:

Ականատես-վկանների պատմած հուշերում արտացոլված են հայրենի բնաշխարհի գեղեցկությունները, նրանց նահապետական արօրյա կենցաղն ու սովորույթները, նրանց ապրած ժամանակաշրջանը՝ հասարակական-քաղաքական կյանքի պայմանները, նշանակալից պատմական իրադարձությունները, երիտրուքական կառավարության պարագլուխների (Թալեաթ, Ենվեր, Ջենալ, Նազիմ, Բեհաեղին Շաքիր) գործադրած դաժանությունները (հարկահավաք, զրոահավաք, զինահավաք, ողջակեզ, բռնազադ, ջարդ, կոտորած), նրանց կազմակերպած բռնի տեղահանությունները դեպի աճայի անապատներ (Դեյր էլ Զոր, Ոաս ուլ Այն, Ոաքքա, Հոմս, Համա, Մեսքենե, Սուրուճ...), հայերի կրած անասելի տառապանքները (քայլք ուժասպառվելու աստիճան, ծարավ, քաղց, համաձարակ, մահկան սարսափ...), ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների մղած արդար ու ազնիվ ոգորումներն ընդդեմ բռնության պաշտպանելու համար իրենց ապրելու տարրական իրավունքը (1915 թ. Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գյումարտեր, Մուսա Լեռան և Եղեսիայի (Ուրֆա), ավելի ուշ՝ 1920-1921 թթ. Այնթապի, Համբնի հերոսամարտեր), այդ ինքնապաշտպանական մարտերի ազգային հերոսներ (շապինգարահիսարի Անդրամիկ Օզանյան, Վանեցի Արմենակ Եկարյան, Մեծն Մուրադ [Համբարձում Բոյաջյան], մուսալեռի Եսայի Յաղության, ուրֆացի Սկրոտիչ Յորմելերայլյան, այնթապի Աղոյր Լևոնյան, զեյթունցի Արամ Չոլաքյան, ազգային Վրիժառու Սողոմոն Թեհերյան) և բազմաթիվ այլ հայտնի ու անհայտ հայորդիներ:

Ականատես վերապրողներից յուրաքանչյուրն իր կյանքի հուշը պատմել է իրեն հարազատ հայերեն խոսվածքով, հաճախ՝ բարբառով կամ օտարախառն հայերենով, նաև՝ թուրքերեն, արաբերեն, քրդերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

Իմ գրի առած, ծայնագրած ու տեսագրած ժողովրդական բանավոր նյութերն ականատես վերապրողների անմիջական տպավորությունների վերհուշերն են, նրանց խոհերը, մտորումները, ակնկալիքներն ու վկայությունները՝ արևմտահայությանը

բաժին ընկած ճակատագրի կենդանի պատկերների ստույգ ու ճշնարտացի վերարտադրությամբ: Ականատես վերապրողներն անկախ իրենց մասնագիտությունից, իրենց ապրած դաժան լյանքի փորձով հարստացած և ինաստնացած անհատականություններ են, որոնց համար նախ և առաջ «Մարդ մարդ պետք է լինի, միևնույն է՝ հայ է, թե՝ թուրք», - ինչպես նախանշել է Արտավազդ Կտրածյանը (ծնվ. 1901 թ., Աղաբազար) իր պատմած հուշի սկզբում [Սվագյան 2000: Վկայություն¹ 220, էջ 360]:

Հայոց ցեղասպանության ականատես-վկաների պատմած հուշերը, որպես ժողովրդական բանավոր ավանդության տարատեսակ, իրենց կառուցվածքով կամ հակիրծ են ու սեղմ, կամ ծավալուն ու երկարապատում, որոնք ներառում են նաև զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուտության տարարնոյթ ժանրեր (եղերերգություն, ոյուցազներգություն, վիհերգ, զրոյց, առակ, առած-ասացվածք, օրինանք, անեծք, աղոթք, երդում) հաստատելու համար իրենց պատմածի հավաստիությունը, առավել արժանահավատ ու տպավորիչ դարձնելով իրենց բանավոր խոսքը: Մանավանդ, իրենք վերապրողները, բարոյական պատասխանատվություն և պարտիք գիտակցություն են զգացել իրենց պատմածի նկատմամբ: Նրանցից շատերն իրենց հիշողություններն ինձ հաղորդելուց առաջ խաչակնքել են կամ երդվել: Իսկ երդումը նվիրական խոսք է՝ սրբություն, որը կեղծիք չի ընդունում: Ինչպես որ էրգորումցի Լորիս Պապիկյանը (ծնվ. 1903 թ.) սկսել է պատմել իր հուշը. «... Նախ ասեմ, Եթե միտումնավոր կերպով գունազարդած լինեմ դեպքերն ու դեմքները, թող նզուք լինի ինձ և ընդհանուրի արհամարհանքին արժանանամ...» [Ավ. 2000: Վկ. 90, էջ 191]:

Խնդրո առարկա հուշերը, Ենթարկելով քանակական ու որակական մանրակրկիտ վերլուծության, պարզվել է, որ ինչպես առանց հիշողության մարդ չկա, նույնպես և առանց հիշողության չկա ժողովուրդ, քանի որ հիշողությունը մարդու կամ ժողովորդի ապրուծ տարիների լյանքն է, նրա անցյալը, նրա պատմությունը: Նույնանման պատմական հիշողություն ունեն նաև իրեաները, հոյսները, զնչուները և այլ տուժած ժողովուրդներ:² Իսկ որևէ ժողովուրդ, տվյալ դեպքում թուրք ժողովուրդը, եթե չի պահպանել

¹ Սվագյան Վերժին, Հայոց Թեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000: Այսուհետև Ավ. 2000: Վկայություն - այսուհետև Վկ.:

² Porter, Jack Nusan, ed. *Genocide and Human Rights. A Global Anthology*. Lanham, New York, London, 1982.

իր պատմական հիշողությունը, ուրեմն նա չի ապրել և չի զգացել այդ բոլոր տառապանքները: Այստեղ տեղին է հիշատակել թուրքական "Superonline" և "Ixir" սերվերների հիմնադիր Բաբուր Օզդենի հետ «Հակահարված վիրտուալ աշխարհում» ("Counterattack in the Virtual World") հարցազրույցից որոշ հատվածներ, որտեղ նշվում է, թե Համացանցում (Internet) հայերը տեղադրել են Հայոց ցեղասպանությունից վերապրած ականատեսների հաղորդած հուշեր ու պատմական բնույթի թուրքական երգեր նկատի ունի նաև իմ V. Sazlian. "The Armenian Genocide in the Memoirs and Turkish-Language Songs of the Eyewitness Survivors." Yerevan, "Gitutium" Publishing House of the NAS RA, 1999 գիրքը, ինչպես նաև <http://www.geocities.com/vsaz333/> կայքը, և ավելացվում: «...Ես զտա, որ վիրտուալ իրականության մեջ «ցեղասպանության կայքերը» հայերի մենաշնորհն [են]: ...Մենք պետք է կազմակերպված լինենք: Թուրքիան կազմակերպված չէ: ...Այնուամենայնիվ, մեր մշակույթում շատ դժվար է վեր հանել այդ պատմությունները [Վերապրողների կյանքի պատմությունները]: Մենք ունենք ինքնախրանման և անհատականացման պակասի մշակութային անբարենպաստ իրավիճակ: ...Նրանք [հայերը] առասպեկտի կարիք ունեն իրենց մշակույթն ու անցյալը մինչանցից անբաժան պահելու համար: ...Մենք [թուրքերս] նման կապի կարիք չունենք: Մենք ուզում ենք մոռանալ անցյալը և առաջ նայել: Մեր ընտանիքները խառնվել են: [Անցյալուն] ինչ որ գրվել էր՝ տարբեր այբուբենով էր: Մենք չենք կարող դրանք [Վերապրողների կյանքի պատմությունները] ընթերցել: Ես չեմ կարող կարդալ իմ մեծ հոր գրառումները: Հին [օսմանյան] թուրքերնի գիտակ մարդն է դրանք կարդում: ...Օգուտ չկա Համացանցի վրա պրոֆեսորներ [և] պատմաբաններ գետեղելուց: Արխիվները չեն ազդում մարդկանց վրա: ...Մարդիկ չեն ազդվում իրենց նմանների, որոնց ծնողները ոչնչացվել են կամ ցրվել, կյանքի պատմություններից: Նրանք ազդում են, եթե այն [պատմությունը] լսում են սկզբնադրյուրից (Ծնդգծումը իմն է - Վ. Ս.): ...Հայերը Համացանցում նույնիսկ թուրքերեն և անգլերեն լեզուներով «ցեղասպանության երգերի» բաժիններ ունեն» ("Milliyet," 28.01.2001, էջ 19):

Հայոց ցեղասպանությունը, որն իրագործվել է քսաներորդ դարասկզբին, անմիշականորեն ընկալվել է ականատեսների զգայարաններով, և այդ բոլորն ամժնեցի կերպով տպավորվել է նրանց հիշողության մեջ: Ինչպես խոստովանել է արդիվնիցի Վերապրող Նեկտար Գասպարյանը (ծնվ. 1910 թ.): «...80 տարուց ավելի է անցել, բայց ես մինչև այսօր չեմ կարող մոռանալ իմ

սիրելի վաղամեռիկ հայրիկին, մայրիկին, քեռուն, հարևաններին, տատիկին, մեր բոլոր ազգականներին, որոնք զազանաբար սպանվեցին և մեզի թողին անտեր ու անօգնական: Իմ ամբողջ կյանքում ես միշտ հիշում եմ այդ սարսափելի տեսարանները, որոնք տեսել եմ իմ աչքերով, և ես երբեք հանգիստ չունեմ: Այնքան եմ արցունք քակելի...» [ՍՎ. 2000: Վկ. 74, էջ 157]:

Այնքապից Կերպինե Գասպարյանը (ծնվ. 1912 թ.) նույնպես պատմել է. «...Թուրքերը իմ աչքերուս առօք մողեցին հորս գրիգորին, մորս Դուդոյին, նղորոս Հակոբին և քույրիկին Նուրիցային: Այդ բոլորը ես տեսած եմ իմ աչքերովս և մինչև հիմա չեմ կրնար մոռնայ...» (Վերապրողը սկսեց լաց լինել և այլև չկարողացակ շարունակել իր հուշը - Վ. Ս.) [ՍՎազյան: Անձնական արխիվ, Անտիկ նյութեր]:

Պատմական այդ հրադարձությունների ականատես-վկանները, ցավագնորեն վերապրելով իրենց տիսուր անցյալը, ինձ են հաղորդել իրենց անձնական հուշերը պատմական բնօրրանի, հայրենի օջախի, սիրելի հարազատների մասին, որոնք, ավանդ, Վաղուց չկան: Այդ անձնական հուշապատկերները նրանք կրել են իրենց ողջ կյանքի ընթացքում չկարողանալով պատագրվել ճնշող մնջականցից: Եվ քանի որ վերապրողների պատմած հուշերը ներկայացնում են արևմտահայերին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպափորությունները, ուստի հագեցած են խոր պատմականությամբ:

Առարկայորեն վերարտադրելով տվյալ ժամանակաշրջանի կյանքը, նիստ ու կացը, բարքերը, քաղաքական-հասարակական հարաբերությունները, վերապրողների հաղորդած հուշերն անմիջական են, ծշմարտացի, վավերական և ունեն հավաստի վկայությունների արժեք. Ինչպես խարբերոցի Ըղսա Խայացանը (ծնվ. 1900 թ.) դառնությանք վկայել է. «...Հիմա 7 տուն ընտանիքն միայն ես եմ մնացած...» [ՍՎ. 2000: Վկ. 108, էջ 218]:

Մալաթիացի Վերգինե Նաջարյանը (ծնվ. 1910 թ.) ևս հաստատել է. «...Մեր գեղաստանը շատ մեծ էր, մոտ 150-200 հոգի էինք: Քերիներ, հորաքույրներ, հորեղբայրներ ունեի: Բոլորին Դեր Զորի ճամփաններին կոտորել են: Մասցել ենք երեք հոգի ես, մայրիկս և եղբայրս...» [ՍՎ. 2000: Վկ. 125, էջ 239-240]: Այդ մասին է վկայել նաև բալուցի Հազարիսան Թորոսյանը (ծնվ. 1902 թ.): «...Ասրան տարի անցած է, բայց մինչև հիմա գիշերները քուն չունիմ, անցած-դարձածները աչքիս առջև կուգան՝ մերենները, սաղերը կիհաշվեմ...» [ՍՎ. 2000: Վկ. 120, էջ 232]: Այնպես որ նրանց

հաղորդած նույնիսկ թվային հաշվարկները ստույգ են: Մշեցի Հրանտ Գասպարյանը (ծնվ. 1908 թ.) հատուկ ընդգծել է այդ հանգամանքը՝ իր պատճառ հուշի Վերջում հավաստիացնելով. «...Ես ինչ որ տեսել եմ, էս իմ աչքերով տեսածը պատմեցի ծեզ: Ամբողջ աչքիս դեմն է իմ տեսածը: Խնուսից ոչ մի բան չենք բերել, միայն ջաններս ենք ազատել: Մեր գերդաստանը 143 հոգի էինք. մի քոր, մի ախտեր, մերս ու ես փրկվանք» [Ապ. 2000: Վկ. 12, էջ 71]:

Հետագա ամբողջ կյանքի ընթացքում ականատես վերապրողների կողմից մեկ առ մեկ հաշված, կետ առ կետ վերլուծված այդ փաստացի վկայությունները, պատմական իրադրությունների հետ համադրելիս, դոյզն իսկ կասկածի տեղիք չեն տալիս. Նրանք գրեթե միշտ իրենց պատմած հուշի մեջ հիշատակում են իրենց գերդաստանի ավագներին մեծ հայրերին, մեծ մայրերին, ծնողներին, նաև մոտիկ ազգականներին և ընտանիքի նյուու անդամներին՝ հաճախ նշելով նրանց անուններն ու ծննդյան թվերը:

Հուշապատումի մեջ հանդես եկող գլխավոր անձը պատմողի կերպարն է, որը ոչ միայն պատմում է պատմական նշանակալից իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի մասին, այլև իմաստավորում է դրանք դրսեկորելով իր աշխարհայացքի և անհատականության հիմնական հատկանիշները, իր նոտեցնան ուրույն տեսակետը, իր յուրահատուկ լեզուն և ոճը: Հետևաբար, ականատես-վկայի պատմած հուշը միանշանակ է իր եզակիությամբ: Այն տվյալ անհատի անձնական կենսագրությունն է՝ անցյալի իր իմաստավորմանը, որը, յուրաքանչյուր անգամ վերապատճելիս հուշի առանցքային բովանդակությունը գրեթե մնում է անփոփոխ, բանի որ նրանք այդ բոլորը պատմել են որպես սրբազն խոստովանանք: Եվ ես, բանագետ-ժողովրդագետին հատուկ մասնագիտական պատասխանատվությամբ, հավատարիմ մնալով ականատեսների բանավոր խոսքին, նրանց պատմածները բար առ բար գրի են առել՝ գիտակցելով, որ նրանք հրեն ներանձնական սրբանուրբ գալտնիքներն են ավանդում ինձ հետագա սերունդներին փոխանցելու համար: Այստեղ տեղին է հիշատակել գեյրունցու արժանավայել, խորիս կեցվածքով, 90-ամյա Կարապետ Թողպանի (ծնվ. 1903 թ.) խոսքերը: Թեպետ նա գրածանաչ չէր, բայց «ամեն իրիկուն քնանալեն առաջ աղոթքի սեխ» մրմնացել է իր հուշերն ու երգերը, որպեսզի չնորանա: Հետևաբար, նա սրբազն խանդադատանքով է ինձ հաղորդել իր նտապահածները, որպեսզի «գրի առնվին, չմոռացվին և գալիք

սերունդներն ալ սորվին» [ՍՎ. 2000: Վկ. 342, էջ 413]: Որոշ ականատես-վկաներ կյանքի վերջում շարադրել են իրենց տեսածն ու զգացածը, որպեսզի այն հետագա սերունդներին ավանդեն որպես պատգամ, ինչպես Գալուստ Սողոմոնյանը (ծնվ. 1905 թ., Բոլոր) իր ձեռագիր վկայությունն ավարտել է հետևյալ նախադասությամբ. «Այս գրությունս գրել եմ, որ ինձանից հետո եկող սերունդները կարդան և իմանան, թե ինչեր ենք քաշել մենք օսմանյան թուրքերի կողմից իրազործված Հայոց ցեղասպանության հետևանքով» [ՍՎազյան. Անձնական արխիվ, Անտիպ նյութեր]:

Այդ առումով նշանակալից են նաև երգների վերապրոց հայտնի գրականագետ Գառնիկ Ստեփանյանի (ծնվ. 1909 թ.) պատմած հուչի վերջին խոսքերը. «...Այն, ինչ կատարվեց 1915 թ. մեր ժողովրդի, մեր գերդաստանի հետ, որը 100-ից ավելի էր և հազիվ 15 հոգի ազաւովց՝ ահավոր էր: Իմ մոր կողմից բոլորը սպանվել են կամ ողջ-ողջ լցոնել են փոսդ: Ասում են՝ հողը շարժվում էր նրանց վրա: Եղերնին զոհ գնացին նաև Ստեփանյանները, չորս հորաքոյրներին ընտանիքները: Դա մի ամբողջ ողջակիզում էր: Միշտ մտորում են, թե մենք կարող ենք արդյոք մոռանալ, բայց մենք իրավունք չունենք մոռանալու, քանի որ մենք փոքր թիվ ենք: Վրեժխնդրության կոչ չեմ անում, բայց ես չեմ կարող խորհուրդ տալ, որ մոռանանք: Հայ ժողովուրդը չի կարող մոռանալ այն, ինչ տեսավ իր աչքերով: Եվ ինչպես Ավետիս Անարոնյանն է ասել. «Այսրան չարիք եթե մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհը հայուն կարդա նախատինք»] [ՍՎ. 2000: Վկ. 95, էջ 202]:

Միաժամանակ, վերապրողների պատմած հուշերը նաև համանման են. Քանի որ տարբեր վայրերում, սեռատարիքային տարբեր խնբերի (տղամարդ, կին, ավագ, միջին, կրտսեր սերունդներ) պատմած հուշերն իրարից անկախ, գրեթե նույնությամբ նկարագրում են պատմական միևնույն ժամանակաշրջանի իրադարձությունները, պատմական համանման դեպքերն ու դեմքերը, իրենց տեսած ու զգացած նույն սարսափազդու տեսարաններն ու դաժանությունները, որոնք, հաճադրվելով, գալիս են միմյանց հաստատելու, միմյանց շարունակելու, լրացնելու և ամբողջացնելու՝ միտվելով անձնականից ու առարկայականից դեպի համընդհանուրն ու համագայինը. Այդ հանգամանքն է նկատի ունեցել վերապրոդ Տիգրան Օհանյանը (ծնվ. 1902 թ., Կամախ), երբ իր պատմած հուշն ամփոփել է հետևյալ խոսքերով. «...Իմ անցյալը իմ անցյալը չէ միայն, այլ նաև իմ ժողովրդի անցյալն է» [ՍՎ. 2000: Վկ. 97, էջ 207]:

Հետևաբար, ականատեսների հուշերն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրում են ոչ միայն տվյալ անհատին ու նրա միջավայրը, այլև ողջ հավաքականությանը՝ դառնալով հայ ժողովրդի հավաքական պատմական հիշողությունը:

Սակայն ժողովրդի պատմական հիշողությունը նաև հարատևներու կարողություն ունի. Թեայտ պատմական այդ իրադարձություններից շուրջ 90 տարի է անցել, և հրաշքով փրկված ականատես-վկաններից շատ-շատերն արդեն չկան, սակայն ավագ սերնդի ներկայացուցիչների պատմածներն ընտանիքներում այնքան են լսվել, այնքան են կրկնվել, որ դարձել են նաև հետազա սերունդների ժառանգությունը և, բերնից բերան անցնելով, շարունակում են հարատևել նաև հետազա սերունդների հիշողության մեջ՝ արդեն որպես պատմական գրույցներ:

Պատմական գրույց իրական դեպքերի ու դեմքերի մասին նկարագրական կամ պատմողական բնույթի ոչ մեծ ծավալի արձակ ստեղծագործություն է: Զրոյց պատմողը նոյն ինքը ենթական չէ, այլ նրան ծանոթ կամ անծանոթ անձը, որը, իր տեսածով կամ լսածով տպավորված, այն պատմում է ուրիշներին:

Պատմական այդ գրույցները մեծ մասամբ գրի են առել հետազա սերունդներից, որպես վկայություն այն իրողության, որ ժողովրդի պատմական հիշողությունը բնավ չի մերժում, այլ շարունակում է գոյատևել նաև հետազա սերունդների հիշողության մեջ:

Ինձ հաջողվել է գրի առնել նաև Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած պատմական բնույթի երգերն ու վիպերգերը, որոնք նոյնպես ժողովրդի պատմական հիշողության անբաժան մասն են կազմում:

Պատմական երգերը ժողովրդի օժտված անհատների կողմից պատմական խոշոր իրադարձությունների մասին հորինված, ապա բերնից բերան անցած չափածո ստեղծագործություններն են: Պատմական բնույթի երգերը լինում են նաև քնարական բանաստեղծություններ, որոնցում պատկերավոր կերպով արտահայտվում են հորինողների հուզականությունը, խոհերն ու տրամադրությունները, սպասելիքներն ու պահանջները: Այս երգերը ստեղծել են հատկապես տվյալ հասարակական կյանքից հժգոհ, անարդարության, հայածանքի, ճնշման դեմ ընդվզող ու ներքին ողբերգություն ապրող անհատները:

Այդ երգերի բառերը գեղարվեստորեն վերարտադրում են տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքի բազմազան երևույթները՝ երիտրուրք կառավարության կազմակերպած զորահավաքն ու զինահավաքը, տեղահանություններն ու

կոտորածները, ինչպես նաև այլ փաստացի, հուզիչ ու տպավորիչ դրվագներ, բողոքի և պահանջատիրության խրոխտ տրամադրություններ:

Պատմական բնույթի երգերը հաճախ ծառայում են որպես երաժշտական ստեղծագործության հիմք: Դրանք կարող են լինել նաև երգաշար, որոնք կապվում են կերպարների, թեմայի և կրկներգերի ընդհանրությամբ, կամ խոհերի, զգացմունքների և գաղափարների միասնությամբ, ինչպես օրինակ՝ թուրքական գինվորի («Ասքերին շարքըլարը» / «Զինվորի երգեր») [Վկ. 302-316] կամ Դեյր էլ Զորի («Տէր Զօր չէօլիւնէ» / «Դեր Զօրի անապատում») [Վկ. 367-436] և այլ երգաշարեր:

Պատմական այդ երգերի հորինողները գերազանցապես եղել են հայ կանայք: Ազգային աղետի հոգեբանական ազդեցությունը յուրովի է ընկալվել յուրաքանչյուր կնոջ կամ աղջկա կողմից: Այդ սահմանկեցուցիչ տպավորություններն այնքան զորեղ ու խորն են եղել, որ հաճախ նաև բանաստեղծական ձև են ստացել, ինչպես մշեցի Վերապրու Շողեր Տոնյանի (ծնվ. 1901 թ.) հյուսած ողբը, որն ինձ է հաղորդել արցունքներով և հարազանքներով.

...Ժիշեր ու գոր լաց ու ողբ եմ ես լսում,

Չումիմ հանգիստ, չումիմ դադար, չումիմ քում,

Աչք փակում մեռեներ եմ միշտ տեսնում,

Կորցրեցի ազգ, բարեկամ, հող ու տուն... [Վկ. 2000: Վկ. 343, էջ 414]:

Ի բնե հուզական և զգացմունքային կանայք անմիջականորեն իրենց վսիտ ուսերին են կրել հայ ժողովրդի տեղահանության, աքսորի և կոտորածների ամբողջ տառապանքների ծանրությունը: Ուստի նրանք հանգանանորեն և պատկերավոր կերպով են նկարագրել իրենց աչքերով տեսածներն ու իրենց հոգու խորքում զգացածները: Քանի որ հայ մայություն են արցունքներով ձանապարհել իրենց ամուսիններին ու որդիներին թուրքական բանակում ծառայելու: Խսկ տղամարդիկ հորինել են երգեր, որտեղ նրանք նկարագրել են, թե ինչպես հայ գինվորներին գենք չեն տվել, այլ նրանց ուղարկել են «Անեկ թարուր» (աշխատանքային գումարտակ - թուրք.) ծանր աշխատանքներ կատարելու: Նրանք ուժասպառված մահացել են և կամ սպանվել ու լցվել իրենց խսկ փորած փուտերի մեջ («Զորահավաքի, գինահավաքի և բանտարկայի երգեր»): Այնուհետև հայ կանանց ստիպել են թողնել իրենց տունն ու այգին, ունեցվածքը և իրենց երեխանների, անկարող ու ծեր ծնողների հետ բռնել աքսորի ձանկան: Նրանք հոգնությունից արյունոտված ոտքերով, կիզիչ արկի տակ, սոված ու ծարավ, թուրք ոստիկանների մտրակմների հարվածների ներքո,

քայլել են հետպի Դեյր էլ Զորի, Ռաս ուլ Այնի, Ռաքքայի, Մեսքենեի և Սուլուօճի անապատները: Ինչպես ականատեսների պատմած հուշերում, նույնպես և նրանց հաղորդած Երգերում հիշատակված են նրանց անցած ճանապարհները, թուրք ոստիկանների, քուրդ հրոսակների, չեչեն ու չերքեզ ջարդարարների ավարառություններն ու թալանը, հայ աղջիկների առևանգումն ու սպանությունը, նրանց ցցերի վրա նստեցնելը, կանանց փորերը ճեղքելն ու ոսկի փնտելը, ոմանց խաչելն ու տանջանահ անելը, հիդ կանանց ողջ-ողջ որովայնը սվիններով բացելն ու պտուղը դուրս բերելը և այլն: Ահա թե ինչո՞ւ հայ անմեղ հուսահատ աղջիկները թուրքի ծեռք չանցնելու, թուրքի կին չղաւնալու, թուրք երեխաներ չժնելու համար, իրար ծեռքից բռնած Եփրատ գետն են նետվել («Տեղահանության և կոտորածի Երգեր»): Հատուկ բաժին է հատկացված առևանգված երեխաների մայրերի տառապանքներին և անհայր ու անմայր մնացած որբերի ու որբանոցների մասին տիխուր Երգերին («Որբեկորուս մայրերի, որի և որբանոցի Երգեր»): Ներկայացված են նաև հայերի ընբռստության, իրենց ապրելու մարդկային տարրական իրավունքները պաշտպանելու, բռնությունները չհանդուրժելու, ինչպես նաև ինքնապաշտպանության, պայքարի և մաքառումի խրոխտ Երգեր, որոնք հիմնականում հորինվել են տղանարդկանց կողմից («Հայրենասիրության և հերոսամարտերի Երգեր»), և, ի վերջո, զավթակած Հայրենիքի մասին ափսոսանքի և այն կրկին վերագրունելու հավատավոր, հույսի Երգեր («Կորցրած Հայրենիքի և պահանջատիրության Երգեր»):

Այդ պատմական Երգերն իրենց թեմատիկ ինքնատիպությամբ ու գաղափարական բովանդակությամբ ոչ միայն նորույթ են հայ բանագիտության և ցեղասպանագիտության բնագավառում, այլև դրանց շնորհիվ նորովի է ընկալվում պատմական տվյալ ժամանակաշրջանը՝ իր բնորոշ կողմերով: Հետևաբար, հորինվելով հայ ժողովրդի արևմտահայ հասկածին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունների ներքո, այդ կարգի ժողովրդական Երգերը և Վիկերգերը ևս հագեցած են պատմականությամբ և ունեն հավաստի վավերագրերի արժեք:

Պատմական այդ Երգերը, հորինվելով սեռատարիքային տարբեր խմբերի օծոված անհայտ անհատների կողմից, իրենց ժամանակին ունեցել են լայն տարածում, և քանի որ ժողովրդի տարապանքը կրել է զանգվածային բնույթ, հետևաբար ժողովրդական Երգերը ևս ունեցել են զանգվածային տարածում, անցել

Են բերնից բերան՝ ծնունդ տալով նորանոր, բազմազան տարբերակների: Այնպէս որ նոյնանձան երգեր միաժամանակ հորինվել են զանազան տարբերակներով ու փոխակերպումներով, հանգամանք, որը վկայում է պատմական այդ երգերի ժողովրդական բնույթը:

Հարկ է նկատել նաև, որ Հայոց ցեղասպանության ականատես-վկաները (Կին, թէ տղամարդ) հոգեկան պոռթկացող վերապրումով և արցունքախառն հեկեկոցներով են վերիիշել թուրքական կառավարության կազմակերպած գորահավաքի, տեղահանության, աքսորի, ջարդի ու կոտորածի, որդեկորույս մայրերի, որին, որբանցի և կորցրած Երկրի մասին ժողովրդական երգերը: Քանի որ Վերջիններս անմիջականորեն կապվել են իրենց պատմական հիշողությանը: Այդ հանգամանքով են բացատրվում ժողովրդական պատմական այդ կարգի երգերի հուգա-հոգեբանական առանձնահատկությունները:

Ժողովրդական այդ երգերի բազմազան տարբերակները, պատմական ստուգությամբ հանդերձ, բնութագրվում են սեղմ պատկերավորությամբ և հայ միջնադարյան լայաց երգերին բնորոշ նուրբ ու հուգական մեղեդյանությամբ: Այդ երգերի յուրաքանչյուր տողն ու բառակապակցությունը մի ավարտում պատկեր է, զանգվածային ողբերգության մի սահմուկեցուցիչ տեսարան, իսկ լալահառաչ կրկներգերը համալրում և ամբողջացնում են հուգա-հոգեբանական բանաստեղծական, պատկերավոր միտքը, մինչեւ կորցրած Երկրի և պահանջատիրության երգերը խրոխտ են և լի հավատով:

Պատմական բնույթի երգերը հորինվել են ոչ միայն հայերեն, այլև թուրքերեն, քանի որ պատմաքաղաքական տվյալ հանգամանքներում Օսմանյան Թուրքիայի որոշ գավառներում հայերեն խոսելն արգելված է եղել:

Չբացառելով երկարատև համատեղ կեցության պայմաններում երկու ժողովուրդների հոգեկոր մշակույթների ազդեցություններն ու փոխազդեցությունները՝ հարկ է նշել, որ վկայություններ կան, թէ «...հայ բառ արտասանողներուն լեզուները կտրուած [էին], որով վերոյիշեալ քաղաքներու մէջ (Սիս, Աղանա, Տարսոն, Անթէպ - Կ. Ս.) ապրող Հայերը կորուսած էին իրենց մայրէնի լեզուն եւ դարձած էին թրքախօս»:³ Եվ կամ «թիւրքերուն հարստահարութիւնն ու հալածանքն այնքան խիստ եղաւ, որ հայախօս Անթէպ եղաւ թիւրքախօս, Փոքր-Ասիոյ ուրիշ հայաբնակ գլխաւոր քաղաքներուն

³ Գալուստեան Գրիգոր, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 698:

պէս: Եւ վերջին կտրուկ ու սաստիկ հարուածը Անթէափի Հայախօսութեան Ենիչէրիներն են որ տուին, ծայրատելով հայերէն խօսողներուն լեզուներո...»:⁴

19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի ազգագրագետքանահավաքաք Սարգսն Հայկունին, նկարագրելով իր ժամանակի արևնտահայերի քաղաքական, տնտեսական և հոգևոր հրավիճակը, գրել է. «...Հայոց լեզուն թուրք նոլլաների կողմից արգիլուած էր, եւ, հայերէն եռք քառը մի հայիութիւն նկատելով, սահմանուած էր տուգանք հինգ ոչխարի քանակով»:⁵

Ին գրառած ժողովրդական հուշերում ևս բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Քյոթահիայի, Բուրսայի, Աղանայի, Կեսարիայի, Եսքիշեհիրի և այլ Վայրերի հայերը հիմնականում թուրքախոս էին: Աղանացի Վերապրող Միքայել Քեշիշյանի (ծնվ. 1904 թ.) վկայությամբ՝ «արդեն արգելված էր հայերեն խոսից և սորվիլը. ոչ միայն լեզուն կըսրեին, նաև թւերուն տակ խաշած տաք հավկիթ կղմեին, որ խոսսովանսկի, թե հայերեն կտրվեցնե ուրիշներուն: Եթե կըսրստովանվեր՝ կտանեին, կկախնեին կամ կսպանեին» [Ավ. 2000: Վկ. 182, էջ 318]:

Այդ մասին է Վկայում նաև իմ գրառած հայ ժողովրդական երգի պատարիկը, որը հաղորդել է կրնիացի Սարենիկ Գոյումջյանը (ծնվ. 1902 թ.):

Դպրոցը մտան, վարժուիուն բրնեցին,

Կայ, աման,

Բերանը բացեցին լեզուն կտրեցին,

Այս, աման [Ավ. 2000: Վկ. 352, էջ 415]:

Վարժուիին այդ պատժին էր արժանացել, քանի որ հանդգնել էր հայ մանուկներին հայերեն սովորեցնել: Իսկ տեղահանության ու աքսորի ձամփաներին այդ խստություններն ավելի են սաստկացել: Հետևաքար, արևնտահայերն իրենց վիշտն ու տառապանքն ստիպված արտահայտել են նաև թուրքերեն:

Նկատի ունենալով լեզվական ծովլման նախնական մակարդակը ներկայացնող այդ տիսուր երևույթի հասարակական-քաղաքական հանգամանքները՝ զանազան բարբառներով գրառված նյութերի հետ իմ ուշադրությունից չեն վրհացել նաև թուրքալեզու, սակայն բացահայտ հայկական ծագմանք ժողո-

⁴ Սարաֆեան Գեղորգ. Պատմութիւն Անթէափի հայոց, հ. Ա, Լու Անձելես, 1953, էջ 5:

⁵ Հայկունի Սարգսն, Նշանարներ. Կորած ու մոռացուած հայեր. Տրավիզոնի հայմաննետական գյուղերն ու նրանց աւանդութիւնները, «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 297:

վրդական պատմական երգերն ու վիավերգերը: Վերջիններս թեպետ հորինվել են տարբեր զավարների հայերի կողմից և այս էլ ոչ կատարյալ թուրքերենի իմացությանը (հաճախ հիշատակվում են հայերեն բառեր ու արտահայտություններ, հայկական անձնանուններ ու տեղանուններ, նկատվում են քերականական և հնչունային անձտություններ), սակայն իրենց զաղափարական բովանդակությամբ ունեն պատմածանաշղողական կարևոր արժեք: Թուրքայեզու երգերը, ինչպես և բարբառային բնագրերը, ներկայացված են ին իսկ կատարած գուգահեռ գրական հայերեն թարգմանություններով:

Զարդի և կոտորածների մասին պատմող երգերը հյուսվել են դերզորյան աքսորի ճամփաներին: Եվ քանի որ հայերեն խոսելն արգելված է եղել, հայերն իրենց վիշտն ու տառապանքը արտահայտել են թշնամու լեզվով՝ թուրքերն:

Սարախողան քայլթըմ գիւնէշ մարդյօթ,
Օսմանը ասքէրի սիլահյաղըօթ,
Էրմէնիշ քարդը յա՞նան աղյօթ,
Ղինինին ուղրունա էօլէն էրմէնի:

Առավոտյան վեր կացա արևն էր փայլում,
Օսմանցի ասկյարը իր գենքն էր յուրում,
Հայերին նայեցի սաստիկ էին լաց լինում,
Հավատի համար մեռնող հայեց:

[Ապ. 2000: Վկ. 394, էջ 422]:

Եվ կամ՝

Դեր Զօր դէղիքէրի բիսիք քասարա,
Քէսիշն էրմէնի գէմտգ հէսարա,
Օսմանը էքրադը դէօնմիշ դասարա,
Ղինինին ուղրունա էօլէն էրմէնի:

Դեր Զօր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Սորբված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի պէտերը մսազորը դարձան,
Հավատի համար մեռնող հայեց:

[Ապ. 2000: Վկ. 373, էջ 419]:

Եվ կամ՝

Դեր Զօր չէօլէրինի բիսիսիսի դուման,
Անանց մ, յա՞նան, հալըմզ յաման,

Մշուշն է պատել Դեր Զօր անապատին,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, մեր վիճակն է
ողբայի.

Ինսան վէ յշիլ բօյանդը քանա,
Ղինինին ուղրունա էօլէն էրմէնի:

Սարդիկ, կանաչներ արյունով ներկվեցին,
Հավատի համար մեռնող հայեց:
[Ապ. 2000: Վկ. 370, էջ 419]:

Հայերը մեռնում էին «հավատի համար», որովհետև չէին ուզում ուրանալ իրենց քրիստոնեական հավատն ու ազգային ինքնությունը: Աղաբազարի Սիրենա Ալածաճյանը (ծնվ. 1910 թ.) չորս տարեկան էր, երբ թուրքերը սպանել են նրա հորն ու մորը: Անտեր մնացած որբուկին պահել են արար անապատականները: Չորս տարի անց՝ զինադադարից հետո, երբ որբահավաքներն անապատներից հայ որբուկներին էին հավաքում, տեսնում են արդեն ուր տարեկան դարձած, դեմքը կապույտ թանաքով

դաջված, անունը փոխված աղջնակին՝ կապույտ աչքերով, դեղին գանգուր մազերով. անշուշտ, նա հայ էր: Թեպես նա մորացել էր հայերեն խոսելը, սակայն չէր մորացել քրիստոնեական խաչակնքովն, որը և դաշնում է նրա հայ-քրիստոնյա լինելու վկայությունը: Փոքրիկ Սիրենային Վերցնում և տանում են հայկական որբանոց [Ավ. 2000: Վկ. 227, էջ 367]:

81 տարեկան ֆրնդըացի Հարություն Ալբոյաջանը (ծնվ. 1904 թ.) նոյսմայս դարնությամբ է հիշել իր տխուր մանկությունը. «...Երբ ծնողներիս սպանեցին, հետո ինձ ու ինձ նաև անչափահան երեխաներին հավաքեցին տարին Ձեմալ փաշայի թուրքական որբանոցը՝ թուրքացրին: Իմ ազգանունն «535» էր, իսկ անունս Ծյուքրի էր: Հյա ընկերոս ալ Էնվեր դարձավ: Մեզ սյուններ թոյն՝ թվաստեցին: Կային շատեր, որոնք թուրքերն չէին գիտեր, շաբաթներով չէին խոսեր, որ չիմանան, որ հայ են: Չառչները եթե իմանային, ֆալախս (ծանր գուրք - թուրք.) կրաշեին, 20-30-50 զավագան ոտքերուն տակը կզարնեին կամ ժամերով արևին նայել կուտային: Մեզ աղորել կուտային, երեք անգամ պիտի կրկնեինք. «Փաղիշահըմ չո՞ք եաշա» («Կեցցե ին թագավորը» - թուրք.): Մեզի կիազգներին թուրքական հագուստ՝ սպիտակ ամրարի, վրան սև ջուրբե: Ունեինք մյուոյուր (տնօրեն - թուրք.), մի քանի խոջախանումներ (ուսուցչուիներ - թուրք.): Ձեմալ փաշան հրամայած էր մեզի լավ նայել: Քանի որ ան շատ կզնահատեր հայերու խնձք և շնորհքը ու հոսու ուներ, որ եթե հաղթեր, հազարներով թուրքացած հայ երեխանները պիտի ապագային ազգվացնեն իր ժողովուրդը, մենք պիտի իր ապագա հենարանը դարնայինք...» [Ավ. 2000: Վկ. 144, էջ 269]:

Գրառումների և վերձանումների ընթացքում ջանացել են անաղարտ պահպանել վերապրողների բանավոր խոսքի հիմքնատիպ յուրահասուկությունները՝ այդ բոլոր ներկայացնելով բարբառագիտական ընդունված տառադարձությամբ: Բարբառային բնագրերը գրառելիս հաշվի են առել ինչպես պատմական Հայաստանի, նոյսմես և Կիլիկիայի ու Անատոլիայի հայության լեզվական նրբերանգները:

Արևմույսն Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի ավելի քան 100 քանակավայրերից տեղահանված ականատես վերապրողները ոչ միայն ինձ պատմել են իրենց տխուր անյալը՝ տեսածն ու զգացածը, այլև հանգել են որոշակի քաղաքական եզրակացությունների, ինչպես այնթացի վերապրոդ Պարզև Մակարյանը (ծնվ. 1915 թ.), որն ամփոփել է. «...Մեծ տերությունները հայերուն խարեցին Կիլիկիան թուրքին տվին. Զեյթունը,

Աղանան, Սիսը, Մարտազը, Քիլիսը, Այնթապը, Ուրֆան, Կամուրջը և այլ քաղաքներ ամբողջապես հայարավիվեցան: Մեզի ստիպեցին, որ Կիլիկիային դուրս ելլանք: Մենք ստիպված մեր հայրենիքը լրեցինք: 1922 թ. ալ հզմիրի աղեսոր սարդեցին հայերն ու հովսերը կրակներուն մեջեն փախան, ծովը նետվեցան. ով կրցավ ինքզինքն ազատել, ուրիշ երկիր անցավ: Այսպիսով, Թուրքիան «մաքրեցին» քրիստոնյաներեն: Թուրքիան մնաց թուրքերուն, Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան ալ հետք...» [Սվագլյան: Անձնական արխիվ, Անտիկ նյութեր]:

Ինչպես որ խարբերդից ականատես-վկա Հակոբ Հոլորիկյանը (ծնվ. 1902 թ.), մանրանասնորեն նկարագրելով իր և իր հայրենակիցների կրած տառապանքները, եզրակացրել է. «...թուրք իթթիհատականների կողմից կատարված այս ոճրագործությունը երբեք չի մոռացվի և չպետք է ներվի» [Սվ. 2000: Վկ. 109, էջ 222]:

Իսկ ծագումով կարսեցի նկարչուի Ելենա Աբրահամյանը (ծնվ. 1912 թ.) իր տիսուր հուշը արցունքներով պատմելուց հետո եզրակացրել է. «...թուրքերը չեն ընդունում, որ հայերին կոտորել են: ...Թուրքը թուրք է: Նա ինչ շապիկ է հագնի, ույս թուրքն է: Նա, որ չի ընդունում Հայոց ցեղասպանությունը, հապա էղ ինչե՞ր են, որ մենք մեր աչքերով տեսել ենք, մեր ականջներով լսել: Եթե իմ տեսածները մի կաթի է թուրքի արածների դեմ: Եթե թուրքը չընդունի իր արածները, ոչ մի հաշտության չի կարելի գնալ նրա հետ» [Սվագլյան: Անձնական արխիվ, Անտիկ նյութեր]:

Իր պատմած հուշի ավարտին իգդիրեցի Էվելինա Կանայանը (ծնվ. 1909 թ.) հուզված, բայց ինքնավստահ հայտարարել է. «...Եթե ուսումնական ՍՍԿ-ից զան, ես կապատմեմ իմ տեսածները...» [Սվ. 2000: Վկ. 54, էջ 136-137]:

Իսկ Մոկքից Ղուկաս Կարապետյանը (ծնվ. 1901 թ.) ընդհանրացնելով ասել է. «...այն ինչ կատարվել է 1915 թվին, երբեք չի մոռացվի: Թուրքերը ուզում են մոռացվի այդ բոլորը և չեն ընդունում, բայց Աստված թող լինի օգնական և արդար դաստավոր մեզ հայերին համար» [Սվ. 2000: Վկ. 52, էջ 130]:

Իսկ Խաբերդից Ծիրանի Մաթևոսյանը (ծնվ. 1900 թ.) ժողովրդական պարզ լեզվով առաջարկել է. «...թուրքը թող մեռնի. Էղ սաղ ինքը արեց մեր զիխին, երկրից էլ զրկվանք, հարստությունից էլ զրկվանք, ջանից էլ զրկվանք: Հիմա էլ անամրները ասում են, թե հայերն են իրենց կոտորել: Մեր ուլիմները, տուները, հողերը մնաց թուրքին: Ես զարմանում եմ ո՞նց հայերը չեն կարողանում թուրքի հախից զալ: Թող գիրք ունի,

էս բոլոր պատմածները թող կարդան աշխարհի մարդիկ, որ իմանան՝ ո՞վ է մեղավորը, ո՞վ է արդարը, ո՞վ է տուժածը...» [Սվագյան: Անձնական արխիվ, Անտիկ Այութեր]:

Ցավոք միջազգային հանրությունը ևս ժամանակին չսաստեց և զստ արժանվույն չղատապարտեց 20-րդ դարում իրազործված առաջին Հայոց ցեղասպանությունը (Armenian Genocide) և, որպես Միամարքանական շարունակություն, ծնունդ առավ ֆաշիզմը (Fascism), իսկ մեր օրերում՝ միջազգային ահարեւկչությունը (Terrorism)՝ իր անկանխատեսելի դրսւորումներով և համաշխարհային աղետությի վտանգավորությամբ, քանի որ անպատճ մնացած հանցագործությունները կրկնվում են ի վեա մարդկության:

Այսպիսով, անհետ կորստից փրկված, սերունդներին ավանդվող ականատես վերապրողների հաղորդած հուշերն ու պատմական բնույթի երգերն իրենց պատմաճանաչողական արժեքով դաշնում են Հայոց ցեղասպանությունը և դրան հաջորդած պատմական իրադարձությունները ժողովրդական պարզ լեզվով լուսաբանող վկայություններ, հավաստի, առարկայական և փաստագրական վավերագրեր, որոնք ոչ միայն անցյալի վկայությունն են, այլև ապագայի նախազգուշացում:

Ցեղասպանությունը քաղաքական զանգվածային ոժիր է. այն չպետք է անպատճ մնա, այլ պետք է իրավաբանորեն բացահայտվի նաև ականատես վերապրողների վկայությունների հիման վրա, իսկ ամենամեծ վկան ինքը ժողովուրդն է, որը, ցավագնորեն վերապրելով, պատճել ու դեռ շարունակում է պատմել վկայելով իր ողբերգական անցյալը: Անցյալ, որը հայ ժողովրդի անցյալն է, նրա պատմությունը, նրա պատմական հավաքական հիշողությունը, որը պետք է ներկայացվի աշխարհին ու մարդկության արդար դատին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ
Պ. ՍԵՎԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Եթե մեծածավալ բանահյուսության տեսակների կիրառության ժամանակ օգտագործվում են նաև դրանց սյուժետային, կերպարային ու իմաստակարուցվածքային հատկանիշները, ապա բանահյուսության մի շարք տեսակների նաև ավորապես խոսքով ասելիքը հաստատելուն կամ ժխտելուն միտված բանաձևումները, խոսքի գորությամբ շրջապատի վրա ներգործելուն նպատականովաճները աղոթք, ամենք-օրինանք, նալթանքի խոսքեր և այլն, Պ. Սևակի ստեղծագործություններում հանդես են զայիս ոչ միայն իրենց արտաքին ու ներքին կառուցվածքային հատկանիշների և տարրերի կիրառությամբ, այլև դրանց ամբողջական մեջբերնամբ:

Պ. Սևակի ստեղծագործություններում դրանք բավական մեծ քանակ են կազմում՝ 213 ընդհանուր կիրառությամբ (70 աղոթք, 68 նալթանք, 33 օրինանք, 26 անենք, 9 երդում և 7 հայիդանք), և բացակայում են այլ ժողովուրդների բանարվեստի նմուշների գործածություններում:

Պետք է ասել, որ բանաստեղծի արծակ խոսքում, ի տարրերություն չափածոյն, դրանք կամ բացակայում են (աղոթք), կամ էլ փորդ քանակ են կազմում (3 նալթանք, 7 օրինանք և 1 անենք):

Ժողովրդական աղոթքներն ու հնայական բանաձևումները շրջապատի առարկաների վրա խոսքի օգնությամբ ներգործելու միջոցներ են, որոնք կրչված են նարդուն պաշտպանելու նրա գործողությունները կաշկանդող չար ուժերից չար ոգիներից:

Ժողովրդական աղոթքատիպ բանաձևումները բազմաբնույթ ու բազմանպատակ են՝ ուղղված զանազան աստվածների ու չար ոգիների: Աստվածաշնչան աղոթքները ևս իրենց նպատակառությամբ ու կառուցվածքով նման են ժողովրդականին (քանզի ստեղծվել են դրանց հենքի վրա) և ուղղված են միայն Աստծուն կամ Քրիստոս-Աստծուն և նպատակ ունեն Արարչի միջամտությամբ վերականգնելու խախտված ներդաշնակությունը: Իսկ երկնավորի գթասրտությանն արժանանալու և խնդրանքը կատարվելու համար անհրաժեշտ էր մի շատ կարեւոր նախապայման՝ գործած թեկութեալ ամենաչնչին մեղքերը Աստծո առաջ խոստովանելով մաքրագործվել, ապա նոր միայն բողություն հայցել նրանից:

Պետության և Եկեղեցու սպասավորները տաճարներ էին կառուցում՝ Բարձրյալին հաղորդակցվելու և հավատը պահպանելու համար, իսկ «ժողովրդի ինքնակամ ծառաները» և աստծո քարտուղար-բանաստեղծները, աշխարհի մաքրության ու մարդուն մարդ պահելու համար իրենց հոգիներն էին սրբատեղի տաճարներ դարձնում:

Նրանք ոչ միայն երկնային ամենակարող ուժի և մարդկանց միջև կապող օղակն են, այլև աշխարհում ներդաշնակություն ստեղծողն ու պահպանողը: Առանց նրանց կվտրվեր կապը Աստծո և մարդկանց միջև, ու կխախտվեր կյանքի բնականոն ընթացքը.

Իսկ չե՞ն վախենում, որ հանկարծ... մեռնեմ:

Ես վախենում եմ, շա՞տ եմ վախենում,

Բայց ոչ ինձ համար,

Այլ լոկ քե՞զ համար.

Իսկ եթե հանկարծ իմ մահով խախտվի

Համակրպած այս վիճակը քո,

Ո՞նց պիտի լինես,

Ի՞նչ պիտի անես:

Տե՛ս, որ իմ մահով քեզ չկործանե՞ս,

Սույտ ու փո՞նտ աշխարհ,

Փո՞ւչ ու ո՞չ աշխարհ... (II, 193)

Հայոց դիցարանի գերագույն Աստծու՝ Արամազդի քարտուղարը՝ դպիրը զրի, գրականության, գիտության ու արվեստի հովանավորը, նաև երազները մեկնաբանողը Տիր աստվածն է, Հին Արևելիք ժողովուրդների մեջ՝ Մովսեսը, հոյների մեջ՝ Ապոլլոնը:

Բանաստեղծները և Աստծո և մարդկանց միջև կապող օղակն են, Աստծո գրագիրն են, մարդկանց ցանկությունների թարգմանք, բարոյախոսն ու երազահանք:

1957թ. ամռան աներևակայելի «քերքի» կապակցությամբ (ընդամենը մեկ ամսում 4000 բանատող էր արարվել) ահա թե ինչպես է արտահայտվել Պ. Սևակը Լ. Հախվերդյանին գրած նամակում. «...Գրում եմ անվերջ, համարյա թե ամեն օր, հղացումները քնել չեն տալիս – լինում են շաբաթներ, երբ թվում է, որ ես ինքնուրույն մարդ չեմ, այլ ընդամենը... աստծո քարտուղար – նա թելադրում է, ես գրում եմ»:

¹ Լ. Հախվերդյան, Պարույրը, Ե., 1987, էջ 78:

«Աստծո քարտուղարը» շարքն ամբողջությամբ «ողջ մարդկության հետ զրոյցի նստելու», նրանց մեղքերի բեռն իրենց ուսերին կրելու պատրաստ «Ճառագայթային ախտով» դատապարտվածներին է նվիրված:

Թե՛ իր չափածո, թե՝ արծակ ստեղծագործություններում Պ. Սևակը բանաստեղծին համեմատում է Աստծո քարտուղարի Մովսեսի հետ: Առավել ուշ ժամանակներում տրված այս գնահատականը բխում էր բանաստեղծի ստեղծագործական դաշտաններից, այն է բանաստեղծությունը դարձնել մաքուր ու անկեղծ հոգու մրմունջ ու աղոթք:

1942թ. փետրվար-մարտ ամիսներին գրած «Աղոթքներ» շարքը, որի միավորներից մեկը նվիրված է Երգի արքային աղոթահորը Նարեկացուն, ասես նախանշում էր Երկու տասնամյակ անց կատարվելիք թոհջքի այն ուղին, որի կանգառներից մեկը կրելու էր «Մարդ ափի մեջ», մյուսը՝ «Եղիցի լուս» անվանումներոց:

Ճշմարիտ բանաստեղծությունն ինքնին անկեղծ խոսք է, ինքնախսոսութանություն, աղերս-աղոթք ու պահանջ: Այդ առումով, բնության ամենակարող ուժին՝ Աստծուն ուղղված Մեծարենցի «Տուր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական» բանաստեղծությունը, ներկայացնելով իբրև անանձնական ուրախության աղերս-պահանջի, անկեղծ ու «բնաբուխ» աղոթքի եզակի դրսերում, Սևակը համարում է աշխարհի բոլոր բանաստեղծների համար նորօրյա մի «Հայր մեր». «Եթե ամեն մի բնաբուխ (և ոչ թե անզիր արված) աղոթք արդեն բանաստեղծություն է, ապա մեծարենցյան այս բանաստեղծությունը կարող է մի նոր «Հայր մեր» դարձնալ լինեն դրանք արվեստագետներ, թե պարզապես մեծատարով մարդիկ»²:

1950-ական թվականների կեսերից սկսված սրտաբուխ գրույցը մարդու և աշխարհի հետ 60-ականների վերջերին վեր է ածվում աղոթքի աղոթք առ աստված, առ մարդ, առ մարդ-աստվածք:

Պ. Սևակի բանաստեղծություններից շատերը ևս մարդկային սիրո և տառապանքի դրսերման յուրատեսակ աղոթքներ են:

Մեղքերի թողության աղերս-աղոթքի կաղապարով կառուցված եզակի օրինակ է «Խոստովանություն» բանաստեղծությունը.

Հայր Մուրք, եթե մարդը հավատացյալը չէ,
Որտե՞ղ պիտի նա իր մեղքը խոստովանի:

² Պ. Սևակ, Սայաթ - Նովա, Ե., 1969, էջ 252:

Խո՞ս-տո՞ւ-վա՞ -նո՞ւ -թյա՞ն եմ կարոտ, Հայո Սուրբ
Չներվելո՞ւ գնով
Եվ բանադրվելո՞ւ... (II, 209-210)

Աևակը ևս, անսալով դարերի խորքից եկող Նարեկացու ձայնին, նրա նման մարդկության մեղքերի բեռն ուսերին առած, խոսում է հանուր մարդկության անունից և աշխարհի մաքրության ու աշխարհում ներդաշնակությունը պահպանելու համար իր խոսքը դարձնում է զրուց-ալորք, աղորք - խռովք ու աղորք - ընդկառում:

Պ. Աևակի մի շարք բանաստեղծություններ ամբողջությամբ կառուցված են աղորքների արտաքին և ներքին օրենքներին համապատասխան՝ պահպանելով թե՝ կառուցվածքային (նոյնիսկ Վերջաբանային) տարրերը և թե՝ ներքին ոգուց բխող հնքնաբուխ խոսքը: Դրանց մեջ բանաստեղծի խոստովանության առարկան մի դեպքում Հայր Սուրբ Խոհեմությունն է («Խոստովանություն»), մեկ այլ դեպքում՝ տեր Կովկասը («Հպատակի խոստովանությունը»), երրորդ դեպքում՝ Մարիամը («Բարեխսու եղիր իմ և իմ միջև»), մեկ այլ դեպքում՝ Ամենակարող Աստվածը («Անարժեքության տապկնոցում»).

Ինչի՞ց, տեր աստված, ինչի՞ց է, ինչո՞ւ
Որ ամենից շուտ և ամենից շատ
Իրեն մարդու մեջ հենց մարդն է կողչում (VI, 196)

Բացի աղորքների իմաստակառուցվածքային տարրերի գործածությունից, Աևակն օստագործում է նաև աստվածաշնչան աղորքներից ու երեմն էլ շարականներից Վերցված գրաբարով առանձին հատվածներ և բառակապակցություններ՝ դրանց հավելելով կամ դրանցից բխեցնելով ու դրանցով կառուցելով հեղինակային մեկնաբանությունը՝ հեղինակի խոսք-եղբակացությունը: Նման կառույցներ հանդիպում են Պ. Աևակի մեծածավալ ստեղծագործություններում, մասնավորապես «Անլոելի զանգակատուն» և «Եռաձայն պատարագ» պետմներում:

Այսպես, Պողանջ աքտորի -ում, երբ ամեն անգամ ողորմություն հայցող ժողովրդի բերանով «Ողորմեա»-ի շարականներից հատվածաբար մեջբերումներ են արկում, տիրոջ ողորմության ու գրաբատության սպասումով, հետևում է դառն իրականությունը ներկայացնող հեղինակի խոսք՝ զիսատվող մի ողջ ժողովրդի բերանով.

– Յաղագըս հարց, եղբարց, մերոց,
Որք են տարեալ ի գերութիւն,
– Տէ՛ր, ողորմեա ... ,

– Հայցեմք ի քեն արտասուելով
Եվ պաղասիմք զայս ասելով.
– Տէ՛ր, ողորմեա ... ,

– Ընկալ զմեր աղաչանըս,
Լուր, գթառա՞տ, և ողորմեա'... ,

– Յոյց մեզ գքո ողորմութիւն,
Տուր աշխարհիս խաղաղութիւն... (IV, 195-196)

Աստծո ողորմությունը հայցելով հանդերձ աշխարհին խաղաղություն ցանկանալու բարձանքի իրականացումը առավել սարսափելի է նկարագրված.

Մեկ է տեսար խաղաղությունն իրո՞ք իջել,
Վեր է ածել շեն աշխարհը մի շիրմատան,
Ուր այլևս չեն էլ ճարպի ապրող մարդիկ,
Որ բյուրավոր հանգողներին երանի տան... (IV, 196)

«Եռածայն պատարագ»-ում կիրարած աղոթքային պատարիկների գործածությունն անգան օգնում է Պ. Սևակին՝ բանաստեղծական խոսքը կառուցելու դիպուկ ու հակիրճ:

«Արձակեա՝ զնեզ» արտահայտությանը ի պատասխան՝ հնչեցնելով «քայց Տերն արձակեց նրա ոստիսին», իսկ «Լերի՞նք, ամկերու՞ք դուք ի վերայ մեր... ծածկեցե՞ք զնեզ»-ին՝ «քայց նրանց վրա լեռները չընկան և չծածկեցին բլուրներն անսիրտ... խլված էր և՛ զենք, և՛ դանակ, և՛ ծեռք...» հեղինակային մեկնաբանություն՝ պատասխանները: Իսկ «Չունք բազումք եղեն զինեւ // Արի՛, Տէ՛ր եւ փրկեա՝ դու զիս»-ին հետևում է աշխարհի ու մարդկության դեմքին խարազանող հեղինակի շաչող ձիք:

Աղոթքներն ու դրանց առանձին մասերն այնպես են շաղախված տվյալ ստեղծագործության ընդհանուր կառուցվածքին ու բանաստեղծական խոսքին, որ դարձել են դրանց բաղադրիչ տարրերից մեկը:

Հետևյալ աղերսանք - աղոթք - խնդրանքը նման դրսկորման օրինակներից մեկն է, իսկ աղոթքի առարկան ոչ թե Աստվածք, այլ Փարիզն է.

Փարիզ գ, Փարիզ գ...

Եղիր բարի.

Ի սեր աստժո՞ւ գթած եղիր.

Այս ծուռ ճամփից նրան շեղիր

Ու բեր շիտակ ճանապարհի.

Այնպես արա, որ նա դարձալ

Քեզ ողողի մտքով պայծառ... (IV, 215)

Չատ անգամ էլ բանաստեղծական պատկերները կառուցվում են աղոթքի տեսակի արտաքին (ցածր արտաքերնամբ՝ մրմունջով) և ներքին (իր մեջ ընդգրկող ուժի և էներգիայի) հատկանիշների ու կիրառման արոյունքի մատնանշմամբ.

Խոսքերը ցածր են

աղոթքի նման,

Խոսքերս բարձր են

աղոթքի նման,

Որ չի հասնում տեղ

Որ չի կատարվում: (I, 314)

Բանաստեղծությունը ոչ միայն անկեղծ խոսք է, աղոթք, մրմունջ ու ինքնախստովանություն, այլև աշխարհին, նարդկությանն ու բարի գործին ուղղված մաղթանք և օրինանք, երբեմն նաև չարին պատժող, չարին սրափեցնող անեծք:

Մարդանքի և օրինանքի տեսակների սևական կիրառությունները զգալի քանակ են կազմում մաղթանքը 68 (65-ը չափածո, 3-ը արծակ խոսքում), օրինանքը՝ 33 (26-ը չափածո, 7-ը արծակ խոսքում):

Ի տարբերություն աղոթքների՝ Վերջիններս Պ. Սևակի ստեղծագործություններում հանդես են զալիս հեղինակային խոսքի ընդհանուր շաղախի հետ միաձույլ.

Ծննդկանի շուրջ նստեցին նրանք՝

Որդուն մաղթելով արևշատություն,

Նորատի մորդ շուտ ապաշխարանք,

Աղվորիկ մի հարու,

Բարի տատություն... (IV, 8)

կամ՝

...մող չկտրվի ակի ճռիմչը,
Գութանի անուշ ճկվստիկ ծենը.
-Ի՞ր ծենին մատադ... (IV, 62)

... Գալուստին մերմի քո կարոտ յարը... (IV, 228)

Ժողովրդական «Աստված ծերիցդ առավ, թող սրտիցդ էլ առնի» ասույթամաղթանքային կիրառությունը «Նահանջ երգով» պուեմում օգնում է առավել սրությամբ ու խորությամբ վերարտադրելու բանաստեղծական ներաշխարհը: Կապ գտնելով ժողովրդական մաղթանքի արտահայտած զաղափարի և իր քնարական հերոսի ապրումների միջև՝ բանաստեղծը ինքնատիպ հնարքով է վերարտադրում այն:

Պ. Սևակը նախ մտերմիկ տոնով մեջ է բերում մերելատիրոջն ուղղված ավանդական մաղթանքը.

Գիտե՞ս, թե ինչպես են մերելատեր մարդուն
Միսիթարում մերոնք
Լեռնաշխարհի մարդիկ.
«Աստված ծերիցդ առավ,
Թող սրտի ցդ էլ առնի»: (III, 185)

Այնուհետև՝ ներկայացնում է կորցրած սիրո պատճառով տառապանքի ծովում անհույս ափեափի խփվող քնարական հերոսին՝ իրեն կատարյալ «մերելատեր», որից խլել են նաև ժողովրդական մաղթանքի ամոքիչ ուժ ունեցող արտահայտության դրսերումը.

Քեզ իմ ծեռքից առա՞ն.
Մերելատեր եմ ես:
Իսկ Ե՞րբ պիտի զնաս և իմ սրտից, սրտից... (III, 185)

«Հին-հին գրքերի, մատյանների մեջ» մնացած ու «հնացած խոսքերով», բայց ուսկու պես արժեքը երբեք չկորցրած իր մաղթանք-իղձ-ցանկությունն է հայտնում բանաստեղծը մարդկանց.

*Գթասի՞ րտ եղեք,
Եղեք ողորմած,
Մարդու նկատմամբ մա՞րդ եղեք, մարդի կ: (I, 330)*

Մաղթանք-օրինանքների բազմաշերտ ու բազմախորհուրդ կարուցվածքով են ավարտվում Պ. Սևակի թե «Նահանջ երգով», թե «Եռաձայն պատարագ» պոեմները:

Օրինելով սիրած էակի անունը, ժպիտը, կողերը, հեռացումը, տառապանքը և իր՝ պոետի մեկնումը բանաստեղծը «Նահանջ երգով» պոեմում ամեն անգամ խորացնում, բացում է դրանց ապրված պոետական էությունը՝ իր մեկնում-նահանջումը, ի հակադրություն շահնուրյան նահանջի, բնութագրելով «նահանջ... երգով».

- Օրինյալ եղիր այնպես, ինչպես կայիր
Թեկուց իմծմից հեռո՞ւ
Ոչ ինձ համար...
- Հավետ օրինյալ լինի քո անունը,
Որ հնչում է մերը «Կիմ» ու մերը էլ «Սեր»...
- Հավետ օրինյալ լինի քո ժպիտը
Հայստարայր սիրո և խնդրության...
- Հավետ օրինյալ լինեն քո կողերը,
Որոնք լյանք են ծնում տաք հավելուց,
Ինչպես որ շիվելուց ծնվում է հուր...
- Հավետ օրինյալ լինի նաև հեռացումքը,
Որ իրեն նոր զալուստ կարծագանքի հեռվում...
- Օրինյալ լինի նաև տպած տառապանքը,
Որից ոչ թե մեռնում, այլ ծնվում են կրկին...
- Օրինյալ լինի նաև իմ մեկնումը,
Իմ այս նահանջումը,
Որ նահանջ է... երգով: (III, 197-198)

Պ. Սևակի «Եռաձայն պատարագ» պոեմում ժողովրդական ասույթը (Էղ ուղտը մի օր էլ մեր դրանն ա չոքելու) ներկայանում է մաղթանք-ցանկության տեսքով՝ կատարելով բանաստեղծական պատկերի դեր.

Թող ուրախության ուղտը գեր վերջում՝ ամենավերջում,
իր ծունկը ծայի մեր դռան առաջ
թեպետ ուշացած, բայց միշտ ցամկայի ուղտավորի պես... (IV, 324)

«Սայաթ-Նովա» ուսումնավիրության մեջ «Թող հողը թերև լինի
իր Վրա» ժողովրդական մաղթանքի յուրովի կիրառությամբ
(մաղթանքը դարձել է խոսքը կառուցելու հենք) Պ. Սևակը էլ ավելի
է ընդգծել ու խորացրել բանաստեղծների աստվածային
առաքելությունը. «Բոլոր դարերի բոլոր բանաստեղծների Վրա
հողը թերևանում է հենց այն գիտակցությունից, ինչը կարող է
ամենավայելու տապանագիր դառնալ նրանց բոլորի շիրիմին.

Անարկվածի նշան ճակտիս խալիսի նամուս քաշեցի:

Եվ ով էլ որ կարդա նման տապանագիր, կարող է չկասկածել,
որ նրա տակ հանգչում է բանաստեղծ կամ խալիսի նոքայ»³:

Ժողովրդական մաղթանք-բաժականարի ու օրինանքի համա-
ձուլվածքով և ողջույնի խոսքերի բազմազանությամբ է կառուցված
«Հրավիրում-ուրախանում Են» բանաստեղծությունը.

Դեհ, խմողաց խումը անուշ,
Եռեփի գինու կումը անուշ... (IV, 425)

Կամ

Այս մի թասն էլ նրանց կենաց, ովքեր... (IV, 423)

Թող մայր հողը նրանց վրա թերև լինի (IV, 428)

Խմննք, հետո այս կենացը ծաղկացնենք.
— Ով որ երգի ծայնն ամսպար (VI, 220)

Գալուստը բարի՝ գաս հազար բարով,
Իմ զլիսի վրա և իմ աչքերի (VI, 234)

Բարձդ բարի (VI, 233)

³ Պ. Սևակ, Սայաթ - Նովա, Ե., 1969, էջ 343:

Բազմաթիվ նմանատիպ արտահայտությունները, որոնք վերցված են ժողովրդական բանարվեստից, ավելի կենդանի ու մտերմիկ չունչ են հաղորդում ասելիքին:

Եթե 'աղոթքների գործածություններում առկա է առավել խրոխտ ու պարետիկ ոճը, ապա բանահյուսության այս տեսակի գործածություններում գերակայում են ժողովրդական լեզվի բազմաթիվ դրսերումները թե՝ անաղարտ տեսքով, թե՝ հեղինակային խոսքի շաղախում:

Նման կիրառությունները պայմանավորված են նաև թեմայի ընտրությամբ ու կենանի ժողովրդախոսակցական լեզվով անհրաժեշտ միջավայր և կողորիշտ ստեղծելու նպատակամղումով:

Ի տարբերություն ասույթաբանական վերոիիշալ տեսակների՝ անեծքը խոսքի հմայական գորությամբ մարդու և նրան շրջապատող առարկաների ու երևոյթների վրա բացասաբար ներգործելու բանահյուսական կիրառական ժանրերից է:

Անեծքի տեսակի 26 գործածություններից 25-ը չափածոյում է, 1-ը՝ արձակ խոսքում:

Սևակյան կիրառություններում անեծքի տեսակը ներկայանում է՝
ա) իր նպատակամղվածությամբ՝ պահպանելով զապաշապիկի
դեր կատարող նրա ներքին կրակը, որից դարեր շարունակ
զգուշացել ու սարսափել են բոլոր ազգերի մարդիկ.

Հրաշքով փրկված,
աշխարհեաշխարհ զարկված որբերի ողբը ողորմուկ
և այրիների անեծքը անժոխ...

...վերադառնալով բնակվում է նա
այս անգամ արդեն նրանց տներում,

ովքեր հատեցին ջիղը այրության
և այրիության գիրը տպեցին

ճակատի վրա մի ո՞չ աշխարհի...

բնակվում այնտեղ՝ ալլահի տեղակ,
վարձը ու օրհնության տեղը գրավում՝

նրանց տներից դուրս վրուելով

եղած ու չեղած ջիներին բարի... (IV, 308)

բ) Հեղինակի խոսքի մեջ՝ որպես բաղադրիչ նաև.

Վայ թեզ, թշվառ երջանկություն,

Տանջանքի հողը գլխիդ:

Մի՞թե նրա չափ էլ չկաս, որ չտամքես ինքը թեզ... (VI, 174)

գ) հերոսի բերանով արտաքրված ուղղակի խոսք՝ իբրև պատասխան «Աստված պահի զիխավորիդ» օրինանքի.

Իսկ խեղճ կինը, թէ չամաչեր,
Երինջի պես կրառաչեր.
«Թաղե՛մ էղպես զիխավորիմ»,

որին հետևում է անեծքի առաջացման պատճառի և նրան ծնող միջավայրի հակիրծ նկարագրությունը:

Նմանատիպ կառուցի հանդիպում ենք նաև Պ. Սևակի մանկական ստեղծագործություններում, «Մանուշակ»-ում ուղղակի խոսքով և բազմաստիճան կառուցվածքով.

Եղբ տեսել է օգուտ չկա,
Անիծել է մայրն աղջկան.
«Դաշտերն ընկած՝
Ապրես ծնկած,
Հենց գորանաս՝
Ծուտ չորանաս,
Ու լեզուդ էլ
Բայ բերնիցդ թող դուրս չգա,
Այլ բկիցդ,
Ծոճրակիցդ»⁴:

Իսկ «Վարդն ու Մանուշակ»-ում անուղղակի խոսքով պատմողաբար.

Երբ չի օգնել նոյնիսկ պաշելն ու ծեծելը,
Մայրիկը բարկացել, մի օր անիծել է,
Որ իրար հետ անվերջ կրվող եղբայր ու քոյր
Մեկը մեկից միշտ էլ կարոտ մնան կյանքում⁵:

Վերոհիշյալ կիրառություններում ոչ միայն առկա է անեծքի առաջացման պատճառը, այլև անեծքի արդյունքը իբրև տվյալ տեսակին բնորոշ ժողովրդական խոսքի զորությունը հաստատող ու ամրագրող փաստ.

⁴ Պ. Սևակ, Զեր Ծանոթները, Ե., 1984, էջ 8:

⁵ Պիոներ, 1970, թիվ 6, էջ 11:

Դրա համար

Մինչև հիմա...

... Ղեռ նոր ցցված՝

Կեռանում է,

Ղեռ նոր բնացված՝

Թառանում է...⁶

կամ

Ինչպես ասաց մայրը, Եղավ հենց այդպես էլ...⁷

դ) Աերդրված ժողովրդական երգի կառուցում.

Արար - աշխաղը լիքը լավեր՝

Ինչո՞ւ թողեց կտրիծ քաջին,

Ինչո՞ւ տվեց քավթառ խոջին.

- Իմ կեղտ էնոր մեղրի միջին,

Էնոր ոսկուն նստեն հավեր,

Քա մարե՛ ջամ, քա տնապե՛ր... (IV, 129)

ե) անեօքաերդումային կառուցվածքով.

...Այս ինչպե՞ս, ո՞նց մոռանալ

Արհավիրքն այն օրերի.

- Աշխարքում ով մոռանալ

Զուխտ աչքով թող քոռանա... (IV, 185)

զ) անեօքաբանադրական կաղապարով.

Վայ տամ... այն գանգին,

Որ ոսին որված կաղամբ է ասես... (I, 421)

է) ժողովրդական Աստված «հա»-ն օրինել, // Օրինել է և «չէ»-ն, // Բայց անիծել է մեկ-տեղ «հա ու չէ»-ն... (VI, 40) ասույթի միջոցով անեօքը ներկայացվում է որպես Բարձրյալի կողմից բնության ներդաշնակությունը կարգավորող ու պահպանող միջոց:

⁶ Պ. Աւակ. Զեր Ծանոթները, Ե., 1984, էջ 8-9:

⁷ Պիոներ, 1970, թիվ 6, էջ 11:

Խոսքի գորությամբ շրջապատի վրա ներազելու, մարդկանց վրա ներգործելու ժողովրդական «պատմամիջոցներից» է նաև հայությանը:

Սևակի ստեղծագործություններում այդ տեսակի 7 կիրառություն կա (բոլորն էլ չափածոյում և հայկական բանարվեստում): Եղած 7 գործածություններն էլ հանդես են գալիս
ա) կամ միայն տվյալ տեսակի անվան մատնանշմանք.

Գինովանում է մենակությունը՝ խայամի նման,
Գինովանում ու հայիում... աստծուն:
Բարի շների հաջոցն էլ հիմա
Հաղոց չէ կարծես,
Աղոթք է՝ հղված հայիոված աստծուն,
Որ հայիողին գթաբար ների: (II, 35)

բ) կամ տվյալ տեսակի մեջ ներառված ժողովրդական լեզվամտածողության և ինքնատիպ պոեզիայի ընդգծմանք.

Բաց եմ անում
Եվ արգելված՝ հայիոյական բարերն ամեն՝
Իրենց թաքուն պոեզիայով,
Որ կուտակվել է դարեղար: (I, 346)

գ) հայ ժողովրդի կրած անլուր տառապանքներին անհաղորդ աշխարհին, երկար ու սատծուն ուղղվելիք խոսքերը ի գորու չեն արտահայտելու պոետի զայրույթն ու հոգու խորքից ժայթած ապրումը, եթե օգնության չզային կրկին անեծքն ու հայիոյանքը՝ իրենց պոռքակումի պահի նկարագրությանք.

Դե՛, շրջունք բեր, որ չանիծի,
Դե՛, բեր բռունքը, պրկված կռուի,
Որ չդառնա քինահարույց կրթի խոյանք
Ու միշտմի երկնքի մեջ
Իբրև նզո՞վ,
Ոչ, ի՞նչ նզով.
Իբրև աստծու ու երկնքի լիրը հասցեին
Մի առնական թունդ հայիոյանք... (IV, 193)

«Ծնունդ հայիոյանքի» ծնունդի պատճառ են դառնում կյանքի և տառապանքի շատ երևույթներ, սակայն դրանց արտաքերումը

դժվարանում է, երբ հայիոյանքի «առարկան» պոետի հոգու մի մասնիկն է.

...Եվ հասուկենոտ խեղճ լուսերի լեզուն ճարտար
Կապ է ընկնում.
Զիգ մամերով
Կակագում են նրանք միշտ նույն վանկի վրա,
Ինչպես ինքը,
Երբ ուզում եմ
Իմ հարազատ հորն ու մորը թունդ հայիոյել՝
Իմ այս իգո՞ւր շիտակության,
Իմ ամօգո՞ւտ այս տաքության,
Պետրոսյան Ա. 1995, Քարաշամբի գավարի երաժիշտը և նրա քնարը, Երաժշտություն և Պարզ Պատկերագրության Մեջ, Ի Միացյալ Սինդոկիում Երևանում, Զեկուլցումների Հիմնադրույթներ, Պետրոսյան Է., Խաչատրյան Ժ. (հրատ.), 13.

Պետրոսյան Ա. 2006, Հայկական ավանդական դրամայի ակունքների շորջ, Պատմա-Բանասիրական Հանդես 2, 256-284.

Պետրոսյան Է. 1995, Թատերական և երաժշտական կերպարները Ուլլտեր արքեստի պատկերասրահում պահպանված հայ ծերագրերի հավաքածուում, Երաժշտությունը և Պարզ Պատկերագրության Մեջ, Ի Միացյալ Սինդոկիում Երևանում, Պետրոսյան Է., Խաչատրյան Ժ. (հրատ.), 14.

Փիլիպոսյան Ա. 1998, Հայկական լեռնաշխարհի կնիքները հինարևելյան կնիքագրության համակարգում, Երևան.

Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Կ. 2004, Տեսարանային հորինվածքով միջներրունգեղարյան գունագարդ կավանոթը, Պարերաժշտություն, Ա. Լիվիյանի ծննդյան 110-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 87-95.

Փիլիպոսյան Ա., Քանայան Հ. 1995, Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III-I հազ. նվազարաններն ու նրանց հինարևելյան գուգահեռները, Երաժշտությունը և Պարզ Պատկերագրության Մեջ, Ի Միացյալ Սինդոկիում Երևանում, Պետրոսյան Է., Խաչատրյան Ժ. (հրատ.), 17-18.

Ардзинба В.Г. 1982, Ритуалы и мифы древней Анатолии, Москва.

Аревян Г.Е., Оганесян В.Э., Мурадян Ф.М., Аветисян П.С., Петросян А.А. 1990, Конец Среднего бронзового века в междуречье Аракса и Куры, Историко-Филологический Журнал 1, 53-74.

Асланов Г.М., Вайдов Р.М., Ионе Г.И. 1959, Древний Мингечаур, Баку.

- Афанасьева В.К. 1979, Гильгамеш и Энкиду, Москва.
- Боровская Н.Ф. 1997, Лирь из «царских гробниц» Ура как памятники шумерской культуры раннединастического периода, *Вестник Древней Истории* 4, 3-13.
- Деведжян С.Г. 1981, Лори-Берд I, Ереван.
- Иофан Н.А. 1974, Культура древней Японии, Москва.
- Капанцян Гр. 1931-1933, *Chetto-Armeniaca*, Ереван.
- Капанцян Г. 1948, Хайаса-колоыбель армян, Ереван.
- Квимка К. 2001, Музикальный фольклор и музыкальная фольклористика на Кавказе, Ереван.
- Куфтин Б.А. 1941, Археологические раскопки в Триалети, Тбилиси.
- Леви-Брюль А. 1930, Первобытное мышление, Москва.
- Мешкерис В.А. 1997, К изучению музыкальной культуры восточной Парфии, *Вестник Древней Истории* 4, 138-149.
- Мкртчян Н. 2005, Семитские языки и армянский, Ереван.
- Нариманишвили Д. 2007, Предметы быта, изображенные на серебряном кубке из Триалети, Вопросы Армянской Этнологии и Археологии 3, Аветисян П. (ред.), Ереван, 41-48.
- Оганесян В.Э. 1988, Серебряный кубок из Карапашба, Историко-Филологический Журнал 4, 145-161.
- Петросян Л.А. 2003, Древнейшие подставки из Ачашена, Археология, Этнология и Фольклористика Кавказа, Абрамян Л. (изд.), Эчмиадзин, 77-82.
- Петросян Э. 2007, Шара и Астхик - верховные боги Ширака, Историко-Филологический Журнал 3, 193-207.
- Петерс Б.Г. 1986, Костерезное дело в античных государствах Северного Причерноморья, Москва.
- Резепкин А.Д. 1990, Музикальный инструмент эпохи бронзы, Памятники Культуры, Новые Открытия: Письменность, Искусство, Археология, Москва, 455-457.
- Сейранян Е.Б. 1987, Армянские самоцветы, Ереван.
- Фрайданк Г. 1976, Новые данные об отношении среднеассирийского царства с северными и северозападными странами, Древний Восток 2, 86-88.
- Ханзадян Э.В., Саркисян Г.Х., Дьяконов И.М. 1983, Вавилонская гира XVI в. до н. э. с клинописной надписью из раскопок Мецамора, Древний Восток 4, 113-122.
- Ханзадян Э.В., Пиоторовский Б.Б. 1984, Цилиндрическая печать с древнеегипетской иерогlyphической надписью из Мецаморского могильника, Историко-Филологический Журнал 4, 59-65.
- Albright W.F. 1919, The Mouth of the Rivers, *American Journal of Semitic Languages* XXXV/4, 161-195.
- Alp S. 1983, Beiträge zur Erforschung des hethitischen Tempels, *Türk Tarih Kurumu Yayınlarından* VI/23.

- Arešjan G.E. 1988, Éléments indoeuropéens dans la mythologie du Plateau Arménien et du Caucase du Sud au II^e mil. av. J.-C., Šulmu: Papers on the Ancient Near East presented at International Conference of Socialist Countries in Prague 1986, Varvoušek P., Sorček V. (ed.), Prague, 19-37.
- Bachmann W. 2000, Frühbronzezeitliche Musikinstrumente Anatoliens, Studien zur Musikarchäologie II, Orient-Archäologie 7, Hickmann E., Laufs I., Eichmann R. (Hrsg.), 145-157.
- Badalyan R., Chataigner Ch., Kohl P.K. 2004, Trans-Caucasian Obsidian: The Exploitation of the Sources and Their Distribution, A View from the Highlands: Archaeological Studies in Honour of Ch. Burney, Sagona A. (ed.), Ancient Near Eastern Studies, Supplement 12, 437-465.
- Berlev O., Hodjash S. 1998, Catalogue of the Monuments of Ancient Egypt from the Museums of the Russian Federation, Ukraine, Bielorussia, Caucasus, Middle Asia and the Baltic States, Orbis Biblicus et Orientalis 17, Göttingen.
- Bobokhyan A. (im Druck), Schellen aus Metall, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie 11, Berlin-Leipzig-New York.
- Boehmer R.M., Kossack G. 2000, Der figürlich verzierte Becher von Karašamb: Umfeld, Interpretation und Zeitstellung, Iran und der Westen, Gedenkschrift für P. Calmeyer, Dittmann R., Hrouda B., Löw U., Matthiae P., Mayer-Opificius R., Thürwächter S. (Hrsg.), Alter Orient und Altes Testament 272, 9-71.
- Burney Ch. 1996, "The Highland Sheep are Sweeter...", Cultural Interaction in the Ancient Near East, Papers Read at Symposium held at the University of Melbourne, Department of Classics and Archaeology (29-30 September 1994), Bunnens G. (ed.), Abr Nahain Supplement Series 5, Louven, 1-15.
- Calmeyer P. 1969, Glocke, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie 3, Berlin-Leipzig-New York, 427-431.
- Crocker R.L., Brown R.R., Kilmer A.D. 1976, Sounds from Silence: Recent Discoveries in Ancient Eastern Music, Berkeley.
- Czichon R.M. 1995, Zur Komposition der Taprammi-Schale, Istanbuler Mitteilungen 45, 5-12.
- Degraeve A. 1996, Mesopotamia and its Northern Neighbours: Part I, Akkadica 99/100, 15-35.
- Duchense-Guillemin M. 1969, La harpe à plectre iranienne, son origine et sa diffusion, Journal of Near Eastern Studies 28, 109-115.
- Dumbrill R.J. 1998, The Musicology and Organology of the Ancient Near East, London.
- Eichmann R. 2000, Musik und Metall im Alten Vorderen Orient, Studien zur Musikarchäologie II, Orient-Archäologie 7, Hickmann E., Laufs I., Eichmann R. (Hrsg.), 63-69.
- Eichmann R. 2001, Musik und Migration, Migration und Kulturtransfer: Der Wandel vorder- und zentralasiatischer Kulturen im Umbruch vom 2. zum 1. vorchristlichen Jahrtausend, Internationales Kolloquium in Berlin 23.-26. November 1999, Eichmann R., Parzinger H. (Hrsg.), Bonn, 473-483.

- Eichmann R. 2004, The Design of Ancient Egyptian Lutes, Studien zur Musikarchäologie IV, Orient-Archäologie 15, Hickmann E., Laufs I., Eichmann R. (Hrsg.), 363-371.
- Emre K. 2002, Felsreliefs, Stelen, Orthostaten. Großplastik als monumentale Form staatlicher und religiöser Repräsentation, Die Hethiter und ihr Reich: Das Volk der 1000 Götter, Katalog der Ausstellung in Bonn, 19. Januar-28. April 2002, Bonn, 218-223.
- Emre K., Çınaroglu A. 1993, A Group of Metal Hittite Vessels from Kınık - Kastamonu, Aspects of Art and Iconography: Anatolia and its Neighbours. Studies in Honor of N. Özgür, Mellink M. J., Porada E., Özgür T. (ed.), Ankara, 675-713.
- Haas V. 1994, Geschichte der hethitischen Religion, Handbuch der Orientalistik 1/XVI.
- Khachatryan Z.D. 2001/02, Representations of Music on Armenian Terracotas and Toreutics (Second Millennium B.C. - Third Century A.D.), *Imago Musicae* XVIII/XIX, 85-98.
- Khachatryan Z. 2001/02, Dance and Musical Instruments on "The bowl of Pacorus", *Imago Musicae* XVIII/XIX, 99-105.
- Kushnareva K. 2000, Some Evidence of Musical Instruments in Bronze Age Caucasus, Studien zur Musikarchäologie II, Orient-Archäologie 7, Hickmann E., Laufs I., Eichmann R. (Hrsg.), 103-112.
- Mansfeld G. 2001, Die „Königsgräber“ von Alaca Höyük und ihre Beziehungen nach Kaukasien, Archäologische Mitteilungen aus Iran und Turan 33, 19-61.
- Möbius H. 1938, Kaukasische Glocken in Samos, Marburger Studien G. v. Merhart zum 50. Geburtstag, Strockhoff E. (Hrsg.), Darmstadt, 156-165.
- Orthmann W. 1971, Untersuchungen zur späthethitischen Kunst, Bonn.
- Özgür N. 1992, A Lute Player from Samsat, Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of S. Alp, Otten H., Ertem H., Akurgal E., Süel A. (ed.), Ankara, 419-423.
- Polonsky J. 2000, *ki^a-utu-è-a: Where Destiny is Determined, Landscapes, Territories, Frontiers and Horizons in the Ancient Near East III*, Milano L., De Martino S., Fales F.M., Lanfranchi G.B. (ed.), Padova, 89-100.
- Pustovalov S.Z. 1994, Economy and Social Organization of Northern Pontic Steppe-Forest Steppe Pastoral Populations: 2750-2000 BC (Catacomb Culture), *Baltic-Pontic Studies* 2, 86-134.
- Rashid S.A. 1984, Mesopotamien: Musikgeschichte in Bildern II/2, Bachmann W. (Hrsg.), Leipzig.
- Roaf M. 1998, *Bildatlas der Weltkulturen: Mesopotamien*, Augsburg.
- Santrot J. (éd.) 1996, Arménie. Trésors de l'Arménie ancienne des origines au IV^e siècle, Paris.
- Schmidt K. 2002, Norşuntepe. Kleinfunde II, Artefakte aus Felsgestein, Knochen, Ton, Metall und Glas, *Archaeologica Euphratica* II, Hauptmann H. (Hrsg.), Mainz am Rhein.
- Schuol M. 2000, Darstellungen von hethitischen Musikinstrumenten unter Berücksichtigung der Schriftzeugnisse, Studien zur Musikarchäologie

II, Orient-Archäologie 7, Hickmann E., Laufs I., Eichmann R. (Hrsg.), 159-170.

Schuol M. 2004, Hethitische Kultmusik. Eine Untersuchung der Instrumental- und Vokalmusik anhand hethitischer Ritualtexte und von archäologischen Zeugnissen, Orient-Archäologie 14.

Sevin V. 2006, İmikuşağı: Fırat kıyısında bir Hitit kültür merkezi, Sevin Buluç Anı Kitabı, Tolun Y., Takaoglu T. (Der.), Çanakkale, 73-82.

Sipahi T. 2001, New Evidence from Anatolia Regarding Bull-leaping Scenes in the Art of the Aegean and the Near/East, Anatolica XXVII, 107-125.

Spycket A. 1983, "Louez-le sur la harpe et la lyre", Anatolian Studies XXXIII, 39-49.

Stauder W. 1957, Die Harfen und Leiern der Sumerer, Frankfurt a.M.

Steinkeller P.S. 1998, The Historical Background of Urkesh and the Hurrian Beginnings in Northern Mesopotamia, Bibliotheca Mesopotamica 26, Urkesh/Mozan Studies 3, 75-98.

Steinkeller P. 2006, New Light on Marhaši and its Contacts with Makkan and Babylonia, Journal of Magan Studies 1, 1-17.

Young T.C.Jr. 1969, Excavations at Godin Tepe. First Progress Report, Toronto.

Ziegler N. 2007, Les musiciens et la musique d'après les archives de Mari, Florilegium Marianum IX, Mémoires de NABU 10, Paris.

Նկարների ցանկ

Բոլորն առանց մասշտաբի

1. Քնարը, փողը և թմբուկը (?) Քարաշամբի Մեծ Կուրզանի արձաթ գավարի երկրորդ ֆրիզի վրա, թ.ա. 22-21-րդ դդ.

2. Թմբուկը (?) Թթուղթի 5-րդ Կուրզանի արձաթ գավարի առաջին ֆրիզի վրա, թ.ա. 19-18-րդ դդ.

3. Քնարի/տաճի տիպի գործիք՝ ծախից առաջին էակի ծեռքին, Գեղանա լեռների ժայռապատկերներ, թ.ա. 3-2-րդ հազ.

4. Քնարեղողի պատկեր մի գլանակնիքի վրա, Մարդին, թ.ա. 1800/1700 թթ.

5. Տավիղեղողի պատկեր մի խեցանորի բեկորի վրա, Արսլանթեփե Վաղ Բրոնզ III, թ.ա. 3-րդ հազ. Վերջ.





6. Քնարի պատկեր ու փայլեցված կավե կոչկածև անորի վրա, Խանլար, թ.ա. 2-րդ հազ. Երկրորդ քաղաք.


7. Զննարակիր երածշտի պատկեր թրծակավե մի անորի վրա, Շամշատ, թ.ա. 17-րդ դ.

8. Բրոնզե բռնձներ, Լորի Բերդ, Դամբարան 7, թ.ա. 2-րդ հազ. կեսեր.




9. Սրնզահարի/դուդուկահարի բրոնզե արձանիկ Լուվրի թանգարանից, Սևանի ավազան, թ.ա. 2-1-ին հազ. սահման.


10. Ուսկրե Երեք (կամ չորս) փողային գործիքների (սրինգների) մնացորդներ, Մինգեչառուր, Դամբարան 77, Բ. ա. 2-րդ հազ. կետեր.
11. Տավիդ Ռեզոնաստոր կավից, Լճաշեն, Դամբարան 200, Բ.ա. 15-14-րդ դդ.
12. Տավիաննան գործիքի փայտե մնացորդներ մի դամբարանից, Նովոսվերոդնայա, Բ.ա. 3-րդ հազ. կես.
13. Քարաշամբի Սեծ Կուրզանի արծաթե զավարի ամբողջական պատկերագրությունը, Բ.ա. 22-21-րդ դդ.
14. Թթվերի 5-րդ Կուրզանի արծաթե զավարի ամբողջական պատկերագրությունը, Բ.ա. 19-18-րդ դդ.
15. Ծիսական պատկերներ Եղիշևակերպ արծաթե պտյակի վրա, Կենտրոնական Անատոլիա, Ծիմելի հավաքածու, Բ.ա. մոտ 1600 թ.
16. Ծիսական պատկերներ բռնցքած արծաթե անորի վրա, Կենտրոնական Անատոլիա, Բոստոնի Գեղարվեստի թանգարան, Բ.ա. 14-րդ դ.
17. Ծիսական պատկերներ խեցանորի վրա, Ինանդըկթեփե, Կենտրոնական Անատոլիա, Բ.ա. մոտ 1600 թ.
18. Ծիսական պատկերներ խեցանորի վրա, Հյուսինդեղե թեփեսի, Կենտրոնական Անատոլիա, Բ.ա. մոտ 1600 թ.
19. Քնարերգուի պատկեր, Լարս, հարավային Միջագետք, Բաղդադի քանզարան, Բ.ա. 2-րդ հազ. սկիզբ.
20. Տավիդերգուի պատկեր, Լարս, հարավային Միջագետք, Բերկիի հանալսարան, Բ.ա. 2-րդ հազ. սկիզբ.
21. Տավիդերգուի պատկեր Միջագետքից, գտնվելու վայրն անհայտ է, Լուվր, Բ.ա. 2-րդ հազ. սկիզբ.
22. Պու Արիի տապիոդ, Ուրի «Արքայական դամբարանադաշտ» (դամբարան PG 789/800), հարավային Միջագետք, Բրիտանական թանգարան, Բ.ա. 3-րդ հազ. կես.
23. Քնարերգուի պատկեր գլանակնիքի վրա, Քյուլթեփե, Կենտրոնական Անատոլիա, Բ.ա. 2-րդ հազ. սկիզբ.
24. Քնարերգուի պատկեր, Նիպուր, հարավային Միջագետք, Բաղդադի քանզարան, Բ.ա. 3-րդ հազ. կես.
25. Քնարերգուի պատկեր «Ուրի շտանդարտի» վրա, Ուր, հարավային Միջագետք, Բրիտանական թանգարան, Բ.ա. 3-րդ հազ. կես.
26. «Ուրի շտանդարտի» ամբողջական պատկերագրությունը, Բ.ա. 3-րդ հազ. կես.
27. Աքքաղական գլանակնիք Միջագետքից՝ «Գիլգամեշը և Խուսրո ծառը» վեպի պատկերագրությամբ (աջից նստած աստվածության ձեռքին կան փայտիկներ, իսկ նրա առաջ դրված սեղանի վրա՝ թմբուկ), Լուվր, Բ.ա. 24-23-րդ դդ.





14






19



20



21



22




23



24



25



26



27

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱԶՁԻՆ

Հայկական լեռնաշխարհի առաջին պետականությունները հայագետների և հարակից բնագավառների մասնագետների մշտական ուշադրության կենտրոնում են եղել¹: Այսօր հետազոտողների տրամադրության տակ են մեծաքանակ պատմագիտական, լեզվաբանական, հնագիտական և առասպելաբանական նյութեր և ուսումնասիրություններ: Այնուամենայնիվ, սույն պետությունների մասին մեր պատկերացումները դեռևս բավարար չեն, և ճասնավոր բնույթի լրացումներն ու ձգգրտումները ի վիճակի չեն փոխելու պատկերը: <Հազգոյն Հայաստանի արևմտյան և հարավային հատվածների՝ մ.թ.ա. II հազ. քաղաքական քարտեզը տառապում է զգայի անորոշությունից և «սպիտակ կենտրոն» առատությունից: Ասվածի համատեքսուում անհրաժեշտություն կա գիտության տրամադրության տակ եղած սկզբնաղբյուրների, այդ թվում՝ նորահայտ և ժամանակակից մասնագիտական ուսումնասիրությունների հիմնա վրա ի մի բերել վաղ հայաստանյան տարածաշրջանի քաղաքական պատմության և հարակից հարցերի վերաբերյալ բոլոր հիմնախնդիրները:

Առաջարկվող ուսումնասիրությունը նվիրված է մ.թ.ա. II հազ. Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունների պատմության հետազոտության ասպարեզում առկա մի շարք կարևոր հիմնահարցային խնդիրներից մեկի, այն է՝ Հայաստան և Ազգի կոչվող քաղաքական միավորների հարաբերակցության պարզաբանմանը: Վերոհիշյալ խնդիրը կարևոր է ոչ միայն ժամանակի աշխարհաքաղաքական իրավիճակի լուսաբանության, այլև հենց Հայաստանի և Ազգի տեղադրության խնդրի լուծման համար:

Հայաստան և Ազգի քաղաքական միավորները պատկանում են խեթական սեպագրական աղբյուրներում վկայված այն փոքրաթիվ երկրանունների թվին, որոնց թե՛ տեղադրության, թե՛ վարչաքաղաքական բովանդակության հարցում առ այսօր մասնագետները տարակարծիք են: Սույն տեքստերը մեկընդմեջ

¹ Տե՛ս Մանանոյան, . Կառավարություն, 1948. Բարսեղյան, 1963. Դյակոնով, 1968. Խաչատրյան, 1971. Խաչատրյան, 1998. Քոսյան, 2004թ. 2005:

հիշատակում են վերոհիշյալ երկրները, կապված այս կամ այն հրադարձության հետ, և նշում դրանց նոտավոր տեղադրությունը խեթական տեղության արևելյան սահմանամերձ շրջաններում, ինչի մասին կարելի է դատել այս ընդարձակ տարածաշրջանում խեթահյասական և խեթա-ազգիական կանոնավոր շփումների հիման վրա:

Խնդրով գրադվոր մասնագետները բազմիցս նշել են, որ Ազգին ավելի մոտ է գտնվել խեթական տեղությանը, քան Հայասան: Ըստ այդմ էլ առաջարկված տեղադրություններում² Ազգին ընդունված է փնտրել Հայիսի ակունքների, Հայիսից մինչև Սև ծով (Իրիս-Յեշիլըրմակ գետի հոսանքի շրջանում), հայկ. Ակիլիսենե-Եկեղյաց գավառի տեղում՝ Գայլ գետի ստորին հոսանքներում, Խուլվայից հյուսիս կամ Եփրատից մինչև Սև ծով՝ Թորթում գետի հովտում (= հայկ. Ազորդ գավառը)³:

Խնչ Վերաբերում է Հայասային, ապա մասնագետների շրջանում գերիշխում են երկու հիմնական տեսակետներ՝ Արևմտյան Եփրատից հյուսիս ընկած շրջանի արևելյան մասում, կամ Վերոհիշյալ շրջանից ընդհուպ մինչև Սև ծովի ափերը: Այս երկորոր ավելի ընդարձակ Հայասայի օստին առկա կարծիքները տարրաբաժանվում են մի քանի տարրերակների՝ ա) Երզնկա-Տրապիզոն-Եղբորում եռանկյան միջև, բ) Գայլ գետի ստորին հոսանքների շրջանում, գ) Եփրատի, Ճորոխի և Իրիս-Յեշիլըրմակի միջև, դ) Սև ծովի ափին՝ Ճորոխի հյուսիսային ավազանում:
Նշենք, որ Հայասայի մերձականության շրջանի հետ առնչակցության

² Տես RGTC.6.1: 63f. Քոյսան, 2004ա: 44-46, 48-50 (կարծիքների տեսությամբ):

³ Առաջարկված տեղադրությունների շարքում առկա են այնպիսիք, որոնք ակնհայտ հակասության մեջ են խեթական ադրբյուների տեղեկությունների հետ և, ընկանարար, ըննարկման առարկա չեն կարող հանդիսանալ: Օրինակ, Ֆ.Բիարելի կարծիքը Ազգին Գիլիլյայի հարևանությամբ փնտելու մասին (Bilabel, 1927: 261ff.), Պ.Մերիքի տեսակետը Ազգին Փինյոլ-Բյուրակնի լեռներից մինչև ժաման. Դիյարբաքը ընկած շրջանում տեղադրելու մասին առաջարկությունը (Meriggi, 1962: 86). այս երկրորդի ավելի վաղ տարրերակը Ազգին նույնացուն էր հայկ. Աղձնիքի հետ (Safrastyan, 1929: 190 [Խեթագայում հեղինակը հրաժարվեց իր տեսակետից հօգուտ Երեզ-Երզնկայից մինչև Երգրում ընկած շրջանի՝ Safrastyan, 1947: 38f.]):

⁴ Այս կապակցությամբ նշենք Հայասայի աշխարհագրական ընդգրկման անհավանական տարրերակների առկայությունը, ինչպես դրանք առկա են է.Կավենակի (Cavagnac, 1934: 14 [«Հայկական լեռնաշխարհի ողջ արևմտստրը»]), Ն.Մարտիրոսյանի (Մարտիրոսյան, 1957: 114-115 [«Վանա լից մինչև Կապադովկիայի արևելքը, հյուսիսում՝ մինչև Կարին-Սալաթիա գիծը»]), Վ.Խաչատրյանի (Խաչատրյան, 1971: 139ըլ., 1998: 34-36 [«Հայկական լեռնաշխարհի արևմուտքը՝ Հայկական Տավոսի, Եփրատ գետի և Սև ծովի միջև»]) աշխատություններում:

մասին տեսակետը հենվում է միայն խեթական արքա Մուրսիլիս II-ի «Տարեգորություններում»՝ որպես Հայասայի կամ Ազգի գլխավոր քաղաք հանդես եկող՝ «ծովի մեջ գտնվող» Արիասայի հիշատակության վրա: Սական ծովի մեջ գտնվող քաղաքի համար դեռ Ե.Ֆոռերը, Ն.Աղոնցը, Գր.Ղափանցյանը և Վ.Խաչատրյանը առաջարկել են չորս այլընտրական տարբերակներ⁵: Այսպիսով, Հայասան կարող էր գտնվել սևծովյան Տրապիզոն-Գիրեսուն հատվածից մինչև Կանա լիճ ընկած ընդարձակ տարածաշրջանում, սակայն անպայման Ազգի հարեւանությամբ:

Նշենք, որ Ազգի՝ Խեթական տերությանը ավելի մոտ գտնվեու մասին շրջանառվող կարծիքը բացառապես հենվում է Մուրսիլիս II-ի տարեգորություններում նրա հայասական արշավանքի նկարագրության ընթացքում Ուրայի՝ որպես Ազգի առաջին, այն է՝ սահմանամերձ անրոց հիշատակության, ինչպես նաև մ.թ.ա. XIII դ. արևելքում խեթերի՝ սահմանափակ տարածք ընդգրկող արշավանքների ընթացքում Ազգի, այլ ոչ Հայասայի հանդես գալու փաստի վրա:

Հայասան և Ազգի աշխարհագրական տերմիններով նշվող տարածքների հարաբերակցությունը 1930-ական թվականներից ի վեր մեկնարանվել է այսպես. Հայասան և Ազգին եղել են միմյանց մոտ գտնվող երկու քաղաքական կազմակերպմներ, որոնք հետագայում միավորվել են⁶: Նշվել է նաև, որ այդ երկուսի միավորումը առկա էր արդեն մ.թ.ա. XIV դարի կեսերին՝ Հայասայի արքա Խուկանայի օրոք: Հայասայի և Ազգի միացյալ կադավիճակը Ն.Մարտիրոսյանը բնութագրում էր որպես «Հայասայի դաշնակցություն»: Գր.Ղափանցյանի կարծիքով միևնույն պետության նկատմամբ երկու անվանումների

⁵ Forrer, 1931: 16ff. (Կանա լիճ արևմտյան ափին գտնվող Կզվան դաղը կոչվող թերակղզում [Ֆոռերին համահունչ էր Հ.Մանանյանի կողմից Արիասայի համադրումը ասորենասման ադրբյուների «իհի Ուայախ» քաղաքի հետ՝ Կանա լիճ հյուսիսային ափին [Մահանք, 1956: 126]. Ուրարտուի Ավարդ մարզի վերոհիշյա բնակավայր կարող էր գտնվել լիճ արևելյան կամ հարավային ափին՝ Արյունիք, 1985: 194). Adontz, 1946: 39f. (Արարկիդից արևելք՝ Եփրատի արևմտյան ափին գտնվող Ճահնաւաներում), Կառավար, 1948: 54c. (Եղրումի մոտ գտնվող լիճ-ճահնի ափին գտնվող բնակավայրերից մեկը, որտեղ մ.թ. VI-դ. հիշատակվում է Արաբեասն բնակավայրը), Խաչառյան, 1971: 138c. (Թորումի լիճ շրջանում [թիզ ավելի ուշ նա առաջարկեց ճորդիս միջին ավազանում գտնվող Արաք կամ Եթրող՝ Սպերդի թիզ հյուսիս-արևելք՝ Խաչատրյան, 1998: 35]):

⁶ Friedrich, 1930: 103f. Götzte, 1930: 25. Forrer, 1931: 4. Adontz, 1946: 28, 40. Safrastyan, 1947: 40. Մարտիրոսյան, 1957: 102, 113. 1961: 98-101. Բարսեղյան, 1963: 307-308. Խաչառյան, 1971: 128c. 1998: 35 և այլն:

առկայությունը պետք է բացատրել դրանց բովանդակությամբ. «Հայասան» ուներ էթնիկ, իսկ Ազգին՝ ոչ էթնիկ, այն է աշխարհագրական իմաստ: Վերջին մեկնաբանությունը Ենթադրում է «Հայասա» տերմինի հիմքում «հայ» էթնոնիմի առկայություն (խեթերեն –(a)sa) տեղանվանակերտ վերջածանցով հավելված):

Արդյոք Հայասան և Ազգին սկզբնապես տարբեր կազմակորումներ են եղել, որոնք հետագայում միավորվել են: Եթե այս, ապա ինչպիսի՞ հիմքեր ունենք նման Ենթադրության համար:

Սույն հարցադրման առաջին մասը միանշանակ ծիչտ է ոչ միայն ձևական տրամաբանության տեսանկյունից: Միևնույն քաղաքական միավորը չէր կարող երկու տարբեր անվանումներ ունենալ համաժամանակյա և, որ շատ կարևոր է, նոյնին միևնույն սկզբնադրյուրներում (տվյալ պարագայում՝ խեթական տեքստերում), ընդ որում մեկը՝ տարածային, մյուսը՝ էթնիկ բնույթի:

«Միավորված» Հայասա-Ազգի պետություն Ենթադրող ուսումնասիրողների գլխավոր կովկանը խեթական արքա Սուլպակիլուլիումաս լ-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրին ⁷, ինչպես նաև նոյն տեքստի Վերջին մասում Խուկկանայի փեսա Սարիյասի (Խուկկանայի դստեր ամուսինը) հիշատակությունը: Բանն այն է, որ միևնույն կավե տախստակում Խուկկանայի պայմանագրին կցված ավելի վաղ շրջանի մեկ այլ պայմանագրի կնքված է խեթական արքայի և Հայասայի կառավարիչ Սարիյասի միջև: Միևնույն անունը կրող անձանց առկայությունը, ինչպես նաև մեկ այլ տեքստում Խուկկանայի հիշատակությունը որպես Ազգի կառավարիչ (տես ստորև) բույլ է տալիս Ենթադրելու Հայասայում մ.թ.ա. XVդ. Կեսերին տեղի ունեցած ինչ-որ քաղաքական տեղաշարժ կամ առայժմ դժվար բացատրելի իրավիճակ:

Այսպես է ներկայացվում պայմանագրի ներածականում խեթական արքայի կողմից Խուկկանայի նշանակումը՝ որպես Հայասայի արքա.

Գիտական տառապարձում

- 1) [U]M-MA ⁴UTU^{SI} ⁷Šu-up-pí-lu-li-u-ma LUGAL KUR ^{URU} ^{Ha-at-ti}
- 2) ka-a-ša tu-uk ⁷Ha-սq-qa-na-a-an ap-pí-iz-zí-in UR.SAG-an
- 3) ša-ra-a da-a-aḥ-ḥu-un nu-ut-ta SIG₅-in i-ya-nu-un

⁷ Պայմանագրի հրատ.: Friedrich, 1930: 103ff., Beckman, 1996: 26ff.(Երկրորդը՝ թարգմանաբար):

4) nu-ut-ták-kán ^{URU}Ha-at-tu-ši A-NA LÚ^{MES} ^{URU}Ha-ya-ša-ya aš-
šu-li iš-tar-na

5) te-ek-ku-uš-ša-nu-nu-un nu-ut-ta am-me-el NIN₉-YA AŠ-ŠUM
DAM^{UR-TIM} AD-D/N

Թարգմանություն

1) Այսպես (ասում է) Արևս՝ Սուպահլուվիումասը, Խաթրիի
արքան:

- 2) «Տես, քեզ՝ Խուկվանայիդ, շարքային հերոսիդ
- 3) Ես բարձրացրեցի և քեզ ազնվական դարձրեցի:
- 4) Խաթրուսասում քեզ հայասացիների շարքում
- 5) ընտրեցի և քրոջ քեզ կամովին կնության տվեցի»:

Վերոհիշյալից բխում է, որ ազնվական Խուկվանան եղել է ոչ շատ բարձր ծագման (խեթական արքայի տեսանկյունից), սակայն աչքի ընկնող մարդ (appre/izzi UR.SAG), որին Սուպահլուվիումասը ազնվական էր դարձրել, այն է՝ հասցրել էր բարձրաստիճան ազնվականի կարգավիճակի (SIG₅)⁸, քանի որ Խուկվանան որպես Սուպահլուվիումասի քրոջ ամուսին, մուտք էր գործել խեթական արքունիք:

Մասնագետներից ոճամբ Խուկվանային համարում են ազգեցի, ով խեթական արքայի կողմից նշանակվել է Հայասայի արքա⁹: Դրա համար հիվում է KUB XVIII 2 տեքստը (տես ստորև), որտեղ Խուկվանան հիշատակվում է որպես «ազգեցի» (LU^{KUR}Azzi «Ազգի կարգավարիչ»), ինչպես նաև երկու այլ փաստարկներ պայմանագրից: Առաջինը տեքստի այն հատկածն է, որտեղ խոսվում է Խուկվանայի՝ Հայասա գնալու մասին («Եվ երբ դու Հայասա գնաս» - III 74'), երկրորդը Ազգից կին Վերցնելու հարցում Խուկվանայի վրա դրված արգելքն է («Եվ դու երբեք Ազգից կին՝ ամուսնության համար չվերցնես» - III 77'):

KUB XVIII 2-րդ Խուկվանայի՝ որպես ազգեցի հիշատակությունը պարզ բացատրություն ունի: ինչի մասին ստորև: Ինչ

⁸ Դեռ ժամանակին Գ.Ղափանցյանը իրավացիորեն արքեզի UR.SAG-ը մեկ նարամում էր որպես «Երկրորդ, հաջորդ» և գտնում, որ այս տերմինը նշել է Խուկվանայի ստորադաս կարգավիճակը խեթական արքայի հանդես (Կառանահ, 1948: 19. Գ.Ղափանցյանի մեկնաբանությունը ուշադրության է արժանի, քանի որ 1) UR.SAG «հերոս» մակրիդը խեթական տեքստերում կիրարկւմ է խեթական արքաների նկատմամբ, և տվյալ պարագայուն «շարքային հերոս» կարող էր նշանակել միայն Սուպահլուվիումայից ավելի ցածր կարգավիճակ ունեցող անձ:

⁹ Carruba, 1988: 69. Klengel, 1999: 155.

Վերաբերում է նրա՝ Հայասա գնալուն, ապա առավել հավանական բացատրությունը այն է, որ պայմանագրի կնքման պահին (ավելի սոույց՝ Խուկանային պայմանագիրը հանձնելու ժամանակ) Հայասայի ապագա արքան գտնվում էր խեթական մայրաքաղաք Խարթուսասում և դեռ նոր պետք է զնար՝ ստանձնելու իր պաշտոնը: Երկրորդ փաստարկը, կապված ազգեցի կնոջ հետ, նոյնպես չի վկայում Խուկանայի ազգի կական ծագման օգտին: Հավանաբար Հայասայի և Ազգի տոհմային ազնվականության միջև եղել է ամուսնության պրակտիկա: Խուկանային տրված հրահանգը՝ կին չվերցնել Ազգից, ինչպես նաև դստերը Վերադարձնել ոճն Մարիյասից (III-80¹⁰), հնարավոր է բացատրել այսպիսի: Սուպահյուլիումասը փորձում էր Հայասայում ապահովել խեթական արքայատոհմի զահածառանզման իրավունքը, քանի որ Խուկանայի որդին ազգեցի կնոջից, ինչպես նաև նրա դստեր և Մարիյասի ժառանգը կարող էին ապագայում իշխանության հավակնել¹¹: Այսինքն, Սուպահյուլիումասը ծգուում էր բացատրել Հայասայի գահին այլ օրինական թեկնածուի հայտնվելը:

Ինչպիսի¹⁰ հնարավորություններ են ընծերում սկզբնաղբյուրները քննարկվող խնդրի լուսաբանման համար: Կարո՞ղ ենք արդյոք այսօր պարզել գիտության մեջ վաղուց ի վեր բանավեճի առարկա այս խնդիրը: Այդ նպատակով ստորև կներկայացնենք Հայասան և Ազգին հիշատակող խեթական այն տեքստերի նյութերը, որոնք տեղեկություններ են պարունակում վերոհիշյալ

¹⁰ Այս անձնավորության կապը Պայմանագրի չորրորդ սյունակում որպես խեթական արքայի հետ պայմանագրի կնքած Մարիյասի հետ որևէ բարդության չի կարող հանդիպել: Եթե սա այն նոյն Մարիյասն է, ով մահապատճի էր Ենթարկվել Սուպահյուլումաս Ի-Ի հոր՝ Թուլիալիաս III-ի կողմից (տես ստորև՝ տեքստում), ապա այստեղ խսոքը կարող է Վերաբերել Մարիյասի տանը (այն է՝ արքունիքում) նրա կնոջ մանաւու մասին: Խեթական օրենքների 193-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնու մահից հետո Վերջինիս երայրը (երբոր մահիվան կամ ուղղակի չլինելու դեպքում՝ ամուսնու հայրը) պետք է նրան վերցներ որպես կին (տես Hoffner, 1997: 152):

¹¹ Ըստ Խեթական տեքությունում զահածառանզման վերաբերյալ գործող Տելեսինուի օրենքի (= CTH 19 [իրատ. Hoffmann, 1984: 40ff.]), արական սերի ժառանգի բացակայության պարագայումարք կարող էր դառնալ արքայի ավագ դստեր ամուսինը (հետևաբար նաև նրանց որդին):

ԴԿ II

38) ... ma-a-an DUMU.LUGAL-ma IBILA NU.GÁL nu ku-iš DUMU.MUNUS իա-an-te-ez-zi-iš, 39) nu-uš-ši-iš-ša-an լո'an-ti-ya-an-ta-an ap-pa-a-an-du nu LUGAL-uš a-pa-a-as ki-š[ə-ru] 38) «... իսկ եթե արքայան չկա, 39) նա ով առաջին դուստրն է, ապա նրա համար նրան թող որպես փեսա որդեգրեն, և նա արքա կղառնա»:

բաղաքական միավորների հարաբերակցության խնդրի վերաբերյալ:

Խեթական տեքստերի «ազգի-հայաստական շարքը» բավական ներկայանալի է, և մեր առջև դրված խնդրի ուսումնասիրնանը նպաստող նյութերը պարփակված են հետևյալ տեքստերում՝ ներկայացված ժամանակագրական հերթականությամբ.

- | | |
|-----------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------|
| 1) KBo XVI 45 ¹² (= CTH 832) | - մ.թ.ա. XV դար
(Տելեպինուս ²) |
| 2) KUB XXIII 72 ¹³ (= CTH 146) | - Արնուվանդաս I |
| 3) Maşat Höyük 96 ¹⁴ | - Արնուվանդաս I կամ
Թուդխալիյաս III |
| 4) KBo VI 28+ ¹⁵ (= CTH 88) | - Խաթթուսիլի III
(Թուդխալիյաս III-ի շրջանի
վերաբերյալ) |
| 5) KBo V 12+KBo V 3 ¹⁶
(= CTH 42 = Պայմանագիր՝
«Հայասայի ժողովուրդ և
Մարիյաս ») | - Թուդխալիյաս III |
| 6) KUB XIX 11 I ¹⁷
(= CTH 40 IID=Հատված 10) | - Թուդխալիյաս III |
| 7) KUB XIX 11 IV ¹⁸
(= CTH 40 IIE=Հատված 13) | - Թուդխալիյաս III |
| 8) KBo XIV 14 ¹⁹ | |

¹² Այս դեռևս չիրատարակված տեքստը կազմված է «ին խեթական» շրջանում (Košak, 2005 II: 172), այն է՝ KUB XXIII 72-ից ավելի վաղ փուլում։ Այստեղ հանդիպող *BEL*^{NA4}KIŠIB («պահեստապետ») տերմինը (Տելեպինուսի հայտնի տեքստում վկայված է Խեթական պետության քառարերի մի մեծ խում, որտեղ առկա էին այդպիսի հաստատություններ՝ *ÈMES*^{NA4}KIŠIB (Hoffmann, 1984: 40ff.) կառող է հուշել Խեթական Հին թագավորության արքա Տելեպինուսի կառավարման շրջանը (մ.թ.ա. XV-ր. սկիզբ՝ այսինքն՝ Պայմանագիր՝ ապստամբությունից մի քանի տասնամյակ առաջ։ Նշենք, սակայն, որ նախկինում այս տեքստը դրվում էր KUB XXIII 72-ի ժամանակակիցներում (Houwink ten Cate, 1970: 77):

¹³ St. Sayce, 1930, p. 1ff. (թաղուման). Gurney, 1948: 32ff. (թարգմ.). Թույան, 2001: 233-245). Kosyan, 2006: 72ff. (զիտ. տառադարձում, թարգմ. և նեկանար.):

¹⁴ Alp, 1991: 298ff.

¹⁵ Տեքստի մեջ հետաքրքրող հատվածը Forrer, 1926a: 35f.. Goetze, 1940: 21ff.. Cornelius, 1958: 237ff.:

¹⁶ Հրատ., Friedrich, 1930: 172ff.. Beckman, 1996: 33 (Երկրորդ՝ թարգմանաբար):

¹⁷ Սուսպիրուլիտմասի գործունեությանը նվիրված Մոլիսիլիս II-ի տեքստերից (Güterbock, 1956: 62f.):

¹⁸ Güterbock, 1956: 65f.

¹⁹ Güterbock, 1956: 114.

- (=CTH 40 V=Հատված 40)
- 9) KUB XXXIV 23 + KUB XL 10²⁰
(= CTH 40.III=Հատված 25)
- 10) KBo XIV 13²¹
(=CTH 40.V=Հատված 39)
- 11) Մուրսիլիս II-ի
«Տարեգրությունները»²² (CTH 61)
- 12) KUB XIV 4²³ (= CTH 4)
- 13) KBo XXVII 2, HT 84 և 904/z²⁴
+ KUB XXVI 39 (Պայմանագիր
Աննիյայի հետ)(CTH)
- 14) KUB XVIII 2²⁵ (= CTH 579)
- Թուղթսալիյաս III
- Սուպափլուզիումաս I
- Սուպափլուզիումաս I
- Մուրսիլիս II
- Մուրսիլիս II
- Մուրսիլիս II
- Մ.թ.ա.XIII դար

Վերոհիշյալ տեքստերը ներառում են շուրջ մեկարյա ժամանակահատված՝ մ.թ.ա. XV դարի վերջերից մինչև XIV դարի վերջը: Հատկանշական է, որ դրանց և Հայասային ու Ազգին առնչվող այլ տեքստերի խմբավորումը ժամանակագրական տեսանկյունից հետևյալ պատկերն է ներկայացնում: Ընդհուպ մինչև «Խորկանայի պայմանագիրը», Ազգի տերմինը իսպառ բացակայում է, Մուրսիլիս II-ի տեքստերում Ազգին և Հայասան հանդես են գալիս մեկընդեմք, իսկ այնուհետև արդեն Հայասան ընդհանրապես դադարում է հիշատակվել՝ իր տեղը զիջելով Ազգին²⁶: Ստորև ներկայացնենք, ընդհանուր գծերով, ուսումնասիրվող տարածաշրջանի «հայասական» փուլը՝ ըստ տեքստերի:

²⁰ Güterbock, 1956: 83f.

²¹ Güterbock, 1956: 113.

²² Հրատ., Götze, 1933 (ամրողական հրատարակությունը). Խաչարյան, 1971: 152ռ.Նաշատոյան, 1998: 69՛Ն. (հատվածական). Grelois, 1988: 17ff. (Վերջինը՝ «10 տարվա տարեգրությունները»):

²³ Տեքստի համապատասխան հատվածի գիտական տառադարձումը, բարգնանությունը տես Բոսյան, 2004բ: 199-201.

²⁴ Stein Carruba, 1988: 71f.

²⁵ Հրատարակություն՝ Klinger, 1998: 106f.

²⁶ Խարթոսիլիս III-ի և Թուղթսալիյաս IV-ի կառավարման շրջանում բազմաթիվ են Ազգին հիշատակող խեթական տեքստերը (այս ժամանակահատվածում Ազգին հիշատակող խեթական աղբյուրների հրատարակությունը կից մեկնաբանություններով տես մեր «Ազգին մ.թ.ա.XIII դարում» աշխատությունը [պատրաստ է հրատարակության]), իսկ Հայասան այլև որևէ կերպ չի հիշատակվում:

Հայասական փուլը.

1) KBo XVI 45 - «Պայմանագիր» Հայասայի հետ (?)

Այս երկրորդ գրությամբ բեկորային տեսքով պահպանված տեքստի բնույթը դժվար է պարզել: Այն պայմանագիր են անվանում տեքստում հիշատակվող որոշ արտահայտությունների հիման վրա, որոնք հանդիպում են նմանատիպ տեքստերում: Այս տեքստի կարևորությունը այն է, որ արդեն այս վաղ փուլում Հայասան սկսում է հանդես գալ որպես քաղաքական միավոր²⁷: KBo XVI 45-ի առկայությունը լուրջ կրկան է ընդուն մեր՝ նախկինում արտահայտած Ենթադրության առ այն, որ մ.թ.ա. XVդ. Վերջերին Հայասան ներևա ծևավորված չէր որպես ինքնուրույն քաղաքական միավոր: KUB XXIII 72-ը (տես հաջորդ տեքստը) հնարավոր է, սակայն քիչ հսկանական, համարելու terminus ante quem Հայասայի կազմակորնան (այստեղ կարելի է խոսել Վերակազմակորնան մասին) համար²⁸:

2) KUB XXIII 72 - «Պայմանագիր Առնուվանդաս I-ի և Վերինեփրատյան երկրների միջև»

Այս պայմանագրում, որի ետնախորքում ընկած էին Պայմանական ապստամբությունը և Առնուվանդաս I-ի շարունակական ջանքերը՝ արևելքում Վերահաստատելու իր սասանված ազդեցությունը²⁹, Հայասա կամ Ազգի տերմինները անվանապես

²⁷ Թույան, 2001: 240-242. Kosyan, 2006: 91.

²⁸ Այնուամենայնիվ, Հայասայի անվանական հիշատակության քացակայությունը հնարավոր է մեկնաբանել որպես Առնուվանդաս I-ի նախորդ թույժակիաս II-ի արևելյան արշավանքների հետևանք տարածաշրջանի քաղաքական միավորների վենսագրություններյան վրա. Իեն այս արշավանքի հետևանքով էր, որ Հայասայի հարևան Խոնվան Ավավեց խեթերի կողմից (այդ մասին, հաճապատասխան աղյուրագիտական հղումներով և մասնագիտական գրականության հղումներով տես Carruba, 1977: 162f.. Bryce, 1998: 138f.. Թույան, 2001: 167-171. Kosyan, 2006: 72f.): Որ Թույժակիասի արշավանքները չեն շրջանցել նաև Հայասան, ակնարկում է տոյն արքայի՝ պայմանագրային հիմունքներով արևելյան շրջաններից գրրահավաքի կազմակերպմանը նվիրված KUB XXVI 62 տեքստը (տես Թույան, 2004a: 472-476): Այստեղ խոսվում հայասական Արխիտա (Տերքստում՝ Erhita), ինչպես նաև Տեմիյա (Temiya) և Լիտուա (Litta) քաղաքներից հսկացագրված գինվորների մասին: Արանցից Տեմիյան հանդորվել է խեթական այլ տեքստերից հայտնի Տեմիյա բնակավարի, ինչ կիսուան՝ հայկ. կրտիհմ (Հային-Կարահիսարի մոտ) հետ (տես Թույան, 2004a: 97, 69-70):

²⁹ Պայմանական ապստամբության առնվոր իրադարձությունների և դրա հետ կապված Վերոհիշյալ քաղաքների մասին տես Թույան, 2000: 165-174. Թույան, 2004: 114-116. Kosyan, 2006: 91.

վկայված չեն: Սակայն Պախսուվայի միջադեպի առնչությամբ հիշատակվում են երեք քաղաքներ, որոնցից երկուսը, արդեն Թուղթսալիյաս III-ի օրոք, Ենթադրաբար, պիտի գտնվեին Հայասայի կամ Ազգի կազմում: Դրանք են՝ Դուգգաման, որի կառավարից Ախսին ապագայում Պախսուվայի լոյալության երաշխավորներից էր և Արևիտան՝ Պախսուվայի դաշնակիցը: Պախսուվայի և վերինեփրատայան երկրների հետ Առնուվանդաս I-ի կնքած պայմանագրում Դուգգամայի կառավարչի վրա դրված պարտավորությունը կարող է վկայել այն մասին, որ Հայասայի կամ Ազգի առնվազն որոշ մասը նախորդող շրջանում արդեն պիտի կապված լիներ Խաթթի հետ, թերևս, Թուղթսալիյաս II-ի արևելյան արշավանքի հետևանքով:

Սույն տեքստը առանձնակի կարևոր տեղեկություն է պահպանել Հայասայի և Ազգի հնարավոր տեղադրության համար այն առումով, որ այստեղ նշվում է Պախսուվայի և նրան օգնության եկած դաշնակիցների դեմ խեթական գործի հարթանակը Կումմախայի մոտ:

3) Maşat Höyük 96 = Տապիզգա քաղաք առաքված՝ խեթական արքայի նամակը

Այս նամակը առաքված է Տապիզգա քաղաքում (=ժամանակ. Մաշատ հյոյուք Զիլեից շուրջ 30 կմ հարավ-արևմուտք)³⁰ գտնվող ինչ-որ բարձրաստիճան պաշտոնյայի, որտեղ խեթական արքան Վերջինիս հանձնարարում է զրածղկատներ հավաքագրել Վերին Երկրում (թերևս, նաև այլ շրջաններում), որից հետո նա պիտի գնար Հայասա: Տեքստի շարադրանքից կարելի է ենթադրել, որ խոսքը Հայասայի դեմ կազմակերպվելիք արշավանքի նասին է³¹:

Նամակի մոտավոր թվագրնան համար առաջարկված Թուղթսալիյաս III-ի կառավարման սկզբնական շրջանը, այն է՝ մինչև «Ծրջանածկ Արքիությունը» հիշատակվող Խոսուվայի կողմից Եփրատի աջափնյակի նվազումը, թվում է, բավական լավ է հիմնավորված: Բանն այն է, որ նամակում Խոսուվան նույնական հիշատակվում է որպես Երկիր, որտեղից նախատեսվում էր գործ հավաքել: Խեթահպատակ Թեգարամայի վրա Խոսուվայի հարձակումից հետո այդպիսի հանձնարարությունը անհիմաստ կլիներ: Հարկ է նշել, որ Խոսուվան կրկին ամցնում է խեթերի տիրապետության տակ միայն Սուպահլուլիումաս I-ի կառավարման

³⁰ Alp, 1980: 58f.

³¹ Steu Houwink, 1998: 52.

կեսերին՝ սիրիական (միտաննական) առաջին պատերազմի նախօրեին:

Եթե նամակի ետնախորքը իսկապես Հայասայի դեմ կազմակերպվելիք արշավանքն է, ապա, հաշվի առնելով գորահավաքին մասնակցող երկրների և քաղաքների լայն աշխարհագրությունը, կարելի է Ենթադրել, որ այն արդեն դրա նախօրեին ծևավորված և զգալի ուժ ներկայացնող քաղաքական միավոր էր:

4) KBo VI 28+ = «Ծրջանաձև ներխուժմամ»

Այս հանրահայտ տեքստի տեղեկությունները, ըստ համընդհանուր տեսակետի, Վերաբերում են Թուրիխայիյաս III-ի կառավարման սկզբնական շրջանին³²: Ըստ դրա՝ Խաթթի Վրա հարձակվողների թվում էր նաև Ազգին, որը նվաճել էր Վերին Երկիրը և սահման դարձրել Սամուխա քաղաքը: Անկասկած, այս տեքստի և Մաշատ հյոյութի նամակի հրադարձությունները կարող են տեղափորվել մինչույն քաղաքական գործընթացում, այն է՝ Խեթական տերության գերիշխանության անկում Փոքր Ասիայի արևելքում և Ազգին (տվյալ պարագայում՝ Հայասայի) ռազմական ակտիվությունը տարածաշրջանում³³:

Հայասայի հարձակումը և Սամուխա քաղաքը սահման դարձնելը, թերևս, դժվար է մեկնաբանել բառացիորեն: Սուպահյուկիուման I-ի գործունեության մասին պատմող՝ Մորիսին II-ի տեքստում առկա է մի մանրամասն, որ կարող է որոշակիորեն պարզել Ազգին հարձակման դրդապատճառները (տե՛ս հաջորդ տեքստը):

Ինչ Վերաբերում է «Ծրջանաձև ներխուժման» շրջանում Ազգին կողմից խեթական Վերին Երկրի Վրա կազմակերպված արշավանքին, ապա այսուել առկա է ուշ շրջանի քաղաքական իրողությունների ազդեցությունը: Սույն տեքստը կազմված է մ.թ.ա. XIII դ. կեսերին, Երր Հայասան որպես այդպիսին վաղուց արդեն դուրս էր Եկել խեթական արքունական գրագրության հետաքրքրությունների շրջանակներից: Այդ է պատճառը, որ

³² Առաջարկել է Ա.Գյորգեն (Goetze, 1940: 24) և ընդունվում է բոլոր մասնագետների կողմից:

³³ Որ «Ծրջանաձև ներխուժմամ» իրականացրել էր Հայասան, այլ ոչ Ազգին, նկատել էր դեռ Է.Ֆոները (1931: 4f.), որի կարծիքով Մորիսին II-ի արշավանքների շրջանում Հայասան և Ազգին մինչույն քաղաքական միավորն էին (գրեթե նույն տեսակետը՝ Garstang and Gurney, 1959: 38):

խեթական գրիչը խեթերի հակառակորդ է դիտում միևնույն տարածքում գործող Ազգին³⁴:

5) KBו V 12+KBו V 3 = Պայմանագիր՝ «Մարիյաս և Հայասայի ժողովուրդ»

Պայմանագրի տեքստը կցված է Խուկկանայի պայմանագրին՝ կազմելով այս հավաքական այյուսակի IV սյունակը: Տեքստի սկիզբը կորսված է և պահպանվել է 60 տող, հասնելով մինչև պայմանագրի ավարտական մասը: Հայասական կողմը մի քանի անգամ ներկայացված է այսպես՝ «հայասացիներ և Սարիյաս», որ թույլ է տախու Ենթադրելու արքայական իշխանության բացակայություն: Հավանաբար Մարիյասը ընդամենը մեկն էր հայասական տոհմային ավագանու ներկայացուցիչներից, ով լիազորված էր բանակցելու խեթական արքայի հետ: Սա Խեթական պետության կենքած ոչ հավասարազոր պայմանագրերի տիպիկ օրինակ է, որտեղ լոյալության տարրեր որսկորումներ պարունակող պահանջների դիմաց խեթական արքան պարտավորվում է պաշտպանել իր դաշնակցին:

6) Հատված 10

Այստեղ նկարագրվում է խեթական գործի արշավանքը հայասացիների դեմ, որ գլխավորում էր արքայազն Սուտպահիուլիումազը՝ հիվանդ հոր փոխարեն: Խեթերը արշավանքի ընթացքում երկու անգամ փորձել են հանդիպել հայասացիներին, սակայն ապարոյուն: Փոխարենը նրանք բախվել են կասկական ցեղերի միացյալ գործի:

Տեքստում կորսված է այն երկրի անվանումը, որտեղ ընթանում էին ռազմական գործողությունները: Սակայն միևնույն տարածքում կասկերի խոշոր գորամիավորման առկայությունը ստիպում է Ենթադրել, որ դա չէր կարող Հայասան լինել, այլ հենց Վերին Երկիրը, որը Ենթարկվել էր հայասացիների և կասկերի ասպատակությանը: Հայասայի (նաև նրանց հարևան կասկերի)

³⁴ Այնուամենայնիվ, որոշ հիմքեր կան Ենթադրելու, որ արդեն Թուրիսալիյաս III-ի շրջանում «Հայասան» և «Ազգին» նույնացվում էին: Սակայն դրանց նույնացման մասին Ենթադրությունը, թերևս, վաղ է, քանի որ վերջին տեքստը զալիս է շատ ուշ շրջանից Խաթրուսիլիս III-ից, երբ «Հայասա» տերմինը այլևս չէր կիրավում. Խաթրուսիլիս III-ի և Թուրիսալիյաս IV-ի տեքստերը հիշատակում են միան «Ազգին» (IBoT I 32, KUB XXXVIII 6, KUB XXVI 12, KUB XLII 69 [Siegelova, 1986: 455ff.], Kuşaklı, Nr.14 [Wilhelm, 1995: 25ff.] և այլն):

համար Վերին Երկիրը կարող էր ծառայել որպես ավարառուական արշավանքների օբյեկտ, այլ ոչ տարածքային զավթնան առարկա:

Այս տեքստը նախորդ Երկուսի հետ նույնպես պիտի կցվի միևնույն իրադարձությունների շղթային, սակայն ժամանակագրորեն ավելի մոտ Սուպահիուլիումասի կողմից խեթական տարածքների վերանվաճման ժամանակներին:

7) Հատված 13

Այստեղ նկարագրովում է Թուղթսալիյաս III-ի և Սուպահիուլիումափի համատեղ արշավանքը դեպի Հայասա, որը տեղի էր ունեցել կասկական Կատխարիյա և Գազզապա քաղաքների դեմ տարած հաղթանակից հետո: Դժբախտաբար, արշավանքի նկարագրությունը ընդհատվում է այն պահին, երբ Հայասայի արքա Կարաննիսը (LUGAL KUR ՄՐՈՒ Հայաšա) դուրս է գալիս Ճակատամարտի Կումմախա քաղաքի մոտ:

Սա Թուղթսալիյափի կառավարման շրջանում Հայասայի դեմ մղված պատերազմների ընթացքում միակ դեպքն է, երբ խեթերը ռազմական գործողությունները վարում էին հակառակորդի տարածքում: Հավանաբար, հենց այս արշավանքի հետևանքով Հայասան կրկին պիտի ընկներ Խաթրիի գերիշխանության տակ:

Այս արշավանքը պիտի թվագրվի Թուղթսալիյափի Վերջին տարիներով, քանի որ Վերոհիշյալ տեքստից հետո նա հիշատակվում է միայն KBo XIV 3-ում, և ենթադրվում է, որ խեթական արքան շուտով մահացած պիտի լիներ³⁵:

Կարաննիսի (հնարավոր է նաև Լաննիս ընթերցումը) հիշատակությունը որպես Հայասայի արքա Թուղթսալիյաս III-ի կառավարման վերջին շրջանում, այստեղ ավելի վաղ Մարիյասի (տես՝ Վերը՝ տեքստ 5) և Խուկկանայի պայմանագրում Խաթրուսասում ոմն Մարիյասի սպանության հիշատակության պայմաններում, կարող է թույլ տալ առաջարկելու հետևյալ մեկնաբանությունը:

Մարիյասի սպանությունից հետո հայասացիները ընդվզել էին խեթական տիրապետության դեմ և Վերոհիշյալ Կարաննիսի գլխավորությամբ ռազմական գործողություններ սկսել Խաթրիի դեմ, որը պատճառ էր հանդիսացել խեթերի արշավանքի համար և ավարտվել Կումմախայի ճակատամարտով: Այսպիսով, Կա-

³⁵ Bryce, 1998: 163:

³⁶ Հայասական արշավանքից հետո Թուղթսալիյասը կրկին հիվանդացել էր («Հատված 14», 8՛, սակայն շուտով ապաթնվել՝ նոյն տեղում, 22').

րաննիսի կառավարումը Հայասայում կարելի է դիտել որպես
կարճաժամկետ իրադարձություն:

8) Հատված 40

Այս խիստ վնասված բեկորը, ըստ <.Գ.Գյուտերբուկի, կարող է
առնչվել միևնույն իրադարձությանը, ինչը հիշատակվում է նախորդ
տեքստում (5)³⁷: Ընթերնելի հատվածները («Հայասայի [թշնամուն]
նա հաղթեց», «նա (թշնամին - Ա.Բ.) բազմությամբ [նահացավ]»,
«Հայասա Երկիրը», «դեպի Վերին Երկիր») վկայում են, թերևս,
մինչև Կուննախայի ճակատանարտն ընկած շրջանի մասին:

9) Հատված 25

Նկարագրվում է Խոտվա փախսած խեթական բնակչության
վերադարձնելը իրենց բնակավայրերը: Այնուհետև հիշատակվում է
Շուլխսապա քաղաքի դեմ արշավանքը, որի ընթացքում վերջինս
ավերվում և հրդեհվում է: Այստեղ հիշատակվում է փա-
խստականների զնալը Հայասա և արշավանքը դեպի այդ Երկիր.
Նշվում է, որ այն տեղի է ունեցել ծմբանը: Արշավանքն ավարտվում
է փախստականներին և նրանց գործը վերադարձնելով:

Այս իրադարձությունը, հաշվի առնելով բեկորի դիրքը
«Սուպահիլումասի գործունեությանը» նվիրված տեքստերում,
տեղի է ունեցել Սուպահիլումասի փրկարան պատերազմից քիչ
առաջ³⁸: Տեքստից դժվար է միանշանակ որոշել ինչպես Շուլխ-
սապայի տեղադրությունը (Խոտվայում, թե Հայասայում), այնպես էլ
Հայասա փախսածների և Խոտվայում հաստատված խեթական
բնակչության նոյնությունը: Այստեղ կարևոր այն է, որ տվյալ
պահին Հայասան մի Երկիր էր, որտեղ կարող էր ապաստանել
Խաթիի բնակչությունը. բնականաբար, փախստականների
համար այն համարվում էր Խաթիի գերիշխանությունից դուրս
ընկած տարածք:

³⁷ Güterbock, 1956: 49:

³⁸ Սուպահիլումասի միտանական արշավանքի նախօրեին էր, ըստ
Սուպահիլումասի և Միտանիի արքա Շատտիվազայի միջև կնքված
պայմանագրի (Weidner, 1923: 2ff., Beckman, 1996: 38ff.), խեթական արքան մտել
Խոտվա: Մեր Հատվածին հաջորդում է խեթական արքայի ուղերձը Միտանիի
արքա Տուշրատային (Հատված 26):

10) Հատված 39

Այս տեքստի տեղը Սուպահլուկիումաս 1-ի գործունեության ընթացքում, հետևաբար, նաև ժամանակագրությունը, դեռևս հստակ չէ: Հ.Գ.Գյուտերբեր կը առաջարկում էր այն թվագրեն արքայի կառավարման ուշ շրջանով: Տեքստի նախորդ՝ Երկրորդ սյունակում նկարագրվում է Սուպահլուկիումասի արշավանքը Միտանիի դեմ, իսկ երրորդում՝ Հայասայի դեմ պատերազմը: Բնական է ենթադրել, որ վերջինս պիտի ընկներ նոյն ժամանակահատվածի մեջ (սիրիական առաջին պատերազմի կամ նույնիսկ Երկրորդի շրջանը):

Այստեղ՝ վնասված Ենթատեքստում, հիշատակվում են՝ «[...պակովա քաղաքը]», «արքայի որդին», «Հայասա Երկիրը» և, ըստ Երևույթին, Հայասայից բերված ռազմավարը:

Տեքստի թվագրման, նաև Հայասայի և Խեթական տերության փոխհարաբերությունների մեկնաբանման աղումով կարևոր տեղեկություն է պահպանել Սուպահլուկիումասի նամակը Եգիպտական փարավոն Թութանախանի հաջորդ Ելեխն³⁹, որը թվագրվում է արքայի կառավարման վերջին տարիներով՝ մոտ. մ.թ.ա. 1324թ.⁴⁰: Այս արքայի պատասխանն է Ելեխ նամակին, որտեղ վերջինս փորձում է Սուպահլուկիումասին համոզել Եգիպտոսի ձանապարհին խեթական արքայազն Ցաննանցայի սպանությանը իր աննամակից լինելու մեջ: Այստեղ Սուպահլուկիումասը թվարկում է իր նվաճումները Փոքր Ասիայում, Հայասայում, Ալգիում և Սիրիայում (Միտանի, Կարգամիս):

Հայասայի հիշատակումը արքայի մահվանից մեկ-երկու տարի առաջ լրացուցիչ հիմք է տալիս Ենթադրելու, որ նրա արշավանքը Հայասա (տես վերը՝ 7) պիտի հաջողությամբ ավարտված լիներ:

* * *

Նախքան Հայասա-Ազգի խնդրին առնչվող տեքստերի հաջորդ խմբին անցնելը, ներկայացնենք Վերը բերված տեքստերից բխող Եգիպտակացությունները:

1. Խեթական աղբյուրներին Հայասան հայտնի էր առնվազն մ.թ.ա. XVII. առաջին կեսից, հնարավոր է, առնվազն խեթական

³⁹ 38. KUB XIX 20. Իրատ: Forrer, 1926a: 28ff.. Hagenbuchner, 1989, Nr.208: 304ff.. տեքստի վերջին իրատակությունը կցաբեկոր KBo XII 23-ի հետ միասին den Hout, 1994: 60ff.

⁴⁰ den Hout, 1994: 85ff.

արքա Տելեպինուսի ժամանակներից: Հատկապես Թուղիսալիյաս II-ի (մ.թ.ա. XVդ. Երկրուն կես) ակտիվ ռազմական գործողությունների հետևանքով Հայասան հայտնվում է խեթական գերիշխանության տակ, մի վիճակ, որը ժամանակավորապես տեղի է տալիս խեթա-հայասական տևական ռազմական բախումների փուլում (Թուղիսալիյաս III-ի և Սուպափլուղիումասի համատեղ կառավարման շրջանը):

2. Թերևս Կուսմախայի ձակասամարտից հետո է միայն վերականգնվում խեթական գերիշխանությունը, որին պետք է հետևեր խեթա-հայասական պայմանագրի կնքումը («Պայմանագիր Հայսայի ժողովուրդ և Մարդիաս»): Թե հեզ ետնախորդի վրա Մարդիասը մահապատճի ենթարկեց խեթական արքայի կողմից, պարզ չէ: «Խորկանայի պայմանագրի» մի հատված վկայում է այն մասին, որ դրան նախորդել էին ռազմական գործողություններ, որի ընթացքում հայսացիք ռազմավար էին ծեռք բերել, և պայմանագրի կնքման ալահին խեթահպատակ բնակչության ինչ-որ գանգված դեռևս գտնվում էր Հայսայում:

3. «Խորկանայի պայմանագրի» կնքման ժամանակահատվածի բվագրման խնդիրը պարզաբանման կարիք ունի: Դատելով պայմանագրի մի հատվածից⁴¹, այս կնքել է Թուղիսալիյաս III-ի և Սուպափլուղիումասի համատեղ կառավարման շրջանում: Այն ակնհայտորեն ավելի ուշ է, քան Մարդիասի հետ կնքված պայմանագիրը (տեքստ 5) և ավելի վաղ, քան Սուպափլուղիումասի միանձնյա կառավարմանը Վերաբերող տեքստերը («Հատվածներ 25,39»): Դա նշանակում է, որ պայմանագիրը պետք է կնքված լիներ Մարդիասի սպանությունից հետո, որը Խորկանայի փեսան էր (դստեր ամուսինը): Այսինքն՝ «Հատվածներ 25,39»-ում հիշատակվող իրադարձությունները, մասնավորապես Խորվայի տարածքից Հայասա տեղի ունեցած արշավանքի ժամանակ Խորկանան արդեն Հայսայի արքան չէր կամ դրժել էր խեթական արքայի նկատմամբ իր Վերցրած պարտավորությունները: Ամեն դեպքում KUB XVIII 2 գուշակային տեքստի առկայությունը կարծես ակնարկում է Խորկանայի գահագրկումը Հայսայում, սակայն ոչ խեթական միջնորդությամբ: Հայսայում սեփական ուժերով Խորկանայի գահագրկման վկայություն պետք է դիտել նաև

⁴¹ ԴԿ I: (38) ... nu-ut-la ka-a-ša ke-e ud-da-a-ar ŠA-PAL NI-Š DINGIR^{LIM} (39) te-el-իս-սո ու ka-a-ša ke-e-da-ni ud-da-ni-i LI-IM DINGIR^{MES} (40) tu-li-ya լal-zí-ú-en (38) «Stu, թեզ (համար) այս բանը երդման տակ (39) մենք դուցինք և այս գործի համար 1000 աստվածների (40) խորհրդի կամքեցինք»:

Հայասայի (արդեն Ազգի, տե՛ս ստորև) արքա Աննիյայի և Մուլսիլիս II-ի միջև կնքված պայմանագրում որպես Աննիյայի նախնի Մարիյասի հիշատակությունը (տե՛ս ստորև՝ համար 13 տեքստում); Նշանակում է, «Հայասայում ի դեմս Աննիյայի, շարունակվել էր տեղական արքայատոհմի ժառանգական իշխանությունը»:

«Խորկանայի պայմանագրի» թվագրումը, այսպիսով, ըստ «Ստորին ժամանակագրության»⁴², պետք է տեղադրել մ.թ.ա. 1243թ. մի քանի տարի ավելի վաղ շրջանով, քանի որ Սուպահլուլիումա Լ-ի միանձնյա կառավարումը տեղի է ունեցել մ.թ.ա. 1243-1322/18թթ.: Եթե խեթերի սիրիական պատերազմները ընդհանուր արճամբ տևել են վեց տարի և ավարտվել մ.թ.ա. 1322թ.⁴³, ապա այս տարիներին ավելացնելով «Հատվածներ 25, 29»-ը, երբ Հայասան կրկին սկսում է հակամարտությունը խեթերի հետ (թերևս, արդեն առանց Խորկանայի), պետք է ենթադրել, որ Խորկանան կարող էր կառավարել Հայասայում թերևս մինչև 1330-ական թվականների կեսերը, գուցե և ավելի քիչ:

Հայասայում Խորկանայի կառավարման ժամանակաշրջանի ծցգրտման հետ կապված կարևոր խնդիր է նրա և պայմանագրում (նաև դրան կցված՝ Հայասայի հետ ավելի վաղ պայմանագիրը) Մարիյասի հարաբերության հարցը: Մասնագիտական գրականության մեջ այս վաղ Մարիյասի և Խորկանայի պայմանագրում որպես նրա փեսա հիշատակվող Մարիյասի նույնության հարցում առկա թերահավատությունը լուրջ հիմքեր չունի: Խաթթուսասում մահապատճի Ենթարկված Մարիյասը՝ Թուղթսալիյաս III-ի ժամանակակիցն էր (հնարավոր է, միանձնյա կառավարման շրջանի), իսկ Խորկանայի պայմանագրի Մարիյասը՝ Խորկանայի դստեր ամուսինը: Պայմանագրում որևէ խոր չկա այն մասին, որ Խորկանայի փեսան տվյալ պահին կենդանի էր: Այստեղ միայն նշվում է դստերը Մարիյասի տանից վերադարձնելու և նրա (այսինքն՝ Մարիյասի) եղբորը հանձնելու մասին⁴⁴: Այսինքն, «ավագ» Մարիյասը և «կրտսեր» Մարիյասը միմյանց

⁴² Stein Wilhelm und Boese, 1989: 83f.

⁴³ Սիրտաննական պատերազմի և ընդհանրապես Սուպահլուլիումասի կառավարման ժամանակագրության համար տես Krauss, 1978: 54ff.. Wilhelm und Boese, 1989: 90f.. Bryce, 1989: 19ff. (նաև հետազոտությունները՝ Götze, 1930: 115ff., այլ ժամանակագրության համար):

⁴⁴ Խորկանայի դստերը Մարիյասի եղբորը հանձնելու մասին խեթական արքայի պահանջի քաղաքական ետնախորը քավական դժվար է ընկալել: Այսուամենայնիվ, դա միանգամայն համապատասխանում է ամուսնական հարցերը կարգավորող խեթական օրենքին, ինչի մասին տես վերը՝ ծանոթ.9:

ժամանակագրութեն շատ մոտ են⁴⁵: Նմանապես հարկ չկա Մարիյաս անունը մեկնաբանել որպես հասարակ բառ, այն հաճարելով հայասական արքաների տիտղոս «Երիտասարդ» (սոցիալական որոշակի խմբի ներկայացուցիչ) նշանակության⁴⁶: Մարիյասի անունը պարունակող բոլոր տեքստերում վերջինս հանդես է զայիս որպես որոշակի կարգավիճակ ունեցող իրական անձ (հատկապես համար 5 և 12 տեքստերում):

4. Խուկվանայի նշանակումը որպես Հայասայի արքա և նրան խեթական արքայադաստեր կնության տալը պետք է նշանակեր կտրուկ փոխոխություն խեթա-հայասական հարաբերություններում, որոնք արտահայտվեցին Հայասայում կատարված իշխանակոխությամբ: Թուղթալիյաս III-ի կողմից Հայասայի օրինական արքայի մահապատիճը և նրա փոխարեն հայասական ազնվականներից խեթամետ Խուկվանայի նշանակումը Հայասայում, Հայասայի ընդգծված հակախեթական դիրքորոշումը երկու երկրների նախորդ ողջ պատմության ընթացքում, խեթական դրածու Խուկվանայի և հայասական տոհմային ազնվականության միջև կարող էին լարված փոխհարաբերություններ առաջ բերել: Թե որքան ժամանակ կարող էր Խուկվանան կառավարել Հայասայում և արոյք այն բարենպա՞ստ էր Խեթական տերության համար, պարզ չէ: Համենայնդեպս, «Հատվածներ 25, 39»-ում հիշատակվող արշավանքները դեպի այս երկիր, հնարավոր է, լավագույն վկայությունն են այստեղ տեղի ունեցած՝ խեթերի հանար անցանկայի զարգացումների: Սուպահիլությունափառ սիրիական պատերազմների ընթացքում խեթերը դժվար թե հնարավորություն ունենային լրջորեն զբաղվելու Հայասայով, իսկ պատերազմի ավարտից քիչ անց արքան մահացավ: Ինչպես վկայում են առյուրները, նրա հաջորդ Առնուվանդաս II-ի հազիվ մեկանյա կառավարումից հետո խեթա-հայասական հարաբերությունները ոչ միայն կրկին սրվում են, այլև հայասական տարածաշրջանում հայտնվում են նոր իրողություններ, ինչի մասին՝ ստորև:

Այսպիսով, հնարավոր ենք հանարում առաջարկել Թուղթալիյաս III – Սուպահիլությունա և ժամանակահատվածի՝ Հայասային առնչվող իրադարձությունների հետևյալ հաջորդականությունը.

- Պայմանագիր Հայասայի հետ (Մարիյա)

- Մարիյասի սպանությունը Խաթթուսասում

⁴⁵ Տես, օրինակ, Bryce, 1989: 27.

⁴⁶ Այդպես է առաջարկված Վ. Ի. Վանոսկի կողմից (Иванов, 1979: 101 сл.).

- * *
- Կարաննիսը՝ Հայասայի արքա, ապստամբություն խեթերի դեմ, խեթերի արշավանքը և Կումճախայի Ճակատամարտը
 - Խուկկանայի գահակալումը Հայասայում
 - Խուկկանայի գահագրկումը (կամ պայմանագրի դրժումը)
 - Խեթական արշավանքները Հայասա

Անհամժեշտ է նշել, որ իրադարձությունների վերոհիշյալ շղթան կարող էր տևել համեմատաբար ոչ այնքան երկար (մոտավորապես մ.թ.ա. XIV դ. կեսերից մինչև 1330-ական թվականները):

11) Մոլոսիլս II-ի «Տարեգրությունները». «ազգիական փուլի սկիզբը»

Մոլոսիլսի «Տարեգրություններում» ներկայացված են արքայի կառավարման 7-11-րդ տարիների ընթացքում Ազգիի և Հայասայի հետ ունեցած շարունակական ռազմական բախումները, որոնց պատճառը/սրիթը Մոլոսիլսի հոր՝ սիրիական Ճակատում Սիրտաննիի դեմ պատերազմի ժամանակ ազգեցիների կողմից խեթակառատակ տարածքների ասպատակությունն էր: Ընդ որում Ազգիի արքա Աննիյային ուղղված այս մեղադրանքին նախորդել էր կասկական Տիրիյայի արքա Պիխսունիյայի դեմ մինույն մկանառումներից դրվագ պատերազմ: Մոլոսիլսի արշավանքների ընթացքում տեղի ունեցած իրադարձություններում խեթերի հակառակորդների իսկության խնդիրը կարևոր նշանակություն ունի:

Յոթերորդ տարի. «10 տարվա տարեգրություններում» որպես խեթական տարածքն ասպատակած կողմ հիշատակվում է Ազգին, որի արքա Աննիյային Մոլոսիլսը դիմում է նամակով, ապա «Ընդարձակ տարեգրություններում» Ազգիի փոխարեն հիշատակվում է Հայասան, որի արշավանքի ժամանակ ռազմագերիներ և անասուններ են տարվել Հայասա (**KUB XIV 17 = A/2BoTU 56 = B Հակառակ կողմ 2-4**): Սակայն տարօրինակ կերպով տեքստում անմիջապես հետևում են Ազգիի «կառավարիչ» Աննիյային հղված նամակը և դրա պատասխանը, որտեղ վերջինս մերժում է ռազմավարը վերադարձնել: Դրան ի պատճառ՝ Մոլոսիլսը հարձակվում և գրավում է Ազգիի սահմանամերձ Ուրա ամրոցը:

Առաջին հայացքից վերոհիշյալ վկայությունները կարող են ընկառվել որպես հիմք Ազգիի և Հայասայի նոյնականության օգտին, սակայն այս տպավորությունը խաբուսիկ է: Երկու դեպքում էլ խեթերը հարաբերվում են Ազգիի հետ ի դեմս նրա

արքայի/կառավարչի (LUGAL «արքա» և EN «տեր»): Սա կարող է նշանակել միայն, որ Ազգի արքան տվյալ պահին Հայասայի նկատմամբ ինչ-որ գերիշխանություն է ունեցել և խեթական արքայի պատկերացնամբ կարող էր ստիպել վերջիններիս վերադարձնել ռազմավարը:

Ուժերորդ տարի. Ուրայի գրավումից հետո՝ հաջորդ տարի, Մուրսիլիսը կրկին դիմում է հայասցիներին վերադարձնել ռազմավարը, որին ի պատասխան վերջիններս կարծես հավաստիացնում են, որ կրավարարեն նրա պահանջը (2ԲօՏՍ 56 ՀԿ 1V-12. տեքստը այստեղ խիստ վնասված է և ավելին եզրակացնել հնարավոր չէ):

Իներորդ տարի. Այստեղ կրկին իշխատավկում են Աննիյայի հետ բանակցությունները, քանի որ ռազմավարը այդպես էլ չէր վերադարձվել: Հայասան հանդես է զալիս որպես մի տարածք, որը ներկայացված չէր որևէ մեկի կողմնց: Միջադեպի հարթան համար կրկին բանակցություններն ընթանում են Մուրսիլիսի և Աննիյայի միջև, որոնք այդպես էլ ընդհանուր հայտարարի չեն զալիս նախ Պալա երկրում (հյուսիս-արևմտյան Փոքր Ասիա) ծագած բարդությունների, այնուհետև՝ Մուրսիլիսի եղբայր Պիյասիլիի հանկարծամահ լինելու պատճառով: Ավելին, Վերին երկրում (Հայիսի և Եփրատի միջև ընկած ընդարձակ շրջանը) հայասցիները շարունակում են իրենց ասպատակությունները, ինչի մասին արքային տեղեկացնում է այստեղ տեղակայված խեթական զորքի հրամանատար Նուվանցան (ՔՅօ 1V 4 = 2ԲօՏՍ 58B Դիմային կողմ 16-40): Մուրսիլիսը Նուվանցային օգնության է ուղարկում արքայազն Նանացիտիին զորքով, քանի որ ինքը ստիպված էր գրավվել հյուսիսարևմտյան ավելի կարևոր զորժերով (ասորեստանյան զորքի արշավանքը դեպի Կարգամի): Մինչև արքայի ժամանելը Ազգի-հայասկան բախտումների բատերաբեն, վնասված ժերատեքստում իշխատակում են Նուվանցայի հաղթանակը հայասկան զորքի նկատմամբ (10,000 հետևակային և 700 նարտակառք) և ռազմական զորժողությունները Սալիսի լեռան շրջանում⁴⁷:

Տասներորդ և տասնմեկերորդ տարիներ. Ազգի դեմ վճռական զորժողությունները տեղի ունեցան Մուրսիլիսի կառավարման տարրում: Կենտրոնացնելով զորքը նկատակա քաղաքում՝ արքան շարժվեց դեպի Ազգի: Թե որքան ժամանակ կարող էր անցնել

⁴⁷ Սալիսի լեռը առաջարկվել է նոյնանել ժաման. Ոեֆահիե հետ՝ Երզնկայից հյուսիս-արևմուտք (ASVOA 4.3, թար.XVI):

նախքան խեթական գործի՝ «ծովի մեջ գտնվող» Արիասա քաղաք հասնելը, պարզ է, քանի որ տեքստում 11 տող իսպառ ոչնչացված է: Քաղաքի գրավումից հետո՝ հաջորդ օրը, խեթերը գրավում են նաև Դուզզամա քաղաքը: Դրան հետևում են բնակչության փախուստը դեպի դժվարամատչելի լեռնային շրջաններ և երկրի «ավագների» գալը Մուրսիլիսի մոտ: Վերջիններս խնդրում են նրան խնայել Երկիրը: Մարսով ավարտվում են այդ տարվա ռազմական գործողությունները և շարունակվում հաջորդ զարնանը: Սակայն գործը չի հասնում պատերազմի, քանի որ ազգեցինները Ազգի Խալիճանա քաղաքի կառավարիչ Մուտսիսի հետ միասին ընդունած են զայիս արքային և Վերադարձնում նախկինում Խաթրից վերցված ռազմակարգ, հայտնելով միաժամանակ իրենց հպատակությունը:

Ի մի բերելով Մուրսիլիսի ազգի-հյայսական քառամյա փոխհարաբերություններն արտացոլող տեղեկությունները՝ կարենի է եղուակացնել հետևյալը: Հյայսան պատեղ հանդես է գալիս լոկ որպես մի տարածք, որի հետ խեթական արքան կարծես հարաբերում էր Ազգի արքա Աննիյայի միջոցով: Հյայսայի՝ որպես առանձին վարչական միավոր («Հյայսա Երկիր») հիշատակությունները վերաբերում են ա) Վերջիններիս կողմից խեթական «Վերին Երկիր» Վրա հարձակումներին, բ) Մուրսիլիսի կողմից ութերորդ տարում դեպի Հյայսան նախատեսվող, սակայն վերահաս ծնոռան պատճառով չիրականացված արշավանքին և գ) Ազգի արքա Աննիյայի հետ Մուրսիլիսի բանակցություններին (հիշատակվում է Աննիյայի հրաժարվելը պատժել հյայսացիններին): Մյուս բոլոր դեպքերում խոսվում է «հյայսացինների» մասին («հյայսացիններ»), առանց նրանց արքայի կամ որևէ կարգավիճակ ունեցող կառավարչի հիշատակության: Սա հուչում է, որ սույն հրադարձությունների շրջանում Հյայսան թերևս գտնվում էր Աննիյայի գերիշխանության տակ, որը կոչվում էր Ազգի արքա, ինչով էլ պետք է պայմանավորված լիներ Մուրսիլիսի գրագրությունը նրա, այլ ոչ անմիջականորեն հյայսացինների հետ:

12) KUB XIV 4

Այս տեքստը ներկայացնում է Մուրսիլիս II-ի և նրա խորք մոր՝ Սուպահիլույիումա 1-ի Վերջին կնոջ՝ տավանաննա Ամմիննայայի միջև տևական հակամարտության պատմությունը: Մասնավորապես, այդ առնչությամբ հիշատակվում է արքայի՝ դեպի Ազգի և Հյայսա կազմակերպած արշավանքի ընթացքում

Ամճիննայայի փորձը մայրաքաղաք Խաթրուսասում պալատական հեղաշրջում իրականացնելու մասին: Թերևս այս տեքստում խոսքը Մոլովիլիսի տասներորդ և տասնմեկերորդ տարիների արշավանքների մասին է, քանի որ մինչ այդ նա անձանք չէր գրաղել այստեղ իրականացված ռազմական գործողություններին: Հարկ է նշել, որ շատ ավելի ուշ կազմված «Տարեգրություններում» տավանաննայի դավադրության մասին հիշատակություն չկա:

Հակառակ կողմ IV

- 24) [ma-a-an I-NA KUR ^{URU}A]z-zि-ma i-ya-ah-ḥa-at nu ^dUTU-uš ša-ki-ya-ah-ḥa MUNUS.LUGAL-ma
 25) [..... ki-iš-ša-a]n me-mi-iš-ki-it e-ni-wa
 26) [..... i-ši-y]a-ah-ḥa ^{//} Ū-UL-wa ŠA LUGAL ÚŠ i-ši-ya-ah-ḥa nu-[wa] ma-a-an
 27) [.....] ^{MEŠ URU}Ha-at-li-ma-wa-za AŠ-
 ŠUM BE-LU-UT-TI ta-ma-a-in
 28) [.....-w]a-za 'Am-mi-in-na-ya-ya
 29) [..... i-y]a-an-zi ^dUTU ^{ši}-ma-za I-
 NA KUR ^{URU}Ha-ia-ša
 30) [.....]x tup-pí-az EGIR-
 an-da ḥa-at-ra-a-eš
 31) [..... EGIR-an-d]a wa-tar-na-ah-ḥa
 ma-a-an ^{URU}Ha-ya-ša-az-ma
 32) [.....] ḥu-u-da-a-
 ak Ū-UL me-mi-iš-ta

Թարգմանություն

- 24) «Իսկ [Երբ] ես Ազգի Երկիր】 արշավեցի, արևո նշան տվեց:
 Իսկ թագուհին
 25) [Խաթրա]ի[ում] [Խոսում էր (այսպես). «Այդ նշանը, որ արևո
 տվեց,
 26) [ի՞նչ է այն կանխայգուշակում: Արդյո՞ք (այն) արքայի
 մասին չի կանխագուշակում: Եվ Եթե
 27) [այն կանխագուշակում է արքայի մասին, արդյոք] Խաթրիի
 [բնակիչները ուրիշ] մեկին հշխանության
 28) [չպիտի ընտրեն (բառացիորեն «կամենան» - Ա.Ք.]): Արդյոք
 նրանք Ամմիննայային և Ամմիննայայի
 29) [որդուն(?)][.....]-են»: Իսկ Արևս Հայաստանում

30) [.....] կավե սալիկի վրա դու պատասխանեցիր»:

31) [.....] նա հրաման [արձակ]եց: Իսկ (Երբ) Հայասայից

32) [.....] նա շտապ/տեղնուտեղը չասաց»:

Այստեղ հատկանշական է Վերը բերված հատվածի սկզբում արշավանքի հիշատակությունը դեպի Ազգի, որին հետևում են Հայասայի երկու վկայությունները («Երբ Արև Հայասայում» և «իսկ (Երբ) Հայասայից»): Միևնույն վարչական միավորը հաստատապես այս կարծ հատվածում չէր կարող երկու տարբեր անվանումներ կրել: Այստեղ խոսքը հավանաբար երկու տարբեր՝ մինչյանց մոտ ընկած միավորների մասին է, ինչից կարելի է ենթադրել, որ Մուրասիլիսը իր տասներորդ և տասնմեկերորդ տարիների արշավանքների ընթացքում ներխուժել է թե Ազգի, թե Հայասա: Այս ենթադրությունը ամրապնդում է Մուրասիլիսի տարեգրություններից ստացված տպավորությունը. այնտեղ նույնպես Ազգին և Հայասան մեկընդեռ հանեն են զայիս որպես խեթական արշավանքի նպատակակետեր (տես Վերը):

13) KBo XXVII 2, HT 85, 905/z, KUB XXVI 39

Պայմանագրի երկու բեկորներում, որոնք դրա պատճական ներածականի մասն են կազմում, հիշատակվում են Աննիյայի պապի օրոք տեղի ունեցած իրադարձությունները: Ահա այդ բեկորները.

KBo XXVII 2

X+1') [.....]-mu x-[.....]
2') [.....](-B)AL-ni-x-[.....]

3') [.....] zi-i]k ^mAn-ni-ya-a[š

4') [.....]-i]š-ga-tal-la-aš ha-x[.....]

5') [.....] ^dUTU^{S'}-in I-NA EGI[R U[D^{MI}

6') [.....]-x-ma-mu DUMU^{MES}-YA DUMU.DUMU^{MES}-YA

7') [.....]aš-š]u-li pa-ah-ši

8') [.....]-x-za-kán i-ya-[.....]

9') [.....] a]r-ha da-[.....]

Թարգմանություն

X+1')

2') [..... (-)ապ]ստամբ-[.....

-
- 3') [..... ոյու' Աննիյա[ս
4') [..... -iš-ga-tal-la-aš X[.....
5') [..... Արկի]ն ապա[զայում
6') [.....]-և որդիներին (և) թռոների[ս
7') [.....կանովին պաշտպանիր:

8') [.....] X [.....]

9') [.....] x [.....]

HT 85

- 1') [.....]x "An-ni-ya(-)[.....
2') [.....]x A-Bi A-Bi-Y[A
3') [.....]x-KA-ya "Ma-ri-[ya(-)
4') [.....]S|G₅-in iš-tén? x-?[.....
5') [.....]x_{MES}-SU-NU SIG₅-i[n
6') [.....]x-x-[.....

Թարգմանություն

- 1')] Աննիյա [.....
2')] պապի[ս
3')] և քո [...] Մարիլյա](0)
4')] ավ
5')] նրանց լա[վ
6')]

905/z

- 2) [.....] nu zi-ik "An-ni-ya-aš
3) [.....]-š/t]a-ni
4) [.....] "Ma-ri-ya-an

Թարգմանություն

- 2)] Եվ դու' Աննիյա
3)]
4)] Մարիյային (Եզ.հայց.)

Օ.Կարրությախ կարծիքով ՀՏ 85-ում «պապ» բառի առկայությունը կարող է հիմք տալ Ենթադրելու, որ այստեղ Մուրսիլիսը նկատի ունի իր պապի թուղթալիյաս III-ի օրոք ապրած Մարիյային: Նույն բեկորի հաջորդ տողի լակունայի

վերջում սկսվող բառը, այդ դեպքում, թերևս, պիտի լինի [.... A-B/
A-B]/I-KA-ց «և [պապի]հո»:

Վերոհիշյալ բեկորներում Մարիյա անվան հիշատակումը Հայասայի արքա Աննիյայի հետ միասին կարող է վկայել Հայասայում Սարիյասի տոհմի իշխանության շարունակականության մասին: Այսինքն՝ Աննիյան ժառանգել է պապի իշխանությունը: Ինչ Վերաբերում է Խուկկանային, ապա, նրա կառավարումը Հայասայում հնարավոր է մեկնաբանել որպես Մարիյայի տոհմի իշխանության ժամանակավոր ընդհատում:

Ինչ Վերաբերում է հանրահայտ KUB XXVI 39-ին, այն ներկայացնում է պայմանագրին որպես վկա հանդես եկող խեթական և հայասական աստվածների ցուցակը⁴⁸:

14) KUB XVIII 2

Սա խեթական արքունական գրագրության մեջ մ.թ.ա. XIV-XIII դդ. լայնորեն վկայված գուշակային հարցման տեքստ է, որը ներկայացնում է արքայի կողմից կատարված հարցումը «Ազգի արքա Խուկկանայի», արքայի և նրա սերունդների հանդեպ ապագայում լոյալության մասին: Տեքստի հրատարակչի կարծիքով, այն պահպանվել է մ.թ.ա. XIII դ. պատճենի տեսքով: Արդյոք ավելի վաղ շրջանում կազմված բնագրում Խուկկանան իրոք համարվել է Ազգի արքա (համենայնդեպս «Խուկկանայի պայմանագրություն» խոսք չկա նրա այդպիսի կարգավիճակի մասին), թե՝ մ.թ.ա. XIII դ. կետերին խեթական տեքստերում Հայասա տերմինի բացակայությունը կարող է ակնարկել այն մասին, որ այս քաղաքական միավորը դուրս էր խեթերի արտաքին քաղաքականության ոլորտից, և նրանց հետ անմիջական հարկանությամբ գտնվող Ազգի տակ կարող էր հասկացվել շատ ավելի ընդարձակ տարածք, պարզ չէ:

Մուրսիլիսից հետո Հայասան որպես այդպիսին այլևս չի հիշատակվում խեթական տեքստերում: Փոխարենը համատարած կերպով հանդիպում ենք Ազգին⁴⁹:

⁴⁸ Հրատ.: Forrer, 1931: 6f.. Haas, 1985: 24. Թույան, 2005: 444-457 (աղբյուրների և մասնագիտական կարծիքների տեսությամբ): Այս բեկորային տեսքով պահպամված արծանագրությունը որպես Մուրսիլիսի և Աննիյայի միջև կնքված պայմանագրի մաս առաջարկել է դիտել O.Կարրուբան (Carruba, 1988: 69ff.): Նարծիքը հենվում է աստվածների ցանկի և «Խուկկանայի պայմանագրի» հանապատասխան հասվածի միջև առկա տարբերությունների վրա:

⁴⁹ 48. Տե՛ս վերը՝ ծանոթ. 25.

Այսպիսով, անփոփելով Հայաստան և Ազգի քաղաքական միավորների վերաբերյալ առկա սկզբնադրյուրների տեսությունը, ներկայացնենք դրանցից բխող եղանակացությունները:

ա) Այն տարածքը, որը խեթական սեպագրական աղբյուրներում հիշատակվում է Հայաստան կամ Ազգի անվանումներով, ամենավաղ տեքստերից սկսած՝ ներառյալ «Խուկանայի պայմանագրի» կնքման ժամանակները և դրանից հետո դեռ բավական երկար, հայտնի է որպես Հայաստան: Առաջին անգամ Ազգի տերմինին հանդիպում ենք սույն պայմանագրում՝ կապված Խուկանայի՝ ազգեցի կնոջ հետ ամուսնության վրա դրված արգելքի հետ:

թ) Մուրսիլիս II-ի հայաստան արշավանքների շրջանում առաջին անգամ վկայված է Ազգին՝ որպես պետական կազմավորում, որի արքան է Աննիյան: Այս փուլի առանձնահատկությունը պետք է համարել այն, որ Հայաստան է խեթական տարածքներն ասպատակող կողմը, որը, ըստ Մուրսիլիսի Տարեգրությունների, սի վիճակի էր խեթերի դեմ դուրս բերելու խոչոր գինութ (10,000 հետևակային և 700 մարտակառք), սակայն, միաժամանակ, խեթական արքան հայաստաների ասպատակությունների առնչությամբ հարաբերությունը է «Ազգի արքա /կառավարիչ» Աննիյայի հետ: Խեթական արքայի կառավարման 10-11-րդ տարիների արշավանքների ընթացքում այնուամենայնիվ պարզ չէ, թե որ տարածքն էր ներխուժել խեթական բանակը՝ Հայաստանը՝ թե՝ Ազգի:

զ) Նախորդ կետուու ներկայացված կազուսային իրավիճակի պարզաբանմանը կարող են նպաստել Մարիյայի հայաստանինելու փաստը և այս անվան հիշատակությունը՝ որպես Աննիյայի նախնի: Եթե Աննիյան Մարիյայի հետնորդն էր (թոռը, եթե ծիշտ է Վերականգնվում «Մուրսիլիս II - Աննիյա» պայմանագրի բեկորային հատվածում նրա նախնու ազգակցական կապը Աննիյայի հետ), ապա ավելին, քան ենթադրել Հայաստան-Ազգի երկմիասնական քաղաքական միավորի առկայություն, հնարավոր չէ:

ո) Նկատի առնելով Վերոհիշյալը՝ Ազգի մոլումը առաջին պլան՝ ի հաշիվ Հայաստան, կարող էր կապված լինել Հայաստանի խուկանայի զահակալման համատեքստում տեղի ունեցած իրադարձությունների հետ: Ուստի հնարավոր ենք համարում ենթադրել, որ Հայաստան և Ազգի տեղմիններով բնորոշվող տարածքը հրենից ներկայացրել է էքնոլեզվական կապերով միմյանց հետ սերտորեն կապված երկու ցեղային միավորների միություն:

Մի իրավիճակ, որի համար առայժմ այլ բացատրություն չկա, քան
հղումը պատմական գուգահեռներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարսեղյան Լ. 1963. Հայաս-Ազգի ու նրա մի քանի բնակավայրերի
տեղադրման հարցի շուրջը. «Պատմա-բանասիրական հանդես», 1963/3,
էջ 307-313.

Խաչատրյան Վ. 1971. Եօստոնի պրօսիսս Խետմուկու սուրբու,
Երևան.

Խաչատրյան Վ. 1998. Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան.

Սարսիրոսյան Ն. 1957. Խարբերդի շրջանները՝ հայոց հնագույն
օրորանը, էջ 87-133—66 («Խարբերդ և անոր ուսկեղեն դաշտով», Նյու Յորք՝
գրքում).

Սարսիրոսյան Ն. 1961. Դրամումներ փոքրասիրական անուններու
մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1961/3, էջ 82-107.

Քոյսյան Ա.Վ. 2000. Խեթական պետությունը և Հայկական
լեռնաշխարհի Երկրները մ.թ.ա. XV դարում, «Պատմա-բանասիրական
հանդես», 2000/3, էջ 161-174.

Քոյսյան Ա.Վ. 2001. Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական
լեռնաշխարհի Երկրների փոխհարաբերությունների մասին, «Սերծավոր և
Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ», XX, էջ 233-245.

Քոյսյան Ա.Վ. 2002. Անի-Կամալս Խեթական դարաշրջանում,
«Պատմա-բանասիրական հանդես», 2002/3, էջ 225-241.

Քոյսյան Ա.Վ. 2004ա. Հայկական լեռնաշխարհի տեղանումները (ըստ
Խեթական սեպագիր աղբյուրների), Երևան.

Քոյսյան Ա.Վ. 2004բ. Մուրսիլիս II-ի հայաստական արշավանքները (նոր
սկզբնաղբյուրներ), «Պատմա-բանասիրական հանդես», 2004/2, էջ 197-204.

Քոյսյան Ա.Վ. 2004գ. Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և
Վերին Եկիամաղի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները,
«Սերծավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ» XXIII, էջ 472-484.

Քոյսյան Ա.Վ. 2005. Հայասայի աստվածները (KUB XXVI 39),
«Սերծավոր և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ» XXIV, Երևան,
2005, էջ 444-457.

Քոյսյան Ա.Վ. 2006. Arnuwandas I in the East, „Armenian Journal of
Near-Eastern Studies“ I, p.72-97.

- Арутюнян Н.В. 1985. Топонимика Урарту, Ереван.
- Дьяконов И.М. 1968. Предыстория армянского народа, Ереван.
- Иванов Вяч.Вс. 1979. Урартск. mari, хурритск. marianne, хаусаск. Marija. – В сб.: "Переднеазиатский сборник" III, Москва, с.101-112.
- Капанцян Гр. 1948. Хаусас-колыбель армян, Ереван.
- Манандян Я. 1956. О некоторых спорных проблемах истории древней Армении, Ереван.
- Adontz N. 1946. Histoire d'Armenie, Paris.
- Alp S. 1980. Die hethitischen Tontafelentdeckungen auf dem Maşat-Höyük, „Belleten“ XLIV/173, 1980, S.25-59.
- Alp S. 1991. Die Hethitische Briefe aus Maşat-Höyük, Ankara.
- ASVOA. 4.3. Atlante storico del Vicino Oriente antico. Fascicolo 4.3, Anatolia: L'Impero Hittita, Pavia, 1986 (M.Fornanini, M.Marazzi).
- Beckman G. 1996. Hittite Diplomatic Texts, Atlanta.
- Bilabel Fr. 1927. Geschichte Vorderasiens und Ägyptens vom 16.-11. Jahrhundert v.Chr., Heidelberg.
- Bryce T.R. 1989. Some Observations on the Chronology of Suppiluliuma's Reign, „Anatolian Studies“ 39, p.19-30.
- Bryce T.R. 1998. The Kingdom of the Hittites, Oxford.
- Carruba O. 1977. Beiträge zur mittelhethitische Geschichte.I-II, „Studi Micenei ed Egeo-Anatolici“ 18, S.137-195.
- Carruba O. 1988. Die Hajasa-Verträge Hattis. - In: „Documenta Asiae Minoris (Fs.H.Otten)“, Wiesbaden, S.59-75.
- Cavaignac E. 1934. Le premier royaume d'Arménie, "Revue hittite et asianique" 3, p. 9-14.
- Cornelius Fr. 1958. Geographie des Hethiterreiches, "Orientalia" 27, S.225-251, 373-398.
- Forrer E. 1926a. Forschungen, 1/1, Berlin.
- Forrer E. 1926b. Die Boghazköi-Texte in Umschrift.II, Leipzig.
- Forrer E. 1931. Hajasa-Azzi, "Caucasica" IX, S.1-24.
- Friedrich J. 1930. Staatsverträge der Hatti-Reiches in hethitischen Sprache, Leipzig, Bd.2 (= MVAG 34).
- Garstang J. and Gurney O.R. 1959. The Geography of the Hittite Empire, London.
- Götze A. (Goetze) 1930. Bemerkungen zu dem hethitischen Text AO 9608 des Louvre, "Revue hittite et asianique" 1, S.18-30.
- Götze A. 1933. Die Annalen des Mursiliš, Leipzig (= „MVAeG“ 38/6).
- Götze A. 1940. Kizzuwatna and the Problem of Hittite Geography, New Haven.
- Grelois J.-P. 1988 Les Annales Decennales de Mursili II (CTH 61.I), „Hethitica“ IX, p.17-146.
- Gurney O.R. 1948 Mita of Pahhuwa, „Liverpool Annals of Archaeology and Anthropology“ 28, p.32-48.
- Guterbock H.G. 1956 The Deeds of Suppiluliumas as told by his son, Mursilis II, „Journal of Cuneiform Studies“ X, p.41-68, 75-98, 107-130.

- Haas V. 1985 Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands. – In: "XENIA. Das Reich Urartu" (Hrsg. V.Haas), Konstanz, S.21-30.
- Hagenbuchner A. 1989. Die Korrespondenz der Hethiter, Heidelberg (=TdH 15).
- Hoffmann I. 1984. Die Erlaß-Telipinus, Heidelberg („TdH“ 11).
- Hout Th.P.J. van den 1994. Der Falke und das Küken: der neue Pharao und der hethitische Prinz?, "Zeitschrift für Assyriologie und vorderasiatische Archäologie" 84, S.60-88.
- Houwink ten Cate Ph.H.J. 1970. The Records of the Early Hittite Empire, Leiden.
- Houwink ten Cate Ph.H.J. 1998. The alternative date for the Šunaššura Treaty (KBo I 5), „Altorientalische Forschungen“ Bd.25/1, p.34-53.
- KBo. Keilschrifttexte aus Boghazköy (Leipzig und Berlin), 1916ff.
- Kempinski A. 1993. Suppiluliuma I: The Early Years of His Career. - In: „Tel Aviv“. Occasional Publications 1. Raphael Kutscher Memorial Volume (ed. A.F.Rainey), Tel Aviv, p.81-91.
- Klengel H. 1999. Geschichte des Hethitischen Reiches, Leiden - Boston - Köln.
- Klinger J. 1998. Zur Historizität einiger hethitischer Omina, „Altorientalische Forschungen“ 25/1, S.104-111.
- Košak S. 2005. Konkordanz der hethitischen Keilschrifttafeln, T.1-5, Wiesbaden.
- Krauss R. 1978. Das Ende der Amarnazeit, Hildesheim.
- KUB. Keilschrifturkunden aus Boghazköy (Berlin), 1921ff.
- Meriggi P. 1962. Über einige Fragmente historischen Inhalts, „Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes“ 58, S.66-110.
- RGTC.6.1. J.F. del Monte und J.Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978.
- Safrastyan A. 1929. Hittite Place Names, "Masis" 1/5, p.104-107; 1/8, p.189-192.
- Safrastyan A. 1947. Kizzuwatna and some of its periphery (Rez. on: A.Goetze, Kizzuwatna and the Problem of Hittite Geography, New Haven, 1940), "Bibliotheca Orientalis" 1947/2, p.38-46.
- Sayce A.H. 1930. Hittite and Moscho-Hittite, "Revue hittite et asianique" 1, fasc.1, p.1-8.
- Siegelova J. 1986. Hethitische Verwaltungspraxis im Lichte der Wirtschafts- und Inventardokumente. Bd.I-III, Praha.
- Wilhelm G. 1997. Kuşaklı-Sarissa. Bd.1: Keilschrifttexte, Fasz.1, Rahden/Westf.
- Wilhelm G. - Boese J. 1989. Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14. Jahrhunderte v.Chr. - In.: „High, Middle or Low?“, S.74-117.

ԿԻՆՍ ՈՒՐԱՌՏՈՒՌՈՒՄ. ՈՒՐԱՌՏՈՒԻ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ

«Նրանք դողում են և լոռմ, ինչպես կանայք»:

Լոռւթյուն և վախ: Սակայն սա չէր հինարևեյան կնոջ բնութագիրը, ինչպես առաջին հայացքից կարող է թվայ ասորեստանյան տեքստի այս տողից¹: «Պատնական այս կամ այն ժամանակաշրջանում, անզամ հայրիշխանական հասարակություններում, կանայք ունեին բարձր դերակատարություն, թեև, իհարկե, Հին Արևելքում այդ հասարակության կայացմանը զուգընթաց կնոջ դերը նվազում էր²: Նույնը նկատվում է պետական դիցարաններում: Այն երկրներում, որտեղ դիցարանը գլխավորում էր աստվածուիի, որոյ ժամանակ անց տվյալքարանը նա իր տեղը զիջում էր արական աստվածությանը (օր. Էլամում³):

Մենք գիտենք պետական կազմավորումներ, որոնք կառավարվել են կանանց կողմից⁴: Օրինակ, նորասորենստանյան առյուններում տասնամյակներ շարունակ հիշատակվում է Սամսին՝ արաբների թագուհին⁵: Պատմությունը մեզ է թողել նաև մի քանի թագուհիների անուններ, որոնք բացառիկ դերակատարություն են ունեցել հինարևեյան տերությունների թաղաքական կյանքում: Մեպագիր առյուններում որպես Mī.É.GAL (արք. *sēkallu*) «պալատի կին» (համ՝ թագուհի) հանդես եկող այս կանանցից արավել հայտնի դարձավ Շամիրամը՝ ասորեստանյան թագուհի Շամնուրամարը (թ.ա. 811-805թթ.) և դա՝ շնորհիվ հունական պատմագրության⁶: Սակայն, նրա կողքին կամ այլ անուններ, օրինակ՝ Մարիի արքա Զիմրի-Լիմի (թ.ա. 1780-1760թթ.) կինը՝ թագուհի Շիբրուն, ասորեստանյան արքա Սինախերիի

¹ Sté Parpolo 1987: 32f. (No. 32):

² Այս հարցերի շուրջ առկա է մեծածավալ գրականություն: Sté, օրինակ, Վարձման 1990. Stol 1995a: 485ff. idem. 1995b: 123ff. և մասնավորապես Lesko 1989. Parpolo, Whiting 2002 ժողովածուները:

³ Xunq 1977: 39:

⁴ Նորասորեստանյան առյուններում հիշատակվող օտար ծագման թագուհի առաջնորդների ցանկը տես Tero 2005: 46ff.

⁵ ARAB I, 778, 817. II, No. 18, 55:

⁶ Շամիրամի (Սիմիրամի) մասին են հաղորդում Հերոդոտոսը, Բերոսոսը, Դիոդորոս Սիկիլիացին (հենվելով Կտեսիաս Կնիդացուն), Նիկոդայոս Դանաս-կոսիցն և այլք:

(Ք.ա. 705-681թթ.) կին Նավիյա/Զակութքուն, Բարելոնիայի արքա Նաբռնիդի (Ք.ա. 555-539թթ.) մայր Աղջա-գուպպին և այլք: Նրանք ունեցել են բացառիկ ղերակատարություն Մարիի պետության, նորասորեստանյան և նորբարելոնյան տերությունների քաղաքական կյանքում⁷: Ի՞նչ է մեզ հայտնի ուրարտական թագուհիների և ընդհամարապես՝ ուրարտուիհների, հասարակության մեջ նրանց գրադեցրած տեղի և դիրքի մասին:

Սեր տեղեկությունները չնշին են: Առևա ողջ նյութը սահմանափակվում է մի քանի սեպագիր աղբյուրներով և ուրարտական պատկերագրության՝ քիչ ավելի հարուստ տվյալներով:

Պատկերագրություն

Կանանց տասնյակ կերպարանքների կարելի է հանդիպել ուրարտական բրոնզե գոտիների վրա: Դրանց դրվագումները սովորաբար պատկերում են ծիսական երթեր, երգ-երաժշտությանք և պարով ուղեկցվող ինչ-որ արարողություններ կամ այսպես կոչված «խնջոյքի տեսարաններ» (նկ. 1ա-գ)⁸: Բավական հաճախ կարելի է հանդիպել նաև կանանց առօրյային վերաբերող դրվագների. գոտիներից մեկը պատկերում է թոնիր մոտ հաց թխոր, ասեղնագրդոր կամ կարպետագործ կանանց (նկ. 2ա-բ): Մեկ ուրիշ գոտու մի դրվագ՝ դափ նվազող երաժշտի ետևից տարվող փակ ծածկով երկանիվ կառջի պատկերով, չի բացառում այստեղ հարսանյաց երթ և կարծով տարվող հարսի օժիտ կամ պարզապես հարսանյաց կառջ տեսնելու տարբերակը (նկ. 3ա-բ): Նմանատիպ մեկ այլ գոտու դրվագաշարում նկատելի է մահիճի պատկերը (նկ. 3գ), ինչպես նաև իր հագուստով առանձնացող մի կնոջ (հարսի) պատկեր, որի գլխավերեւում երկու այլ կանանց կողմից պահպում է քող (նկ. 3դ): Իհարկե, այստեղ հնարավոր են այլ մեկնաբանություններ ևս:

Ուրարտական պատկերագրության մեջ կարելի է հանդիպել և պատվավոր կանանց, և հասարակ գեղջկուհիների: Թոփրաք-քալե հնավայրից (ուրարտական Ուսախինիլի Կիլեանիկայի քաղաքը) գտնված ուլք մեղալիոնը պատկերում է զահավորակին բազմած բարձրաշխարհիկ տիկնոց՝ թագուհու կամ, գուցե, աստվածուին:

⁷ Մանրամասն տե՛ս Artzi, Malamat 1971: 75ff. Weinfeld 1991: 99. Ben-Barak 1987: 33. Grayson 1993: 39f. Garelli 1998: 175ff. Melville 1999. Teppo 2005: 35ff.

⁸ Հողմածում օգտագործված մասները վեցոված են Santrot 1996. Caner 1998. Sevin 2003. Belli 2004. Seidl 2004 աշխատություններից:

(Ակ. 4)⁹: Կանացի մի քանի գոտիներում առկա «խնջույքի տեսարանների» մեջ նույնառն կարելի է հանդիպել սոցիալական բարձր խավի պատկանող կանանց, նրանց թվում, հավանաբար, նաև թագուհիների (Նկ. 5ա-բ):

Բարձրաշխարհիկ կինը սովորաբար պատկերվում է տոնական ճոխ զգեստով: Այն ծածկում է նրա ողջ մարմինը՝ հասնելով մինչև կողիկները: Բաց էին կնոջ ծեռքերն ու դեմքը: Կանայք կապում էին ներ գոտիներ, որպեսզի ցույց տան մեջքի նրբագեղությունը: Մեզ են հասել նման գոտիների բացարիկ նմուշներ (Նկ. 6): Պատվավոր կանայք մշտապես կրել են մինչև կոնքերը, երբեմն նաև մինչև փեշերը հասնող զիւաշրերը: Սակայն կանանց, առավել ևս՝ աղջնակների համար այն պարտադիր չէր¹⁰: Մազերը հարդարում էին, ամրացնում հերակալներով, կրում շքասեղներ:

Կնոջ հագուկապում կարևոր տեղ էին զբաղեցնում զարդերը, որոնք մատնանշում էին նրա սոցիալական ծագումն ու դերը հասարակության մեջ¹¹: Սովորաբար կրում էին զիւազարո, ականջօղեր, ապարանջաններ, մատանիներ, պարանոցն օղակող հոլունքաշար, որոնց տրվում էր մնական նշանակություն. կարծում էին, որ այն պաշտպանում է մարդուն: Ուշագրավ է, որ Վարուբանի աստվածություն ընծայված բավական խոշոր ուլունքահատիկ է մեզ հասել Արգիշթի (I°) արքայի արծանագրությամբ: Նրանում ասվում է, որ արքան այն բերել էր Երիախի երկրից¹²: <Ետաքցիր է նաև, որ աստվածություն կամ գուցե նրա երկնային մարմնավորումը համարվող թագուհուն մատուցված ընծաների մեջ մեծ տեղ են զբաղեցնում հոլունքաշարերը: Այս առունուկ ավելորդ չէ հիշել Շամիրամի կապը հոլունքների հետ (ույլունք Շամիրամայ)¹³ և գիտության մեջ անցկացված գուգահեռն այս երկու կերպարների՝ Վարուբանի աստվածություն և Շամիրամի միջն¹⁴:

Պատկերագրությունից դատելով՝ կարելի է կարծել, որ Ուրարտություն կանայք զբաղեցրել են բարձր դիրք: Մեզ հայտնի ծիսապաշտամունքային դրվագներ պատկերող բրոնզագործական

⁹ Հնայակյան 2005, էջ 6:

¹⁰ Հնայակյան 2005, էջ 7: Մանրամասն տես նաև Եսայան, Հնայակյան 1980, էջ 203 հաջորդիվ, Հնայակյան 2001, էջ 59 հաջորդիվ:

¹¹ Հնայակյան 2005, էջ 5 հաջորդիվ. Keilner et al., 1991: 163ff. և այլուր:

¹² Dincöl, Kavaklı 1980 [1982]: 231ff.

¹³ Խորենացի, Ա, մԸ:

¹⁴ Հնայակյան 1998, էջ 24-25. Պետրոսյան 2006: 49 հաջորդիվ:

նմուշներում, մասնավորապես՝ նվիրատվական թիթեղների երկրպագության տեսարաններում գերազանցապես պատկերված են կանայք, հավանաբար՝ թագուիի կամ բարձրաստիճան քրուիի՝ խնդրարկուի դիրքով, հաճախ՝ զոհաբերվող կենսանու հետ միասին: Ընդ որում, նրանք պատկերվում են թե՝ աստվածների առջև (նկ. 7-8): Ի դեպ, արական աստվածների առջև կանգնած կանաց կերպարանքների կարելի է համույթի ավելի հաճախ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Ուրարտուում քրմության մի օգալի, եթե ոչ մեծ մասը կանայք էին: Կանայք են առաջնորդում ծիսական երթը, ծիսական երաժշտությամբ և պարով ուղեկցվող զինու հեղունը նույնպես իրականացնում էին կանայք: Կնոջ զբաղեցրած բարձր դիրքի մասին կարող է վկայել այն հանգամանքը, որ Ուրարտուում նրանք ունեցել են սեփականության իրավունք¹⁵: Այս հանգամանքը, իհարկե, ամենին խորը չէր հինարկեցնան, մասնավորապես միջազգետքան հասարակություններին, ուր անգամ պոռնկուիիները (ազք. *harimtu*) ունեին նման իրավունքներ: Ի դեպ, նորասորեստանյան դրաշշրջանում կանայք արքունիքում կարող էին զբաղեցնել նաև բարձր պաշտոններ (*šakintu*՝ «կառավարչուիի», *masennatu*՝ «գանձապահ» և այլն)¹⁶:

Միջազգետքան աղբյուրներում բազմաթիվ տերմիններ վերաբերում են այն երևույթին, երբ կինը պարտավոր էր իր մարմնով ծառայել իր աստվածուիուն¹⁷: Նորասորեստանյան աղբյուրներում հանդիպում են քրմուիիների երեք դասեր (*kezertu*, *qadisstu/qadissu*, *šottu*), որոնք այս կամ այն կերպ առնչվում են ինչպես «սրբազն ամուսնության» ծեսին¹⁸, այնպես էլ տաճարային պոռնկության ընդհանուրապես¹⁹:

Մենք չգիտենք՝ Ուրարտուում արդյոք եղե՞լ են «իհերոդուլումներ» (տաճարային պոռնկուիիներ), երևոյթ, որը

¹⁵ Հնայական 2001, էջ 60: Այստեղ ցանկանում ենք հստակեցնել, որ խոսքը վերաբերում է ուրարտական իշխող տարրին և հնարավոր չէ ասկածը տարածել քաջմեթիկի և սոցիալական զարգացման տարրեր աստիճանների վրա գտնվող հանրույթներից կազմված տերության ողջ բնակչության վրա: Ուրարտական տիրապետության տակ հայտնված Հայկական լեռնաշխարհի հասարակությունների մեջ մասն ըստ էրույն անհաղորդ մնաց տերության իշխող տարրի «միջազգետքան լյանին» և նրա ստեղծած «տերունական մշակույթին»:

¹⁶ Մանրանասն տես *Tepro* 2005: 53ff.

¹⁷ Մանրանասն տես *Yamauchi* 1973: 213ff.

¹⁸ Այս ծեփի մասին մանրանասն տես *Nissinen, Uro* 2008 և այլուր:

¹⁹ *Tepro* 2005: 91f.

տարածված էր Հին Արևելքում²⁰: Կարելի է կարծել՝ այս: Հին Հայաստանում նման ինստիտուտի գոյությունը, ինչի մասին վկայում է Ստորաբոնը²¹, կարող էր ունենալ խորզ արմատներ և ժառանգված լիներ ուրարտական դարաշրջանից²²: Առավել ևս, ուրարտական պատկերագրության մեջ հստակ տարբերակվում է մարմնական սիրո և պտղաբերության խուրիսական Շա(վ)ուշ(կ)ա, որ նույնն է՝ ասորեստանյան հշթար աստվածութիւն բնութագրական գծերով մի աստվածություն՝, թերևս հնուանին²³: Իսկ հիերոդուլուսների ինստիտուտը կապվում է հատկապես նրա պաշտամունքի հետ: Եվ եթե Ուրարտուում կամ, առնվազն, ուրարտացիների շրջանում եղել է այս աստվածութիւն պաշտամունքը, ինչը քիչ է կասկածելի, ապա կարելի է ենթադրել նման ինստիտուտի գոյություն նաև Ուրարտուում: Պատկերագրության մեջ, համենայն դեպս, նման կանանց պատկերներ մեզ հայտնի չեն, եթե, իհարկե, վերը հիշված գոտիներին պատկերված կանանց շարքում չկան նաև հիերոդուլուսներ²⁵:

Սեպագիր աղբյուրներ

Հետաքրքիր է, որ ասորեստանյան մի քանի տեքստեր հիշատակում են ուրարտուիկիների: Դրանցից մեկում, օրինակ, խոսվում է գերեվարված ուրարտուիկիների մասին: Ընդ որում, կանանց մի մասը, հավանաբար, ներկայացրել է բարձրաշխարհիկ խավը, քանի որ նրանց որոնել են Ասորեստան ժամանած ուրարտական դեսպանները: Ահա թե ինչ է այս մասին ասվում ասորեստանյան արքայի նամակում՝ ուղղված իր պաշտոնյային:

(Ոկ 1-7) «Արքայի խոսքը Նարու-դուրու-ուծուրին: Հենց իհմա ես ուղարկում եմ արքունի թիկնապահ Մաննու-կի-Աշշուրին ուրարտական այդ դեսպանների մոտ: Նա նրանց կրերի

²⁰ Տես և հմտ. Վարդման 1990: 250ու. Beard, Henderson 1997: 480ff. Assante 1998: 5ff. idem. 2003: 13ff.

²¹ Ծմբածոն, XI, 14, 16:

²² Հնայալյան 2001, էջ 62:

²³ Seidl 2005: 167ff.

²⁴ Grekyan 2006: 165:

²⁵ Մեզ հայտնի կանացի միակ մերկամարմին առարկան ուկրե մի արձանիկ է (Պոստրովսկու 1959, Տաճ. L1): Սակայն, արձանիկի որոշ առանձնահատկություններ, որ բնութագրական են սիրիա-փյունիկան արվեստի համար, թույլ են տական ենթադրել, որ մենք այստեղ հասկանաբար գործ ունենք ներմուծված առարկայի հետ: Տես և հմտ. Եսայան, Հնայալյան 1980, էջ 214, Հնայալյան 2001, էջ 62:

Ուրգուխինա՝ տեսակցելու այն գերիներին, որոնց դու հաց են տպալիս:

(Ղկ 8-21) Ինչ վերաբերում է քեզ, այն օրը, երբ դու տեսնես այս նամակը, հավաքիր այս գերիներին. նրանք պեսոք է լինեն կազմ ու պատրաստ և այն օրը, երբ Մաննու-կի Աշշուրը՝ արքունի թիկնապահը, գրի քեզ, «Դեսպանները ժամանեցին Ուրգուխինա, ուղարկիր գերիներին», հավաքիր գերիներին, գնա Ուրգուխինա, և հանձնիր նրանց [...] Ուրգուխինայի կառավարչին:

(Ղկ 1-8) Ես ուղարկում եմ նաև Աշշուր-Բալշի-նշեին (հետևյալ իրանանով). «Գօնա [...] մոտ և օգնիր նրանց: Անշուշտ, ուրարտուիհները, որոնք քր հսկողության տակ են այս գերիների հետ Արրապիսայում, չաետք է գնան գերիների հետ»:

(Ղկ 9-17) Բայց այժմ, (այն կանանց), որոնց նա՞մ²⁶ փնտրում է, ... [...] (նրանք) պետք է ապրեն Արրապիսայում այս կանանց հետ և պետք է նրանց հաց տրվի՝ ուտելու, և ջուր՝ խմելու, մինչևն ես զամ: Պալատի կառքերը, որոնք բերում են այս կանանց, պետք է ապահովեն մարդկանց հացով և կենդանիներին անասնակերով»²⁷:

Այս եզակի, բավական ուշագրավ տղերի հիման վրա շնորհակի գրողը, միգուց, կստեղծեր մի աճրող պատմավեպ... իսկ խոսքն այստեղ, հավանաբար, վերաբերում է Ուրարտու իրագործված ասորեստանյան արքա Սարգոն II-ի «VIII տարվա (Ք.ա. 714թ.) արշավանք»-ին հաջորդած ժամանակներին, երբ ուրարտական արքայի դեսպաններն Ասորեստանում պետք է փնտրեին և հայտնից վերադարձնեին ինչ-որ ուրարտուիկների, հավանաբար՝ բարձր դիրք ունեցող կանանց, արքայական ընտանիքի անդամների կամ, գուցե, արքայի կանանցը: Ինչպես հայտնի է, միայն Ուատիշի Ճակատամարտում ուրարտական արքա Ուտսա I-ի 250 կամ 260 ազգականներ հայտնվեցին ասորեստանյան գերության մեջ²⁸: Հնարավոր է, որ ուրարտական ճամբարում է գտնվել և ասորեստանիների կողմից գերեվարվել նաև արքայի կանանցը:

1840թ. *Journal Asiatique* հանդեսում հրատարակվեցին Ֆրանսիայի Ասիական ընկերության հանձնարարությանը Արևմտյան Հայաստան գործուղված Ֆ. Շուլցի կրկնօրինակած ուրարտական արձանագրությունների գրչագրերը²⁹: Դրանց թվում

²⁶ Կարելի է կարծել, որ այսուել խոսքն ուրարտական արքայի մասին է:

²⁷ Parpolo 1987: 12f. (No. 10):

²⁸ Mayer 1983, 82f. (Z. 138). Fuchs 1994: 203f./345 (Z. 42).

²⁹ Schulz 1840, Pl. III (No. XVIII):

է Մենուա արքայի մի արծանագրություն երբեմնի հայկական Կատեպանց գյուղից, որում նշվում է Թարիթիային պատկանող խաղողի այգու մասին³⁰: Ընդ որում, սկզբնապես կարծում էին, թե խոսք Մենուայի դստեր մասին է, ելնելով այն Ենթադրությունից, որ ուրարտերենին ազգակից խուժիերենում առկա է Ենթադրաբար նոյնպես «դուստր» նշանակող համանձնան բառ³¹: Սակայն Օճառարից (Նախիջևան) հայտնաբերված արծանագրության մեջ այս նոյն բառը հանդիպում է մի կոնտեքստում, ուր կարծում թե խոսվում է գերազուն աստված Խալդիի կող մասին³²: Հետևաբար, Կատեպանցի հիշյալ արծանագրության մեջ ամենայն հավանականությամբ հիշատակված է Ուրարտուի թագուհին՝ Մենուա արքայի կինը:

Ուրարտական սեպագիր արծանագրություններում պահպանվել է ընդամենն այս եզակի հիշատակությունը: Բացի այդ, ուշուրարտական երկու սեպագիր տեքստերում հանդիպում է (SAL)^{GASAN(x)} «տիրուիի», «թագուիի» նշանակող գաղափարագիրը³³: Հնարավոր է, որ դրանցում նոյնպես խոսվում է ուրարտական թագուհու մասին³⁴: Սակայն որևէ անոն, ցավոք, տեքստերը չեն հայտնում, առավել ևս, դրանք խիստ վնասված են և դժվարընթեռնելի³⁵:

Հինարքեցյան սեպագիր աղբյուրներում պահպանվել են հարուստ տեղեկություններ անօւնական հարաբերությունների մասին, որոնք սովորաբար կանոնակարգվում էին «անօւնական պայմանագրերով»³⁶: Որոշ երկրներում, առնվազն Վերնախավլում, ընդունակած էր անօւնությունը մերձավոր հարազատների՝ եղրոյ և քրոջ, երբեմն՝ հոր և դստեր միջև: Այդպիսի սովորությա առկա էր, օրինակ, Հին Եգիպտոսում, ինչպես նաև Էլամում: Անուսնությունը մերձավոր հարազատների միջև Ուրարտուում՝ լինի արքայական ընտանիքում, լինի հասարակության մեջ, քիչ է հսկանական, սակայն, այնուանենայնիվ, հիշենք, որ նման երևույթը խորը չէր Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակություններին: Օրինակ, խեթական արքա Սուպիրուիումա 1-ի (թ.ա. 1355-1320թ.) և

³⁰ KYKH 137:

³¹ KYKH, cmp. 460:

³² Salvini 1998: 97ff.

³³ KYKH, cmp. 416:

³⁴ Հնայակյան 2001, էջ 60:

³⁵ KYKH 446_b, 449, լաւ. ստոր. x+1.

³⁶ Անուսնական հարաբերությունների մի դրվագ պահպանվել է անգամ ուրարտական աղբյուրներում: Տես KYKH 433:

Հայասայի արքա հաստատված Խուկվանայի միջև կնքված պայմանագրի կետերից մեկով հայասացիներին կամ առնվազն նրանց արքային այսուհետ արգելվում էր ամուսնանալ մերձավոր հարազատի հետ. Խուկվանայի կինը, ըստ տեքստի, նրա քոյրն էր³⁷:

Հետաքրքիր է, ի՞նչ սկզբունքով կամ ու՞մ հետ էին ամուսնանում ուրարտական արքաները: Արդյո՞ք նրանց կանայք երկրի մեծազոր իշխանավորներից դուստրեր էին, ինչպես հարևան Սսորեստանում (ասորեստանյան արքա Աշշուր-նածիր-ապալ II-ը (Բ.ա. 884-858թթ.), օրինակ, ամուսնացել էր իր խոշոր պաշտոնյաներից մեկի՝ «զիլավոր մատովակ» (*rab šāqēt*) Աշշուր-նիրկա-դահմի դոստեր հետ), թե նրանք, ինչպես այդ նույն Սսորեստանում, կարող էին լինել արքայական նույն ընտանիքից (Չամիրանը, օրինակ, Սալմանասար III-ի թոռնուիկին էր և ամուսնացել էր նրա որդի Չամշի-Աղադ V-ի հետ): Նորաստրեստանյան դարաշրջանի աղբյուրներում բազմից է նշվում նաև հարևան երկրների արքաներից նրանց դուստրերին «հարուստ օժիտով» հանդերձ «ստանալու» մասին³⁸: Այս վերջիններիս սակայն վերցնում էին պարզապես որպես հարեմում հարձ, թեև բացառություններ, որ նրանք արքունիքում գրադեցրել են արքայի առաջին կնոջ՝ թագուհու տեղը, կարծես թե եղել են³⁹: Մասնավորապես, Երուսաղեմի հրեական արքայատնից սերող կանայք, որպես եզակի բացառություն, դարձել են ասորեստանյան թագուհիներ: Թագուհի Յարան Թիգլարպալասար III-ի առաջին կինը էր, Արայան (Արայահու)՝ Սարգոն II-ինը⁴⁰.

Ի վերջո, ովքե՞ր էին Ուրարտուի թագուհիները: Առայժմ միակ վկայված թագուհու՝ Թարիփիայի անունը հնարավոր չէ ստուգաբանել, թեև իր տեսքով այն կարծես թե պատկանում է խուրի-ուրարտական աշխարհին: Արդյո՞ք այդ անվան կրողը ևս նույն

³⁷ Խաչատրյան 1998, էջ 59-61, ուր և տես բնագրի թարգմանությունը:
³⁸ Steu, օրինակ, ARAB I, 599 և այլուր:

³⁹ Խոսքը չի վերաբերում Թարելոնիային: Դիմաստիական ամուսնություններն ասորեստանյան և բարելոնյան արքայատների միջև տվյալական երևոյա էին և պահպանվեցին նաև Սսորեստանի կողմից Թարելոնիայի նվաճումից հետո: Օրինակ, ասորեստանյան արքա Սալմանասար V-ի (Բ.ա. 727-722թթ.) կինը՝ Բամիթուն, բարելոնի էր:

⁴⁰ Dalley 1998: 83, 93ff.: Ի դեպ, տարակարծություններ կան նաև Չամմուրամաթի և Նալիա թագուհու ծագման հետ կապված (նրանց անունները պատկանում են արևոտա-սեմական լեզվաշխարհին): Հնարավոր է, որ նրանք սերում էին արամեական կամ անգամ հրեական աշխարհից: Steu և համատ. Weinfield 1991: 102f. Dalley 1998: 97:

աշխարհից էր, ուրարտուիի՞ն, իսկ գուցե խուրիսիի՞ն Ուրարտուին հարևան խուրիսական ինչ-որ մի իշխանապետությունից, դժվար է ասել: Փաստ է սակայն, որ դինաստիական ամուսնությունների պրակտիկա գոյություն ունեցել է նաև Ուրարտուի և իր հարևանների հարաբերություններում:

(Հկ 18:25) «Եվ (այն) անցքերը, որ (այս) երկրի մարդիկ խոսում են նրա հետ այս օրերին. «Ինչո՞ւ դու սա արեցիր՝ սպանել(ով) քո եղբոր քրոջն ու քո եղբոր որդում: Այն, ինչ դու արեցիր, մենք բավականաչափ զիտենք. (զիտենք) որ դու սպանեցիր (նրան): Խարիսի (երկրի) տիկնոր, և այնուհետ դու պուդ լցրեցիր» վրան, ասելով՝ «Ուրարտացին՝ սպանեց նրան»: (Իսկ) ուրարտուիին չի կարող նստել զահին»⁴¹:

Այս խոսքերը մեջբերված են ասորեստանյան արքային ուղղված մի գելուցագրից, որը վերաբերում էր Ուրարտուի և Ասորեստանի միջև ընկած Խարիսի երկրում տեղ գտած իրադարձություններին: Ո՞վ էր այս ուրարտուիին, արդյո՞ք ուրարտական արքայադուստր, հնարավոր է: Տարբերակներից մեկը, որը կբացատրի ուրարտուիու զահակալությունը Խարիսի երկրում, կարող է լինել դինաստիական ամուսնության հնարավորությունը:

Հին դարերում, հետազյում ևս, դինաստիական ամուսնությունները միջպետական հարաբերություններում ունեն կարևոր դերակատարություն: Այդպիսի ամուսնությունները շատ հաճախ կնքվում էին քաղաքական նպատակներից ելնելով: Նման օրինակներ են Եգիպտոսի և Միտաննի երկրի, Եգիպտոսի և Բաբելոնիայի, Խեթական տէրության և Սիստանի միջև տեղ գտած դինաստիական ամուսնությունների փաստերը⁴²: Հայտնի է նաև, որ Հայկական լեռնաշխարհի հնագոյն պետական կազմավորումներից առնվազն Երկուսի՝ Հայսայի և Խոտվայի արքաներն ամուսնացել են խեթական արքայատան ներկայացուցիչների հետ: Ըստ այդմ, արդյո՞ք Ուրարտուի թագուհիները ևս դրսից էին:

Դեռևս 1980-ական թթ. ուրարտական Արգիշթիկնիի քաղաքի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին էլամերենով գրված սեպագիր աղյուսակների երեք բեկրներ: Ակաբնապես արևելագետներ Ի.Ս. Ղյակոնովն ու Ն.Բ. Յանկովսկայան այս

⁴¹ «Ուրարտացի» ասելով նկատի է առնվում Ուրարտուի արքան:

⁴² Lanfranchi, Parpola 1990: 85f. (No. 108):

⁴³ Ամփոփ տես Röllig 1975: 284ff. Meier 2000: 165ff.

տեքստերն ընթերցեցին որպես Հին Արևելքում լայնորեն տարածված շումերական Գիլգամեշ էպոսի էլամերեն տարրերակի մի հատված, որը, նրանց կարծիքով, որպես թատերգություն ներկայացվել է էլամական թատերախմբի կողմից Արգիշթիինիլիում՝ ուրարտական արքայի (կամ արքայազնի) և էլամցի արքայադստեր ամուսնության կապակցությամբ⁴⁴: Այս ենթադրությունը շատ հետաքրքիր կիխեր երկու երկրների՝ Ուրարտուի և Էլամի քաղաքական հարաբերությունների վերհանձնան առունով (սեպագիր տեքստերից նման փաստեր հայտնի չեն): Սակայն, հետագա ուսումնասիրություններն այս նույն տեքստերի ընթերցման ուղղությամբ տվեցին այլ արդյունքներ. պարզվեց, որ դրանք վարչա-տնտեսական բնույթի փաստաթղթեր են և գրվել են հետուրարտական (հավանաբար՝ աքեմենյան) շրջանում⁴⁵: Ըստ այդմ, ուրարտա-էլամական դինաստիական ամուսնության այս գայթակղիչ միտքը գրականության մեջ մնաց որպես գեղեցիկ մի հեքիա:

Մեզ թվում է, որ իրականում սակայն մնում են այլ հիմքեր՝ ենթադրելու Ուրարտուի և հարևան երկրների արքայաստոհների միջև հաստատված դինաստիական կապերի առնվազն մեկ դեպքի մասին: Դիտարկենք ասորեստանյան արքա Աշշուրբանապալի (թ.ա. 669-630թթ.) տեքստերը: Դրանցից մեկում ասվում է,

«Իշթար-դուրիմ՝ Ուրարտուի արքան, որի արքա-հայրերն արքաներին՝ իմ հայրերին, դիմում էին իրքն «Եղբայր», այժմ արդեն Իշթար-դուրիմ, լսերով իմ գորության և գործերի մասին, որ աստվածները բաժին էին հանել ինձ որպես իմ ճակատագիր, (և) ինչպես որդին է հորը դիմում որպես իր «սիրոց», այդպես էլ նա, այսուհետև, սկսեց մշտապես գրել՝ «արքային՝ տիրոջ»: Պատկառանորվ և հնագանդությանը նա բերում է այսուղ իր ծանր ընծաները»⁴⁶:

Այս տեքստը հավանաբար վերաբերում է թ.ա. 643թ., իսկ խոսքն այստեղ Ուրարտուի թագավոր Սարդուրիի մասին է, որը գրականության մեջ դիտարկվում է իրեւ Սարդուրի III: Ասորեստանյան արքայի ակնարկած նման նամակագրության օրինակ է հայտնաբերվել Նինվեից: Այս երկորոյ տեքստում ասորեստանյան արքան իր նամակն ուղղել է Ուրարտուի

⁴⁴ Дьяконов, Янковская 1989: 55сл. Diakonoff, Jankowska 1990: 102ff., esp. p. 105f.

⁴⁵ Koch 1993: 219ff. Vallat 1997: 258ff.

⁴⁶ ARAB II, 834, АВИИУ 72 (Х, 40-50):

արքային՝ «իր որդուն», նրա արքունիքին և Երկրին հղելով բարեմաղքանքեր⁴⁷:

Ի՞նչ են ենթադրել հետազոտողներն այս տեքստերից: Նրանք գտել են, որ ասորեստանյան արքայի խոսքերն ու որանց իրական լինելու վկայությունը՝ Երկրորդ տեքստը Ուրարտուում ասորեստանյան գերիշխանության առկայության ապացույց են: Ըստ այդմ, Ուրարտուի արքաները, եթե նախկինում Ասորեստանի արքաներին դիմում էին որպես իրենց «Երբոր», այսինքն՝ հավասարը հավասարին, ապա այժմ արդեն Ուրարտուի հիշյալ արքան ստիպված էր դիմել ասորեստանյան արքային որպես իր «հոր» և «տիրոջ՝ այդպիսով ճանաչելով նրա գերիշխանությունը⁴⁸:

Արդյո՞ք սակայն Ուրարտուի արքան «ստիպված» էր այդպես վարվելու: Իսկ եթե դա օրինաված դիմելածն էր, երբ իրոք «որդին» դիմում էր «հորը», որպես իր «տիրոջ»: Ե՞րբ էր դա արվում և ինչո՞ւ: Մեկ անգամ ևս դիմենք սեպագիր տեքստերին:

Ասորեստանյան արքունի գրագորթյան մեջ ցանկացած մարդ, այդ թվում անգամ զահաժառանգ արքայազնը, արքային դիմում էր որպես իր տիրոջ: Ահա մեկ օրինակ.

«Արքային՝ տիրոջ, քո ծառա Սիմ-ախիսե-րիբա: Առողջություն արքային՝ տիրոջը»⁴⁹:

Այս ողջոված հատված է ասորեստանյան զահաժառանգ արքայազն և ապագա արքա Սիմախերիբի նամակից՝ ուղղված իր հորը՝ արքա Սարգոն II-ին: Նույն կերպ էր դիմում բարելունյան արքա Շամաշ-շումու-ումկինը իր գերազահ եղբորը՝ ասորեստանյան արքա Աշշուրբանապալին⁵⁰:

Բնականաբար, ավածից չի հետևում, թե Ուրարտուում իշխում էր Աշշուրբանապալի որդին: Երկու արքաների հարաբերությունները որպես «հայր» և «որդի» կարող էր լինել նաև այն դեպքում, երբ այս Երկուսի միջև հաստատվեին ազգակցական կապեր, այսինքն, եթե ուրարտական արքան անուսնանար ասորեստանյան արքայադստեր հետ: Սարդուրին, Աշշուրբանապալին դիմելով որպես իր «հոր», հնարավոր է, նկատի ուներ իր աներիորդ: Նման փաստերի կարելի է հանդիպել սեպագիր այլ

⁴⁷ Waterman 1930-1936, No. 1242, ինչպես նաև ԱԲԻՒ 79: Տերսիդ պատկանելությունն Աշշուրբանապալի ժամանակաշրջանին կասկած չի հարուցւում: Տես ԱԲԻՒ 79, ծմբ. 1:

⁴⁸ Մելուշանաւ 1954: 317 և. van Loon 1966: 22ff. և այլուր:

⁴⁹ Parpolo 1987: 28 (No. 29):

⁵⁰ Luukko, Van Buylaeere 2002: 18ff. (No. 21).

աղբյուրներում: Օրինակ, բարելոնյան արքա Խամճուրաբին էլամական արքա Ծիվեպալար-խուխապակին դիմում էր որպես իր «հոր»⁵¹: Նոյն կերպ, որպես «հայր», Սարգսն Ա-ին էր դիմում կիլիկյան Կուտ Երկիր արքա Ուրիշկին և խոսում «մեկ ընտանիքի» մասին⁵²: Առկա են նմանատիպ այլ օրինակներ ևս⁵³:

Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ ուրարտական թագուհիներից առնվազն մեկը ասորեստանյան արքա Աշշուրբանապալի դուստրն էր⁵⁴: Այս դինաստիական ամուսնությունը ամենայն հավանականությամբ հետապնդում էր քաղաքական նպատակներ՝ ամրապնդելու ասորեստանյան ազդեցությունն Ուրարտուում: Սա հարցի մյուս կողմն է: Ընդհանրապես, դինաստիական ամուսնությունները կարևոր տեղ էին գրանցում նոր-ասորեստանյան արքաների արտաքին քաղաքականության մեջ⁵⁵, որի մի դրսերում կարող է լինել մեր այս ենթադրությունը:

Գրականություն

Եսայան Ս., Հ. Հնայակյան 1980, Ուրարտական գգեստը, ՊԲՀ, թիվ 3, էջ 203-215:

Խաչատրյան Վ.Ն. 1998, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում (Հայոց թին պատմություն), Երևան:

Հնայակյան Ս. 1997, «Ուլունք Շամիրամայ ի ծով», Հայ արվեստին նվիրված հանրապետուական ութերորդ կոնֆերանսի գեկուցումների թեգիներ, Երևան, էջ 24-25.

Հնայակյան Ս. 2001, Ուրարտուիին, «Ընտանիքի հետազոտման իմանախնդիրներ». Հանրապետուական Գիտաժողովի նյութեր՝ նվիրված Ենթա Կարսապետյանի հիշատակին, Երևան, էջ 59-66:

Հնայակյան Ս. 2005, Ուրարտական ոսկե, արծաթոսկե և ոսկե թիթեղապատ մեղալիոնները, «Տարեգիրք», թիվ 2, Երևան, էջ 5-15:

Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991:

Պետրոսյան Ա. 2006, Արամազդ. կեռպար, պաշտամունք. նախատիպեր, Երևան.

Արյունյան Ի.Բ. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван.

Վարդման Ե.Ե. 1990, Женщина в древнем Мире, Москва.

⁵¹ Charpin, Durand 1991: 59ff.

⁵² Lanfranchi G.B. 2005: 481ff.

⁵³ Dalley 1998: 89:

⁵⁴ Ստավակիր որոշ նյութեր բոյլ են տալիս ենթադրել, որ Աշշուրբանապալն իրոք բնեցել է դրսությունում: Sten Tepper 2005: 34, 44:

⁵⁵ Dalley 1998: 85:

- Дьяконов И.М. 1951, Ассирио-аввилонские источники по истории Урарту, ВДИ, 11-2-4.
- Дьяконов И.М., Н.Б. Янковская, Эламский диалог Гильгамеша и Сидури и другие эламские тексты из Аргиштихинеле, ТРС, фиц 3, 1989, № 55-62:
- Меликишвили Г.А. 1954, Древневосточные материалы по истории народов Закавказья: I. Наури-Урарту, Тбилиси.
- Пиотровский Б.Б. 1959, Ванское царство (Урарту), Москва.
- Страбон. География, пер. Г.А. Страмановского, Ленинград, 1964.
- Хинц В. 1977, Государство Элам, Москва.
- Artzi P., A. Malamat 1971, The Correspondence of Šibtu, Queen of Mari in ARM X, Or.NS 40/1, 75-89.
- Assante J. 1998, The kar.kid/harimtu, Prostitute or Single Woman? A Reconsideration of the Evidence, UF 30, 5-96.
- Assante J. 2003, From Whores to Hierodules: The Historiographic Invention of Mesopotamian Female Sex Professionals, in: Donohue, Fullerton 2003, 13-47.
- Beard M., J. Henderson 1997, With this Body I Thee Worship: Sacred Prostitution in Antiquity, "Gender and History", vol. 9/3, 480-503.
- Belli O. 2004 (Project Consultant), Catalogue of the Exhibition *Urartu: War and Aesthetics* (10 October 2003- 17 January 2004), Istanbul.
- Ben-Barak Z. 1987, The Queen Consort and the Struggle for Succession to the Throne, in: Durand 1987, 33-40.
- Caner E. 1998, Bronzene Votivbleche von Giyimli, AIT 2, Leidorf.
- Charpin D., J.-M. Durand, La suzeraineté de l'empereur (sukkalmah) d'Elam sur la Mésopotamie et le 'nationalisme' amorrite, in: de Meyer et al. 1991, 59-66.
- Çilingiroğlu A., Darbyshire G. 2005 (eds.), Anatolian Iron Ages 5. Proceedings of the Fifth Anatolian Iron Ages Colloquium held at Van, 6-10 August 2001, British Institute at Ankara, Monograph 31, Ankara.
- Dalley S. 1998, Yabâ, Atalyâ and the Foreign Policy of Late Assyrian Kings, SAAB XII/2, 83-98.
- Diakonoff I.M., N.B. Jankowskaja 1990, An Elamite Gilgameš Text from Argištihenele, Urartu (Armavir-blur, 8th century B.C.), ZA 80, 102-123.
- Dinçol A.M., E. Kavaklı 1980, Van bölge müzesinde bulunan yazılı bir Urartu boncugu, AnAr VIII, 231-235 [İstanbul, 1982].
- Donohue A.A., M.D. Fullerton 2003 (eds.), Ancient Art and its Historiography, Cambridge.
- Durand J.-M. 1987 (ed.), La Femme dans le Proche-Orient Antique, 33rd Rencontre Assyriologique Internationale (Paris 1986), Paris.
- Fuchs A. 1994, Die Inschriften Sargons II. aus Khorsabad, Cuvillier Verlag, Göttingen.
- Garelli P. 1998, Les dames de l'empire assyrien, in: Prosecký 1998, 175-181.

- Cogan M., I. Eph'al (eds.) 1991, Ah, Assyria..., Studies in Assyrian History and Ancient Near Eastern Historiography Presented to Hayim Tadmor, Sch 33, Jerusalem, 1991.
- Grayson A.K. 1993, Assyrian Officials and Power in the Ninth and Eight Centuries, SAAB 7/1, 19-52.
- Grekyan Y.H. 2006, The Will of Menua and the Gods of Urartu, AJNES I, 150-195.
- Hoffner H.A. Jr. 1973, Orient and Occident: Essays Presented to Cyrus H. Gordon on the Occasion of His Sixty-fifth Birthday, Neukirchen-Vluyn.
- Kellner H.-J., R. Merhav, K. Kohlmeyer, G. Zahlhaas 1991, Personal Adornments, in: Merhav 1991, 163-197.
- Koch H. 1993, Elamisches Gilgameš-Epos oder doch Verwaltungstäfelchen?, ZA 83, 219-236.
- Lanfranchi G.B. 2005, The Luwian – Phoenician Bilingual of Çineköy and the Annexation of Cilicia to the Assyrian Empire, in: Rollinger 2005, 481-496.
- Lanfranchi G.B., S. Parpola 1990, The Correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern Provinces, SAA V, Helsinki.
- Lehmann-Haupt C.F. 1910, Die historische Semiramis und ihre Zeit, Tübingen.
- Lesko B.S. 1989 (ed.), Women's Earliest Records: From Ancient Egypt and Western Asia: Proceedings of the Conference on Women in the Ancient Near East (Brown University, Providence, Rhode Island, 1987), "Brown Judaic Studies", 166, Atlanta.
- Luckenbill D.D. 1926, Ancient Records of Assyria and Babylonia, vol. I (From the Earliest Times to Sargon), Chicago.
- Luckenbill D.D. 1927, Ancient Records of Assyria and Babylonia, vol. II (From Sargon to the End), Chicago.
- Luukko M., G. Van Buylaere 2002, The Political Correspondence of Esarhaddon, SAA XVI, Helsinki.
- Mayer W. 1983, Sargons Feldzug gegen Urartu-714 v.Chr.: Text und Übersetzung, MDOG, Bd. 115, 65-132.
- Meier S.A. 2000, Diplomacy and International Marriages, in: Cohen R., R. Westbrook 2000 (eds.), Amarna Diplomacy: The Beginnings of International relations, Baltimore, 165-173.
- Melville S. 1999, The Role of Naqia/Zakutu in Sargonid Politics, SAAS 9, Helsinki.
- Merhav R. 1991, Urartu. A Metalworking Center in the First Millennium B.C.E., Tel Aviv.
- de Meyer L., H. Gasche, F. Vallat 1986 (eds.), Fragmenta Historiae Elamicae, Mélanges offerts à M.-J. Stève, Paris.
- Nissinen M., R. Uro 2008 (eds.), Sacred Marriages: The Divine-Human Sexual Metaphor from Sumer to Early Christianity, Winona Lake.
- Van Loon M. 1966, Urartian Art. Its Distinctive Traits in the Light of New Excavations, İstanbul.

- Parpola S. 1987, The Correspondence of Sargon II, Part I. Letters from Assyria and the West, SAA I, Helsinki.
- Parpola S., R.M. Whiting 2002 (eds.), Sex and Gender in the Ancient Near East, Papers Presented at the 47th Rencontre Assyriologique Internationale (Helsinki 2001), Helsinki.
- Prosecký J. 1998 (ed.), Intellectual Life of the Ancient Near East: 43rd Rencontre Assyriologique Internationale (Prague 1996), Prague.
- Rollinger R. 2005 (ed.), Von Sumer bis Homer: Festschrift für Manfred Schretter zum 60. Geburstag am 25. Februar 2004, AOAT 325.
- Röllig W. 1975, Heirat, politische, RIA 4, 282-287.
- Salvini M. 1998, Eine urartäische Felsinschrift in der Region Nakhichevan, ZA 88, 94-99.
- Sasson J.M. 1995 (Ed. in Chief), Civilizations of the Ancient Near East, vol. I, New York.
- Schulz F.E. 1840, Sur le lac de Van et ses environs (Envoyé à Paris le 8 juin 1828), JA, Troisième série, t. 9, 257-323.
- Seidl U. 2004, Bronzekunst Urartus, Mainz am Rhein.
- Seidl U. 2005, The Urartian Ištar-Šawuška, in: Çilingiroğlu, Derbyshire 2005, 167-173.
- Sevin V. 2003, Eski Anadolu ve Trakya (Başlangıcından Pers Egemenliğine Kadar), İstanbul.
- Stol M. 1995a, Private Life in Ancient Mesopotamia, in: Sasson 1995, 485-502.
- Stol M. 1995b, Women in Mesopotamia, JESHO 38/2, 123-144.
- Teppo S. 2005, Women and their Agency in the Neo-Assyrian Empire, (Master's Thesis, April 2005) Helsinki.
- Santrot J. (Hrsg.) 1996, Arménie. Trésors de l'Arménie ancienne des origines au IV^e siècle, Paris.
- Vallat F. 1997, La lettre élamite d'Arménie, ZA 87, 258-270.
- Weinfeld M. 1991, Semiramis: Her Name and Her Origin, in: Cogan, Eph'al, 1991, 99-103.
- Yamauchi E.M. 1973, Cultic Prostitution: A Case Study in Cultic Diffusion, in: Hoffner 1973, 213-222.


Հապակումներ

- ՊԲՀ – Պատմա-բանահրական հանդես, Երևան.
- АВИИУ – ստիւ Дъяконов 1951.
- КУКН – ստիւ Арутюняն 2001.
- AJNES – ARAMAZD, Armenian Journal of Near-Eastern Studies, Yerevan.
- AIT – Archäologie in Iran und Turan, Leidorf.
- AnAr – Anadolu Araştırmaları (JKF – Jahrbuch für Kleinasiatische Forschung), İstanbul.
- AOAT – Alter Orient und Altes Testament, Münster.

- ARAB I-II – *untu* Luckenbill 1926-1927.
JA – Journal Asiatique, Paris.
JESHO – Journal of the Economic and Social History of the Orient,
Leiden.
MDOG – Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
Or.NS – Orientalia, Nova Series, Roma.
RIA – Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer
Archäologie, Berlin - Leipzig - New York.
SAA – State Archives of Assyria, Helsinki.
SAAB – State Archives of Assyria Bulletin, Helsinki.
SAAS – State Archives of Assyria Studies, Helsinki.
ScH – Scripta Hierosolymitana, Jerusalem.
UF – Ugarit-Forschungen, Kevelaer – Neukirchen-Vluyn.
ZA – Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäo-
logie, Berlin – New York.



Ակ. 1ա



Ակ. 1բ



Ակ. 1գ



Ակ. 2ա



Ակ. 2բ



Ակ. 3ա



Ակ. 3բ



Ակ. 3գ



Ակ. 3դ



Նկ. 4



Նկ. 5ա



Նկ. 5բ



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8

ՃՆՈՐՀ Ի ԿԵՐՈՒՄ
ԱՌԱՍՊԵՏԻ, ԾԵՍ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՆԿԻՐՎԱԾ ՍԱՐԳԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 80-ԱՄՅԱԿԻՆ

Համակարգչային ծևավորումը՝	Աշուտ Մելիքսերյանի
Հրատարակչության խմբագիրներ՝	Ազատուիկ Սահակյան, Նորա Նանսյան



Տպագրված է «ԱՇԽԱՍ Պրինտ» ՍՊԸ
Երևան 375012, Վաղարշյան 12
Հեռ. (37410) 27 38 10
Տպարանակը՝ 300 օր.

A-II
94452